




843

L. III-5









ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ
Ա. Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1897

ՅՈՒՆԻԱՐ

1897 № 1

Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

	երես
1 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ԱԻՆՏԻԲ.	5 Ինչ էինք ժառանգել:
2 ՇԱՆԹ	13 Անտառին երգը (բանաստ.):
3 "	15 Մահիկը (բանաստ.):
4 "	16 Վէճ (բանաստեղծութիւն):
5 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՈՂ.	17 Խորտակած կեանք (մեծ վէպ):
6 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ	36 Հին երգ (բանաստեղծութ.):
7 ԲԱԲԵՆՑ, Գ.	37 Նորիկ (վէպ, շարունակ.):
8 ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻՍ.	59 Կեանքի խորթ որդիքը (բանաստ.):
9 ԱԴԵԼԵԱՆՑ, Ա.	61 Տգիտութեան զոհեր (շարունակ.):
10 ԱԹԱՅԵԱՆՑ, ԱՐՇԱԿ.	88 Կէս գիշերին (բանաստեղծ.):
11 ՄՈՊԱՍՍԵՆԻՑ—ՀԵՂ. ՇԱՀԱԶԻԶ	89 Անցեալը (պատմ.):
12 ԱՊՐՕ	97 Յիշողութիւններ Պարսկաստանից:
13 ԶԱՔԱՐԵԱՆՑ, ԹԱԴԷՈՍ, ԲԺ.	110 Ամուսն. տուղձապահութիւն (շար.):
14 ՎԱՐԴԱՆԵԱՆ, ԳՐԻԳՈՐ.	121 Ռուսիայի արդիւնաբերութիւնը և գլխավորապէս ռեֆորմը:
15 ԱՂԲԱԼԵԱՆՑ, Ն.	131 «Նա» (պատկեր) Պոռչեանի:
16 " "	133 Գարշինի—«Գոռոզ արմաւենին և «Հանապազոտը գորտ»:
17 " "	136 Գիկենոի—«Վերադարձ. լանցաւորը»
18 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, Ա.	139 Ժամանակակից տեսութ.—Փաղա- քային ընտրութիւնների առիթով:
19 ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԳԱՐԵԴԻՆ ԲԺ.	149 Բժշկական զրուցներ:
20 ԽՄԲ.	155 Չանաղան լուրեր:

Տնդեկատու և Յայտարարութիւններ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротиняна, Гол. пр., д. № 41.

1897

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Փ Ի Ր

№ 1 1897

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1897 № 1

Ի Ն Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

~~~~~

Ի Ի Յ Լ Ի Ո

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротшильд, Гол. пр. д. №

1897



Дозволено цензурою. Тифлисъ, 24-го Января 1897 г.

IX SURT

# „ՄՈՒՐՃ“

SURT IX

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1897 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ:

«ՄՈՒՐՃ» ամսագիրը 1897 թվականին կը հրատարակէ նոյն ծրագրով և նոյն դիրքով, որպէս և նախկին ութ տարիներում: «ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալումն էր, նոյնպէս և ապագայում կը բովանդակի՝

- I. Յօդւածներ մեր կեանքի հիմնական պայմանների մասին:
- II. Վէպեր և պատմածքներ՝ ինքնուրոյն և թարգմանական:
- III. Ոտանաւոր-բանաստեղծութիւններ, պօէմաներ՝ ինքնուրոյն և թարգմանական:
- IV. Նկարադրական-ճամբորդական:
- V. Պատմական:
- VI. Գիտական հանրամատչելի յօդւածներ:
- VII. Յօդւածներ անտեսական և սոցիալական խնդիրների մասին:
- VIII. Գրական քննադատութիւն:
- IX. Գրախօսութիւն նոր լոյս տեսած գրքերի մասին:
- X. Ժամանակակից Տեսութիւն: Յօդւածներ հայկական կեանքի ընթացիկ խնդիրների մասին:
- XI. Գաւառական նամակներ:
- XII. Թատրոնական քրոնիկ:

XIII. Արտասահմանեան քրոնիկ:

XIV. Քաղաքական տեսութիւն:

XV. Կարևորագոյն լուրեր ամուսյ եղելութիւններէց:

XVI. Տեղեկատուներ և յայտարարութիւններ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ, կը շարունակի «Մուրճ»-ում նաև 1897 թւականին առանձին ուշադրութեան առնուել:

ՄՈՒՐՃ-Ի ՎԻՊԱԿԱՆ բաժինը ներկայումս աւելի քան երբ և իցէ ապահովւած է յատուկ աշխատակիցներով:

«ՄՈՒՐՃ»-Ի ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ կը մնայ նոյնը ինչ միշտ եղել է՝ յառաջդիմական-քննադատական:

«ՄՈՒՐՃ»-Ը ունի աշխատակիցների մի ստուար խումբ, որը կազմւած է ամսագրի ութնամեայ կեանքով և որով ապահովւում են ամսագրի կարևորագոյն բաժինները: Աշխատակիցների կազմը լրացւում է նորերով, որոնց նպաստները երբէք չեն պակասել «Մուրճ»-ին: (Տես լուրերի բաժինը):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ: «Մուրճ»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի: Կարելի է գրել նաև զործակալ աշխատակիցներ մօտ, ստանալով նոցանից անգորրագիր: (Տես Մուրճի ծածքի ետևը):

ՎՃԱՐԸ կարելի է հատուցանել նաև մաս-մաս՝ 5 ռուբլի սկզբում, մնացածը մինչև յունիսի վերջը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ընդունւում են ամբողջ տարով՝ տողը 1 ռ., կէս տարով՝ տողը 75 կոպէկ:

Դիմել Խմբագրատուն—Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ“

Արտասահմանից—Tiflis, Rédaction „MOURTCH“:



## ԻՆՉ ԷԻՆՔ ԺԱՌԱՆԳԵԼ

Մուրճի մուտքը իւր գոյութեան իններորդ տարեշրջանը մի նոր վկայութիւն է, որ անցեալի օրինակները թէև միշտ պէտք է ի նկատի ունենալ, բայց ոչ նոցա օրէնք ընդունելու համար: Հիւսիսօփայլ, Կռունկ, Հայկական Աշխարհ և Փորձ ամսագիրների կեանքի կարճատևութիւնը մի տեսակ նախապաշարմունք էր ստեղծել հայ հասարակութեան մէջ, թէ ամսագրական հրատարակութիւնը թէև լաւ է, օգտակար է, նոյն իսկ երբեմն անհրաժեշտ է, բայց որ նա ոչ յարատև լինելու և ոչ նոյն իսկ երկար կեանքի համար պիտի չափւած լինի: Եւ այդ նախապաշարմունքը խոր էր հաստատուած թէ կիսակիրթների և թէ կրթւածների ուղեղներում: Նմանաւանդ, որ նոցա համար օրինակ ծառայած ամսագիրները եղել են ոչ թէ թույլ ձեռքերում և տարւել անկարող ոյժերով, այլ ընդհակառակը՝ նոքա եղել են անկանաւոր անձերի ձեռքերում և տարւել ժամանակի անւանի գրական ոյժերով: Եւ ահա, երբ Մուրճը սկսեց հրատարակել, նորան երկար կեանք չէին գուշակում մեր ամենահեռատեսները և ամենափորձաւորները: Եւ այդ տխուր գուշակութիւնները չկարծէք թէ անուում էին միմիայն չար դիտաւորութեամբ. ոչ, չարերի հետ նոյնն էին կարծում նաև զէպի մեզ բարեկամօրէն տրամադրւածները. նոքա ամենքը՝ մէկը չարախընդութեամբ, միւսը՝ բարեկամական ցաւով, դժբախտում ենք, ամենքը հիմնւում էին անցեալի վրայ, պիորձի վրայ, ան աստիճան հայ ամսագրութեան երեսնամեայ անցեալը վախեցրել էր ամենքի աչքերը: Աւելցրէք դորա վրայ ան թշնամական յարձակմունքները, որ մեզ բաժին եղան հայ մամուլի մէջ հէնց դորձի սկզբում: Խո՛մ Մուրճը պիտի խորտակւէր՝ չարձ միջոցում: այդ «գիտէին»



բոլոր «խելօքները»․ բայց ինչո՞ւ ամեն մէկը մեր թերթերից սկզբում քար չձգէր, որ յետոյ պարծենար թէ Մուրճ-ը ընկաւ հէնց նորա հակառակութեան շնորհիւ! Եւ սակայն Մուրճը չարատեւեց և ոչ միայն անցկացրեց հայ ամսագիրների համար ճակատագրական շրջանը, այլ և զնալով աւելի ու աւելի խորը արմատներ զցեց հասարակական անդաստանի մէջ։ Սխալե՞ւմ ենք արդեօք պնդելով որ այսօրւայ օրս, և արդէն տարիներից ի վեր, Մուրճ-ը դառել է մեր նոր և ձգտող սերնդի ընթերցանութեան անհրաժեշտ աղբիւրը։ Այդ նոյնքան ճիշդ է, որքան ճիշդ է նաեւ այն, որ ձգտող նոր սերնդի մտաւոր կարեւորագոյն ոյժերը ձգտումն են ցոյց տալիս Մուրճում իրար հանդիպել։ Խմբագրութեանս աւելի քան ուրիշներին յայտնի է այս իրողութիւնը, որ Մուրճի ընթերցող և բաժանորդ շրջանի մի ծայրը համալսարանական ամենախոտապահանջ երիտասարդութեան մէջն է, միւս ծայրը որոշ կրթութեան տէր արհեստաւոր դասակարգի մէջ, և միջուկը վաճառական և գործակաւոր դասակարգի բաժան-բաժան անհատների մէջ։ Այդ տունազն ցոյց է տալիս մտքի և զգացմունքի այն ծայրերը, որոնցով Մուրճը շրջւում է հայ ընթերցող հասարակութեան այլ և այլ խաւերի մէջ դոյացած ինտելլիգէնցիայի հետ։ Մենք կը ցանկայինք դորանից աւելին՝ թէ ծաւալի և թէ խորութեան կողմից․ բայց արդէն այն՝ ինչ որ կայ, այն՝ ինչ որ ձեռք է բերւած իբրեւ ընթերցող և բաժանորդ շրջան, վկայութիւն է տալիս Մուրճի զաղափարականի և կենդանութեան համար։ Եթէ Մուրճի բաժանորդների թիւը, որը սակայն յառաջդիմում է, զեռեւս ցանկալի բարձրութեանը չի հասել, այդ պէտք է բացատրել հետեւեալ հանգամանքով․ մեզնում հիմնարկութիւններ և մամուլ պահպանող դասակարգը անհամեմատ առաւելութեամբ վաճառական դասակարգն է․ իսկ այդ դասակարգը, որպէս և ամեն երկրում, զաղափարականի կողմից բռնում է շատ յետին տեղ․ որքան շարժուն բնաւորութիւն ունի նորա գործունէութիւնը, նոյնքան էլ նա ծոյլ է և ոչ հակառակ զաղափարական գործի համար․ այդ դասակարգը չէ, որ նպաստաւոր է մտքի յառաջդիմութեան․ որպէս գլխաւորապէս նիւթական շահի յետեւ ընկած մի դասակարգ՝ նա հակառակ է դէպի մտաւոր և բարոյական շարժումներ և ոչ իսկ դէպի լուրջ մտաւոր մտածողութիւն։ Եւ սա-

կայն, ներկայումս, և այդ շատ վաղուց, այդ դասակարգն է որ իշխող է հանդիսացել ամեն ազգային և հասարակաց գործերում: Աշխարհական դասակարգերից դարերով զարգացել է և ոյժ ստացել միայն վաճառական դասակարգը, որի ազդեցութիւնը ամեն տեսակ ազգային գործառնութիւնների վրայ սկսել է նւազել մի կողմից շնորհիւ նորագոյն լուսաւորութեան և գլխաւորապէս քննադատական մամուլի հաստատելովը հայերիս մէջ, որի անցեալը սակայն դեռ ևս մեծ շրջան չէ կազմում, և միւս կողմից նորագոյն եւրոպական արդիւնաբերութեան ձեւերի հաստատելովը մեր երկրում, որի շնորհիւ սկսել են մեր մէջ կազմակերպւել հայ արդիւնաբերող և բանող դասակարգեր, որոնց վերաբերմունքը դէպի հասարակաց և մտաւոր խնդիրները զգալապէս տարբերւում է տիպական վաճառականի հայեացքներից: Եւ ահա մի կողմից սկսել է կազմակերպւել մտաւոր ինտելիգենցիա, միւս կողմից վաճառականից աւելի մտաւոր սնունդ պահանջող արդիւնաբեր և բանւոր դասակարգեր, որոնք աւելի զգայուն դէպի հասարակական կեանքը՝ հասարակութեան մէջ աւելի թարմ և ձգտող խաւերն են ներկայացնում: Բայց այդ դասակարգերը դեռ ևս միայն կազմւելով վրայ են և այդ պատճառով հեռաւորապէս անգամ չեն կարող իրենց թւով և նիւթական կարողութեամբ համեմատուել առեւտրական սուր դասակարգի հետ:

Մեր գրականութիւնը առհասարակ կուլած է ուրեմն գործելու ահա այդպիսի հասարակական պայմաններում: Ամսագիրը, իբրեւ գլխաւոր լծակ գրական յառաջդիմութեան և դորա հետ միասին իբրեւ գլխաւոր գործոն ժամանակի մտաւոր շարժման, մեզնում ստիպւած է գործելու մի այնպիսի հասարակութեան մէջ, ուր գրական և մտաւոր սնունդ պահանջող տարրերը մեծ ծաւալ չեն ստացած. իսկ այն դասակարգը, որը թւով մեծ է և նիւթապէս ամենից կարողը, նա մեծ զգայնութիւն չունի դէպի բարձրը, իդէալականը, դէպի մտաւոր մաքառումը և յառաջդիմութիւնը: Մեր կարծիքով մասամբ այդ հիմնական հանգամանքին զոհ դնացին մեր ամսագիրները անցեալում. և Մուրճը, թէև դիմանում է և յառաջդիմում, բայց կրում է նոյն հանգամանքի ծանրութիւնը:

Արպէս տեսնում է ընթերցողը, ամսագրի նկատմամբ պործում



է մի սոցիալական հանգամանք, որը դժարացնում է Մուրճի գործը, առանց սակայն կարողանալու նորան յաղթահարել:

Եւ ոգևորութեան աղբիւր է մեզ համար մտածելը ազնիւ գործի յաղթանակի մասին: Այդ մտածմունքը մեզ վերացնում է բարձր, շատ բարձր ամեն չարախնդաց բարբաջմունքներից: Եւ Մուրճը շարունակում է իւր գործը և դերը կատարել...

Մուրճի դերը ժամանակակից մամուլի և գրականութեան մէջ աւելի ունի՞ց ցոյց տալու համար մեզ հարկաւոր կը լինի մի համեմատութիւն անել Մուրճի նախորդ 10-ամեակի և ներկայիս մէջ: Այդ տարիները 80-ական թւականներն են, մինչև գրեթէ տասնամեակի վերջին տարին: Մեր ներկայիս գրականութիւնը իւր այլ և այլ ճիւղերով համեմատութեան զնելով 80-ական թւականների գրականութեան հետ՝ պարզ կ'երևայ այն լուսաջղիմական քայլը, որ կատարել է. և կատարել, թոյլ եմք տալիս կարծել, մի նշանաւոր մասով Մուրճի ջանքերով:

Մինք դժար ենք երեւելալում մի աւելի մեծ ամալութիւն, քան ինչ տիրում էր մեր մամուլի և գրականութեան մէջ 80-ական թւականներին:

Սոսկալի էր այդ ամալութիւնը, և որովհետև շատերի չիշոգութիւնը կարճ է և այդ շատերը իրենց անարգասաւորութիւնը և այլոց կատարած գործերը ծածկելու համար շահ են տեսնում անցեալը՝ հէնց որովհետև անցեալ է՝ փառաբանելու, ուստի մենք պիտի խօսենք փաստերով, և կարելիին չափ՝ անուաներով: Դա կը լինի մի կարճ տեսութիւն 80-ական թւականների գրական արտադրութեան, որով գտած կը լինենք այն հարստութեան չափը, այն դրամագլուխը, որ Մուրճը ժառանգութիւն ստացաւ նախորդ տասնամեակից: Մեզնից հաշիւ կը պահանջեն. իսկ ինզրի մէջ հակառակ ուղղութեամբ շահագրգռած անձեր, տեսնելով հակառակ իրենց ընդդիմադրութեան և առանց իրենց մասնակցութեան կատարող գրական շարժումը, անհանգստութեան մէջ ընկած՝ արդէն սկսել են անցեալով ներկան սեպցնել, վատ քողարկւած դիտաւորութեամբ ամեն ինչ ուրանալ, ինչ իրենց արածը չէ: Անցնենք:

Ինչ էր մամուլը՝ Այն տասնամեակում, որի մասին է մեր խօսքը, մամուլը աշխատում էր ապացուցել, որ դատարկութեամբ կարելի է տարածութիւն լեցնել։ Հրապարակախօսութեան մէջ մերթ ընդ մերթ երեցող յաջող դադարները կամ կորչում էին միաժամանակ յայտնող սխալների մէջ և կամ ամբողջովին կուլ գնում այն աղբիւրներն, որ առաջացնում էր անզուսպ կիրքը, չարմարեցրած ընթերցող հասարակութեան գլխաւոր զանգւածի տգիտութեանը և ամբոխի «Ժամաշացասիրութեանը»։ Հաջողանքներով և ստութիւններով լի անվերջ խօսքներ, — ահա այն ասպարէզը, որի զունքը լացն բացւած էին հրապարակախօսութեան մէջ. մեր ընթերցողները դուրս (Թէեւ աւելի Թոյլ) պատկերը այժմ էլ կարող են տեսնել մեր հիմիկայ օրաթերթերում։ ստութիւնը, աղաւաղումները, նեղարտութիւնը, ուրացումը — սովորական ծրագրի մէջ էին։ Թերթերը, փոխանակ նորանոր բաժիններով ընթերցողների մտաւոր հորիզոնը ընդլայնելու, ընդհանաւելը սեղմում էին բաժինները, մինչ այն աստիճան, որ պատրաստի աշխատակիցները կատարելիք դեր չունենալով՝ պիտի հեռանալին ասպարիզից՝ հացկատակներին տեղ տալու համար։ Եւ այդ հացկատակութիւնը արտայայտւում էր և՛ quasi իմբազրականներով, և գաւառական թղթակցութիւններով և լուրերով, և՛ կեղծ գրախօսական նկատողութիւններով — ամեն տեղ և ամեն կերպ։ Այդ էր Կովկասեան հայոց մամուլ ասած բանը 80-ական թւականներին։ Սեւը, մուրը չափազանց շատ էր, շատ-շատ էր. միմիայն գրականական որդները կարող էին իրենց տաք զգալ այդ հանգամանքներում։ Նոքա, որոնք անբողոք կերպով և իրենց ամբողջ գլխով խրեցին այդպիսի մամուլ և առաջ տանելու համար, դժբա էլ եղան այդ շկոյւյով կրթւած հրապարակախօսները, յետագայ տարիներում։ Եւ թող ցոյց տան մեզ թէ որոնք են այժմ նոցանից չարգի մէջ!

Հասարակութիւնը զրկւած էր լուրջ ընթերցանութիւնից, բացակայութեամբ ամսագրի, որի հարկաւորութեան մասին դիտմամբ լուում էր նոյն այդ մամուլը։ Առանձին տպագրող գրքերը պիտի գալին պակասը լրացնելու. բայց ինչ էր արդեօք գեղեցիկ գրականութիւնը։ Տեսնենք։

Բանաստեղծութիւնը կատարելապէս լուծ էր. միակ նշանաւոր



ներկայացուցիչը բանաստեղծութեան մէջ՝ Գամառ-Քաթիպա — Ռաֆայէլ Պատկանեանը բանաստեղծական ոչինչ չարտադրեց ամբողջ 80-ական թւականներին, և այդպէս մինչև իւր կեանքի վերջը. իւր «Ազատ երգերով» 70-ականի շրջանում նա արդէն երգեց իւր երգը։ Սմբատ Շահ-Աղիզ դեռ ևս 60-ական տարիներում իւր տաւիղը վար դրեց, և 80-ական թւականներին նորա անունը նորագոյն սերնդի համար մի չիշողութիւն էր միայն։ Հները ուրեմն լռած էին։ Իսկ նորերը.

Անցնենք վիպասանութեանը, միակ գրական ճիւղին, որ կենդանութիւն ունէր և որի հետ որ և է կապ պահպանում էր պարբերական մամուլը։ Այդտեղ գործում էր Բաֆֆին, որը 70-ական թւականներից իւր բեղմնաւոր գործունէութիւնը անցկացրեց 80-ական թւականները և պիտի շարունակէր յաջորդ տասնամեակում, եթէ մահը նորան չխէր մեզնից. նա դեռ կենսունակ էր։ Մերենց և՛ սկսեց և՛ վերջացրեց իւր գրելիքը 70-ական թւականների վերջերում. նա այլ ևս միայն իւր կեանքի վախճանական տարիների դառն օրերով կապւած էր այն տասնամեակի հետ, որից ոչ մի ներշնչանք և ոչ մի խրախոյս չէր սպասում։ Պաշտեան այդ ամբողջ տասնամեակում՝ գրիչը վար էր դրած. նա ոչինչ չգրեց։ Մնում էին սկսնակներ։ Զարմանալի ամուլութիւն նաև այդ կողմից. 80-ական թւականների միակ սկսնակը, որ պիտի յաջողէր յաջորդ տարիներում կապել իւր անունը վիպական գրականութեան հետ, դա Շիրաւնդադէն է, բայց և միակը։ Մի այլ գրող՝ Մուրացան, գուցէ և յաջողի ապացուցել թէ կոչումն ունի իրադէտ երեակալութեան ներկայացուցիչ լինել գեղարւեստի մէջ, — առայժմ՝ մեզ համար դա միայն խնդիր է. երանի թէ յաջողի. թող այն ժամանակ 80-ականի շրջանի ակտիւին աւելանայ նաև մի անուն. մենք այժմ՝ կը շատանանք հաստատ ապացուցւածներովը։ Մի երրորդ գրող, Աէօ, 80-ական թւականներին սկսեց վիպասանի յոյսեր տալ. բայց այդ յոյսերը հէնց այդպէս էլ մնացին. նա շարունակեց ենթարկւած մնալ այդ աղքատ տարիների անբովանդակ հրապարակասօսական չիշողութիւններին, առանց կարողանալու մի քայլ առաջ գնալ. յետագայում նա մոռնացնել տուեց նոյն իսկ թէ երբէմն ինքը, իբր վիպասան, յոյս տուող սկսնակների շարքումն էր։ Եւ այն աստիճան խեղդող էր գրականա-

կան մթնոլորտը, որ մի այլ նոր դրոշ, Վ. Փափազեան, հազիւ մի երկու փոքրիկ և ընդհանրապէս չնկատած վիպական փորձեր անելուց յետոյ Կովկասեան մամուլի մէջ, դրուած զգաց ապաստան գտնելու Պոլսի հայ թերթերում. նա նորից Կովկասի հայ մամուլին վերադարձաւ միմիայն մեր չիշած պերիոդի լրանալու տարին՝ իւր իսկական կոչումը՝ իբր վիպական ժանրիստ՝ յետոյ միայն գտնելու համար:

Անա ուրեմն 80-ական թւականների վիպագրութեան համագումարը. մի կենսալի դրոշ, իբր շարունակող շատ աւելի առաջ սկսած գործերի, և մի սկսնակ, որ յետագայում պիտի ամրանար:

Այսպէս յիշեալ է որ 80-ական թւականները թշուառ էին նաև վիպագրութեան համար:

Գուցէ նորութեան համար միայն շատերին զարմանալի թւայ, բայց մենք վստահանում ենք յայտնել, որ 80-ական թւականների գրականական ֆոնի վրայ մենք միայն մէկ նոր գործիչ ենք նշմարում՝ մթնոլորտը ճնշող հայ օրաթերթերի կողքին. դա «Ազբիւր» մանկական ամսագիրն է, որով մեզնում սկիզբ դրւեց մանկական գրականութեան: 80-ական թւականներին գրական աշխոյժը մենք նշմարում ենք աւելի այդ համեստ թերթում, քան որ և է այլ տեղ. նա արտայայտել և իւր կոչումը գտնել տւեց մի գրողի—որ Ղազարոս Աղայեանն է. և այդ համեստ թերթում նոյն իսկ միութարութիւն էր գտնում ստեղծագործել մի ոչ-մանկական գրող՝ Բաֆֆին: Մանկական գրականութիւնը, գտած լինելով իւր հերոսին, իսկ է, չկարողացաւ չարատեւ շփոյլի հիմնական գծերը ամուր գծագրել, բայց նա մի գործի սկիզբ դրեց, որ պիտի չարատեւէր:

Իսկ դրաման?

Միակ հայոց նշանաւոր դրամատուրգ Գաբրիէլ Սուսլուկեանց 80-ական թւականներին չտւեց իւր տիպական գրաւծներից և ոչ մէկը. և այդ պերիոդի վերջերքը նա աշխատում էր մի պիեսի վրայ, որ պիտի լինէր ոչ նորա ժանրից և ոչ նորա յաջողաւորներից: («Ամուսիններ»): Եւ այդ էլ լոյս տեսաւ ոչ այդ տաճարամեակում: Մի երկու միջակ նոր պիեսներ նոցա հեղինակների ապագայ գործունէութեան սկիզբներ չէին, այլ փայլուն դերասանական խումբի դրողմների հեռեանք: Անկենդան էր ուրեմն և դրամատիկական գրականութիւնը, չնայած մի հռչակաւոր դերասանական

խմբի գործունէութեանը և Ադամեանի աննման փայլին, այն Ադամեանի, որին ժամանակի ամենաանւանի հրապարակախօս Արծրունին չէր ուզում նոյն իսկ պարզ տաղանդ ճանաչել...

Այս ինքնուրոյն ստեղծագործութեան թառամումի հետ զոյգ էր բռնում և թարգմանական գրականութիւնը: Եւ ոչ մի հատ բարձր գեղարւեստական թարգմանական գրւածք լոյս էջտեսաւ այդ տասնամեակում: Գէորգ Բարխուդարեանց 80-ական թւականներին գրականապէս լռեց՝ որ տասնամեակի վերջում մի ոտանաւոր-առակ դրէ («Բարեպաշտ մարդիկ»)՝ իւր ժամանակը, գրականութիւնով ու մամուլով հանդերձ ծաղրելու համար:

Այդ ձեռագրը՝ Մուրճը հիւրընկալեց և սպեց իւր առաջին տարւայ առաջին համարում:

Ահա թէ ինչ էինք ժառանգել—Մաղր!

ԱՒԵՏԻՔ ԱՐՍՍԻԱՆԵԱՆՑ



## ԱՆՏԱՌԻՆ ԵՐԳԸ

Շ Ա Ն Թ Ի

Խոր մոլորին մէջ պահւումս  
Հովը կը սուրաց  
Յանկարծ քունէն սթափած  
Անտառին վրայ.

Ու կը խռնին ճիւղ ու ոստ  
Իրարու ուսին.  
Հովի թաքտին տակ ընդոտ  
Կ'երգեն միասին:

Ա', այդ երգը որքան մօտ  
Ու քաղցր է ինծի.  
Քոլոր ձայներն ալ ծանօթ  
Սրտիս դրացի.

Հոն թախիծին երկաթէ  
Հնչիւնները կան,  
Պրուն յոյսը կը փաթթէ  
Թոն մը դուրեկան.

Հոտ արից մը տառապանք  
Խուլ կը կարկաչեն.

Ու վրէժը սանձարձակ  
Կ'որոտ սց մէջէն.

Մերթ յանդուգն ճիւղ մը սուր  
Ազատ ու վստահ.

Մերթ կասկածի մը սարսուռ,  
Որ փախուստ կու տայ.

Ծիծաղն անդին սուլելով  
Սուր մը կ'երգէ.

Մինչդեռ ծաղրը խոր բասով  
Քովէն կը հեզնէ:

Մէկ ալ շրշիւն մը զգուշ  
Կը վազէ մէկդի.

Սիրոյ յուշիկ մը քնքուշ  
Որ կը խլրտի:

Իսկոյն խօրը բըռնկած  
Չայրոյթի մը պէս,

Տենչին շեշտը դարձիդարձ  
Կը կրկնէ պէսպէս:

Մինչև դողդոջ, նըւաղկոտ  
Ֆինալն երկարի...

Յոգնած մտքի բոցն աղօտ,  
Որ ալ կը մարի:

1894թ. մայիս, Լայպցիկ.

## Մ Ա Հ Ի Կ Ը

---

Շ Ա Ն Թ Ի

---

Թուփո երկինքէն կէս գիշերին  
Նեղ մահիկի կենտ աչքն է ծուռ.  
Որ անքրթիթ, խորագըննին  
Աչքերուս մէջ կը նայի լուռ.

Ու ժպտալով մը չոր, հեգնոտ  
Ինծի ըսել կ'ուզէ կարծես.  
«Նիւթի փշրանք, ի՞նչ կ'ընես հոտ.  
Գիտեմ, մե'ծ գործ, կը մտածես...»

1893թ. օգոստ. Ռոդոսթօ.



## Վ Է Ջ

### Շ Ա Ն Թ Ի

«Ալ շնացիմս կը վճռես դուն,  
Ալ կը շիկնիս ամօթխած.  
Ձիգ ակնարկըդ սակայն ժպտուն  
Դեռ աչքերուս շղթայած.

Եւ այդ ներքին կռիւդ ու վէճ  
Կը կայծկըլտան իր մէջէն.  
Ա՛, ճիշդ այդպէս ամպերուն մէջ  
Վերն աստղերը կը վիճեն:

Նայէ, հոգիս, նայէ ինծի  
Այդ քու մատնիչ աչքերով,  
Ուր կռիւ մը միշտ կը յաճի  
Ե՛ւ յուզում մը և՛ գորով:

1894թ. փետր. 1. Լայպցիկ:

# ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

Վ. Է. Պ

ԼԵԻՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՅՈՅՍԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ

## I

— Երկու տոմսակ մի մանէթ քսան կոպէկանոց:

— Չկայ:

— Առաջին կարգերից տւէք:

— Չկայ:

— Ապա ինչ գնանոց կայ?

— Տոմսակները սպառւած են:

— Սպառւած են? Չկայ և ոչ մի հատ?

— Ոչ մի հատ!

Ահա այսպիսի լակոնական հարց ու պատասխան էր կրկնւում նախկին Արծրունու Թատրոնի կասսայի առջև հինգշաբթի երեկոյեան ժամի մօտ ութին 188\* Թ. զարնան:

Թատրոնի ղաղլիճը լցւած էր հանդիսականներով: Անհնարին է նկարագրել այս խառնիճաղանճ բազմութիւնը: Պարտէրում տեղաւորւած էր գլխաւորապէս Թիֆլիսի հայ ինտելիգենցիան, մտքի և գրչի մարդիկ՝ զանազան հրապարակախօսներ, գրականագէտներ,

ուսուցիչներ և այլն: Օթեակների մէջ փառաւորապէս բազմած էին հարուստ մեծատունները իրանց ընտանիքներով: Վերեւից ջահի համասփիւռ շատաւիղները, զարնելով ականակուռ օղերին և ապարանջաններին, ոսկեայ շղթաներին և դիտակներին, շողշողում բեկում էին և ջրէժի նման չորս կողմը թաւալում լուսոյ փալուն շիթերը: Խառնութեամբ լցւած էր նաև վերնաշարկը, ջահէլ էնթուզիաստների սովորական տեղը թատրոնում:

Ամենքին դրաւել էր այտոնդ ամենամեծ հայ արախտը, որը պիտի ներկայացնէր այդ երեկոյ հիւսիսային հանձարի հոյակապ գործերից մէկը:

Հանդիսականները լուռ էին և իւրաքանչիւր վայրկեան սպասում էին վարագոյրի բարձրանալուն:

Յանկարծ դահլիճի դուռը բացւեց, և ներս մտաւ մօտ 21 տարեկան մի երիտասարդ, հասակը բարձր ու վայելուչ, հալեացքը համարձակ և մոտիտհ: Սև մազերի զանգուրները պէսպէս փանտաստիկական ձևեր և օղակներ էին կազմել նորա կանոնաւոր գլխին և դուռն ընկած լայն ծակափի վրայ: Հեռւից նա դեղեցիկ էր երևում, որովհետև չէին նկատում նորա ծաղկատար երեսի խորշոմները: Նա հաղած էր մուգ-կապոյտ պիջակ, և կրծքի վրայ անփոյթ կերպով թափւած էին երկնագոյն փողպատի երկայն ծայրերը:

Աչքերը դէպի վեր բարձրացնելով, օթեակներից մէկի մէջ նա տեսաւ մի օրիորդի դէմքը en face և իսկոյն գլուխը խոնարհեց, երբ զգաց, որ նորա ձեռքի դիտակը իւր վրայ է ուղղւած: «Ուրեմն նա էլ այտոնդ է», մտածեց երիտասարդը և իւր քայլերը ուղղեց դէպի ութերորդ կարգը:

Արտաշէս Ոսկերչեանը (այդպէս էր երիտասարդի անունը և ազգանունը), նիւթական միջոցների սղութեան պատճառով, միշտ գալերէի տունակ էր վերցնում: Բայց երբ պիտի կամ արախտը մի արտակարգ հետաքրքրութիւն էին ներկայացնում, նա բացառութիւն էր անում: Պալով այս անգամայն ներկայացմանը, պարտէրի մէջ տեղ գտնելու համար նա իւր վերջին կողէկը չէր խնայիլ, եթէ նոյն իսկ հաւատացած լինէր, որ վաղը կարող է առանց ձաշի մնալ:

Նստելով իւր տեղը, ծոցի զբաղանիցը հանեց «Համլէտի» էթա-



Նազին հրատարակութիւնը, բաց արեց առաջին արարածի երկրորդ տեսարանը, մի քիչ կարկաց, յետոյ զրքոյկը բաց դրեց ծնկան վրայ, գլուխը բարձրացրեց, աչքերը յառեց գէպի ջահը և նորա պայծառ լուսաւորութեան մէջ Աստուած դիտե, թէ ինչ երազներ էր տեսնում...

Նշանակած ժամից անցել էր արդէն տասներկու րոպէ, բայց բեմը դեռ ևս ծածկւած էր: Այդ պատճառով վերնաշարկը, որը թատրոնական դահլիճի ամենաանպոսպ մասն է համարոււմ, անհամբեր թխկթխկացնում էր յատակը և աղաղակում —

— Время, время!... ժամանակ է!...

Վերջապէս բարձրացաւ վարագոյրը, և էլսինորի դղեակի առջև ձեմէլիքի վրայ լուսնկայ կէս գիշերին երեացին երկու զինւած պահապաններ՝ Բեռնարդօ և Ֆրանսիսկօ: Բեռնարդօն ձօճւում էր շարունակ, կարծես ոտների տակ փշեր լինէին. Ֆրանսիսկօն անշարժ էր և ապուշի պէս նայում էր խօսակցի երեսին: Բեռնարդօն խօսելիս աջ ձեռքը անպադար վեր ու վար էր շարժում. Ֆրանսիսկօն երբեմն շփոթւում էր, ինչպէս ծով աշակերտը, որը լաւ չէ սովորել իւր դասը: Նոցա բռնած գիրքը, նոցա ձայնը, նոցա արտասանութեան ձևը — ոչ մէկը համապատասխան չէր գիշերուայ խորհրդաւոր լուծեանը:

Գերակատարները ջահէլ երիտասարդներ էին, երկուսն էլ անփորձ և թերուս:

Ութսունական թւականների սկզբումը, յայտնի է, մենք ունէինք մի փառաւոր զերասանական խումբ, ձօխ և հարուստ ակաւաւոր տաղանդներով, մի խումբ, որի եռամեայ գործունէութիւնը դարազրուի է կազմում մեր թատրոնի պատմութեան մէջ: Այդ շրջանը անցաւ, ոչ թերը ցիր ու ցան եղան, սկսեցին գործել իրարից անջատ, միմեանցից հեռու: Սակայն խմբի յաջող ներկայացումները և վատտակած փառքի դափնիքը արձագանք գտան գեղարուեստասէր պատանիների սրտերում, և հին խմբի տեղը բռնեց, աչպէս ասած, բեմական գործիչների նոր սերունդը, անպատրաստ և անփորձ: Նախկին խմբի անդամներից մի քանիսը երբեմն ձեռք էին մեկնում այդ նոր սերնդին՝ օգնելու և ղեկավարելու ցանկութեամբ, բայց այդ պատահական մի բան էր և մի ասանձին օգուտ չտուց

նոր ոչոքերին: Չկար առաջնորդ, չկար ղեկավար, և սկսնակներին վիճակած էր բոլոր յոյսը ղենել միայն սեփական ճաշակի, սեփական բարեհաջեցողութեան վերայ: Հասարակութիւնը էսթետիկական զւարճութիւնների համը ճաշակած լինելով, պահանջներ էր առաջադրում խմբին, իսկ նոր խումբը այդ պահանջներին բաւարարութիւն տալու կարողութիւն չուներ:

Երբ հեռեւեալ տեսարանում արքայական պալատի մէջ երեւացին ժպտերես թագաւորը և թագուհին և գոջնզգոջն շորերով մերձաւորները, շքախումբը և ամենից վերջը ինքը Համլէտը՝ սգաւոր, ոտից ց'գլուխ սև հագած, գեղեցիկ գանգուրները ուսերին թափած, կորազլուխ, թախծալի աչքերը գետնին խոնարհած և ձեռքերը վշտով կրծքին ծալած,— դահլիճը զղրգաց ծափահարութիւններից: Իսկ երբ զործողութեան վերջումը Համլէտի սարսափած աչքին երեւաց սպանւած հօր ուրւականը, և նորա արիւնը կարծես կանգ առաւ սրտի մէջ, կուրծքը և կրծքի վրայ դրած ձախ ձեռքը սկսեցին բարձրանալ և իջնել ծանր շնչառութիւնից, և ապա դողդողաց խորին վշտի ձայնը, հանդիսականները, բոլոր էութեամբ ուշադրութիւն դարձած, աշխատում էին նոյն իսկ իրանց շունչը զսպել, որպէս զի ոչինչ չկարողանար վրիպել նոցա աչքից և լսողութիւնից:

Իսկ Ոսկերչեանը... Մազերի արմատից սկսած սարսուռ անցաւ մէջքի վրայով ամբողջ մարմնի մէջ, քթի նուրբ ունգերի մէջ կսկիծ գգաց, աչքերը ջրակալեցին, և արտասուքի կաթիլները, երեսի խորշոմները թրջելով, ցած էին գլորւում իրար ետեւից: Անարակտի ժամանակ հասարակութիւնը լցրել էր ֆօյէն: Հանճարաւոր խաղի թարմ տպաւորութեան ներքոյ՝ խօսակցութիւնը հանդիսականների մէջ մի առանձին կենդանութիւն էր ստացել: Ամեն կողմից չաճախ լսում էր արտիստի անունը և գովեստը:

Արտաշէս Ոսկերչեանը համարեա ամենից ուշ դուրս եկաւ թատրոնի դահլիճից, որտեղ նա՝ միացած ուրիշ տաք էնթուզիաստների խմբին, առաջ էր գնացել զէպի բեմի կողմը, օրքեստրի մօտ, և անընդհատ ծափահարում գոռում էր:

—Աղամեան! Աղամեան!.... Bravo! bravo!...

Մտնելով ֆօյէն, նա սկսեց խօսակից որոնել և տեսնելով, որ



հետու պատի մօտ ծանօթների մի խումբ է կանգնած, սորան նորան հրելով, մէկից և միւսից ներողութիւն խնդրելով, վերջապէս դուրս եկաւ բազմութեան միջից:

— Ես հէնց ձեզ էի փնտռում, բարեւ, — ասաց նա, ձախ ձեռքում բռնած թաշկինակով սրբելով ճակատի քրտինքը և աջը մեկնելով ծանօթներին: — Հը, ինչպէս էր? Հարցրեց նա, դիմելով Գարեգին Զառիկեանին:

— Շատ զեղեցիկ, իհարկէ, — պատասխանեց բարեկամը: — Ինչ է? Առաջին անգամն ես տեսնում Ադամեանին?

— Այո, առաջին անգամ: Բայց այնքան հիացած եմ, այնքան հիացած!...

— Այո, տեսնում եմ, դու սաստիկ յափշտակւած ես, — նկատեց Զառիկեանը, համակրութեամբ նայելով խօսակցի երեսին:

Այդ րոպէին երևաց օր. Աշխէնը, Գարեգին Զառիկեանի քոյրը, որը մի ուրիշ օրիորդի հետ թեանցուկ արած՝ անց ու դարձ էր անում Ֆօշէի երկարութեամբ: Երբ նա տեսաւ իւր եղբորը, մօտեցաւ նորան օրիորդի հետ, բարեկց Բակրչեանին և մի երկու բերան խօսելուց յետոյ ասաց.

— Խնդրեմ ծանօթանաք. օրիորդ Մարիամ Վարթումեան, ընկերուհիս: Սա եղբայրս է:

— Շատ ուրախ եմ. Գարեգին Զառիկեան:

Օր. Մարիամի սիրով լի աչքերը, առաջին անգամ այնքան մօտ հանդիպելով պ. Զառիկեանի բարի և խելօք աչքերին, մի տեսակ անորոշ, բայց քաղցր զգացմունք զարթեցրին երկու մտողաշարտերի մէջ. այդ հայեացքները միայն մի վայրկեան կարճեա բարեկամական մտերմութեամբ ձուլեցին իրար հետ, և այնուհետ նոքա այլ ևս չկարողացան միմեանց վրայ համարձակ նայել, այնպէս որ, երբ օրիորդը խօսում էր Գարեգինի հետ, նորա քրոջն էր նայում ժպտալով, իսկ երբ ինքը Զառիկեանն էր խօսում, աչքը ձգում էր յատակին կամ աչլուր, բայց ոչ նորա երեսին:

Օրիորդ Աշխէնը իւր ընկերուհու հետ ծանօթացրեց նոյնպէս Արտաշէս Բակրչեանին, որը վաղուց ի վեր փափագ ունէր նորա հետ ծանօթանալու:

— Մենք հարեաններ ենք, — ասաց Արտաշէսը, օրիորդի սպի-



տակ և քնքշիկ ձեռքը սեղմելով իւր վտիտ ու ոսկրոտ ձեռքի մէջ:

—Գուք հարեաններ էք? Ես այդ չգիտէի, խօսում էր օրիորդ Աշխէնը, նայելով մերթ Ոսկերչեանի, մերթ օր. Վարթումեանի աչքերին:

—Այո, ինչպէս չէ: Պարոն Ոսկերչեանը երբեմն ջութակ է ածում, և ես լսում եմ մեր տան պատուհանից:

—Արտաշէսը նւագում է? զարմանքով հարցրեց օր. Աշխէնը, գիմելով եղբօրը. կարծես ցանկանում էր իմանալ, թէ ինչու Գարեգինը այդ մասին իրան ոչինչ չէ յայտնել:

Երբ օր. Մարիամը ասաց, թէ ականջ է դրել Ոսկերչեանի նւագածութեանը, վերջինը սկսեց մտածել երկմտութեամբ. ինչ էին նշանակում օրիորդի խօսքերը? Կա հեղնութիւն էր թէ դովեսո? Յետոյ, համեստութիւնից դրդւած, նա ասաց հետեալը.

—Մի գուցէ Աշխէնը, իրաւ, կարծէ, որ ես խկապէս մի երաժիշտ եմ եղած: Բայց ես, կարող եմ հաւատացնել, բոլորովին ածել չգիտեմ: Ազնիւ խօսք: Ճշմարիտ է. ես ունիմ մի ջութակ և գնել եմ շուկայում հինգ մանէթով: Այդ զործիքի վրայ ես մի քանի ամիս չարչարել եմ և այժմ ես համոզւած եմ, որ զուրկ եմ երաժշտական ընդունակութիւններից: Ես զարմանում եմ, որ օրիորդը, փոխանակ մի վերստ հետու փախչելու իմ ջութակի քրքրւած ձայնից, դեռ համբերութիւն է ունեցել ինձ ականջ դնելու:

—Աւա, լու, համեստութիւնդ թող,—նկատեց օրիորդ Աշխէնը կատակով:—Վաղը երեկոյեան ջութակդ կը վերցնես և շնորհ կը բերես մեզ մօտ: Ես կը լինեմ քո դատաւորը, կամ քննադատը, ինչպէս կ'ուզես:

Դահլիճում երաժշտութեան ձայնը լսեց: Ասեց վերջին զանգը: Ֆօլէն արդէն դատարկւել էր: Ոսկերչեանը իւր տեղումը նստած էր: Օր. Աշխէնը իւր եղբօր հետ, իրանց տեղերը բռնած, նայում էին վերև աչքն օթեակին, որտեղ օր. Վարթումեանը պիտի երևար: Յաճիր ձայնով քոյրը պատմում էր եղբօրը օր. Մարիամի մասին: Գարեգինը լսում էր, ըստ երևոյթին, մեծ բաւականութեամբ և աչքը չէր հեռացնում օթեակից, թէև նա թափուր էր այդ միջոցին: Վերջապէս աչքն տեղ երևացին նախ մի հասակաւոր կին, օրի-

որդի մօրաքոյրը, որի ճակատանոցին խրած աղանանդեայ քորոցը ջահի ճառագայթներից խկոյն փայլիկեց, յետոյ ինքը օրիորդը և ապա նորա ետեւից մաքուր և կոկ հագնւած մի սիրուն պատանի:

Երբ վարազոյրը բարձրանում էր, օր. Մարիամը, օգուտ քաշելով պատեն վայրկենից, դիտակը ուղղեց Ներքե Գարեղին Զառիկեանի վրայ, որը մեքենայաբար դուրսը վեր բարձրացրեց և նկատեց նորան:

Բեմի վրայ երկու հոգի կային միայն՝ Համլէտը և Պոլոնիոսը: Առաջինը իրան խենթ էր ձեւացնում, որպէս զի աւելի լաւ յիմարացնէ ծերունուն. երկրորդը աւելի յիմար էր ձեւանում և թոյլ էր տալիս երիտասարդ արքայազնին իրան ծաղրի առարկայ դարձնել, ինչպէս պապը ներդամութեամբ թոյլ կը տայ իւր չարածձի թռուան իւր սպիտակ մօրուքի թելերը քաշքշել և փետտել: Խօսակցութիւնը բարձր ձայնով չէր կատարւում, այնպէս որ այդ տեսարանի բոլոր նրբութիւնները ըմբռնելու համար հանդիսականներից պահանջւում էր ուշադրութիւն և անպայման լռութիւն: Բայց թատրոնում միշտ պատահում են այնպիսի տարօրինակ անձինք, որոնք իրանց ուշադրութիւնը դարձնում են դէպի բեմը միայն պաթետիկական վայրկեաններում կամ աչն րոպէներին, երբ դերասանները գոռում գոչում են և սրեր շողշողացնում: Իսկ երբ հարկաւոր է լինում ուշի ուշով հետեւել արտիստի խաղին, որպէս զի կարելի լինի ճիշտ հասկանալ այս կամ այն տիպը, այն ժամանակ այդպիսի պարոնները ջօրանջում են, դուրսները դէս ու դէն շրջում, հարւանների հետ խօսում և քիթները կոխում թաշկինակի մէջ:

Արտաշէս Ոսկերչեանը ցնցւում էր բարկութիւնից ամեն անգամ, երբ մի շշուէ կամ շշնջիւն էր լսւում դահլիճի այս կամ այն ծաչրից: Նա դարձնում էր երեսը և մի յանգուզն և արհամարտ հայեացք նետում դէպի այն կողմը, որտեղից իւնգարողի ձայն էր լսում: Նորա կատաղութիւնը զալիս էր, երբ հետաքրքրական վայրկեաններում տեսնում էր, որ այնտեղ կանխեա են որոճում, այստեղ փսփստում են իրար ականջի և ժպտում:

Այդ գործողութիւնից յետոյ Ոսկերչեանը աւելի զայրոյթ էր յայտնում ծանօթների մօտ անքաղաքավար հանդիսատեսների նկատմամբ, քան թէ հրճանք՝ Ադամեանի խաղի առիթով:



Սակայն երրորդ արարւածը ամեն բան մոռացնել տւեց: Ոսկեր-  
չեանը այժմ դեռ նոր զգաց արտիստի տաղանդի բոլոր կորովը,  
նորա ձայնի անուշ ելեէջները, նորա բերնից հնչող մայրենի լեզուի  
քաղցրութիւնը, նորա նուրբ-հոգեբանական հոտառութիւնը, նորա  
խելացի դիմախաղը և խորամիտ շարժումները: Երբ նա արտասա-  
նում էր «լինել թէ չլինել» յայտնի մենախօսութիւնը, և կարծես  
կապանքից ազատւած հոգին վերանում էր դէպի երկինք և առա-  
իջնում երկիրը, անվերջ տանջանքների այս միջավայրը,—կամ  
երբ Օֆելիային հանդիպած րոպէին նա կարծես շիկնած երկաթով  
հանում է սէրը սրտի խորքիցը, յետոյ ոտի տակը տալիս և ապա  
կրկին վերցնում և համբուրում,—կամ այն ժամանակ, երբ նա  
Օֆելիայի մօտ յատակի վրայ տարածւած, աչքերը նետած թա-  
գաւորի հայեացքի մէջ, սողում է զգուշութեամբ, ինչպէս զոհի  
վրայ ոստում գործելու պատրաստուող մի վաղը, և ասես ճիգ է  
թափում, որպէս զի, յարմար առիթ որսալով, մոնէ նորա աչքերի  
մէջ, հոգու խորքերը թափանցէ և ճանկռտէ այնտեղ նորա նեխւած  
անկիւնները,—այդ րոպէներին հասարակութիւնը կատարեալ պատ-  
րանքի մէջ էր: Կարծես կախարդական զաւազանի նշանով հարիւ-  
րաւոր սրտեր բաբախում էին համաչափ զարկերով, և ամենքը,  
առանց բացառութեան, մեծ թէ փոքր, այդ թէ կին, զգում էին  
իրանց վրայ հանճարաւոր արտիստի հոգու հսկայական զօրութիւնը:

Վարագոյրը իջաւ: Դահլիճը դղրդում է: Ծափահարութիւն-  
ներ, կեցցէներ, ոտների զոփիւն... Վարագոյրը նորից բացւում  
է, և էլի ծածկւում, և կրկին բացւում: Արտիստը յոգնած է, բայց  
նորան դարձեալ բեմ են կանչում և անվերջ կանչում են: Բեմի  
առաստաղից, կողքի օթեակներից, օրկեստրի միջից, պարտէրից,  
ամեն կողմից տեղում են պսակներ, ծաղիկներ, փնջեր, թափւում  
են արտիստի գլխին, նորա ոտների տակ, նորա չորս բոլորքը:  
Քանկագին ընծաներ է որ մատուցւում են: Օթեակների մէջ տի-  
կիւնները և օրիորդները սիրաժպիտ ծածանում են թաշկինակները:  
Վերնայարկը խենթացել է. գոռում են, ոտներով յատակը դոփում:  
Ձահի լոյսը դողդողում է դահլիճի վիթխարի շնչառութիւնից և  
թնդիւնից: Պարտէրի առաջին կարգում, փոքները չենած օրկեստրի  
պատնէշին, կուրծքները առաջ թեքած, ծափահարութեամբ և ինք-



ցէներով իրանց գոհունակութիւնն են յայտնում արտիտին, որը՝ ձեռքը կրծքին՝ շնորհակալութեան զգացմունքով լցած, գլուխը շրջում է աջ ու ձախ, վերև ու ներքև և ետեւ է գնում՝ դադարած և ուժասպառ, բայց էլի ուրախ և ժպտերես:

Հասարակութիւնը ֆոյէի մէջ չափազանց աշխոյժ տրամադրութեան մէջ էր: Իւրաքանչիւրը յայտնում էր իւր ցնծութիւնը զանազան բացականչութիւններով:

—Ա՛խ, սքանչելի էր!...

—Հիանալի էր!...

—Աննման էր!...

Մի տեղ Ադամեանի նախկին արւեստակից ընկերներից մի քանիսը կանգնած խօսում էին: Մէկը ասում էր.

—Դու չիշում ես? Ադամեանը մի ժամանակ իրան բեմի վրայ պահել չգիտէր: Մենք ենք, որ նորան Ադամեան դարձրինք! Բայց անսիրտանը հիմա շատ լաւ է խաղում:

—Այո, շատ լաւ է, գեղեցիկ է,—նկատում էր միւսը, որի աչքերը նախանձից այրւում էին, և նորա ձայնի մէջ արտագէտող իսկոյն կը նշմարէր զսպած զայրոյթի մի հնչիւն:—Շատ լաւ է. բայց ես կարծում եմ, բոլորովին պատճառ չկար խելագարւելու, ինչպէս հասարակութիւնն էր խելագարւում: Զարմանալի բան է! Համակրակական ցոյցներին էլ մի չափ ու սահման կը լինի թէ ոչ?

Դահլիճի դրան մօտ, որտեղից անմիջապէս պարտէրի առաջին կարգը կարելի է դուրս գալ, հաւաքւած էին մի խումբ երիտասարդներ և լսում էին երկու պարոնների, որոնք վէճի էին բռնւած Ադամեանի խաղի մի կէտի առիթով: Այդ երկու պարոնները, մէկը Սևումեան, միւսը Ազատեան, միեւնոյն լրագրի աշխատակիցներ էին: Վէճի առարկան այն դատակն էր, որ Ադամեանը ձեռքումը բռնած էր «լինել թէ չլինելը» արտասանելու միջոցին: Սևումեանը պնդում էր, որ այդ դատակը ամենեին աւելորդ մի բան է, որովհետև նա կը սազէր աւելի աւանդութեան Համլէտին, քան թէ Շէքսպիրի Համլէտին: Միւսը արդարացնում էր Ադամեանին, զանազան պատճառներ առարկելով: Այդ խմբիցը ոչ այնքան հեռու կանգնած լսում էին վիճողներին օր. Աշխէնը և օր. Մարիամը: Առաջինը սուանձնապէս լարում էր իւր ուշադրութիւնը այն բո-

պէններին, երբ սկսում էր խօսել Սևուժեանը և, ըստ երևոյթին, հակառակ էր նորա կողմը: Իսկ օր. Վարթումեանին հետաքրքրում էր այդ երիտասարդների անձնաւորութիւնը: Օր. Զառիկեանը, պատասխանելով ընկերուհու հարցումներին, ասում էր.

—Ահա այն մէկը, որը արժւաքիթ է և թաւ յօնքեր ունի. այն, նա, որ հիմա սկսեց խօսել, դա Սևուժեանն է: Իսկ միւս պարոնը Ազատեանն է: Երկուսն էլ «Ճառագայթ» լրագրի գլխաւոր աշխատակիցներիցն են և շատ սուր գրիչ ունին: Միայն ինձ աւելի դուր են գալիս Սևուժեանի գրածները: Նա յաճախ լինում է մեր տանը: Վերին աստիճանի համոզւած, սկզբունքների տէր և ազնիւ երիտասարդ է:—Եթէ դու կամենաս, ես կարող եմ ձեզ ծանօթացնել, մանաւանդ, որ անցեալ անտրակտի ժամանակ Ազատեանը ինձ հարցրեց չքո մասին:

Զառիկեանը գնացել էր դուրս ծխելու: Երբ նա եկաւ օրիորդների մօտ, տեսաւ, որ Սևուժեանը և Ազատեանը ծանօթանում էին օր. Վարթումեանի հետ: Խօսք բացւեց Ադամեանի խողի մասին: Գարեգինը յալշեց, լսելով օր. Մարիամի առողջ դատողութիւնը պիեսի և արտիստի նկատմամբ: Առաջ օրիորդը միայն գեղեցիկ և համեստ աղջկայ տպաւորութիւն էր գործել Զառիկեանի վրայ: Այժմ երևաց, որ օր. Վարթումեանը նաև շատ կարգացած է և խելօք գլուխ ունի:

Առաջին զանգահարութիւնից յետոյ մի քանի րոպէ անցած, շտապով մօտեցաւ այդ խմբին Արտաշէս Ոսկերչեանը: Նա ուրախ էր, ժպտում էր, և աչքերը փայլում էին:

—Այս որտեղ ես, Արտաշէս, էիր երևում? Հարցրեց Գարեգինը իւր բարեկամին:—Վարժեցի բուժֆետոն ես գնացել զարեջուր խմելու: Բայց այնտեղ քեզ չտեսայ:

—Ի՞նչ բուժետ, ի՞նչ զարեջուր, Ադամեանի մօտն էի, Ադամեանի մօտ!

—Ադամեանի մօտ էիր? Ուրեմն բեմն էիր դնացել? Հարցրեց օր. Աշխէնը, ընդհատելով Ազատեանին, որը մի կատարեալ ծառ էր սկսել «Ժամանակ» լրագրի դէմ:

—Այո, —պատասխանեց Ոսկերչեանը, —գնացի, ծանօթացայ Ադամեանի հետ, ձեռքը սեղմեցի, հազար անգամ շնորհակալու-



Թիւնս յայտնեցի և եկաց!... Բայց ես ոչոքի խորհուրդ չեմ տալ քեմ վնաս, որովհետեւ, երեւակացեցէք, այն Օֆելիան, որը բեմի վրայ հրեշտակի էր նմանում, կուլիաների ետեւ ուրիշ բան չէր, եթէ ոչ մի քաւած աղջիկ:

Ոսկերչեանը իւր սրամիտ ղեարձախօսութիւններով ծիծաղեցնում էր լսողներին, իսկ վերջին զանգը լսելուն պէս, նա կիսատ թողեց իւր խօսքը, իսկոյն իրան նետեց բազմութեան հոսանքի մէջ և, երբ վարագոյրը բարձրանում էր, նա արդէն իւր տեղը բռնած էր:

Մինչև ներկայացման վերջը Ոսկերչեանը լարւած ուշադրութեամբ հետևում էր Ադամեանի խաղին և շատերի հետ միասին մասնակցում էր բոլուն ծափահարութիւններին և կեցցէներին: Նոյն իսկ այն ժամին, երբ հասարակութիւնը ցււել էր, և դահլիճը դատարկւել, և բեմի առջև մի խումբ գիմնադիստներ և այլ պատանիներ խզւած ձայնով և անվերջանալի ծափահարութիւններով տասերօրդ անգամ դուրս էին կանչում Ադամեանին, Ոսկերչեանը ոչ ոքից ետ չէր մնում, չնայած, որ բոլորովին քրտնած էր, ջուր կորած և աղաղակելիս բուկը քերւում էր և ցաւ պատճառում:

Նա մասնակից եղաւ նմանապէս և այն ովաքիաններին, որոնք տեղի ունեցան փողոցում, ուր բանը այնտեղ էր հասել, որ տաքարիւն ջահել թաորոնասէրները կամենում էին ետ անել լծած ձիաներին, որպէս զի իրանք քարշէին կառքի մէջ նստած երկրպագիլի արտիստին!...

## II

Գիշերւայ ժամի մէկն էր, երբ Ոսկերչեանը հասաւ տուն: Մօտ տասը րոպէ վայրկենական ընդհատումներով նա բաղխում էր դարպասը, ոչ մի ձայն: Համբերութիւնը հաւատած՝ նա սկսեց ուժով ցնցել դուռը: Աւերջապէս ներքեւի յարկից պատուղ բանալիքի ձայն եկաւ, լսեց քնահար տանտիրոջ փնթփնթոցը: Նանդաղ քայլերով նա մօտեցաւ և բաց արեց դուռը: Նա շապկով էր, ուսերին մի ինչ որ ծածկոյթ ձգած:

— Օխնածի վտրդի, չիս կանա քիչ վաղ էիր տուն եկի?

Ոսկերչեանը ներողութիւն խնդրեց պատճառած նեղութեան համար, յետոյ արագ բարձրացաւ փայտեայ սանդուխներով և ներս



մտաւ իւր սենեակը: Վաչր զնելով զլսարկը սնդուկի վրայ, ձեռափայտը անկիւնում, նա վառեց լամպարը և պառկեց հանգստանալու:

Վանաչ լուսամտիովը դրած էր մի կողմ, այնպէս որ սենեկի աղքատիկ, բայց բնորոշ կահաւորութիւնը պարզ երևում էր: Պատուհանի առջև մահճակալի մի ծայրին կանգնած էր փոքրիկ փայտեայ սեղանը, աններկ և անզարդ: Նորա վրայ եղած թանաքի սև բծերը և այրած քիհետքերը սկզբում Ոսկերչեանի համար սաստիկ անախտօժ էին. աչք էին ծակում, ջղեր էին գրգռում: Գորանից աւելի լաւ կարասիք տալ իւր կենողին տանտէրը, երևի, աւելորդ շուպլութիւն էր համարել: Նրբաճաշակ երիտասարդը շուտով Փահմեց ազատել իրան այդ անյարմարութիւնից: Իւր սուղ միջոցներից մի փոքրիկ գումար խնայելով, սեղանի համար մի օր մի գողտրիկ ծածկոց գնեց, որով անձոռնի սեղանը սքողեց իւր ազդեցութիւնը: Նորա վրայ հասարակ շրջանակների մէջ երկու պատկեր կար՝ մէկը Գարեգին Զառիկեանի լուսանկարը, միւսը՝ մի հայ գրականական գործիչի: Սեղանի երկու կողմում խնամքով իրար վրայ դարսւած էին զանազան դասագրքեր և ընթերցանութեան գրքեր: Նայողի աչքին կը զարնէին իսկոյն Բայրնի հեղինակութիւնների առաջին հատորը, ռուս ամսագրից պոկւած մի յօդւած „Сальвини въ роли Отелло“ և „Тальма о сценическомъ искусствѣ“ — վերնագրով բրոշիւրը, որ ձեռք էր բերւած բուկինիստների մօտ էժան գնով: Սեղանի գլխին պատի վրայ քաշ արած հին ձևի և մի քանի տեղ լաժուարովը քերւած հայելու մէջ անդրադարձել էին զիմացի պատին կողքած Շէքսպիրի պատկերը, առանց շրջանակի, և նորա կողքին մեխից կախւած ջութակը: Զմռանամ այստեղ յիշել նաև երկու դեղին ներկւած հասարակ աթոռներ, որոնցից մէկը, աւելի նորը, սեղանի առջև էր դրւած, իսկ միւսը, որը խախուտ էր և լխլխում էր, անկողնակալի մօտ:

Ահաւասիկ Ոսկերչեանի կացարանը:

Ոսկերչեանը վերին աստիճանի վառ և բանուկ երեակայութիւն ունէր: Քնելու մասին նա ամենեւին չէր հոգում: Իւր բոլոր էութեամբ նա անձնատուր էր եղած մտորումներին և ստացած տպաւորութիւնների անխոնջ գործունէութեանը: Այն ամենը, ինչ

որ նա տեսել և լսել էր այդ երեկոյ, երկրորդ անգամ և երրորդ անգամ և կարծես անվերջ շարունակուում էր կրկնել նորա աչքի առջև:

Նորա ականջին դեռ ևս հնչում է երաժշտութեան ձայնը: Նա դեռ լսում է ծափահարութիւնների և չափակի թխկթխկոցի աղմուկը, կեցցէների աղաղակը և հարիւրաւոր մարդկանց խօսակցութիւններից ու ծիծաղից գոյացած ահագին ժխորը: Նորա աչքի առջև է Համլէտը այս կամ այն դիրքի մէջ՝ մահաւան րոպէին, Լաէրտի հետ մենամարտելիս, գերեզմանատանը՝ վանգը ձեռքին, Փիելիսայի ոտների մօտ, ուրականի հանդէպ:

Ահա ծաղկափնջերի անձրեւը, ահա ծածանւող թաշկինակներ, ահա ողևորութիւնից փայլփլող աչքեր, ահա ժպտուն երեսներ... Այս հարուստ տպաւորութիւնների ճնշման ներքոյ Ոսկերչեանի կամքը բնական կորցրել էր իւր ոյժը, և նա իւր միտքը էր կարողանում կենդրոնացնել մի որոշ առարկայի վրայ: Քանի անգամ նա փորձ արեց ետ մղել իրանից այդ տպաւորութիւնները, որոնք միայն սկզբում քաղցր ու զրաւիչ էին երևակայութեան համար, բայց յետոյ, նոցա փայլը նսեմանալով, խանկեցին իրար և խօստի նմանութիւն ստացան: Անխորժ զգայմունքից կծկւում էր դէմքը, բերնի ծալերը վեր քաշւում, և նա մի ձեռքը ամուր ետ ու առաջ էր տանում ակօսւած ճակատի և խփւած կողերի վրայով: Բայց իզուր. ամեն անգամ մտապատկերների բազմութիւնը, մեղուների խառնափնթոր երամի պէս, մի վայրկեան հեռանում էր և էլի նորից ետ էր գալիս, զժժում, գլխի շուրջը պտտւում:

Բայց այդ բոլորի մէջ երկու առարկաններ կային, որոնցով միայն նա կը ցանկար իւր ուղեղը զբաղեցնել, երազել մինչև լոյս և էլի չկտանալ: Մէկը՝ նորա սպառնալի փառքն էր, որի պսակը երևում էր աչքին վարդադոյն շողերի բազով շրջապատւած, միւսը՝ օթեակի մէջ բազմած այն դեղաչեաց օրիորդն էր, որը պիտի լրացներ նորա երջանկութիւնը:

Սակաւ հանդիստ չառնելուց յետոյ, երբ Ոսկերչեանը կարողացաւ իւր մտքերը ուղածի պէս կառավարել, քնից արթնացածի նման վեր թռաւ տեղիցը և, օդի խեղտիչ ծանրութիւնը զգալով, քաց արեց պտտահանի փեղկերը: Հայեացքը ընկաւ հանդիպակաց տան



լուսամուտներին. նորա բոլորն էլ գոց էին, և վարագույնները իջեցրած: Անամայ երկնքին նայեց. այնտեղ մի առանձին պայծառ փայլով ցոլում էին, ադամանդների նման, անթիւ անհամար մեծ ու փոքր աստղեր:

Մի քանի վայրկեան դրսիցը մաքուր օդ շնչելուց յետոյ, նա նստեց սեղանի առջև, մի գիրք առաւ ձեռքը, որպէս զի կարգաց. բայց տեսնելով, որ աչքերը տողերին են նայում, իսկ միտքը հեռու է, իսկոյն ծալեց գիրքը, վեր կացաւ և լամպայի վրայ մի պատիրոս կացնելով, սկսեց ծխելով անց ու դարձ անել սենեկի մէջ: Ներս էր քաշում ծուխը, մեքենայաբար և արագ փչում էր կրակի վրայ, առանց սպասելու, որ ծխախտիցը մոխիր զոյանար: Ամբողջ զլանակը մինչև տակը ծծելուց յետոյ, նա կրկին պառկեց անկողնակալի վրայ, երկու ձեռքը դրեց զլսատակին, ոտը ռոտի վրայ, և, ակնապիշ առաստաղին նայելով, բոլոր հոգովը խորատուգւնց ոսկի երազների աշխարհը: Դա այն եղեմն էր, ուր շատերը եղած են պատանեկան հասակում վառվռուն երեակայութեան շրջանի մէջ:

Ոսկերչեանը հուշակաւոր և մեծ արտիստ է: Նա իշխում է բեմիցը հարիւրաւոր մարդկանց սրտերի վրայ: Երբ նա երևում է Համլէտի կամ Լիր թագաւորի գերում, դահլիճի մէջ խլացնող ազադակ է բարձրանում: Նորա խաղը նուրբ է, խորիմաստ և խիստ ազդու, այնքան ազդու, որ նոյն իսկ ուշաթափութեան դէպքեր են պատահում ներկայացման միջոցին: Իսկ ովացիաները ինչ չըսկայական ծաւալ են ստանում! Դա մի հասարակ համակրական ցոյց չէ, այլ մի մեծարանք, ասուածացում: Երազական յօգւածների մէջ համեմատում են նորան Պառմէթեսի հետ, որովհետեւ նա սուրբ կրակ է չափշտակում երկնքիցը և այդ չրով բորբոքում մինչև անգամ սառնարիւն, անղգաց սրտերը: Ամենուրեք Ոսկերչեանի անունը բերանից բերան է անցնում:

Ընկերներին շատերը աշխատում են նորան նմանել, իւրացնելով նորա խաղի բոլոր առանձնայատկութիւնները, ձայնի եղանակը, գիրքը, շարժումները: Իսկ ոմանք նախանձում են նորա փառքին: Բայց նա մեծահոգի կը լինի աչքախիսների վերաբերմամբ, որովհետեւ ինքը քաջ գիտէ, որ թոյլերին յատուկ է նախանձը:

Օրիորդները ամեն կերպ ծիգ են թափում Ոսկերչեանին հա-



ճոյանալու և սրտին տիրանալու՝ մէկը՝ իւր գեղեցկութեամբ, միւսը՝ իւր խելքով, երրորդը՝ շոյական գրեւորութեամբ: Բայց սիրոյ այդ բոլոր ջանքերը իզուր են: Նորա սիրտը արդէն պատկանում է օր. Մարիամին:

Նա կ'ունենայ սեփական տուն, բնակարանը շքեղ և ճաշակով կահաւորած: Տան դռները միշտ բաց կը լինին հիւրերի առաջ: Նորա տան դահլիճը կը դառնայ սալոն, ուր կը հաւաքւեն ընտիր երիտասարդներ, գրական և հասարակական լաւագոյն գործիչները, հազար ու մէկ խնդիրներ կը ծագեն, ծրագիրներ կը մշակւեն: Նա կը լինի այդ շրջանի հոգին, և այդ շրջանը փոխադարձաբար միշտ վառ կը պահէ նորա եռանդը, թարմ կը պահէ նորա զգացումները: Տաղանդին միացած պիտի լինի և հեղահամբոյր բնաւորութիւնը, որպէս զի ոչ մէկը իրաւունք չունենայ ասելու, թէ Ոսկերչեանը հպարտ է, գլուխը բարձր է պահում:

Նա իւր անձը պիտի դնէ գեղարւեստի համար, նա պիտի բարձրացնէ հայկական գեղարւեստը, պիտի ազնւացնէ հայի էսթետիկական ճաշակը: Նա այդ կարող է անել, նա իւր մէջ ոյժ է զգում, իրան կոչւած է զգում այդ սուրբ գործի համար:

Այսպէս ահա Ոսկերչեանը իւր անզուսպ երեւակացութեան մէջ կարծես կանգնած լինէր մի կախարդական հայելու առջեւ, ուր նա, որպէս մի բաց գրքի մէջ, կարդում էր իւր ապագայի փառքը և մեծութիւնը...

Նա հաւատում է իւր բախտաւոր աստղին, նա վստահ է իւր ոյժերի վրայ, նորա իղձերը անիրագործելի ցնորքներ չեն:

Լինել մեծ մարդ և մեծ տաղանդ — այդ էր Ոսկերչեանի կեանքի բնաբանը և դորա շուրջն էին պտուում այդ գիշեր նորա բոլոր մտքերը:

Կից սենեկի մէջ պտտի ժամացոյցը Ֆշշալով զարկեց երկու անգամ: Այդ երկու չափական զարկերից սթափւեց երիտասարդը, դուրս ելաւ երանքների աշխարհից և իրան զդաց իւր անշուք բնակարանի չորս պատերի մէջ:

Այդ րոպէին նորա աչքին դիպաւ պատից կախած ջութակը: Ջութակի տեսքը յիշեցրեց նորան այդ օրւայ ծանօթութիւնը օր. Մարիամի հետ, որի կենդանի պատկերը իսկոյն ներկայացաւ նորա աչքի առաջ:

Ինչ սիրուն էր նա մանաւանդ այդ երեկոյն! Ինչ սազում էր նորա շուշանագոյն մարմինն հասամանի գոյնի զգեստը! Երբէք նորան չաջողած չէր այդքան մօտուստ դիտել այն չնաշխարհիկ դէմքի նուրբ զծագրութիւնները՝ նորա ձւաձև երեսի կապտագոյն երակները, աչքերի ամբիժ սպիտակուցը, բիբերի մաքուր պարզութիւնը: Տեսնել այդպիսի աչքեր և նոցա մասին չերագել ժամերով — դա կարելի բան է? Այդպիսի աչքեր ստեղծում է բնութիւնը կարծես միմիայն նորա համար, որ Ոսկերչեանի նման երիտասարդին խելքից հանեն:

Նա աշխատում է բառացի կրկնել այն խօսքերը, որ ասաց օրիորդը ծանօթանալու րոպէին: «Պարոն Ոսկերչեանը երբեմն նւագում է ջութակի վրայ, և ես լսում եմ մեր պատուհանից: Ինչ էին նշանակում այդ խօսքերը?

Նա վերցրեց ջութակը և սկսեց մի մեղմ եղանակ ածել, կարծես ցանկանում էր համոզուել, թէ օրքան ախորժելի կարող է լինել նորա ջութակի ձայնը մի օրիորդի, որը ինքը լաւ նւագում է դաշնամուրի վրայ և, ուրեմն, երաժշտական ծաշակ ունի: Բայց նա տհաճութեամբ ձգեց իւր ձեռքին բռնած զօրժիքը, մտածելով. «Այ, նորա ասածը գովասանք չէր պարունակում իւր մէջ, այլ դա, երևի, սիրոյ, կամ դոնէ համակրութեան մի արտայայտութիւն էր, և ուրիշ ոչինչ»:

Ինչ որ մի զօրութիւն Ոսկերչեանին քարշեց յանկարծ սեղանի մօտ. նա կանգնեց հայելու առաջ և հայեացքը բեւռեց իւր սեփական աչքերի մէջ: Այն ինչ էր արդեօք, որ նա փնտրում էր այնտեղ?

Ոչինչ, այս դատարկ բան է: Այն, ինչ որ նա չի գտնիլ այստեղ, իմ դէմքի վրայ, կրկնապատիկը կը գտնէ սրտիս մէջ: Աղջկան հրապուրում է ոչ միայն արտաքին գեղեցկութիւնը, այլ և ներքին արժանաւորութիւնները, տաղանդը, փառքը... Բայց այնուամենայնիւ ինչ լաւ կը լինէր, որ ես Պարիսի գեղեցկութիւնը ունենայի:

Այսպէս էր մտածում Ոսկերչեանը և օրքան շատ էր խորհում, այնքան առաւել մեծ պահանջ էր զգում շուտ ասպարէզ դուրս գալ, համբաւ, անուն վաստակել:

Նա դարձեալ մտաբերեց Ադամեանին և այս անգամ մի ան-



Վիմագրելի ցանկութիւն զգաց իւր ոյժը, իւր ձայնը փորձելու համար արտասանել Համլէտի «լինել թէ չլինելը»։ Կանգնեց սենեկի մէջտեղը, Ադամեանի նման, վեհ դիրք ընդունեց, բիբերը թուցրեց վերեւ և սկսեց արտասանել, բայց աւելի բարձր ձայնով, քան այդ թոյլ էր տալիս զիշերւայ խաղաղութիւնը և հարեաններին հանգիստը։

Մենախօսութեան կիսումը սենեկի պատը՝ թիկթիկացրին, և Ոսկերչեանը պարզ որոշեց իւր դրացի պառաւ կնոջ դժգոհութեամբ ասուած հետեւեալ խօսքերը։

—Ինչ խաբար է, վուրդի, հերիք չելաւ քի?

Այս ձայնը լսելուն պէս՝ նա խեղճ և եթ լեզուն կծեց, լուռ և ամենայն զգուշութեամբ ոտի մատներին վրայ մօտեցաւ անկողնափային, գրքոյկը կամացուկ զրեց աթոռի վրայ և կռնակը ճննելով քարձին, մտախոհ իւր զուլսը խոնարհեց դէպի յատակը։

Ոսկերչեանը ինքն իրան ջանդիմանում էր իւր անքաղաքափարութեան համար։ Նա յիշեց իւր բարեկամ Զառիկեանի այն խօսքերը, որ սիրում էր զործ ածել ամեն անգամ, երբ մի գործի մէջ անհետատեսութիւն էր նշմարում։ «Կէտք է շրջանկատ լինել և իրան չմոռնալ նոյն լսի ոգւորութեան բոլորէին»։ Նա վճռեց առաւօտեան ներողութիւն խնդրել իւր հարեանիցը։

Բայց լուսամտից ներս թափանցեց սենեկի մէջ մաքուր օդի հոտանքը, Ոսկերչեանը լի կրճքով երկար շունչ քաշեց և մի ախորժելի թեթևութիւն զգաց մարմնի մէջ։ «Արժէ հիմա փոքր ինչ զբօսներ, մտածեց նա և հազնւելով անմիջապէս դուրս եկաւ աշնից, բայց այնպէս զգոյշ, որ շարժւելուց մի փոքրիկ շշուկ անգամ չլսւէր։

Նա գնաց Ալեքսանդրեան աջգին։

Արեւելեան հորիզոնը բոլորովին պարզ ու պայծառ էր և փայլում էր չղիած արծաթի նման։ Ոսկերչեանը նստեց իշատիկի վրայ մեծ շատրւանի առաջ, որի շիթերը, երկու երեք սաժեն բարձր խփելով, ցայտեցնում էին չորս կողմը բիւրաւոր մարդաբուեայ կաթիլներ և անուշ զովութիւն տարածում օդի մէջ։ Մի քանի բուսիկից յետոյ, երբ նա վերեւ նայեց, ծառերի կատարներին արդէն շողում էր վարդագոյն արեւը։ Բայց նա երկար չկարողացաւ մնալ



այդտեղ, որքան էլ դուրեկան լինէր բնութիւնը. գետինը թաց էր, օղը թարմ և խոնաւ: Մէջքի և ոտների վրայ սառնութիւն զգալով, նա վեր կացաւ՝ գնաց մօտակայ կաթնատունը, մի բաժակ թէյ խմեց և ուղեորեց դէպի իւր բնակարանը:

Տան դարպասի առաջ, դեռ ևս փողոցումը, նորա ականջին հասաւ հարեան պառաւի ձայնը, որը պատշգամբից խօսում էր ներքեւ բակումը կանգնած տանտիրոջ հետ և Ոսկերչեանիցը զանգատուած, տանտէրն էլ հանգստացնում էր կենողին, յայտնելով, թէ այն տեսակ «շառլատանին» իւր տանը պահելու չէ և շուտով պիտի պուրս անէ:

Տանտէրը մուշտակ կարող էր, կարճահասակ և հաստափորի մէկը, որի ծոծրակի վրայ մի մեծ կարմիր ուռոցք էր երևում, իսկ աչտի վրայ ցցւել էր մի մազոտ սև բշտիկ: Դա մի անհաշա բնաւորութիւն էր, և համբերութիւն էր հարկաւոր, որպէս զի մարդ կարողանար զլուս զնել հետը: Երբ գալիս են նորա մօտ բնակարան վարձելու, ամենից առաջ նա պիտի սկսէ հարց ու փորձ անել. «Քանի հոգով են, երեխաներ ունին թէ ոչ, որտեղ են ծառայում», մի խօսքով, մանրամասն տեղեկութիւններ է հաւաքում վարձողի նիւթական և ընտանեկան հանգամանքների մասին և վերջումը աւելացնում, որ պիտի էս զլխից պիտի ստանայ: Հետ է երեւակայել նորա շարութիւնը, հայհոյանքը և յիշոցները այն դէպքում, երբ կենողը բնակարանի քրեհը ուշացնում է, այսօր չէ վաղը ասելով, կամ երբ նա բացարձակապէս անկարող է լինում փողը վճարել: Բայց այդպիսիները ոչ մի հնար չեն կարող գտնել նորա ձեռքից պրծնելու: Նա կը թողնէ, որ մի կոպէկը մնաց ուրիշի վրայ: Ո՛չ մի կերպ: Փող չունի, կարասիքը կը տայ: Կարասիք չունի, ժամացոյցը կը տայ: Իսկ եթէ ժամացոյց էլ չունի կենողը, նա մի բան կը գտնէ:

Ոսկերչեանը այդ մարդուն դուր չ'եկաւ հէնց առաջին օրուանից: Սկզբումը նա վարանում էր, այդ անտէր անտիրական տղին սենեակ տալ թէ ոչ: Բայց մտածելով, որ սենեակը երկար ժամանակի դատարկ է մնացել, ինչ դժւարութեամբ վերջապէս համաձայնեց: Մի շաբաթ չանցաւ, նա զոջաց իւր թուլութեան վրայ: Այդ ջահէլ պարոնը, նորա ասելով, «շառլատանի մէկը դուրս եկաւ»:

Նա ծխում է, մի անգամ՝ նորան տեսել է հարբած, գիշերները ուշ է տուն գալիս, մի օր էլ նա խանութի մօտից անցաւ մի աղջկայ հետ, «որոտտն» էլ հօ շարունակ ձեռքումը բռնած ունի—Ուկերչեանը էլ ինչ պիտ անէր աւելի, որ ընկնէր իւր տանտիրոջ աչքումը?

Ոսկերչեանն էլ իւր կողմից, ինչպէս ասում են, աչք չունէր նորա երեսին նայելու։ Նա ուրախութեամբ կը թողնէր այդ անտանելի արարածի տունը, բայց կար մի հանգամանք, որի պատճառով նա հանդուրժում էր ատելի մարդու ներկայութեանը։ Զէ որ օր. Մարիամը աջնքան մօտիկ է ապրում? Ամեն օր նա տեսնում է օրիորդին՝ պատուհանից գլուխը հանած, ախանջ է դնում, երբ նա նւագում է, վերջապէս հէնց միայն այն գիտակցութիւնը, որ օրիորդը իւր հարեանուհին է, նորա սիրտը լցնում է մի անհուն բերկրութեամբ։ Բախտը բերել է նոցա միմեանց աչքի առաջ դրել, խենթութիւն չէ յօժարակամ թողնել մի՞ աղջկայի յարմարութիւն?

Ոսկերչեանը գերադասեց ետ դառնալ եկած ձանապարհով. եթէ այդ ըոպէին ներս մտնէր բակը, նա առիթ պիտի տար, ով գիտէ, ինչ անախորժ տեսարանի։ Նա վերադարձաւ այն ժամանակ միայն, երբ հաւատացած էր, որ չար սատանան իւր խանութի մէջ նստած կը լինի։ Պատշաճութեամբ նա տեսաւ զանգատաւոր պառաւին, որը՝ թւերը կշտած՝ կեղտոտ դռնով կեղտոտ ջուր էր թափում բակը իջնող խողովակի մէջ։

—Հազար ներողութիւն եմ խնդրում, մայրիկ,—ասաց նա խոստովանող մեղաւորի ժպիտով,—այս գիշերն անգ բաւական անհանդատութիւն պատճառեցի։ Նա մի անիծեալ բնութիւն ունիւմ երբ հրապուրում եմ, ամեն բան մոռանում եմ։

Երկուստարդի մեղանշական խօսքերը փափկացրին հարեանուհու սիրտը, և նա ներողամտութեամբ պատասխանեց.

—Իս քի համա իմ ասում, վուրդի, դուն էլ միղք իս. ապա քունդ սկի չի տանում?

Ոսկերչեանը շտապով բաց արեց սենեկի դուռը, ներս մտաւ և դուռը բանալիքով ամրացրեց։ Առանց երկար ու ձիգ մտածելու, նա ետ արեց փողպատը, պիջակը հանեց և, ընկնելով մահճակալի վրայ, ինքն էլ չիմացաւ, ինչպէս քնեց։

(Շարունակելի)։

## Հին երգ:

### ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Նրկրից-երկիր թափառելով,  
Սար ու լեռների պատառելով,  
Հասանք ալստեղ, Հալ եղբայրներ,  
Տըւէք մեզի անկիւն մը չոր՝  
Յրտից, բուքից պատասպարել.  
Տըւէք մեզի հաց մը կտոր՝  
Մեր այս դառը քաղց փարատել...

Կրած տանջանք, բիւր հալածանք,  
Կին ու զաւակ թողած բաղդին,  
Մենք եկել ենք ձեր անունով—  
Մենք յոյս կապել ձեր արեւին.  
Եղէք զոնէ դուք մխիթար  
Սփոփելու մեր օր վատթար...

Կորչելու է տուն ու վաթան,  
Ել մարդ չի մնաց խեղճ Հայաստան.  
Սկանք պատմել որ իմունաք,  
Թէ մեր վերջին չեղաւ դարման.  
Օ'... զոնէ դուք մեզի խղճար—  
Օղնէք... —Երկիր՝ վերադառնանք...



# Ն Ո Ր Ե Կ

Վ, Է, Պ

## Գ Ի Ր Ք Է Ր Կ Ր Ո Ր Դ

Գ. ԲԱՐԿԵՆՅԻ

(Շարունակութիւն <sup>1</sup>)

Գլուխ ԺԲ.

Այսօր, ինչպէս ամեն կիւրակի և տօն օր, երբ տան անդամները կարող էին բանասեղ գնացած չլինել, Մէլիքը ճաշում էր իր բազմաթիւ ընտանիքի հետ:

Նա իր կնոջ և ութ տղայ որդիներով նստում էր մի տեղ, հարսները բոլոր երեսաններով մի այլ տեղ, իսկ կառավարում էր տան մեծ հարսը՝ Մէլիքսէթի կնիկը: Մէլիքն այսօր ախուր էր և խորասուզւած ինչ որ մտածողութեան մէջ, թէպէտ ճաշի սկզբում օղիի բաժակը վերցնելիս, սովորական «Փառք քեզ Աստուծոյ» չմոռացաւ: Ընդհանուր լռութիւնը խզեց Թադուհին:

— Ի՞նչու էր քեզ կանչել Ալէքսանդրը:

— Ո՞վ է հասկանում. մի աշնայիսի խնդրի վերաբերմամբ, որ ես ինքս շլարած եմ և չգիտեմ ինչ պատասխանեմ:

— Միշտառութեան համար կը լինի, միջամտեց Մէլիքսէթը:

<sup>1</sup>) Տես «Մուրճ» 1896 թ. № 5, 6, 7—8, 9, 10—11, 12.

—Այո, պատասխանեց Մէլիքը, աջնպիսի մի ձևով, կարծես ասում էր, խնդրեմ, այս հարցը չբարձրացնէք:

Ամենօրեայ զւարճութիւնը, հանաքները, կատակները, պատմութիւնները կարծես այսօր մոռացւել էին և բոլորն էլ լուռ ու մունջ նստած էին և կարծես մի ինչ որ բան գիտէին, բայց վստիկնում էին արտայայտել և արտաքուստ աշխատում էին ցոյց տալ, որ միայն ուտելով են պարագլած, մինչդեռ նրանց յուզւած դէմքերից ակներև էր նրանց խորին մտազբաղութիւնը:

Մասպուրը շատ համեղ էր, մանաւանդ զուրալի էր նրա թթւաշուութիւնը: Մէլիքը օգիւց յետոյ բաժակ բաժակի վրայ կոնծում էր կարմիր գինին, որը կարծես սկսում էր ազդել նրա վրայ: Հացը հաւաքելուց յետոյ, նա թողնց իր համար մի շիշ գինի և մի բաժակ և կտրեց տիրոջ լուծութիւնը:

—Այ տէրտէրի աղջիկ, այ որդիներ, զարձաւ նա իր սեղանակիցներին. ես այսօր պէտք ունիմ ձեզ հետ խորհրդակցելու մի ամենակարևոր հարցի մասին: Ինձ խնդրում են, որ մերաւութեան կանգնեմ:

Այս խօսքերիւ յետոյ, Մէլիքը զլուխը կռացրեց, բաժակը լուռ դէպի բերանը տարաւ և ընդունեց պատասխան սպասողի կացութիւն: Այս լուծեան հետեւեց մի նոյնպիսի խորին լուծութիւն, մինչև որ տան մայրը յայտնեց իր կարծիքը:

—Անպատճառ կանգնի:

Մօրը հետեւեցին որդիները: Երոնք միաձայն յայտնեցին, թէ անհրաժեշտ է հօր քւէարկութիւնը: Ակներև կերպով սկսեց շատանալ Մէլիքի դէմքի աշխարհութիւնը: Նրա այտերը կարմրել էին, մեծ ու կապոյտ աչքերը լայն բացւել ու իրանց անհուն բարութիւնով և հայրական անկեղծ գորովով կարծես ուղում էին գրկեն բոլորին:

Ամբողջ ընտանիքի միասին պատասխանը երևի շատ յուզեց Մէլիքին, որ մի բոպէ իրեն մոռացաւ և զսպել չկարողացաւ: Նորա սրտի խորքերից, տանեակ տարիներով թաղնւած ցաւերը դարնան յորդառատ ջրերի նման դուրս թափեցին և նա արտասուելով դարձաւ որդիներին սրտառու, եղանակով բացականչելով. «Չաւանկերս, վախենում եմ»:

Այս խօսքերը նա աջնպէս ասաց և աջնպիսի տպաւորութիւն

գործեցին, որ բոլորն էլ կարծես համր դարձած երկար լուռւմ էին: Բայց Թագուհի մայրը չկարողացաւ դիմանալ և սկսեց աչքերից թափել դառն արտասուք: Մէլիքի հօթը որդիները, գլուխները կռացրին: Նոքա քիչ էին պատահել իրենց հօր արտասուքին և կարծես զղջում էին, որ հօր քւէարկւելը ցանկացան: Միայն Մէլիքսէթը գրգռւած սկսեց խօսել հօր դէմ:

— Ինչ ասեցինք՝ լես վախում եմ, մի հասարակական չորժ պատահի, ասենք. հայրիկ միջամտի՝ «վախում եմ» հայրիկ մեզ ուսում տուր՝ «վախում եմ». հայրիկ միրաւութեան կանգնի՝ «վախում եմ». ամեն անգամ՝ «վախում եմ, վախում եմ». մինչև երբ: Բո աչգ վախն է պատճառը, որ աչժմ մեզ էլ մէլիքի որդիներ չեն համարում և երկրի միջին մեր տունը հա եղած, հա չեղած:

— Որդի, ինչպէս չվախեմ. այն ինչ ես եմ տեսել, ոչ ոքի գլուխը չի եկել: Դիկքարից գաղթելիս մենք հազար ոսկի առածուն դրամ ունէինք. աչժմ հազար կոպէկ չունենք: Պապս քրիստոնէութեան համար իր ապահով դիրքը թողեց, մի ամբողջ ժողովուրդ գաղթեցրեց այս երկիրը. մի քանի տարուց յետոյ նրան քրիստոնէութեան դաւաճանող հաշւեցին. հայրս ամբողջ կեանքում ժողովրդի բարօրութեան համար տանջւեց, վերջը նրան քիչ մնաց Սիբիր չաքսորեցին. մեր հակառակորդ Ֆաթի խանը, քրիստոնէութեան ոխերիմ թշնամին, այստեղ պարսկական լրտեսի պաշտօն ունէր. նրան յարգեցին. նրա հետ կողոպտեցին ժողովուրդն ու կողոպուտը միասին բաժանեցին. նրա որդի Փիր-Մուրադը սուտ վկաներով ու կաշառքով հարիւր հազարանոց կաշքեր կորզեց կառավարութիւնից, իսկ մեզ, մեր ճշմարտութեան համար, մէկն էլ է չի հարցնում գոնէ, թէ ո՞ր հողն է պետական: Մեր գաւառի ժողովրդի վերայ յուսալ անկարող եմ, որովհետեւ ամբողջութիւնը թուրք է, իսկ թուրքը հային լսել, սիրել, համակրել անկարող է: Նա կ'ընդունի հայի լաւութիւնը, լեզուով հազար կեղծաւորութիւններ կ'անի, իսկ, դէպքը պատահած ժամանակ, կը մոռանայ հայի երախտիքը և չի զլանայ նրան ամենայն տեսակ չարիք հասցնել: Որդի, մի կարծիր, թէ քո հայրը վախլուկ է. ոչ, նա անօգնական է:

— Բայց ինչպէս են ուրիշները առաջ գնում, դիրք ստանում, իսկ մենք մեր ունեցածը կորցնում ենք, հարցրեց հօրը Նահապետը:



—Նորքա օգտուում են չարից: Սիրելի որդի, շարունակեց Մէլիքը հանդարտ և խոկուն ձևով, աշխարքումս կայ չար ու բարի, որոնք իրար հետ կռուում են և յաջորդաբար իրար յաղթում: Այժմ այնպիսի ժամանակ է, որ չարն ուժեղ է. և ով կամենում է առաջ գնալ, պէտք է չարի հետ ընկերանայ: Իսկ ես անկարող եմ իմ ընտանիքի անունը արատաւորել՝ չարի հետ ընկերանալ: Ասուած կը յաջողի, մեր երկիրը կը լուսաւորւի, չարը կը կորչի, բարին կը յառաջանայ, և այն ժամանակ, սիրելի զաւակներս, դուք առաջ կը գնաք:

—Այստեղ ինչ չար ու բարի կայ, սկսեց գրգռւած Մէլիքսէթը. ժողովուրդը քեզ ուզում է՝ կանգնի. կը յաջողի՞ լաւ, չի յաջողի՞ Սեանայ տակը:

—Բայց երբ ես համոզւած եմ, որ չի յաջողի:

—Ինչո՞ւ:

—Ահա ինչու: Ժողովուրդը բաժանուում է երկու մասի, մէկը՝ որ կամենում է զրկւած չլինել, և միւսը՝ որ սովորած է և ուզում է հարստահարել, զրկել ուրիշներին: Այժմ վերջինները ուժեղ են և ճնշում գործելով առաջինների վրայ, իրանց լսել են տալիս, նոցա քէն տիրապետում է: Այս ուժեղ մասի հետ ես միանալ անկարող եմ, հետեապէս՝ անկարող եմ և ընտրւել:

—Եթէ քեզ չընտրեն, դու դորանից ինչ կորուստ կ'ունենաս, միջամտեց Բաղդասարը:

—Շատ մեծ կորուստ, սիրելի որդի, նախ և առաջ պապենական թշնամուց պարտւելը մահից վատ է, երկրորդ՝ Փիր-Մուրադը այժմ շատ ուժեղ է, մեզ մի մեծ մլեաս կը տայ:

—Ոչ մի մլեաս էլ չի կարող տալ, գրգռւած պատասխանեց Մէլիքսէթը:

—Մի յուզւի, որդիս, նա կարող է սուտ վկաներով հաստատուել, թէ Խամօ բէկին սպանողներից մէկը դու ես և քեզ տաժանակիր աշխատութեան զրկել տալ:

—Անկարող է:

—Թող զրկի:

—Մենք մեր եղբօր փոխարէն նրա տղէն կ'սպանենք, միաձայն պատասխանեցին Հայրապետը, Նահապետն ու Սանասարը:

—Որդիներս, ինչ կարիք կայ դործը արիւնհեղուծիւնների հասցնել. լաւագոյնն այն չի՛ լինի, որ մենք հանդարտ մեր հողագործութիւնով պարապենք և սպասենք, մինչև ժամանակը իր անելիքը կատարի:

—Ոչ, ոչ, ոչ, գողգողացին Մէլիք Շէգոյի որդիները:

—Ո՛չ, ձեռքը ուժգին շարժելով, ասում էր Մէլիքսէթը, աւելի լաւ է եօթ եղբայրներս միասին Սիբիր գնանք՝ կոտորւինք, քան մարդամիջից ընկնենք և մեր ընտանեկան արժանապատուութիւնը կորցնենք:

—Ըսկի մի բան էլ մեզ չի լինի, գողում էր Սանասարը. թէ Փիր-Մուրադը շատ վատութիւններ անի, ես աւագակ կը դառնամ և նրա բոլոր ազգականներին կը կոտորեմ:

Ծեր հայրն ու իր ութ որդիները խառնւել էին իրար. դատում էին, վիճում, գողգողում և իրար ձայն չէին լսում. տան բոլոր հարսներն ու երեխաները հացը վերջացրած, շրջապատել էին նրանց ու լուռ նայում: Երեխաներից շատերի սրտերը վիլվիում էին. նոքա երեակալում էին, թէ մի օր իրենց տունը Ծաթի խան ուշադների տան հետ կռիւ կ'ունենայ և իրենք փայտները ձեռքներում մեծերին օգնութեան կը գնան. բայց աչքի առաջ ունենալով, որ տան փոքրին խօսք չի հասնի, լուռ էին:

Աղմուկին վերջ տւեց Քազուհի մայրիկը:

—Ամեն բան Աստծուց է՝ յաջողութիւնն էլ. բայց Մէլիք Շէգոյի տանը այսքան տղամարդ լինի, փառք Իրան, և մենք պատւից փախչենք. ըսկի մի մարդութիւն չէ. ջհանդամը թէ աղքատ ենք. մարդամիջի մարդս ըլի. հազար թուման պարտքս ըլի. ես յոյսով եմ Աստծուց, որ իմ որդիներից ո՛չ մէկի կեանքին էլ է մի բան չի գայ:

Պառաւի խօսքերը երևի վատ ազդեցութիւն ունեցան Մէլիքի վրայ. նա բարկացկոտ աչքերը ուղղեց դէպի կինը, կարծես մեղադրելով, որ նա այսքան տարի ապրում է՝ դեռ նոյն յիմար կիներէ, և խսկոյն վեր կացաւ տեղից ու անխօս հեռացաւ:

Նա գնաց դէպի պարտիդի միջի մեծ չինարը, որ Մէլիք Միրտչի առաջին տունն էր այս երկրում, և նստեց նրա հովանու տակ լեռ. քարի վրայ, ուր սովորութիւն ունէր միայնակ նստելու:

և խորհելու: Մէլիք Յարութիւնը, այս քարի վրայ լուռ ու մունջ նստած, ծխաքարը իրար ետեից դարձակելով, ընկել էր խորը մտածողութեան մէջ: Վերջը նա կանչեց իր կնոջն ու որդիներին և յայտնեց իր վճիռը:

— Թէպէտ ժամանակը շատ վառ է, Ալէքսանդրն էլ շատ ջանիլ՝ նրա վրայ յոյս դնել անկարելի է և մենք կը պարտուենք, բայց ոչինչ. երբ ժողովուրդը մեզ կանչում է, մենք պէտք է նրա հետ գնանք, թէկուզ մեր արիւնի գնով. եթէ ոչ, մեր տունը միանգամայն կ'ընկնի ժողովրդի աչքից. հետևապէս, որդիներս, ես կանգնում եմ միրաութեան:

Հօր այդպիսի վճիռը անասելի ուրախութեամբ լցրեց որդիների սրտերը և նոքա բոլորն էլ ծիծաղկոտ գէմքով, երջանիկ զգացմունքով ընդունեցին իրենց հօր ցանկութիւնը: Թագունին իսկոյն հեռացաւ նրանցից և գնաց քառասուն տէրտէրի և եօթ մէլիքների բարեխօսութիւնը խնդրելու Աստուծոյ առաջ, իսկ Շէզ Մէլիքը գնաց գիւղամէջ, որ մարդիկ պատրաստի, գաւառն ուղարկի, իրենց ընտանիքի հին բարեկամներին քաջալերի, ազգի ամբոխի վրայ, որ ընտրութեան ժամանակ չաղթւած դուրս չգայ:

ԳԼ. ԺԳ.

Փիր Մուրադ Սուլթանը տուն մտաւ թէ չէ, իսկոյն ժողովուեցին նրա մօտ գիւղում գտնուող բոլոր պատուաւորները, թէ գիւղի և թէ Ֆաթի խան ուշադների սպիտակամորուսները: Նա տխուր ու գլխակոր, ծալապատիկ նստած էր մեզ ծանօթ սրահում ու խոր մտատանջութեան մէջ էր ընկղմած:

Այցելուները, «սալամ ալէքքըմ», ասելով լուռ տեղաւոր. ում էին գորգերի վերայ և ընդհանուր տխրութեան համապատշաճ գէմք ընդունում: Երբ ամբողջ սրահը համարեա լիքն էր, Սուլթանը բարձրացրեց զուլը և տէրողորմեան գտնելով, զուլը տխրազին շարժելով, դարձաւ գէպի նստողները հեռեկալ խօսքերով.

— Գեահ սուրուր, գեահ քեառար. բէյլա գեալմիշ, բէյլա գեղար. (երբեմն չաջողութիւն, երբեմն պարտում. այսպէս եկած է, այսպէս էլ կը գնայ):



— Բէլի, տխուր հառաչանօք պատասխանեցին նրան ամենքը և լռեցին, բացի Քալբալայի Աբդուլ Հուսէյինը:

— Սուլթան, սկսեց նա. բոլորովին կարիք չկայ տխրելու խաժ քէկի մահւան համար: Դեռ պէտք է ուրախանալ, որ նա շայիտների (մարտիրոսների) մէջ մտաւ. պէտք է մտածենք մեզ վրայ, թէ ինչպէս մենք Ֆէթթահ (յաղթող) դառնանք, որովհետեւ եթէ մենք մեր կեանքն անգամ չզոհենք իսլամի պաշտպանութեան համար, մեծ պատերազանցութիւն արած կը լինինք:

— Էհ, աչքիս լոյս Քալբալայի, ինչ ես ասում. այժմ ուր է, հում մօտ կայ մուսուլմանութիւն: Մենք համաձայն մեր օրէնքների պէտք է շատ հեռու մնանք աղտոտ գեաւուրներից, նրանց չհպատակենք, հարկ չտանք. մեր մարմինները պէտք է նոցա մարմին չկալի. բայց նրանց հացն ենք ուտում, դինին ենք խմում, նրանց հետ առուտուր ենք անում և նրանց օգուտներ հասցնում: Ես հաւատացած եմ, որ եթէ վաղը մի հակառակութիւն ունենամ հայերի հետ, իսլամներից շատերը նրանց կողմը կ'անցնեն:

— Բալի, Սուլթան, պատասխանեց Մաշաութի Մահմադ Քարիմը. ժամանակը շատ վատացել է և իսլամութեան եռանդը ոչնչանալու վրայ է. բայց ես անկարող եմ թոյլ տալ, որ մի որ և է ուղղահաւատ կարողանայ հայերի հետ միանալ ձեր դէմ:

— Ի՞նչ էք ասում, Սուլթան, որ շան ձագի և հաւատից զարձածի սրտով կարող է մի այդպիսի բան անցնել. ողջ ժողովուրդն էլ ձեր ծառաներն են և միշտ ձեր հրամանին պատրաստ կանգնած. գոռում էր գրգռւած ախունդ Մուլա Մամատ Ջաֆարը:

— Գիտէք, խոկուն ու հանդարտ ձևով սկսեց բացատրել Սուլթանը. համաձայն Աստուծոյ խօսքերին, աշխարհիս երեսի ուղղահաւատները իրենց թւով հաւասար են եզան ծակաւոր չալին, իսկ անհաւատները եզան մարմնի մնացած մասին. և այն ժամանակ միայն Աստուած աշխարհքին վերջ կը տայ, բոլոր մարդիկներին քէհիշտի (չրախտի) կ'արժանացնի, և նրա մարգարէն՝ Մահմադը բաւական կը մնայ, երբ եզան ամբողջ մարմինն էլ իսլամ դառնայ. և մեր պարտքն է, որ մենք բոլոր ջանքներս գործ դնենք շուտով այդ նպատակին հասնելու: Բայց մինչև իր նպատակին հասնելը, Աստուած կամեցաւ փորձել իսլամականներին, թէ ով նրանցից աւերես իսլամա-

կան է, և ով՝ հոգով-սրտով, և ստեղծեց ռուսին, որին ուղարկեց իսլամը նւագեցնելու: Այսպէս վարեց Ասուած նրա համար, որ տեսնի, թէ իսլամականութեան ընկած ժամանակ, ո՞վ դէպի նա եռանդով կը թուլանայ, որ զժողովի միջին այրելու: Աստուծոյ հրամանով մենք գոյութիւն ենք ստացել իսլամի նւագած ժամանակ և Ասուած էլ մեզ փորձում է:

— Բալի, փառք Իրեն, մրմնջաց Քալբալայի Արդուլ Հուսէյինը:

— Փառք քո Աստուծութեանը, միտքին սալաւաթ քաշելով արտասանեց Մաշադի Մամադ Քարիմը. տեսէք, ինչպէս որ ջանաք փէյկամբարը ասել է, այնպէս էլ եղաւ: Աշխարհի երեսին ռուսից էլ աւելի նաջինս ազգ լինել չի կարող:

«Նոգհակառակը, ռուսի բարիքը տեսնում ենք, թուրք խալիսի վատն էլ տեսնում, մտածում էր մէկը»:

— Գրքերի մէջ գրւած է, շարունակեց Փիր-Մուրադ Սուլթանը. թէ երբ Ասուած այդ յայտնութիւնը արաւ ջանաք փէյկամբարին, ջանաք փէյկամբարը հարցրեց. ով երկինք և երկիր ստեղծող Ասուած, եթէ զու ուզում ես իմ հեռւողներից թոյլեռանդներին պատժել, փառք լինի քո դատաստանին. ինչո՞ւ նրանց պատժում ես մարդկութեան ամենագարշելիներից ամենագարշելու ձեռքով: Տիեզերքի տէրը պատասխանեց. թէ որ ես նրանց պատժէի չարերի ձեռքով դա շատ փոքր կը լինէր և այս պատճառով էլ ես ամենապատին ստեղծեցի, ուղարկելով նրան, որ նա կապւի մարդկութեան ցեղի ամենավատերի, այն է Հայերի և Նասրանիների (Ասորիների հետ):

— Փառք քեզ Ասուած, փառք քեզ Ասուած, մրմնջացին բոլոր ուղղահաւատները: Բաւականին երկար խօսակցութիւնից չեռոյց, բոլոր դրացիները գնացին և Սուլթանը մնաց միայնակ Սամադ բէկի հետ: Սուլթանը իր եղբօրը պատմեց թուրքանիսի խաների և բէկերի վերաբերումը դէպի Խամօ բէկի մահը, հռչակաւոր Քէլբալի խանի խորհուրդը և իր վճիռը՝ համաձայն այս խորհրդին վարելու:

Միևնոյն ժամանակ նա առաջարկեց, որ վաղն և եթ, Սամադ բէկը զնայ գաւառի զանազան դիւղերը իրենց նւիրւած մարդիկների մօտ և պատուիրի, որ գողութիւնների և զանգատների թիւը բազմացնեն, անանուն զանգատներ գրեն նահանգապետին պրիս-

տաւի վերայ, որին մեղադրեն կաշառակերութեան և գողութեան մէջ:

—Նա կարճ բառերով բացատրեց իր կարծիքը, որ Մէլիք Նէզօն անպատճառ այս անգամ կը կանգնի միրաւութեան. որ նա շատ փորձեալ ու լանգաւով մարդ է. որ նորեկ պրիստաւին իր ձեռքում գործիք կ'անի, ոտի կը կանգնեցնի Ֆաթի խան ուշադիրներէ զաւառակում եղած բոլոր հակառակորդներին և կարող է պատահել, որ ինքն էլ միրաւ ընտրուի:

—Սամադը, գլուխը տխուր շարժելով, համոզիւ եղանակով բացականչեց. Սուլթան, մեր տանը այսպիսի վտանգ դեռ երբէք չի ապառնացել. խնութից արդէն մենք երկու անհաշտ ուժեղ թշնամի ունինք: Ֆալաքի անիւը յանկարծ կարող է ծուռել և մեր բնտանիքի գործը ձախել. ժամանակ կ'անցնի՝ հարւածներ կ'առաջանան, անբախտութեանը կը հետևի անբախտութիւն և Ղափլան Սուլթանի ցեղը այս երկրից աջնպէս կ'անհետանայ, որպէս զարնան բանջարբուսիկը:

Խոստանալով Սուլթանի բոլոր հրամաններին այսօր և եթ ձեռնամուխ լինել, Սամադ բէկը դուրս եկաւ: Սրահը մտաւ կարճ Մամադը ու Սուլթանից պատշաճաւոր հեռաւորութեամբ կանդնած խոնարհ գլուխ իջեցրեց:

—Սյ դու բարով, իմ փոքրիկ բազէս, հաւատարիմ ծառաս, մեծ որդիս:

Կորձ Մամադը, ի շնորհակալութիւն Սուլթանի այսպիսի ուշադրութեան, խորը զաւիս իջեցրեց և մրմնջաց.

—Նա քո ստրուկներից ամենանւաստն եմ, Աստուած քո որդիները պահի ու նրանց ծառայելու բախտով ինձ երջանկացնի:

—Է, ինչպէս ես, որպէս քո զինք է:

—Աստուծոյ և քո օգնութեամբ լաւ է. մեր բոլոր առևտուրից ես յետ եմ գցել հարիւր տաս մանէթ. վերջին խօսքերը արտասանելով, կարճ Մամադը մօտեցաւ Սուլթանին և մի կապոց գրեց նրա առաջ:

Սուլթանը հանգարտ համարեց իրեն առած գումարը, կապոցով իր առաջ գրեց և չարձաւ կարճ Մամադին:

—Դու քանի տարի է ինձ մօտ ես:



—Արդէն ութը տարի է:

—Շնորհակած ես ինձանից:

—Աստուած քո որդիները բախշի, ինչպէս կարող եմ շնորհակալ չլինել: Իմ ընկերներս մշակութիւն անելով և կու թափելով տարին հազիւ երեսուն ռուբլի վարձ են ստանում, իսկ ես քո շնորհիւ չոլ փաղասու նման ման եմ գալիս և տարեկան հարիւր մանէթից աւելի իմ ձեռքս փող է գալիս: Շատ, շատ շնորհակալմ:

—Դու քանի իմ ձեռքի տակն ես, ըսկի մի բան աւելադրե՛լ ես տանդ մէջ:

—Սուլթան, ինչ ծածկեմ քեզնից, ոչինչ չեմ աւելացրել. հացը թանկ է. ես էլ չորս հողի ունիմ տանը, հազիւ դուլսս եմ պահում. դեռ մի երեսուն մանէթ էլ պարտք ունիմ:

—Պարտք ունենալդ ինչո՞ւ չէիր մինչև հիմա ինձ ասում, դէմեց նրան կշտամբական ուժով Սուլթանը.—է՛, լաւ չես արել! դէ որ այդպէս է, այս փողն այսպէս անենք. գլխիցը նախ վերցնենք քո պարտքը՝ երեսուն մանէթ, այս քեզ. յետոյ վերցնենք երեսուն մանէթ քեզ իբրև առանձին նւեր, քո ընտանիքին հագուստի փող. իսկ մնացածը կիսենք՝ քսան և հինգը ինձ, քսան և հինգը քեզ:

Սուլթանի այսպիսի վարմունքը գԺւացրեց խղճուկ Մամադին: Նա ուրախութիւնից և անշափ շնորհապարտութիւնից իրեն դցեց Սուլթանի ոտները. և երբ փողերը վերցրած դուրս եկաւ սրահից, ինքն իրեն սկսեց մեղադրել այն երախտամոռութեան համար, որ նա վաղուց արդէն սկսել էր ունենալ դէսլի Սուլթանը, մտածելով թէ Սուլթանը ուզում է, որ նա միշտ գող մնայ և իր համար կթի կով լինի: Նա բակից արդէն դուրս էր եկել, երբ մտաբերեց Սուլթանի վերջին խօսքը.—«Մամադ, գնա, այս երկու ամիս ինչքան փող աշխատես, բոլորն էլ քոնն է և ինչքան կարող ես շատ բաներ թռցուր»: զարմացել էր իր անսպասելի երջանկութիւնից: Նա տուն հասաւ թէ չէ, ուրախութիւնից սկսեց կնոջն ու երեխաներին համբուրել, և հազիւ մութը տւել էր դետին, որ նա զրահաւորւած արագ քայլերով դիւղից դուրս եկաւ որսի: Մամադի սրահից դուրս գալուց յետոյ, ներս մտաւ Քալբալայի Աբդուլ Հուսէյնը:

—Երբ ես կամենում էի դուրս գալ, Սուլթան, նկատեցի քո

ինձ աչքով անելը և հասկացայ բանն ինչումն է: Ձեր ծառայութեանը պատրաստ եմ:

— Կեցցես Քալբալայի, ահա քեզ ինչու համար այդքան սիրում եմ: Դու խելք ունես, բանը շուտ ես ըմբռնում: Քո մասին ամենայն իրաւունքով կարելի է ասել. հասկացողի ստորուկը կը լինեմ, իսկ անհասկացողի աղէն ել չեմ լինի. ես քեզ կանչել եմ մի շատ կարեւոր խորհրդի համար:

— Ես հաւատում եմ, որ եթէ ամբողջ աշխարհի վրայ կասկածէք, իմ հաւատարմութեանս վրայ կասկածել անկարող էք:

— Հաւատարիմ դրացին հաւատարիմ կնոջից լաւ է, ասել են մեծամեծքը:

— Բալի:

— Մեր երեսպագութիւնից, Քալբալայի, յիսուն տարուց աւել կը լինի. այդքան ժամանակ թէ ժողովրդի մէջ, թէ ծածուկ, մենք միշտ իրար օգնել ենք ու պաշտպանել: Մեր բարեկամութիւնը այնքան մտերիմ է եղել, որ մենք իրար կին ու հարս ընդունել ենք, որպէս մեր երեսպանների և մահրամութիւն մոցրել մեր ընտանիքների մէջ: Այժմ ես մի խորհուրդ ունիմ, որ ծածկում եմ կնոջիցս, Սամադից, բայց քո առաջ բաց եմ անում, որ ինձ օգնես:

— Ինչ որ հարկաւոր է, Սուլթան, մեր բարեկամութեան մասին, դու արդէն ասացիր, ես ինչ կրկնեմ. այդ Աստուած ինքն էլ գիտէ. միայն մի բան իմացիր, որ քանի ես ու կինս ողջ ենք, մեր աղօթքի մէջ միշտ քո անունը պէտք է յիշենք, քեզ ծառայելու համար մեր գլուխը նւիրենք. մեռնելուց էլ կտակ կ'անենք, որ մեր որդիներն էլ ձեր որդիներին մեզ նման ծառայեն: Թէ նրանք մեր կտակը կը կատարեն, այդ էլ իրենք գիտեն. իրենցից ու իրենց կաթից է կախած:

— Բանը նրանումն է, Քալբալայի, որ ես մեր պրիստաւի հետ թշնամութիւն ունիմ և հարկաւոր է, որ գողութեան ու սպանութեան դէպքերը մեր գաւառակում բազմանան:

— Դրանից աւելի հեշտ բան?! Այ, մէկը ես. այս գիշեր և եթ իմ գոմի պատը կը ծակեմ և վաղը տանուտէրին կը յայտնեմ, թէ անյայտ գողեր եկել են, իմ գոմի պատը քանդել ու երկու եզս գողացել տարել. նա էլ ստիպւած պէտք է գաւառապետին յայտա-

բարութիւն գրի գէտքի մասին. ահա քեզ գողութիւն: Նոյնը կը սորիցնեմ՝ կ'անեն մի քանիսը իմ բարեկամներից մեր գաւառակի զանազան գիւղերում: Ինչ վերաբերում է սպանութիւններին, դա էլ հեշտ բան է. կարելի է մարդիկ ուղարկել, որ, ճանապարհներով հազար մարդ է անցնում, մի հաջ աջօր, մէկը՝ վաղը և այլն սպանեն, առանց կողոպտելու, որ գործը չբացւի: Կը տեսնեն ճանապարհորդների սպանած դիակները, կը յայտնեն, պրոտոկոլ կը կազմւի, քննիչներ քննութեան կը գան, դատախազ կը գայ մեր կողմերը: Մենք էլ ամենայն տեղ կը տարածենք, թէ այս բոլորի պատճառը պրիստաւի թուլութիւնն է և կաշառակերութիւնը. ու բանը վերջացաւ գնաց: Եթէ հասարակ մահ էլ պատահի մարդիկներից, կարող ենք դիակը վիրաւորել և յայտնել, թէ չարագործներն են սպանել. ահա քեզ մի կերակուր էլ չիմոփնիկների համար:

Սուլթանը ուրախութիւնից ինքնամոռացութեան հասաւ և իրեն զսպել չկարողանալով, վեր ցատկեց ու Քալբալաջուն գրկած ճանապարհ դրեց մինչև բագի դուռը, ձեռքը ամուր սղմելով ցտեսութիւն արաւ և գնաց գէպի իր կանանոցը:

ԳԼ. ԺԳ.

Արդէն մի ամիս անցել էր այն օրից, երբ Մէլիք Շէգօն վրձուեց միրաւութեան կանգնել: Թշուառաց գաւառակը դառել էր եռացող կաթաս: Երկու կուսակցութեան կողմնակիցները գիւղից գիւղ, տնից տուն ընկած, իրար ներկայացուցիչներին քննադատում էին, պախարակում, գովաբանում, զանազան խոստումներ անում, ջրի աւելի լաւ բաժանում սուլում և այլն:

Բոլոր գիւղերը բաժանւել էին երկու կուսակցութեան, որոնք իրար գէմ մրցում էին և միրաւութեան խնդիրը կապում իրենց ընդհանուր կուսակցական, ընտանեկան, բարեկամական և թշնամական հարցերին: Մէլիք Շէգօնի հակառակորդ թուրքերը նախատում էին իրենց հաւատալիցներին, որ նոքա կամենում էին գեւաւորի ձայն տալ, դաւաճանում էին մահմեդականութեան և ապերախոտաբար ուղում էին վաչր ձգել գաւառակի ամենահին մուսուլմանական ընտանիքը. նոքա զանազան հնարովի վառութիւններ և



քիմարութիւններ էին վերագրում Մէլիքենց ընտանիքին և Շէկ-Մէլիք խօսքը ձեւափոխել էին էշակ-Մէլիքի:

Փիր-Մուրադ Սուլթանի հակառակորդները, որոնք գլխաւորապէս հայեր էին, գաւառակում իրենց թւի սակաւութեան պատճառով, չէին կարող իրենց ազդութիւնն ու հաւատը կուրի զէնք ընդունել, այլ ստիպւած, պէտք է համամարդկային գաղափարին դիմէին:

Նոքա ասում էին, որ բոլոր մարդիկ էլ հայր Ադամի որդիներն են և Աստուծոյ հաւասար արարածներ. որ լաւ մարդուն պէտք է ասել լաւ, իսկ վատին՝ վատ, հայ լինի նա թէ թուրք. որ Մէլիքը լաւ մարդ է և այնպիսի մի պատկառելի օջախից սերւած, որ թուրքերն էլ պէտք է յարգեն նրան:

Սոքա էլ իրենց կողմից նկարագրում էին Ֆաթի խանի ուշադիների վատութիւնները. ցոյց էին տալիս Սուլթանի անգթութիւնները. Փիր-Մուրադ Սուլթան անունը դարձրել էին շէյթան-Փիրի: Բայց գաւառակի մթնոլորտում կարծես աւելի շատ տարածւած էր այն կարծիքը, որ այս անգամ յաղթութիւնը կը տանի Մէլիք-Շէգօն: Մեզ ծանօթ Քալբալայի Աբդուլ Հուսէյնը այսօր զնացել էր մի քանի զիւղեր քարոզելու և մաքառելու յօգուտ Սուլթանի:

Նա լաւ նկատում էր, որ ժողովուրդը գաղազնւած Ֆաթի խան ուշադիների վատութիւններից, ուրախ է Մէլիքի թէկնածութեան առաջ գալուն և պատրաստ է Սուլթանին վայր գցելու:

Նա ինքն էլ այն կարծիքին էր, որ Ֆաթի խան ուշադիների վատութիւնները այլ ևս անկարող են ծածկել, մանաւանդ ներկայ ժամանակներում, երբ արդէն լաւ ճանաչում են Փիր-Մուրադին և հեռեւապէս, նրա հաշւով, նա այս անգամ պէտք է վայր ընկնէր:

Բայց երբ նա ներկայացաւ Սուլթանին հաւատացնում էր, որ ամբողջ ժողովուրդը նրա կողմն է, որ մինչև անգամ Խնութի հայերի մի մասը Աւետիսի հետ միացած հակառակ են Մէլիքին. որ մեծամասնութիւնը այն կարծիքին է, թէ Մէլիքը սովածացել է և երբ իշխանութեան տէր դառաւ, կը գրփի ու կը չփի հասարակ ժողովրդին, որ նորից հարստանայ:

Աշնան տմոյն արեւը արծաթեայ ճառագայթները ժողովում

էր և կամաց-կամաց անհետանում պարզ ու կապուտակ հորիզոնից և տեղի տալիս զով խաւարին տարածւել Կորաւան գիւղի վրայ ու բանատեղից եկող յոգնած գիւղացուն՝ նրա բանի տաւարին և կշտացած ոչխար ու ածերին հանգիստ և կազդուրիչ քնի հրաւիրել: Քալբալայի Աբդուլ Հուսէյնի տունը իրար էր անցել:

Ամբողջ օրը բանած եզները տուն գնալիս հազիւ իրենց ոտերն էին շարժում և կապին հասած սպասում էին, որ իրենց ոտերը շուտով ազատւին, որ նրանից յետոյ նստած տեղում չանհանգստացնեն. կովերը և մատակները լիքը կուրծքերով վազ էին տալիս դէպի իրենց ձագուկները. ոչխարներն ու ածերը եկել և փարախի դրան մօտ ժողովւել էին, որ իրենց ներս անեն հանգըտանալու. գոմէշները չէին ուզում ներս գնալ զումը մոծակի սլառճառով և իրենց մեծ գլուխն ու կոտոշները դէմ էին տալիս նրանց քշող հոտաղի ջանքերին. ձիանոնց երամակը, նոր դաշտից եկած, մոծակների և բզէզների կծելուց, բախումն այս ու այն կողմն էր վազում, կոխոտում գառ ու ոչխարին. կալերները, հովիւները, մաճկալն ու հոտաղը սոված, հաց էին սլահանջում: Քալբալայու երկու կիներն ու հարսները, գլուխները կորցրած, դէս ու դէն էին վազ տալիս. այս կովը կթի, այն հորթիկը բռնի, այն ուլը ներս արա, որ լիքը ամանները չթափի, նոր թխած հացերը թոնրի մօտից հաւաքի, որ շունը չուտի, դաշտից բերած մշակութեան գործիքները հաշուով վերցնու և իրենց տեղը դիր, որ վաղ առաւօտուայ համար սլաորաստ լինին և այլ բազմաթիւ աչսալիսի անցեալաճգելի գործեր, իրար խառնւել էին. և այս բոլորն անելու համար, կանայք իրար կանչում էին, հրամայում, աղաչում, վաւազում, վազում և յաճախ իրար չհասկանալով՝ կուռում: Նրելխաներից ամենափոքրերը օրօրոցում ձուռ, սրտապատառ էին լինում, իսկ քայլողները, մայրերի քղանցքները բռնած, չգիտես թէ ինչու են միալար լաց լինում:

Ամբողջ տան մէջ տիրում էր գոռում գոչում. և հարայ-հրոցի ձայները դուրս գալով Քալբալայի Աբդուլ Հուսէյնի բակից հեռու գեղամէջն ու դաշտերն էին տարածւում, մաքուր ու վճիռ օդում: Բայց այս բոլոր աղմուկն ու իրարանցումը մի մարդ էր նկատում. դա ինքը Քալբալայի Աբդուլ Հուսէյնին էր, գլխակոր



ու տխուր նստած սրահի սանդուխների վրայ: Նրա աչքերը չառած էին դէպի դետին և սարսափելի կայծ էին տալիս, թէպէտ ոչինչ չէին տեսնում և ոչինչ չէին նկատում: Նրա խիտ ու երկայն յծեքերը ժողովել և գորգաւելի փունջութների նման կախ ընկել և աչքերի ընկերը ծածկել: Պաշտները հաւաքել էին, իրար պինդ կպել և իջել, ոչ թէ միայն ստամոքիից, այլ մինչև անգամ լընդերից ցած: Նրա մորուքը դգգգւել էր, և ծնոտի վրայի մազերը առաջ էին դնացել ու վեր բարձրացել, մինչդեռ աչտերի մները դէպի ականջներն էին թեքւել: Նրա քթի գունդն արակել էր և շորացել, մինչդեռ քթածակերը լայնացել էին և ժամանակ առ ժամանակ դարձնի փուքսի նման լայն բացում էին ու թոքերի փչացած օդը մեծ քանակութեամբ և ոյժով դուրս բերում: Քալբալային տխուր մտաւանջութեան մէջ էր վճռական քայլի առաջ:

Քալբալայի ինքնամոռացութիւնը երևում էր և նրա հագուստից: Նրա գլխը ճակատից բարձրացել և լոթու քոլոզի նման դադտի վրայից դէպի ծոծրակն էր թեքւել. նրա մի ոտը մաշկից դուրս եկած պաղ գետնին էր ընկել, իսկ միւս ոտը աղի մէջն էր. բայց վարտիկն այնքան բարձրացել և քշուտել էր, որ ամբողջ սրունքը երևում էր. նրա ծխաքարչի գլուխը տեղից դուրս եկել, դետինն էր ընկել, իսկ ձեռքի թագբէհը գոգից ընկել և բաց խոնջանիցն էր կախւել:

Բայց ինչ էր Քալբալայու վիշտը, ինչ էր նրա սրտից արիւն կաթեցնում. այդ մի հարցնէք, նա ոչ ոքի չայտնել չի կարող. նա պէտք է ծածկի այդ, ոչ միայն՝ քանի ինքը կենդանի է, այլ պէտք է այնպէս անի, որ նրա մահւանից յետոյ էլ չստիտեանա չիմացւի: Եթէ նրա կենդանի ժամանակ նրա վիշտը չայտնւի, նա ապրել չի կարող, իսկ եթէ նրա մահից յետոյ երևան գայ, նրա մարմինը գերեզմանի մէջ կը շարժւի: Երեսուն տարուց աւելի է, որ նա այդ վիշտը ծածկում է իր սրտում: Սակայն այդ վիշտը մի բանով կը փարատւի, այդ դառը ցաւերը մի բանով կը սփոփւեն, նրա հոգին հանդերձնալում, իսկ մարմինը գերեզմանում, մի բանով կը հանդըստանայ՝ սուրբ վրէժառութեամբ. հետեւապէս Քալբալային պէտք է օձի պէս սողայ և թշնամու կրնկին ծածուկ այնպէս զարնի, որ թոյնը գաղտից դուրս գայ. պէտք է կառուի պէս մագիլները թագցնի,



որ թշնամին նրա մօտենալը չիմանալ, պէտք է աղէտի նման խորամանկութիւն անի. թշնամուն հաւի պէս բերանն առնելուց յետոյ միայն, նրան զայլի տտամներ ցոյց տալ. նա պէտք է գործի ծածուկ, որպէս մարդագայլ, արագ՝ որպէս բազէ, զանգաղ՝ որպէս եղ, խելօք՝ որպէս փիղ, ռխակալ՝ որպէս ուղտ. վերջապէս նա պէտք է աւելի նման երկար զարանի որսին և յարմար ժամանակ կայծակի արագութեամբ յարձակւի նրա վրայ և անշն ու տեղը խեղդի։ Եւ ինչ որ նա անի, չպէտք է իմացւի, որ նա է արել. նրա գործածները պէտք է այնքան ծածկւած լինեն մթին խաւարով, որ բոլոր նրա արածները ուրիշներին վերագրեն, իսկ իրեն համարեն ռիւերիմ թշնամի այս մարդկանց. բաց վայ Քալբալայուն, որ յայտնւի, թէ հակառակորդին վնասողը նա է. այն ժամանակ կը հասկացւի և թշնամութեան պատճառը, զաղտնիքը կը բացւի... Երեսուն տարուց աւել է, որ Քալբալային խորամանկութիւն է անում թշնամու առաջ և կեղծաւորում. օտարների մօտ նրա ամենաներաւած բարեկամը երևում և ամենամեծ ծառայութիւններ և լաւութիւններ անում։ Բաց մինչև երբ տւի այս զրութիւնը, մինչև երբ նա տանջւի այսպիսի ուտիչ վշտով. ծերութիւնը վրայ է հասած, մահն էլ մօտենում է, միթէ նա պէտք է անհանգիստ հոգով կնքի իր մահկանացուն։

Ուղիղ երեսուն տարի սրանից առաջ, երբ Քալբալայու առաջին կինը՝ Թէլլին, զեռ երիտասարդ էր և նազելի, երբ նրա թշերը կարմիր էին աշնան խնձորի նման, ինքը գերուկ ու թարմ՝ դարնան հիւթալի ծաղկի նման, երբ, ջուր գնալիս, սև սաթի նման ղոյգ ծամը նրա ոտերին էին հասնում և նա կուժն ուսին իր դալար խարազանանման մէջքը ոլորում, գլխին մի քիչ թեք գիրք տալիս, մարմինը այնպէս համաշափ շարժում ու ցածր բարձր էր անում, որ տեսողը խելառում էր, այն, երեսուն տարի սրանից առաջ, երբ Քալբալային հպարտանում էր իր կնոջով, մի օր տեսաւ նրան գոմում Փիր-Մուրադ Սուլթանի գլուկում։ Թէլլին Սուլթանին գրկած, գլուխը դրել էր նրա կուրծքի վրայ, իսկ սա իրեն մոռացած, նրա գլուխը, ուսերը գրկած, նրա աչքերն ու ճակատը, այտերն ու կակուղ խուլովիներն էր համբուրում։ Այս դէպքից յետոյ, նա երկար տարիներ նկատում էր,

իր կնոջ և Սուլթանի տարփական յարաբերութիւնները, բայց իրեն այն տեղը չէր գնում: Քանի անգամ նա դէպք էր ունեցել վրէժխնդիր լինելու, Սուլթանին թունաւորելու, ծածուկ տեղում սպանելու, նոյնպէս վարելու և իր կնոջ հետ, սակայն վախեցել էր ու մտածածը չէր իրագործել. և վախեցել էր ոչ թէ պատժից, ոչ, այլ նրանից, որ իր խաչառակելը դուրս կը գալ: Բայց այժմ յարմար դէպք է. նա կը միանայ Սուլթանի հետ առ երես, իսկ ծածուկ նրա թշնամին կը դառնայ, գիւղերը գնալիս քարոզի հետ օձի թոյնն էլ կը խառնի, ընտրութեան ժամանակ իր քէէն Մէլիքին կը տայ: Իսկ թէ Սուլթանը միանգամ ընկնի, նրա վերականգնելը շատ դժուար է: Ահա, այս մտքերն էին, որոնց մէջ, սաքւի վրայ նստած, խորասուզել էր Քալբալայի Աբդուլ Հուսէյնը և որոնք տանջում էին նրան և անզգայ անում դէպ իր շուրջն եղած աղմուկն ու իրարանցումը: Երկար խորհելուց յետոյ, Քալբալային վճռեց, որ այս անգամ անպատճառ դէպքից օգուտի և, տեղից արագ վերցատկելով, մի երկու քաջ դէպի փողոցն արաւ. բայց խոկոյն չեաւ դարձաւ ու իր կալեանը հանդարտ լքցնելով, անդորրացած, սկսեց բալան-բալան մուսը վերև բարձրացնել:

Դ. ԺՆ.

Երբ Քալբալայու տան աղմուկը խանդարեց և ընտանիքի բոլոր անդամները դէպի հանգիստն էին ուղում գնալ, Քալբալային իր թոռան ուղարկեց հրաւիրելու ախունդ Մուլա Մամադ Զաֆարին, որը երկար իրեն սպասել չտուեց:

—Ախունդ աղա, գիշերները բուականին երկարացել են, անկարելի է քնել, ամենալաւն է զրուցով մի քիչ կարճացնել:

—Այ թէ գիշերների երկարութիւնն է պատճառը, որ քնել անկարելի է, այլ մտածողութիւնը, որ հետեանք է ժամանակիս վատութեան: Մարդիկ փչացել են, կրօն չկայ, հաւատ չկայ, բոլորս էլ վշտի մէջ կորած ենք:

—Այո, շատ ուղիղ է քո ասածը, ախունդ աղա, սակայն անհանգստութեան մեծ բաժինն էլ պէտք է վերադրել ծերութեան. քուրդը շատ յիմար սոգ է, բայց մի շատ լաւ խօսք ունի. «մեռնելը լինի, ծերանալը՝ ոչ»:



—Է՛, ի՞նչ ես ասում, Քալբալայի, մենք ի՞նչ ծեր ենք որ. երբ ջանաք Փէյկամբարը (մարգարէն) մի անգամ թոյլ տուեց վաթսուն տարեկան մարդու ութ տարեկան աղջիկ աւնել, ժողովուրդը դիմեց նրան հարցնելով. «Մի՞թէ ծեր չէ ամուսինը: Զանաք Փէյկամբարը պատասխանեց, որ տղամարդու համար Ասուած ծերութիւն չի ստեղծել, որ մարդ, եթէ հանգամանքները վատ չլինին, մինչև իր մահն էլ երիտասարդ կը մնայ. և որովհետև Ասուած ինքն ուզում է, որ իր ստեղծածները միշտ ուրախ լինեն, այս պատճառով էլ թոյլ է տալիս ծերացածներին առնել երիտասարդ կանանց, որ նրանց երիտասարդացնեն:

—Բալի, Ախունդ աղա, ժամանակը շատ վատացել է. ամենայն բարեմասնութիւնները վերացել են: Մեր մեծերը անունով միայն իսլամական են, ձեզ նման ախունդներին չեն պատուում, խօսքը բանի տեղ չեն դնում և ժողովուրդն էլ նրանց հետևում է: Թէ՛ պէտ էս չեմ կարդացել, բայց ձեզ նման աղա ախունդների ծառայութեանը յաճախ կանգնած եղել եմ և նոցա թափած ակունք ու գոհարների փոքրիկ կտորներից, պատահած ժամանակ, հաւաքել եմ: Ախար մեր գրքերում գրած է, որ ամբողջ աշխարհի համար միայն մի օրէնք կայ. դա կուրան-շէրիֆի քալիմաներն են, որոնք աշխարհիս ամենայն բաները չննած են. և ամեն ինչ պէտք է նոցանով կառավարել. սակայն այժմ քրիստոնեան հրապարակ է դուրս եկել, մի ինչ որ նոր օյին դուրս բերել, որի անունը զակոն է (օրէնք) և հրամայում է սրանով վարել:

—Իմ սիրելի Քալբալայի, ինչեր ես ասում, էլի ոուսը լաւ է. մենք ինքներս հիմա ոուս ենք և ոուսից աւելի վատ: Ռուսը ձեր գիւղին առաջարկեց, թէ ձեր հասարակութեան հոգևորականը ճիշդ է, յայտնէք, որ ես նրանցից հարկ չվերցնեմ. ի՞նչու քո գիւղի տէրը, գաւառակի մեծը յայտնեց, թէ Ախունդ Մոլլա Մամադ Զաֆարը ուսհանի (հոգևորական) չէ և քո շումուրի զաւակ տանուտէրը հաստատեց այդ բանը:

—Թշնամութիւնը ամեն բան կ'անի:

—Ինչ թշնամութիւն, եղբայր, նա ազնւական է, ես էլ ախունդ եմ. և ոչ մի բանով էլ զրանից ցած չեմ. նրա որդին ի՞նչ իրաւունքով իմ որդուն հայհոյում է, որ իմ որդին էլ նրան հաջոյլ:



— Երբ ձեր որդիների մէջ կռիւ պատահեց, ախունդ աղա, ես իսկոյն գնացի Սուլթանի մօտ և խնդրեցի, որ նա քո ծերութեանը բախշի. «երկու շուն են», ասում եմ, «իրար կծոտել են, դու, Սուլթան, մէջ մի մանի». նա ինձ վրայ բարկացաւ և ասում է. «ես թոյլ չեմ տալ Ախունդը հարստանայ, հացի տէր դառնայ, որ իմ օտը կծի»:

— Նա այդպէս կը վարւի, իսկ ես էլ այժմ իմ միրաւութեան քւէն կը տամ զեաւուրին:

— Ի՞նչ ես ասում, Ախունդ աղա, մի՞թէ կարելի է:

— Շատ լաւ կարելի է, բարձր ձայնով, զրգուած պատասխանեց Ախունդը և, յետ նայելով, կանչեց Քալբալայու թոռանն և ուղարկեց, որ Մաշադի Մամադ Քէրիմին իր անունից հրաւիրի:

Սովորական սալամից և հարց ու բարեից յետոյ, Մաշադին ծնկաչոք նստեց Ախունդի կողքին և ծխաքարը լցրեց:

— Գիտե՞ս, Մաշադի, դիմեց նրան ախունդը. քեզ այստեղ հրաւիրողը ես եմ եղել, որովհետեւ գիտեմ, որ դու էլ ինձ նման այրուած ես:

— Ինչ ասեմ, պատասխանեց Մաշադին. լաւն այն է, որ թողնենք, միանգամից Պարսկաստան փախչենք:

— Ի՞նչ կ'ասես, զրգուած և բացականչական հարցով դիմեց Քալբալայուն ախունդը:

— Ինչ պէտք է ասեմ, Ալլահ բանդաննու (Աստուծոյ արարածի) ասածը իրաւացի է:

— Այ՛ մոռնումաններ, խորին տխրութեամբ սկսեց զանգատել Մաշադի Մամադ Քարիմը. ես ամբողջ ընտանիքով քառասուն տարի դրան ծառայել եմ. դէ Սուլթանի հետ ձիւ հեծի՝ քաղաք գնաց, դէ նրան վէցկի տուր, նրա տան ծանրութիւնները սար տար: Քանի անգամ նրա որդիները իմ ոչխարները գողնալ տւին, կերան, հաւերը գնդակահար արին, մորթեցին իրենց հիւրերի համար, իմ բակից կտրեցին՝ իրենց փարախի հետ միացրին, չխօսեցինք. վերջ ի վերջոյ ինձ մի կտոր հող ունէի, այն էլ խառնեց իրանց այգու հետ:

— Բալի, բալի, տէրողորմեան քաշելով ասում էր ախունդը:

— Այդ բանը պատահելուց յետոյ, շարունակեց Մաշադին. ես

գնում եմ իր մօտ և ասում: Սուլթան, քո Աստծուն բախշի, քո որդուն բախշի, քո ձիան ասպանդակին և դռանդ շանը բախշի, իմ հողը մի խլի, իմ ընտանիքը հացամուր մի անիլ: Ինձ պատասխանում է, թէ ես հինգ հարիւր մանէթ փող եմ ծախսել, ջուր հանել, բա ինչ պէտք է ջրեմ, եթէ քո հողը չխառնեմ:

—Մէկ հարցնող լինի, շարունակեց ախունդը, այդ ջուրը որտեղից է, ամբողջ գաւառակի առւի տակը լաղում է զցել, աղքատ ժողովրդի ջուրը այդ լաղումով դուրս բերել, ասում է թէ նոր ջուր եմ հանել և Մաշադու նման համփա մարդու հողն էլ լսում ու ջրում է:

—Իսկ, սկսեց Քալբալային, իմ բարեկամներս, հաստատ զիտէք, որ ես Սուլթանի հաւատարիմ մարդն եմ. բայց ես այս ձեր հասակումս իմ հոգին կորցնել չեմ կարող. զուք ձեր դանդաւոր մարդարացի էք և ինչ որ ասէք, ձեզ կը լսեմ ու կ'օգնեմ:

—Ես առաջարկում եմ, պատասխանեց ախունդը, որ նրան միրաու թեան ձայն չտանք:

—Ի՞նչ էք ասում, զարմացած հարցրեց Քալբալային:

—Շատ լաւ է ասում, պատասխանեց Մաշադին. ոչ թէ միայն նրան, այլև ոչ մի թուրքի ձայն չտանք. եթէ մեր միրաւը հայ լինի, թուրքերի հետ աւելի լաւ կը վարւի, քան այս գազանները. որ հայ ասես՝ թուրքից լաւ է, և թուրքերի շատութիւնից էլ կը քաշւի:

—Լիովին համաձայն եմ, ասաց ախունդը:

—Այդ շատ լաւ էք մտածել, ախունդ. բայց մի՞թէ մեղք չէ, որ մենք իշխան իսլամականը թողած, զեաւուր ընտրենք, հարցրեց Քալբալային:

—Ո՛հ, Ասուած այդ բանին իրաւունք տւել է, նրա աչքում այս աշխարհում բոլոր արարածներն էլ մի են: Մի անգամ, շարունակեց ախունդը, երբ Մովսէս մարգարէն թուր սարի վրայ Աստուծոյ հետ խօսում էր, Ասուած նրան պատուիրեց, որ միւս անգամ գալիս, իր հետ երկրից մի իրենից վառին բերի: Մովսէս մարգարէն տուն վերադառնալով, սկսեց որոնել իրանից մի նւառ, տի, բայց ում որ սկսում էր իրանից ստոր համարել, իսկոյն հարց էր ծագում նրա մէջ. գուցէ այս Աստծոյ առաջ ինձանից բարձր

է. ու Մովսէսն իսկոյն թողնում էր իր դիտաւորութիւնը: Երկար շրջագայելուց և որոնելուց յետոյ, երբ արդէն ժամանակն էլ լրացել էր և նա պէտք է գնար Թուր լեառը Աստուծոյ հետ խօսելու, նա մի նիհար, քոսոտ և վէրքերով ծածկւած, անտէր շուն գտաւ. ու մտածելով, որ Աստուած էլ նրան իրենից—Մովսէսից—նւաստ կը համարի, պարանը նրա վիզը դրեց ու սկսեց դէպի Թուր լեառը քաշ տալ: Շունը թուլութիւնից ու սովածութիւնից անկարող էր դնալ, ուստի Մարգարէն մօտեցաւ, որ նրան գրկի և հետը տանի. բայց սուրբ մարդը չկարողացաւ իր զգւանքը յաղթել ու վեր ձգեց. սակայն դարձեալ կենդանուն գրկեց ու սկսեց Թուր լեառը բարձրանալ: Ճանապարհին նա դարձեալ սկսեց մտածել, գուցէ Աստուծոյ առաջ այս շունն իրենից ցածր չէ. և, ստիպւած, շունը վեր դրեց ու տխուր դէպի լեառը գնաց: Երկնքի ու երկրի ստեղծողը հարցնում է նրան. «Ո՞վ Մովսէս, ասա, ի՞նչու տխուր ես: Մարգարէն պատասխանում է. «Ո՞վ ամբողջ աշխարհի Տէր, մեղաւոր եմ քո առաջ, քո հրամանը կատարել չկարողացայ, ինձանից աւելի նւաստ արարած չգտայ, որ բերեմ ինձ հետ: Արարիչը պատասխանում է. «Ո՞վ Մովսէս, հաւանութիւն եմ տալիս քեզ, բայց իմացիր, որ եթէ այն քոսոտ շունը քեզ հետ բերած լինէիր, դու այսօր մարգարէութիւնից կը զրկէիր, որովհետեւ նա ինձ մօտ քեզ չափ պատուելի է:»

—Փառք քեզ, Փառարդդիեար, երիցս անգամ կրկնեցին Մաշաղին ու Քալբալային, երեսներին սալաւաթ քաշելով, և շարունակեցին լսել Աստուծոյ:

—Այսպէս ուրեմն, ով իսլամականներ, շարունակեց Ախունդը. երկնքի ու երկրի Արարիչը մարդուս իրաւունք չի տւել, որ նա ստի, ով է բարձր կամ ստոր. դա միայն ինքը Ստեղծողը գիտէ:

—Բալի, կցեց Մաշաղին. ո՞վ գիդի, գուցէ Մէլիք Շէգօն, թէպէտ նա գեաւոր է, Աստուծոյ առաջ մեր ուխտատեղ գնացողներին էլ աւելի յարգելի է:

Երկար ու բարակ դատողութիւններից և սրտառու խոստումներից յետոյ, Էրեք բարեկամները վճռեցին, որ իսկոյն գնան լողանան և մզկիթում երեքով ծածուկ երգեն, որ Սուլթանի դէմ բոլոր ուժով մաքառեն, նրան սև քւէ տան և աշխատեն միայն յօգուտ Մէլիք Շէգօյի: Երդումից յետոյ, երբ Քալբալայի Արդուլ Հուսէյնը



տուն էր վերադառնում, արդէն կէս զիշերից անց էր. նրան ընկեր-  
ների հետ տեսան միայն երկնքում բողբոջող աստղերը և իրենց  
այծը, որ փարախից դուրս եկած ծառերն էր կրծոտում:

Յաջորդ օրը Ախունդ Մոլլա Մամադ Զաֆարը, Քալբալայի  
Աբդուլ Հուսէյնը և Մաշադի Մամադ Քէրիմը առանձին-առանձին  
ծածուկ նկարագրեցին Սուլթանին զիշերուայ դէպքը, հաւատաց-  
նելով ամեն մէկը, թէ ինքը միայն թաղիացի համար է երդւել,  
որ միւսների չար դաւադրութիւններն իմանայ, Սուլթանին յայտնի:

(Շարունակելի)

## ԿԵԱՆՔԻ ԽՈՐԹ ՈՐԴԻՔԸ

ԴԵՐՇԵՆԻՅ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Ո՛հ, ուշախուժեան խնճոյք չէ կեանքը,  
Եւ ոչ ամեն մարդ ուրախ է ապրում:  
Դառն է, տանջանք է նրա վիճակը,  
Ով մտածում է, ով շուրջն է նայում:

Օրէցօր կորան մեր ընկերները,  
Մէկ-մէկ գնացին և շուտ մանրացան,  
Եւ այսուհետեւ դառն են օրերը,  
Ճնշում են սիրտը կապարի նման:

Հեռացիր, տանջւիր—և մոռացւած ես.  
Գնա՛ւ և մեռիր—և քո արիւնը  
Ոչ դք չի տեսնիլ—բայց գոնէ մնա՛րդ ես,  
Գոնէ չի մեռնիլ ազնուութիւնը:

Բոլորն հեռացան... Դէհ, ընկեր, մենք էլ  
Մնացինք դուրսը. ցուրտ է ու խաւար...  
Ոչքէն, չենք կորչիլ, կը գնանք փնտռել  
Որբերի նման՝ անկիւն մեղ համար:

Եթէ չենք գտնիլ՝ թող որ չգտնենք,  
Թող մնանք օտար և թափառական.

Գոնէ կը լինի մի քար, ուր և մենք  
Յոգնած զլուխներս կը թեքենք վերան:

Խաւար է, ցուրտ է... Ով որ ունի տուն՝  
Քաշուել է այնտեղ, մոռցել ուրիշին...  
Է՛հ, Աստուծ պահէ այս մութ զիշերում՝  
Անտուն ու անտէր կեանքի որբերին...



## ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ԶՈՅԵՐ

Վէպ գիւղական կեանքից

Ա. ԱԳԵԼԵԱՆԻ

(Շարունակութիւն) <sup>1)</sup>

### ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

«...» Երջը թակարդի մէջ ընկած թըռ-  
չունի պէս թպրտալով, լինում է աչգ.  
հանգամանքների զոհը:

Տգիտութեան զոհեր, մասն Բ.

Գլուխ Ա.

Նորահարսի գալուց երկու շաբաթ անցած, մեռաւ Համբար-  
ձումը: Նրա ծնոտների տակ առաջացած վէրքերը բազմանալով ան-  
ցան դէպի ձախ կողքը և վարակելով վաղուց արդէն կմախք դար-  
ձած մարմնի սիրտն ու արիւնը, քաշեցին հիւանդի աչքերում մահ-  
ւան սև վարագոյրը. ծանր ու զարհուրելի հիւանդութիւնը վերջ  
տուեց յաւիտեան նրա խաւար անցած կեանքին: Յաւում էր Համ-  
բարձումը, որ անկարող եղաւ վաշելել նոր ձեռք բերած կարողու-  
թեան բարիքները, բայց միևնույն ժամանակ մտիթարում էր ինքն  
իրեն, որ եղբօրն ու որդոցը բախտաւորացրեց, օժիտաւոր հարս  
ձեռք բերելով:

<sup>1)</sup> Տե՛ս «Մուրճ» 1896 թ. № 5, 6, 7—8, 9, 10—11, 12:

Մահւան օրը Համբարձումի բոլոր ազգականները, թէ կանայք և թէ տղամարդիկ, մէկ-մէկ ժողովուում էին նրա տունը: Նկողները լաց էին լինում, քիչ յետոյ դադար առնում և սկսում մխիթարել Վառվառին: Լացը—կրկնում էր պարբերաբար, իւրաքանչիւր նորեկի մոնելուն պէ: Եւ ամեն անգամ լաց էին լինում բոլոր ներկայ գտնւողները՝ խմբովին: Դոցա երբեմն մասնակցում էր և Գալուստը, որ գլխաւորապէս զբաղւած էր Լ. զբօր թաղման պատրաստութեամբ:

Մի փոքր անցած, երբ Վառվառի կսկծացող ու ծանրացած սիրտը լացի բարերար ազդեցութեան տակ սկսեց հովանալ և թեթեւանալ, սգւոր կիներ էլ նւիրեց թաղման հոգսերին: Նա հաշուում էր, թէ ճրքան ալիւր է հարկաւոր թաղա հայ թխելու համար, թէ մօտաւորապէս ճրքան մարդ կը գայ թաղումից յետոյ մեռելահաց ուտելու, ճրքան բրինձ, իւղ է հարկաւոր և այլն: Այդ բոլորի մասին նա խորհրդակցում էր հրաւիրւած խոհարարուհու և Գալուստի հետ միասին ու հարկաւոր մթերքները ինքն իւր ձեռքովն էր տալիս:

Վառվառը թէև ունեւոր էր, բայց և այնպէս նա ստիպւած էր առժամանակ դէն դնել սուգն ու լացը և զբաղել մեռելահացի պատրաստութեան հոգսով:

Ամենքն էլ, բացի Նոյզատից, տխուր էին այդ օրը: Նորեկ հարսի դէմքը զուրկ էր այդ արտայայտութիւնից: Կանանց սրտածըմլիկ լացն ու կոծը ոչ մի ազդեցութիւն չէր անում նրա վրայ: Նա իւր սովորական ապուշ ու անորոշ հայեացքով ներս էր գալիս, դուրս գնում և իւր ընկերուհիների հետ խաղում կտուրներին: Մայրը սաստում էր աղջկան, որ նա այդ չանէ, այլ ինքն էլ լաց լինի և տաղրի մահւան առիթով տխուր ձեւանայ: Նոյզատը ցրւած ուշադրութեամբ լսում էր մօրը: Անտեղի, անորոշ և անբովանդակ ժպիտը փայլում էր նրա երեսին, որ վախի զգացմունքի տակ իսկոյն և եթ չքանում էր: Եւ նորահարսը, փոխանակ պատասխան տալու, միայն իւր աննպատակ հայեացքը այս ու այն կողմն էր ուղղում:

—Ծամերդ կը քանդեմ, սպառնում էր մայրը. էդ ինչեր ես անում. դու պիտի տխուր նստես տանը և լաց լինես: Տէսնում ես,

որ քեզանից մեծերը լաց են լինում. թնչ խաղ անելու ժամանակ է, գետինը մոած, պիտի ինձ միշտ խայտառանկես: Ախր դու էլ հիմա հարս ես դառել, պիտի հիմիկանից բան սովորես, որ յետոյ ինձ չհայհոյեն: Ինչո՞ւ չես մի գործի կենում:

Նոյզառը լուռ ու մոռնջ հեռացաւ մօրից և տան սանդուղք-ներով իջաւ դէպի բակը: Այդտեղ, փոքրիկ օդայի մէջ, մեռելահացի պատրաստութիւններ էին տեսնում: Փալուստը մորթել էր տւել իւր կովերից մէկը, որ հրոտող էր: Միսը արդէն կտրուած էր և եփուում էր մեծ կաթսայի մէջ: Դա բոզբաշն էր: Մի այլ օջախի վրայ փլաւի բրինձն էր եռ դալիս: Շամփուրները խորածացու շարած՝ թեք էին տւել օդայի անկիւններից մէկին: Բակի մէջ տեղ չորացած շիւղերից մի մեծ կրակ էին արել խորոված պատրաստելու համար: Մէկ հոգի տկից զինի էր ածում կուլաները և յանձնում իւր մօտ կանգնած երկու երիտասարդների, որոնք մէջլիսում գինի պիտի բաժանէին: Համբարձումի և Վառվառի ազգական կանայք կերակրի ամանները դասաւորում էին և միևնոյն ժամանակ նկատում, թէ որոնք ո՞ր հարեանի տնիցն են բերած: Մի խումբ աղջկերք պարտիզից նոր բերած կանաչիի շուրջը պազած՝ «բանջար» էին ընտրում:

Մի խօսքով նոյն պատրաստութիւնն ու շարժումը, որ լինում է հարսանեաց տանը: Զանազանութիւնն այն էր այստեղ, որ զուռնա չկար և ուրախութեան փոխարէն տխրութիւն էր տիրում:

Փալուստը հասարակութեան քիչեիս պիտի տար: Որքան Մովսէսն ու Պետրոսը խնդրեցին, որ նա չկատարէ այդ անմիտ ու անօգուտ սովորութիւնը, այլ դրա փոխարէն մի որոշ գումար նւիրէ նոր կառուցանող դպրոցին՝ ի չիշատակ իւր եղբօր, բայց ի պուր. Փալուստին համոզել չկարողացան:

—Պա մեծ եղբայրս է, մեռել է, առանց մեռելահացի թաղեմ. թնչ կ'ասեն. կը բամբասեն, թէ եղբօր հոգու թեթևութեան համար հաց չուեց հասարակութեան: Ազգականներս իսկի կը թողնեն էդպիսի բան...

—Լաւ, ընդհատեց Մովսէսը. որ այդպիսի բան չասեն, դու մի թեթև պատրաստութիւն տես և հացի կանչիր միայն գիւղի աղքատներին: Մնացած ծախքը, որ պիտի անես սաղ հասարակու-



Թեան մեռելահաց տալու համար, նւիրիր ուսումնարանին: Գրանով դու եղբորդ յիշատակը աւելի յարգած կը լինես:

— Զէ, Մովսէս ապեր, չեմ կարող. որ ամեն տեղ սովորում թիւնն էսպէս է, ես ի՞նչ կարող եմ անել:

— Գնանք, ասաց Պետրոսը վրդովւած. դա մեր գր խորհուրդը լսեց, որ սա լսի:

Եւ երկու սերտ բարեկամները հեռացան Գալուստից:

Եկեղեցու զանգերը երեք անգամ «զոյգ» զարկեցին: Վա նշան էր, թէ մեռելի վրայ լաց լինելու ժամանակն է: Կանաչք վերկացան նստած տեղերից և պատրաստուեցին եկեղեցի գնալու: Նոյզառը նկատելով սենեակում գտնուող կանանց շարժումը, հետաքրքրուեց և զնաց աջնուող: Սենեակի դռնով մտնելուց՝ նա նկատեց իր ընկերուհիներից մէկին և բացականչեց.

— Զան, ջան, մեր ապերը մեռել է. հրոտող կովը մորթել ենք. էլ ինձ էի խփիլ:

Նոյզառը թուշկոտելով կրկնում էր այդ խօսքերը:

Սիմին չարձակեց իւր աղջկայ վրայ. Նոյզառը մեքենայաբար կատարեց մօր հրամանը և հետեւելով կանանց խմբին, գնաց եկեղեցի:

Գալուստը ականատես էր իւր ութ տարեկան կեռջ չիմար արարքներին և նրա ցաւն ու սուգը այդ պատճառով կրկնապատկւել էր: Կանանց խմբի հեռանալուց յետոյ, նա մտաւ սենեակ, որտեղ ոչ ոք չկար, նստեց նրա անկիւններից մինում և գլուխը ծնկանը թեքած՝ սկսեց մտածել:

— Եղբայրս մեռաւ, մտածում էր նա. և տան ամբողջ ծանրութիւնը իմ վզին մնաց: Եդ լուծը մենակ ես պիտի քաշ տամ: Շատ լաւ, էդ քաշ տւի, բայց մի ընկեր էլ պիտի ունենամ ակսր, որ տխուր ժամանակս ուրախացնի, յողնած ժամանակ ինձ հանգիստ տայ. պիտի մինը լինի, որ երբ ես յուսահատւեմ, ինձ յոյս, եռանդ տայ. վատ օրերում ինձ մխիթարի, հիւանդ ժամանակս ինձ վրայ խնամք տանի: Ով պիտի լինի էդ ընկերը. Նոյզառը... Անի, եղբայրս ինձ էս ցուրտ մէջ գցեց, բայց դէ ի՞նչ արած, էլ ուշ է. թող Աստուծ նրա հողին լուսաւորի և արքայութիւն տանի: Էս բանում ես էլ եմ մեղաւոր... Վնաս չունի, համբերութիւնը կեանք

է. մի քանի տարի էլ անցնի, Նոյզառը կը մեծանայ և էն ժամանակ էնպէս կը հաշուեմ, թէ նոր եմ պսակել:

Մինչ այդ մտածմունքներով զբաղւած էր Գալուստը, նա յանկարծ չիշեց, որ ինքն ևս եկեղեցի պիտի գնայ, եղբօր զիակը դէպի գերեզմանատուն ուղեկցելու: Անշուշտ պատարագը վերջանալու մօտ կը լինէր: Նա շտապով վերցրեց գլխարկը, հագաւ քոշերը և գնաց եկեղեցի:

Եկեղեցում կանայք շրջապատել էին Համբարձումի դագաղը և լացի աղաղակ էին բարձրացնել. տիրացուների անձոռնի երգեցոյ. ղութիւնը միախառնելով կանանց դուռում գոչումների հետ, դարձել էր եղանակների մի քառս. կանայք թուրքերէն բայաթիներ էին երգում և իրանց տարածած բազուկներով փարում էին մեռելի մերթսոներին և մերթ գլխին:

Նոցա մէջ միայն Վառվառն էր, որ զլիահակ և անբառբառ կանգնած էր դիակի առաջ: Արցունքները յորդառատ թափւում էին նրա աչքերից: Դէմքը վիշտ էր արտայայտում: Քիչու սա պիտի այսքան վաղաժամ գերեզման իջնէր, այն էլ երկար ու զարգանդեցնող տանջանքներ կրելուց յետոյ. կեանքս դրա կենդանութեան օրով սև էր ու սև, իսկ այժմ ևս բոլորովին անբաղդ եմ, զրկւած ծնողներից և սև ու սպիտակ ամուսնուց:

Այս էր կարկացւում Վառվառի երեսին և այդ ամենը վերին աստիճանի կարեկցութիւն էր արթնացնում եկեղեցում գտնուող ժողովրդի մէջ:

Նոյզառն էլ մաքուր իման շարունակ դէս ու դէն անցնելով, թողեց լացողներին և գնաց կանանց դասը: Այդտեղ նա բոլորին մէկ-մէկ դիտելուց յետոյ, դուրս եկաւ եկեղեցուց:

Գալուստը տեսաւ Նոյզառին այն ժամանակ միայն, երբ վերջինս խմբումն էր: Կրկին արթնացան խեղճ երիտասարդի մէջ իւր ցաւերը. այդ էր նրա կինը... Ո՛րպիսի խայտառակութիւն: Եւ ամօթի ու վիրաւորւած ինքնասիրութեան զգացմունքները տխրութեան հետ միասին սկսեցին աւելի ուժգին ճնշել նրա կուրծքը: Գալուստը չճարողացաւ երկար նայել իւր հարսի վրայ. նա իւր զուլիւր խոնարհեց ու աչքերը յառեց գետնին:

Պատարագը վերջանալու մօտ էր, բայց կանայք էլի չէին



կամենում հեռանալ դադաղից: Տղամարդկանցից մի քանի հոգի մօտ եկաւ և—

—Հերիք է, հերիք է, ասելով, հեռացրին մի քանի կանանց: Մնացածները հեռեցին դրանց և խմբովին կանգ առան եկեղեցու հիւսիսային պատի տակ: Ձեռքները գօտինները խրած ու վզները ծռած, նոքա արտասուակալ աչքերով նայում էին դադաղի վրայ: Երբ արարողութիւնը վերջացաւ և դադաղը սխեցին դուրս տանել, կանանց ողբի ձայնը կրկին հնչեց: Նրանք դուրս եկան և խմբեցին եկեղեցու դրան առջև: Մեղամաղձօտ երգեցողութեան ուղևորութեամբ հեռանում էր դադաղը և կանայք կանգնած իրանց հայեցքներով ճանապարհ էին գցում նրան: Գալուստը հեկեկալով և երբեմն Վայ ինձ համար... ջան, ապերս գոսալով գնում էր դադաղի յետեից: Երբ յուզարկաւորութիւնը բոլորովին անյայտացաւ կանանց աչքերից, նրանք դադար առան լաց լինելուց և վերադարձան տուն:

—Գնանք, այ կնանիք, գնանք, ասում էր Համբարձումի քոյր Անուշկան եկեղեցուց դուրս եկող կանանց. գնանք տուն, մի կտոր հաց կ'ուտէք, մի թաս գինի կը խմէք և մեռածի հոգուն ողորմի կ'ուտէք:

Ոմանք հեռեցին Անուշկային, իսկ մնացածները շնորհակալութիւն յայտնելով, պատրաստուում էին հեռանալ:

—Աղջի, մի թողնիլ գնան, պատուիրում էր Վառվառը Անուշկային. ասա ամենքն էլ գան:

Կանանց մի սուար խումբ, կազմւած գլխաւորապէս հասակաւորներից, յարգեց Վառվառի խնդիրը և ուղևորեց դէպի մեռելատուն: Ամենքը լուռ էին անցնում փողոցով: Տեղ-տեղ միայն կանանցից ոմանք կամացուկ խօսում էին իրանց սուօրեայ գործերի մասին: Երկու երիտասարդ կանայք էլ, թկալները բերանը քաշած, հազիւ լսելի ձայնով խօսում էին մի հետաքրքիր դէպքի մասին, որ նրանք նկատել էին եկեղեցում:

—Աղջի, տեսար, Վառվառը իսկի իրան չէր կտորում մարդու մէջիցի վրայ:

—Հա, Անուշկան շատ էր զարաչութիւն անում, իսկ Վառվառը՝ ոչինչ:



—Ասես խակի իր մարդը չլինէր:

—Երևի Համբարձումին չի եղել սիրում:

—Ի՞նչ սիրէր. Համբարձումն էլ մի մարդ չէր նրա համար, այլ ցաւ ու կրակ: Խեղճ Վառվառը նրա ձեռքին ինչեւէ տգետ չի քաշել, տարին տասներկու ամիս տանջւել է նրա ձեռքին:

—Վառվառը, ճիշդ է, դարաշուծիւն չէր անում, բայց շատ ախուր էր. չէիր տեսնում թէ արտասուքը ինչպէս չոփուռ-չոփուռ թափւում էր նրա աչքերից:

Տուն վերադառնալուց՝ լուռ էր Վառվառը, սակայն լուռ չէր նրա միտքը:

Այդ օրւանից ընդհատւել էր նրա ամուսնական կեանքը. նա այժմ աչքի էր և Վառվառի երեսակացու թեան առաջ իւր ամբողջ ոյժով պատկերանում էր նրա դառնութիւններով լի անցեալը: Ոչինչ մխիթարիչ ու սփոփիչ նա չէր գտնում այդ անցեալի մէջ, որ գէթ կարճատե քաղցրութիւն կամ երջանկութիւն պատճառած լինէր—չնորհիւ իւր ազահ, աչքածակ, միշտ անբաւական, սիրտը նեղ, խռովարար ու բարկացկոտ ամուսնու: Նա ինքը չաճախ աշխատել էր վերացնել իւր ընտանիքից ախրութեան, անբաւականութեան ու շարունակ սրտնեղութեան քողը. այդ ամենը նրան էժան չէր նստել, ենթարկելով երկատասարդ կնոջ հոգեկան և բարոյական զրկանքների. բայց ազահ սկեսրայրն ու անկուշտ ամուսինը միշտ արհամարհել, արգելք էին հանդիսացել նրան: Մեռաւ Համբարձումը, կորաւ գնաց: Ի՞նչ թողեց իրանից յետոյ. վատ անուն և մի փթած մարմին, որ հողի տակ շուտով որդիների կերակուր պիտի դառնայ:

Ատելութեան զգացմունքը մեղմ ոյժով պաշարել էր Վառվառին: Ացւած գրանով և ափսոսանքով, որ դառն էր անցել իւր կեանքը, նա երկար չկարողացաւ լուռ մնալ: Դառնալով իւր հետ գնացող հասակաւոր կնոջ, նա համեստութեամբ յայտնեց իւր բողբոջ և ասաց.

—Երկար տանջեց, մեռաւ գնաց. որդիներիս որք թողեց, ինձ էլ սուգի մէջ: Ի՞նչու. իր խելքի պատճառով: Ի՞նչ տեսաւ էս աշխարհում. ոչ մի ուրախութիւն: Հենց շարունակ մտքով իր միտն ուտում էր. լինչպէս անեմ, որ հարստանամ, էսքան աշխատեմ, դրա վրա էսքան էլ աւելացնեմ, էն ինչ հողը ձեռքս զցեմ՞:

Չարչարում էր, չարչարում էր... Հնա ասա, թէ այ մարդ, մի քիչ էլ քեզ պահիր, ջանիդ զադրը իմացիր։ Ձեր լինումն էն է որ աշխատեց ձեռքիցը զնաց, վերջն էլ ինքը հզպէս իրան սպանեց։ Իր խելքիցն էր, իր խելքիցը։ Էն տարին որ Քաւրիզում երկար մնար, կամ թէ չգնար էն քանդուած Բաքուն, էս օրը չէր ընկնիլ և էսպէս շուտ չէր մեռնիլ։ Ի՞նչ, անեմ, ինքն էր մեղաւոր։ Որքան նախատում էի, չէր լինում։ Կամ էս պատին ասած, կամ նրան։ Հալա ինձ վրայ էլ բարկանում, նեղանում էր։ Ասա ինչ տարար էս աշխարհից...

Վառվառը մի խոր հառաչանք հանեց ու լռեց։ Կանայք տուն հասան, մտան իրենց համար նշանակուած սենեակը և նստեցին պատրաստի սեղանի շուրջը։ Քիչ յետոյ, աղամարդիկ ևս սկսեցին խմբովին ու մէկ-մէկ դալ և մեռելահացի նստել։ Թաղումը վերջացել էր։

Դ. Բ.

Գալուստի յարաբերութիւնը իւր զոքանչի հետ շարունակւում էր նոյն կերպ, ինչպէս այդ օտեոանք նրա նշանադրութեան առաջին երեկոն։ Այդ կինը իր ճանկն էր դրել Գալուստին։ Սա էլ ամբողջովին նետուել էր զոքանչի զիրկը։ Առայժմ մայրն էր նրան կնութիւն անում, մինչև որ աղջիկը հասնէր։

Այդ ամենը, ի հարկէ, առանց հեռեանքի չմնաց։ Մի օր Սիմին զգաց, որ իր դրութիւնը կասկածելի է դառնում։ Նա զգաց ու հասկացաւ, որ ինքը յղի է։ Անհանգստութեան տագնապը ամբողջապէս պատեց նրան։ Նա զգում էր հասարակական կարծիքի դատապարտութեան ծանրութիւնը, տարտում էր և մտածում վաղօրօք ազատուել դորա պատճառած ամօթից և խաչտառակութիւնից։ Նա միտք չղացաւ խեղդել երեխային արգանդում։ Բայց զուր։ Հարկաւոր էր ուրիշի օգնութեանը դիմել։ Նա իւր ցաւը չայտնեց Գալուստին։ Զոքանչ ու փեսայ միասին խորհրդակցելով, վճռեցին դիմել Մովսիսի օգնութեան։

Այդպէս նրանք, մի անգամ, զիշերուայ մութ պահուն, մտան Մովսիսի մօտ և չայտնեցին նրան իրանց խնդիրը։ Մովսէսը լսելուն պէս վեր թռաւ տեղից և բարկացած ու յուզւած սկսեց անցուղարձ



անել սենեակում. յետոյ կանգ առաւ Գալուստի դիմաց ու վրդով-  
լած ձայնով գոչեց.

—Խրատներս չմտան տկանջդ, յիմար, իշաղլուխ: Էն ժամա-  
նակ, որ քեզ ասում էի. Գալուստ, էս ինչ բանը մի արա, ինձ չէիր  
լսում. հիմա որ բանդ նեղն է ընկել, ինչու ինձ մօտ ես եկել խոր-  
հըրդի և ինձնից ես մի ճար խնդրում: Քեզ նմանները պիտի  
անպատճառ իրանց մեղքերի պատիժը ստանան: Սա դեռ քիչ է.  
շատ օյիներ պիտի գան գլուխդ, սա դեռ քիչ է:

—Մովսէս ապեր, պատասխանեց Գալուստը. խելքս էդքան էր  
կտրում, ինչ անեմ: Բանը բանից անցել է, էլ ինչ հարկաւոր է  
դրա մասին խօսել: Էս ամօթից մեզ ազատիր, քեզ մատաղ, եր-  
կուսս էլ խայտառակելու եկք:

—Խայտառակելի՜ւ էք, հա, հա, հա. հալա նոր պիտի խայ-  
տառակէք. դուք խայտառակւած պրծած էք. սաղ գիւղը ձեզ հա-  
մար դափ ու զուռնա է ածում... Անամօթներ, լրբեր... Անդգամ,  
դարձաւ Մովսէսը Սիմոն կատաղած. չէս ամաչում, եկել ես երեսու  
Քեզ էս գիւղից հեռացնելու է, հեռացնելու:

—Մի չարանալ, Մովսէս ապեր, խօսեց այս անգամ Սիմիւն.  
ներողութիւն, ի սէր Աստծոյ մի ճար արա մեզ: Քեզ մատաղ, ինչ  
որ ուզես՝ կը տանք...

Սիմիւն սկսեց արտասուել:

—Զայնդ կտրիր, դարաչի... լիրբ անդգամ: Գնացէք, կորէք ին-  
ձանից... Գլխներդ ծարը ինքներդ տեսէք: Ես ոչինչ անող չեմ,  
չեմ կարող:

—Կարող ես, կարող ես, ասաց Գալուստը յուսահատ և խըզ-  
ճալի ձայնով. եթէ ուզես՝ կարող ես. էնքան դեղարանք ունես որ...

—Գնացէք. ես չեմ կարող մի հոգի սպանել և իմ հոգին  
կրակի մէջ գցել, թէ ինչ է, ձեզ նման շները չխայտառակեն...  
գնացէք:

Շատ աղաչեցին Սիմիւն ու Գալուստը, Մովսիսի կնոջ միջնորդ  
բերեն, բայց ոչինչ չօգնեց. Մովսիսի ասածը՝ ասած էր:

—Որ էդպէս է, ես էլ կը գնամ կ'ընկնեմ գետը՝ կը խեղդւեմ,  
ասաց Սիմիւն արտասուելով և շտապով դուրս գնաց սենեակից:

—Զհանամը. թէ կը խեղդւես, ասաց Մովսէսը արհամարան-



քով. հաւատա մեծ սուգի մէջ կը դցես մեզ: Աւելի լաւ: Քեզ նմանները պիտի մեր միջից կորչեն: Լիրբ, անզգամ...

—Մովսէս ապեր, իսէր Աստծոյ, մեզ մի խաչտառակիր, վերջին անգամ փորձեց խնդրել Գալուստը:

—Գնա, գնա, էլ ես քեզ համար ոչինչ չեմ կարող անել: Թող էդ էգալէս էլ լինի, որ մի քիչ խելքդ գլուխդ հաւաքես:

—Ուրեմն մենք պիտի խաչտառակենք...

—Այո, ամեն մի յանցաւոր պիտի իւր արժանի պատիժը ստանայ: Դու հալա շատ պատիժներ՝ պիտի ստանաս, որովհետեւ արդար, ուղիղ ճանապարհը թողած, ծուռով ես գնում... Է՛հ, ի՛նչ խօսեմ քեզ հետ:

Գալուստը յուսահատ դուրս եկաւ Մովսիսի մօտից: Ժողովրդի բարեկամի բարկութիւնն ու անտարբերութիւնը սաստկացրեց նրա մէջ զղջման խաչթը: Գալուստը սկսեց ատել իւր զոքանչին, կնոջ, եղբօրը. բայց այժմ լոկատելութիւնը նրան ոչինչ օգնութիւն չէր տալ: Հարկաւոր էր զործնական միջոցների ղիմել իւր պատիւը պահպանելու համար: Նա հասաւ զոքանչին փողոցում, որ կանգնած փեսային էր սպասում:

—Հը՞, տե՛ք պեղը, հարցրեց Սիմին:

—Չէ:

—Ձհաննամը թէ չտեց: Հարկաւոր չի. ձի կը նստես, կը գնաս չիհար (քաղաք) և կնտեղից դեղ կը բերես: Կնտեղի թուրքերը ծախում կը լինեն: Գնանք, թող չտայ... Այ, հոգը նրա գլխին...

Մովսիսի գլխից ամբողջ օրը չէր դուրս գալիս այդ դէպքը: Նա սաստիկ վրդովւած էր և ցաւում էր, որ գիւղական կեանքը սկսում է աշկարայ կերպով ապականւել: Թէեւ նա սաստիկ չարացել էր Գալուստի վրայ, բայց միեւնոյն ժամանակ խղճում էր, որ այդ թշուա երիտասարդը, շնորհիւ եղբօր բռնութեան և իւր տխմարութեան, դեռ շատ փորձանքներ և տանջանքներ էր կրելու: Ի՛նչ արած. եթէ մարդիկ ուրիշ կերպ չին ուղղւում, թող նոքա փորձութիւնների ու տանջանքների բովով անցնեն: Այնուհետեւ նրանք կ'եփւեն կեանքի մէջ և մի ուղիղ ճանապարհի վրայ կը կանգնեն:

Գալուստը համաձայնեց կատարել զոքանչի խորհուրդը: Նա վառվառին խաբեց, թէ հասարակութիւնը զանազան պատւէրներով

Իրեն զաւառական քաղաքն է ուղարկում մի կարևոր գործի համար և մի աւաւտոյ, շատ շուտ, ճանապարհ ընկաւ դէպի N. զիւղաքաղաքը: Սակայն Քալուստի ճանապարհորդութիւնը անօգուտ անցաւ: Նա թուրքերի մօտ հարկաւոր դեղը չկարողացաւ գտնել և դատարկ ձեռքով վերադարձաւ տուն:

Սիմոն դրութիւնը օր օրի վրայ ծանրանում էր: Նա ամաչում էր տնից դուրս գալ: Ամբողջ զիւղը արդէն նրա և Քալուստի մասին էր խօսում: Թէև սկզբներում մի ուրիշ տղամարդու վրայ էլ կասկած կար, բայց յետոյ, հաստատ իմացողների կարծիքը ընդհանրութեան կարծիք եղաւ և Քալուստի անունը դարձաւ կատակների առարկայ: Մէկն ասում էր.

— Եղբայր, էլ ի՞նչ էք մասխարա անում. շատ բարի զոքանչ է եղել, էլ ի՞նչու էք մեղադրում:

Միւսն ասում էր.

— Ի՞նչ անի խեղճ Քալուստը, իր կնիկը յղի է, պիտի զոքանչի հետ զնար էլի:

Եւ ծիծաղում էին լսողները:

— Պա ասում էին Քալուստը Նոյզառին իզուր է տանում. ա՛յ, հրէս շուտով մի երեխայ կ'ունենայ էլի: Կամ մօրից՝ կամ աղջկանից. մէկ չի, հա, հա, հա...

— Առչաղ Քալուստ, լաւ է արել. իմացել է, որ Նոյզառի համար պիտի երկար սպասի... Մնունդը որ տղայ լինի, էլ նրան չի խօսցնի: Տղան կը մեծանայ, շուտով ջանին կը հասնի:

— Քալուստը խելք կ'անի, որ զոքանչին էլ վերցնի իր մօտ: Կնիկը որ մեծացաւ, այնուհետեւ նրան բաց կը թողնի...

— Հա, հա, հա, հա... դարձեալ քրքջում էին հանաքէիներին շրջապատողները:

Կային քիչերը, որոնց վրդովմունք ու զգւանք էր պատճառում Քալուստի պատմութիւնը: Շատերին նա միայն վայրկեանական զւարճութիւն էր պատճառում:

Վառվառի ականջին էլ հասաւ չարաբաստիկ լուրը: Մի օր նրա տալը՝ Անուշիան եկաւ նրա մօտ և այլալլաճ ձայնով ասաց.

— Վառվառ, ախր մի բան են ասում, լսե՛լ ես:

— Ձէ, ի՞նչ կայ:



—Ասում են խնամի Սիմոն ոտը ծանր է:

—Ի՞նչ ես խօսում, բացականչեց Վառվառը զարմացած:

—Խաչը վկայ, սաղ գիւղը դրա մասին է խօսում: Էդ հալա ոչինչ. ցաւն էն է, որ ասում են երեսան Գալուստիցն է: Պա էսպէս բան կը լինի:

—Ի՞նչ ես ասում:

—Պա ինչ. երեկ էլ մէկը ինձ պատահել է ջրատեղից գալիս, ասում է. Անուշկա, աչքդ լոյս լինի, խնամիդ շուտով երեխայ է բերելու. որ տղայ լինի, անունը, ասում է, ի՞նչ էք դնելու: Գալուստ դրէք, ասում է: Քիչ մնաց գետինը մոնէի: Պա էսպէս խայտառակչութիւն կը լինի:

Վառվառը աջ ձեռքի բութը ցուցամատի վրայ դնելով շրթթունքներին տարաւ և զարմանք ու սարսափ արտայայտող աչքերը յառելով Անուշկայի երեսին, ասաց.

—Աղջի, պա էդպէս բան կը լինի:

—Ի՞նչ անենք, հարցրեց Անուշկան հոգսալիւր եղանակով:

—Ի՞նչ պիտի անենք. խայտառակել պրծել ենք: Աղջի, գուցէ իսկի էդպէս բան չկայ, սուտ կը լինին ասում:

—Սուտ չի լինիլ:

—Տէր Ասուած, մտածեց ինքն իրեն Վառվառը. մեր էս տան գլխին օրէցօր վատ-վատ փորձանքներ է գալիս: Սա տուն չի. չեմ իմանում ի՞նչ բարբադ է:

—Վառվառ, ասաց Անուշկան. վեր կաց գնանք էն գետինը մտածի մօտ, տեսնենք ի՞նչ է էս բանը: Նա էլ մեզ համար խնամի չղառաւ, դարդ ու բալա զառաւ...

Վառվառը, որ նստած կար էր անում, մի կողմ թողեց գործը, վեր կացաւ տեղից և պատրաստուեց Անուշկի հետ Սիմոն մօտ գնալու:

—Նոյզառ, ասաց նա փոքրիկ հարսին. ես գնում եմ քո հերանց...

—Ես էլ գամ, ընդհատեց հարսը:

—Ձէ, դու տանը մնա. չի կարելի. քեզ մի ուրիշ անգամ կ'ուղարկեն:

—Հաւատա քիչ ես գնում մօրդ տունը, բղաւեց Նոյզառի վրայ:



Անուշկան. հոգը գլխիդ: Էն մայրն էլ որ քոնն է, էլ աշխարհումս ինչ դարդ ունես... Քոքներդ կտրւի...

Նոյզառը խփոյն և եթ պապանձւեց սարսափից:

— Դէ մենք գնում ենք, շարունակեց Վառվառը. էս սենեակը կը սրբես, կը վերջացնես և կը գնաս մի կուլա ջուր կը բերես ագրիւրից: Նրանից յետոյ կը գնաս Գալիանէին կ'ասես, որ էս իրիկուն դայ մեր խմորը հունցի. հաց պիտի թխենք էգուց, հասկացած: Զմոռանաս, ինչ որ ասացի, ականջումդ պինդ պահիր:

Վառվառն ու Անուշկան դուրս գնացին: Նոյզառը մնաց մենակ: Նա մի քանի անգամ դէս ու դէն ընկաւ սենեակում, յետոյ դուրս եկաւ բակը, սենեակի դուռը թողնելով բաց և այնտեղից էլ գնաց փողոց: Մի գոմի առաջ դիզած աղբի վրայ, երեսաներ էին խաղում: Նոյզառը մօտեցաւ նրանց և նստելով աղբի վրայ, սկսեց ապուշ հայեացքով դիտել երեսացոց խաղը, մոռանալով իրեն տւած պատէրները: Երեսաները, ձանձրանալով իրանց խաղից, թափւեցին Նոյզառի գլխին և սկսեցին նրան չարչարել: Մէկը մէջքին էր խփում, միւսը ոտիցն էր քաշում: Գլորւում էր Նոյզառը աղբի դէզի ծայրից մինչև ներքև և բարձրանում տեղից: Նա յիմար քրքրիջ էր արձակում և նորից նստում իւր տեղը: Մի քանի չարածիններ քաշում էին նրա ծամբրից, իսկ ոմանք աղբ էին վերցնում և ցրում նրա գլխին: Նոյզառը զգաց իւր յիմար դրուծիւնը և փախաւ երեսաներից: Նա փախչում էր սարսափած, առանց յետ նայելու:

— Հօյ, հօյ, գոչում էին երեսաները նրա յետևից ծիծաղելով. հօյ, տեսէք, մեծ հարսը փախաւ, մեծ հարսը փախաւ...

Նոյզառը կանգնեց հարևան փողոցի անկիւնում և այս անգամ սկսեց այդ տեղից դիտել երեսաներին: Քիչ յետոյ նա նստեց իւր կանգնած տեղը և փողոցի աւազը փեշերի մէջ ածելով, սկսեց դէս ու դէն ցրիւ տալ: Արևը մայր մոնելու վրայ էր, բայց Նոյզառը դեռ շարունակում էր իւր գործով զբաղւել և անց ու դարձ անողներին նայել:

Գալուստը հանդից տուն եկաւ: Տանը ոչ ոք չկար, բայց սենեակի դուռը բաց էր: Հաւերը ներս էին թափւել և աղոտոել: Վարչոյ արած յատակը: Գալուստը, բարկացած, Վառվառ, Նոյզառ

կանչեց, սակայն ոչ ոք պատասխան չուեց: Դուրս քշեց հաւերը, բարկացած մի քանի հայհոյանքներ տուեց, փակեց սենեակի դուռը, բանալին պատի սովորական ձեղքում դրեց և դուրս գնաց տնից:

Վառվառն ու Անուշկան խնամու մօտ էին գնացել, ամեն ինչ իրանց աչքով տեսել և նրան նախատինք տուել: Սիմին, բացատրութիւններ տալու կամ մեղաց զալու փոխարէն, սկսել էր Վառվառին և Անուշկային հայհոյել ամենախոստառակ խօսքերով և պահանջել որ նրանք իր տնից դուրս գան:

— Զեզ ի՞նչ, ձեզ ի՞նչ, զոռում էր Սիմին. հողը զլխներիդ. լրբերը իրանք են, եկել են իմ ոտին են ցելս կպցնում: Շատ լաւ եմ արել, աչքներդ եմ հանել, ձեռքիս մէջ տեղդն է եկել. գնացէք, ինչ ուզում էք արէք: Ե՛ս գիտեմ, իմ փեսան, դուք ի՞նչ շուն էք, որ խառնում էք. դուրս եկէք տնիցս:

— Գնանք, Անուշկա, գնանք, ասեց Վառվառը. սրա հետ խօսալ չի կարելի: Լսածներս ուղիղ է: Մենք խայտառակած ենք...

Երեկոցեան դէմ էր, որ Վառվառը տուն վերադարձաւ: Դռները փակ էին և Նոյզառը տանը չէր: Հէնց նոր էր նա բացել սենեակի դուռը, որ ներս մտաւ Գալուստը: Երկուսի դէմքերը միմեանց հանդիպեցին և նրանք, այլալձաժ արտայայտութիւնների փոխադարձ ազդեցութեամբ, շատ բան փոխանակեցին:

Այդ անցարմար դրութիւնը աւերելու համար, Գալուստը բարկացած գոչեց.

— Ո՛ւր էք կորել. ոչ դու ես տանը, ոչ Նոյզառը: Եկել եմ տուն, տեսել՝ սենեակի դուռը բաց, հաւերը միջին հալի գնալիս, ոչ ոք չկայ: Մէկն էլ որ մօտէր սաղ տունը հաւաքէր տանէր, էն ժամանակ ի՞նչ կ'անէիք:

— Նոյզառը տանը չի հիմա:

— Ոչ:

— Պա ռւր է:

— Ես ի՞նչ գիտեմ. ջհաննամումն է:

— Ախր ես նրան պատուէրներ էի տուել, իսկ ինքս գնացել նրա մօր մօտ: Վերջին երկու խօսքը ելէքտրական հոսանքի նման ցընցեցին Գալուստի ամբողջ հոգին ու մարմինը: Նրա դէմքը շառագունեց: Որպէս զի ծածկէ իւր ալեկոծւիլը, նա առաւել ևս բարկացաւ ու իւր սրտի մաղձը Նոյզառի զլխին թափեց:



—Դա էլ մեզ համար հարս չի, այլ դարդ ու բալա: Պա որ քհաննամն է կորել:

—Ես գիտեմ: փողոցումը կը լինի:

Վառվառը դուրս գնաց Նոյզառին որոնելու, իսկ Գալուստը մնաց սենեակում: Դէպի բակը նայող պատուհանի՝ առաջ կանգնած, նա մտածում էր.

«Էս ինչ բանի մէջ ընկալ ես. սաղ գիւղացոց առաջ խայտառակւած եմ: Սրանից յետոյ էլ ես ինչպէս պիտի մարդամէջ դուրս գամ: Վառվառն էլ է իմացել, քոյրս էլ: Անիս, պա եթէ ես մի հասած աղջիկ տարած լինէի, էս բանը կը պատմէի: Ախր ինչու էս բանն արեցի. խելքս որտեղ էր կորել...»

Այսպէս յաճախ տանջուում էր Գալուստը իւր գղջման և խղճի խայթոցի տակ: Այդ տանջանքն օր օրի վրայ սաստկանում էր, որովհետեւ ամօթաբեր գաղղնիքը շուտով բոլորովին յայտնի պիտի դառնար իւր մօտիկներին:

Ներս մտաւ Վառվառը Նոյզառի հետ միասին:

—Աղջի, ուր ես կորել, բղաւեց Գալուստը կատաղած և իւր բարկութիւնը նորից Նոյզառի գլխին թափելով. գետինը մտած, անունդ հարս է ասի, փողոցներում ի՞նչ ես անում. մեզ պիտի խայտառակես, որ խայտառակ...»

Լեզուն կծեց Գալուստը: Քիչ էր մնում, որ բերանից թռցնէր խայտառակ գաղղնիքը, բայց զսպեց իրան և կատաղութիւնը յագեցնելու համար սկսեց հարւածել Նոյզառին:

Կծկեց, կու: եկաւ Նոյզառը, կպաւ պատին և լաց եղաւ: Վառվառը ազատեց հարսին ամուսնու. ձեռքից, բայց ինքն էլ նախատեց և մի քանի խրատներ տւեց Նոյզառին:

—Շորերի կեղտը... դա ինչ է. գլխիդ նայել չի լինիլ. սաղ աղբ է ու փոշի. գնա շորերդ թափ տուր, յետոյ օջախը վառիր, որ գամ կերակուր դնես վրան: Ոչ տունն ես աւելել, ոչ էլ բակը: Զուր բերել ես աղբիւրից:

—Ձէ:

—Զուր փէէ, պատասխանեց Գալուստը զայրացած. պա ինչ ես արել. պա ինչ բանի ես պէտք:

—Գայիանէին ասացիր, որ գայ մեր խմորը հունցի:



—Զէ:

—Պա ես քեզ չասացի, վրայ բերեց Վառվառը. որ պատուէր-  
ներս ականջումդ պահեմ, ինչու ես մոռացել: Լաւ, միւս անգամ  
միտդ պահես: Հիմա գնա օջախը վառիր:

Նոյգառը մեքենայաբար կ'ստարեց Վառվառի պատուէրը. նա  
գնաց խոհանոց:

Վառվառն ու Գալուստը մնացին սենեակում և նրանք այլ ևս  
ոչ մի խօսք չխօսեցին: Նրանց լարած և խորհրդաւոր լռութիւնը  
շատ բան էր ասում:

Սենեակը կարգի բերելուց յետոյ, Վառվառը մտաւ մթերա-  
տուն. առաւ իւր ձեռքը կաթսան, ջուր ու բրինձ ածեց մէջը և  
տարաւ խոհանոց: Օջախը դեռ վառ չէր: Նոյգառը մի քանի մեծ  
փայտ էր դրել օջախում առանց կպցնելուկի: Մի արկղ լուցկի  
էր փշացրել նա և, իհարկէ, չէր վառել փայտերը: Անճարացած նա  
թողել էր այդ գործը և ձեռքերը ծալած նստել խոհանոցում  
դարսած տաշեղների վրայ: Նա ննջում էր, երբ Վառվառը ներս  
մտաւ. կաթսան ձեռքին:

—Սա մեզ համար հարս չի լինելու, այլ ցաւ ու կրակ, ասաց  
ինքն իրեն Վառվառը:

Գլ. Գ.

Օրերը անցնում էին և Սիմիի դրութիւնը քանի գնում՝ ծան-  
րանում էր. նա սնից քիչ էր դուրս գալիս, իսկ դուրս գալիս աշ-  
խատում էր, որ ոչ ոք իրան չնկատէ: Ամօթի զգացմունքը ամբող-  
ջովին չէր վերացել նրանից: Օր օրի վրայ նա անհամբեր սպասում  
էր ծննդի, որպէս զի իւր ամօթաբեր և խայտառակ դրութիւնից  
կարողանայ վերջապէս ազատուել: Սիմին շատ լաւ գիտէր, որ ամ-  
բողջ զիւղը նրա մասին է խօսում, բայց և այնպէս, կարծում էր,  
թէ երեխային սպանելով ու նրա հեաքերը կորցնելով, կարող կը լի-  
նի ցիրուցան անել պտուղը լուրերն ու կարծիքները:

Գալուստը զոքանչի հետ համամիտ էր այդ հարցում: Նա մի  
ուրիշ հաշիւ էլ ունէր. երեխան ապօրինի էր և իւր վզին կարող  
էր բեռ լինել:

Մի երեկոյ վերջապէս ցաւը բռնեց Սիմուն: Տատմէր Օսկին ար-

դէն նրա մօտն էր: Նա իւր ամբողջ գիտութիւնը գործ դրեց ծննդկանի վրայ և մի ժամից յետոյ աղատեց նրան երկունքից: Լսեց մի զիւ ճշոյց, որ իսկոյն և եթ ընդհատուեց: Անցաւ մի քանի վայրկեան: Նորից լսեց մանկան ձայնը, բայց այս անգամ թոյլ, կցիտուր ճրրոցով...

—Տէսնում ես, երեսը ինչ պինդ է, ասեց Օսկին ժպտալով. յանկարծակի գաս, հը՛ր... մի սհաթ է ձեռքս բերանին եմ դրել, էլի հալա ձայն է հանում... Հը՛, ինչ կայ... Սուս կաց... էդպէս: Գնա պապերիդ մօտ... Աշխարհիս ցաւն ու կրակն էլ հետդ տար...

Օսկին իւր ձեռքով կրկին փակեց մանկան բերանն ու քիթը: Քիչ անցած, նա երեխային երեսն ի վեր դրեց բարձի վրայ և մի հաստ վերմակով ծածկեց:

Այլ ևս ոչ մի ձայն չէր լսուում: Միայն երբեմն ծննդկանի տընքոցն էր, որ խանդարում էր սենեակի լուռութիւնը:

—Աղջի, ամա տղա խիզան էր էէ, ասաց Օսկին ափսոսանքով. կը մեծանար, ջանիդ կը հասնէր:

—Վա՛յ, զոչեց ծննդկանը տնքալով, թող կորչի ջհաննամը:

—Լաւ, հանգիստ կաց, կը կորչի. միամիտ կաց:

Այս ասելով, տատմէր Օսկին բարձրացրեց հաստ վերմակը և նորածնին շրջեց մէջքի վրայ: Երեխան անշնչացած էր: Նրա մարմինը սաւանի գոյն էր ստացել, իսկ տեղ-տեղ կապտել էր: Փոքրիկ բազուկները կծկւած էին կրծքին և մանրիկ մասները տարածւած կոկորդի շուրջը: Երեւի այդ նրա վերջին ճիգն էր եղել իւր գոյութիւնը պահպանելու համար... Թւում էր, թէ դա մի նորածիլ օստիկ է, որ դեռ լոյսը նոր տեսած, զոհ է դառնում անսանձ մրրիկին...

Օսկին շօշափեց երեխայի մարմինը: Քիչ տաքութիւն կար, բայց ոտներն արդէն սառել էին: Դահիճ-տատմէրը շտապով վերցրեց մանկան դիակը, փաթաթեց մի ցնցոտի մէջ և կռնատակն առնելով խանձարուրը, վազեց դէպի մօտիկ գոմը...

—Դէ, հիմա հանդարտուիր, ասաց նա Սիմօն, վերադառնալով տուն. միամիտ կաց, ամեն ինչ վերջացրի: Աղջի, ամա էնքան էր որ... Մի օրական չկար, բայց ասես մի փութ ծանրութիւն ունեւոր. ուղիղ են ասել, թէ մեռելը ծանր է լինում... Դէ, Սիմի,



շուտ արա առողջացիր, վերկաց անկողնիցդ և ամեն մի խօսողի բերանը փակիր:

Բայց այնուամենայնիւ լուրը տարածւեց և այն՝ շատ շուտով: Սիմոն հարեանուհի Ջաւահիրը մի հաւ ունէր, որ շարունակ իւր ձուն կորցնում էր: Մի օր Ջաւահիրին յաջողեց հետեւել հաւին, և նա տեսաւ, որ անհաւատարիմ թուշունը մտաւ Սիմոն գոմը: Ջաւահիրը գնաց հաւի յետեւից, բացեց դռմի դուռը, ներս մտաւ՝ որ հաւը դեռ չի նստել ձու ածելու, այլ գոմում գտնւող իւր ցեղակիցների հետ մի արտասովոր իրարանցման մէջ է ընկել: Հաւերը ճչում, ծկլոում էին: Նոցանից ոմանք երբեմն զգուշութեամբ մօտենում էին դռմի անկիւններից մէկին, մի քայլ անելուց յետոյ յետ էին թռչում, կլի առաջ անցնում և ինչ որ մի բանի կոցահարում: Ջաւահիրը սաստիկ հետաքրքրւեց այդ բանով և մօտեցաւ անկիւնին: Ո՞րքան էր նրա սարսափն ու զարհուրանքը, երբ նա տեսաւ աղբի միջից դուրս ցցւած մի մանկան բազուկ: Ջաւահիրը մի քայլ ևս առաջ անցաւ, այս անգամ աւելի ուշադրութեամբ նայեց և հաւատաց, որ աչքերը իրան չեն խաբում: Մնաց քարացած: Չշարժեց դիակը:

Ջաւահիրը մինչև անգամ մոռացաւ թէ ինչու էր դոմն եկել և շտապով դուրս գնաց: Իւր տեսածը նա սկզբում ուղեց ծածկել, բայց չկարողացաւ. նա պահանջ էր զգում իւր սարսափն ու զարմանքը բաժանել ուրիշների հետ: Ջաւահիրը իւր տեսածը նախ պատմեց ամուսնուն, իսկ յետոյ հարեանուհիներից մէկին: Այդ լուրը բերանէրբերան անցնելով, վերջապէս այսպիսի ձևակերպութիւն ստացաւ. «Սիմին խեղդել է իւր երեխային և թաղել գոմում: Այժմերը փորել են գետինը, պատահմամբ այնտեղը, որտեղ թաղւած է եղել երեխան և սորա կուռը բաց է եղել. գոմում եղած հաւերը ճիչ ու ծկլիոց են եղել բարձրացրած. Ջաւահիրը ներս է մտնում, տեսնում է այդ ամենը և հասկանում, թէ բանն ինչումն է. Ծատրի կինը երեխայ է բերել, բայց երեխային խեղդել է ու աղբի տակով արել»:

Լուրը հասաւ զիւղի կաշառակեր տանուտէրին:

Լսելով վերջին նորութիւնը, նա մի երեկոյ եկաւ Սիմոն մօտ և ասաց.



—Սիրի, ես եկել եմ քեզ մօտ մի բանի համար, որ ինքդ էլ հասկանում ես, ի հարկէ։ Ես եկել եմ քեզ խորհուրդ տալու, որ գլխիդ ճարը ժամանակին տեսնես։ Սաղ զիւղը քեզ վրայ է խօսում։ ամենքն էլ վկայում են, թէ դու երեսայիւ խեղդել ես ու աղբի տակով արել։ ասենք ես ինքս էլ էդ բանը տեսել եմ։ Հիմա ես ինչպէս ծածկեմ էդ գործը. չեմ կարող, որովհետեւ եթէ ծածկեմ, իսկ պրիստաւը մի կերպ լսի, էն ժամանակ ինձ մեծ պատիժ կը տան։

—Ձեմ խեղդել, երեսան խեղդած ծնւեց, ամաց Սիրին արտասելով։

—Սուտ ես ասում. ես քեզ առաջինը՝ չեմ հաւատալ, երկրորդ՝ եթէ դու արդար էլ լինես, բաւական է, որ ամենքը ասում են խեղդել ես։ Վերջապէս դա խօսմ գժւար չի իմանալը, բժիշկը կը գայ, դիակը կը հանի, կը տեսնի ու ամեն ինչ էն ժամանակ կը պարզուի։ Ելի ես ասում եմ, որ եթէ ես էդ բանը պրիստաւին զրեւու չլինեմ, բայց իմ թշնամիներից մէկը վեր կենայ եւ յայտնի, էն ժամանակ ինձ բանտ կը նստացնեն։

—Ես ինչ մեղաւոր եմ որ, պատասխանեց Սիրին հեկեկանքով. ես ոչինչ չեմ արել եւ դու ուզում ես ինձ գործի մէջ դրել...

—Ել լաց լինելը հարկաւոր չի. յայտնելը՝ յայտնելու եմ, բայց դու աւելի լաւ է մտածիր, թէ ինչպէս անենք, որ պրծնես էս գործից։ Վատ կը լինի. կարող են քեզ Սիրի ուղարկել։

—Ի՞նչպէս անենք, ես ինչ գիտեմ։

—Ա՛յ, էդպէս հաճ. էլ լացը ինչ հարկաւոր է. դու էլ խոմ փոքր երեսայ չե՞ս. դու հարցուր ինչ որ հարկաւոր է, ես կ'տեսնի՜մ ինչ լսիր. քննիչի թարգմանը իմ լաւ բարեկամն է. ինչպէս որ ուզենք, նա գործը էնպէս էլ շուռ կը տայ եւ քեզ բոլորովին արդար դուրս կը բերի։ Բայց դէ նա էդ բանը, ի հարկէ, ձրի չի անիլ, պիտի մէջ տեղը փող խաղանի. քննիչին, թարգմանին փող պիտի տալ։

—Ես զրտեղից փող գտնեմ։

—Դժւար չի, կը գտնես. պա Սիրի գնալը քեզ համար ոչինչ։

—Ախր ես իսկի մեղաւոր չեմ, հէնց զուր տեղից փող տամ...

—Դէ՛հ մի տար, հը՛ը, զոչեց տանուտէրը բարկացած եւ վեր-

կացաւ տեղից դուրս գնալու. շատ հարկաւորս է, թէ քեզ կը տանեն՝ կը կորցնեն... Զարմանալի խալիս են. դու հա՛ ահա, հա՛ նրա օգտի համար չարչարիր, էլի չեն հասկանում... Դէ մի տուր. գնա գլուխդ քարերովը տուր...

Սիմին վախեցաւ, քիչ էլ մտածեց և ասաց.

— Մի գնար, մէլիք, ի սէր Աստծոյ, մի նեղանար:

Տանուտէրը կանգ առաւ, վերադարձաւ իւր տեղը և նստեց:

— Լաւ, մէլիք, շարունակեց Սիմին ինչքան փող է հարկաւոր:

— Պակասը 40 մանէթ:

— Էդքան շատ:

— Ինչ արած, գործն էնպիսի գործ է, որ պիտի տաս ու կարողանաս կեանքդ ազատել: Հանաք մասխարա չէ երեխայ խեղդելը: Ուղղակի, առանց մի խօսքի Սիբիր կը տանեն: Դէհ, ես գործ ունեմ, գնում եմ, ինչ ես ասում: Կմրող ես տալ, թէ չէ:

— Կը տամ, կը տամ, պատասխանեց Սիմին փոքր տատանումներից յետոյ:

— Դէ էդ փողը հիմիկանից պատրաստիր. ես արդէն գրել եմ պրիստաւին. շատ կարելի է, որ մի երկու շաբթից յետոյ քննիչը գայ:

Վերջացնելով իւր գործը Սիմու հետ, տանուտէրը դուրս եկաւ նրա մօտից: Մի օրից յետոյ նա փողոցում հանդիպեց Գալուստին և այս անգամ նրա բողազին չոքեց:

— Գալուստ, ասաց նա, քո էդ զոքանչի գործի մասին շուտով յայտնելու եմ պրիստաւին, որովհետեւ սաղ զիւղը գիտէ էդ բանը: Իսկն ասած, քո անունն էլ պիտի ռապորտի (գեկուցման) մէջ գրեմ. դէ դու էլ գիտես, թէ ինչու. բայց էդ վատութիւնը ես քեզ չեմ ուզում անել: Արի մի բան տուր, գործը դրանով էլ վերջացնենք: Զահիլ տղայ ես, ինչու գլուխդ փորձանքի մէջ ընկնի:

Գալուստը այդ խօսքերին ոչինչ չպատասխանեց: Նա կարմրեց ամօթից և, իրան մոռանալով, հարցրեց զոքանչի մասին.

— Պա զոքանչիս համար ինչ ճար պիտի անենք:

— Դրա մասին ես մտածել չեմ. ամեն բան կ'անեմ. միամիտ կաց և հալա քեզ համար մտածիր: Վատ կը լինի, երկուսիդ էլ հաւասար կերպով պատիժ կը տան, որովհետեւ ասում են՝ թէ երկուսդ էք երեխային խեղդել:



—Ի՞նչ տամ, որ ինձ ազատես էդ գործից:

—Շատ չեմ ուզում. 25 մանէթ և մի գրւանքայ լաւ չայ: Ես քո անունը բոլորովին չպիտի ծածկեմ քննիչից. էդ անկարելի է, բայց դէ էնպէս կ'անենք, որ սաղ սալամաթ պրծնես գործից: Քննիչի թարգմանը լաւ տղայ է. նա ամեն բան կ'անի. միամիտ կ'աց:

Գալուստը խօստացաւ կատարել տանուտէրի պահանջը և մի օրից յետոյ կաշառեց նրան:

—Սրանք են, սրանք են ամուսնութեանս պտուղներն ու •գուտը, ասում էր Գալուստն ինքն իրեն՝ կատաղած և ատամները կրճտացնելով. զոքանչիցս ձեռք կը քաշեմ, իսկ տանը ինձ ի՞նչ կամ հով է սպասում. ոչ ոք. դատարկութիւն... Նոյզմուր... Երանի քեզ Գալուստ, որ էդ կինը քոնն է. էլ աշխարհումս դու դարդ չունես... Նրա շրթունքների վրայ խաղաց մի դառն ժպիտ. Նա խոր հառաչեց ու գլուխը կորցրածի նման գնաց իւր գործին:

Երկու շաբաթից յետոյ եկաւ քննիչը: Տանուտէրը իսկոյն տեսնւեցաւ նրա թարգմանի հետ:

—Ո՛րքան են տալիս, հարցրեց վերջինս:

—Յիսուն մանէթ, պատասխանեց Մէլիքը, 15 բուբլին ծածկելով:

—Շատ լաւ. փողերը ստացել ես:

—Այո, մօտս է:

—Դէ հանիր, տեսնենք:

Տանուտէրը դուրս հանեց պորտմոնէից թղթադրամները և համարեց թարգմանի առաջ: Վերջինի աչքերը շլացան, երբ տեսաւ փողերը:

—Տանուտէր, դէ վու գիտես, որ գործի մանրութիւնը ես եմ կատարում, ուրեմն, հա, հա, հա, ասէք ձեզ 20 մանէթ, իսկ 30-ը ինձ: Չէիք կարող աւելի պոկել:

—Չէ, չունեն. աղքատ մարդիկ են:

—Լաւ, ասա միամիտ կենան. գործը լաւ կ'անցնի:

Տանուտէրը շնորհակալութիւն յայտնեց, հեռացաւ և գնաց Գալուստին ու Սիմոն միամտացնելու:

Գործի քննութիւնը կատարւեց, բայց այնպէս, որ մեղադրւած-



ները անպատիժ մնացին: Յիսուն ըռբլին մեծ գործ կատարեց: Այնուհետև Սիմոն էլ խօսք չէր կարելի ասել:

—Հողը ձեր գլխին, գանգատուում էր նա այստեղ այնտեղ. մեծ բան աշխատեցիք. դէ գնացէք, ջաններդ դուրս գալ... Զօռով ուզում են ոտիս կեղտ քսեն... Աչքներդ հանեցի, ազատուցի...

Տանուտէրը չբաւականացաւ իւր ստացած փողով: Նա մի օր Սիմոն իր մօտ կանչեց ու ասաց.

—Սիմի, քո աւած փողը բոլորն էլ տուցի քննիչին, որ գործը քննարեց. պա ինձ ի՞նչ ես տալու. ես որ չլինէի, ո՞վ գիտէ դու հիմա որտեղ լինէիր...

—Շնորհակալ եմ, Մէլիք, Ասաւած որդիքդ պահի, ինչ որ ասես, կ'անեմ:

—Գիտեմ, աղջի, որ փող չես կարող տալ. որ էդպէս է՝ մի-մին եկ մեր տուն. գործ շատ է լինում, կատարիր. կը գաս խմոր կ'անես, բուրդ կը գզես, աղ կը թակես, կը գնաս արտը կը քաղ հանես, ջուր կը բերես... հաա շատ գործ...

—Աչքիս վրայ, մէլիք, երբ հարկաւոր լինեմ, կանչեցէք:

Եւ Սիմին իսկապէս յաճախ տանուտէրի տանը աղախնու պաշտօն էր վարում, որի պատճառը բոլոր հարեաններին էլ յայտնի էր:

#### ԳԼ Դ.

Դառն ճակատագիրը անողոք շարունակում էր հալածել Վառվառին: Ամուսնու մահից ուղիղ մի տարի անցած, նա մի նոր հարւած ստացաւ: Այդ հարւածը ամենից խիստն ու ամենից զգալին էր: Երկու շաբաթեայ ընթացքում, մինը միւսի յետեից, մեռան նրա զաւակները. աղջիկն ու տղան: Առաջինը զոհ գնաց ծաղկի, իսկ միւսը՝ կոկորդացաւի: Բոլորովին միայնակ մնաց Վառվառը, ծնողներից, ամուսնուց և զաւակներից զուրկ: Իւր հարսնութեան առաջին օրերից նա ուրախութիւն չէր տեսել, շարունակ շրջապատւած լինելով նեխւած մթնոլորտով: Նա յիշում էր՝ երբ մի շաբաթեան հարսն էր օրը կիւրակի, ինքը հէրանց էր գնացել. երեկոյեան նա վերադարձել էր տուն այն ժամանակ, երբ սկսւրայրը փողոցից նոյնպէս վերադարձած էր: Օ՛հ, ինչ զաւաղալ բարձրա-

ցաւ այդ երեկոց, էլ հայհոյանք, էլ նախատինք, ինչ որ ասէք թափեցին խեղճ նորահարսի գլխին հայր ու որդի, և այդ բոլորը նրա համար, որ հարսը երեկոցեան իր ամուսնուց և սկեսրաջրից ուշ էր տուն եկել: Այդ բոլորին Վառվառը լռութեամբ պատասխանեց, մանաւանդ որ, Սինդից քիթ էր կալած <sup>1)</sup> և հեռանալով հարեան սենեակը երկար ու դառնագին լաց եղաւ: Այդ դէպքից կարճ ժամանակ անցած, մի նոր փոթորիկ բարձրացաւ նորահարսի գլխին. հարեանուհի Մարիամի աղջիկ Հայկանուշը եկել էր Վառվառինց դէօրակը <sup>2)</sup> խնդրում ջրի գնալու համար: Վառվառը սիրով կատարեց նրա խնդիրը: Պատանի աղջիկը դէօրակը ձեռքն էր առել և ուղում էր հեռանալ, որ ներս մտաւ Սինդ Ղուկասը:

—Սա ի՞նչ է, դուեց նա, Հայկանուշի ձեռքից դէօրակը խլելով. ձեզ կուժ, դէօրակ չունէք. չունէք, կժով բերէք, փողով առէք. մենք ձեզ պարտական չենք խօժ. մենք մեր տանից հարեանին բան չենք տալ, զնն, զնն...

Խեղճ աղջիկը կարմրեց ամօթից և ոչինչ չպատասխանեց: Նա գլխովոր ու կոտրեած սրտով հեռացաւ Վառվառենց տնից և գնաց մի ուրիշ հարեանուհուց դէօրակ խնդրելու: Իսկ Սինդը միևնոյն բողբոջն ներս կանչեց նորահարսին, սկսեց իւր խրատներն ու նախատինքները և վերջացրեց իւր «բարենպատակ» խորհուրդները հեռեկալ խօսքերով:

—Սրանից յետոյ, քո գլխի ոչ մի բան չտաս ուրիշի. կաշիդ գլխովդ կը հանեմ. կաշիդ... Մի քանի օրուան հարսն ես, որ հրպէս ձեռքդ բաց է <sup>3)</sup>, պա յետոյ ինչեր կ'անես. հաւատաց էս սաղ տունը ուրիշի վրայ կը բաժանես, եթէ ես գլխիդ կանգնած չլինեմ: Խօժ էդպէս բան չի լինիլ...

Կրկին առանձնացաւ Վառվառը և կրկին լաց եղաւ, բայց այս անգամայ լացը ճրան շատ բան հասկացնել ու զգացնել տւեց:

—Ի՞նչ կը լինէր, որ ես մարդու չգնայի, ասաց նա ինքն իրեն, սրբելով աչքերից արտասուքը. ոտով ձեռքով ես հիմա կապւած

<sup>1)</sup> Նրա հետ չէր խօսում:

<sup>2)</sup> Դուլայի և կփի մեջին տեսակը դեռահաս աղջիկներին չարմար:

<sup>3)</sup> Առատ ետ:

եմ: սրանից յետոյ իմ կեանքը սա՛ն է լինելու. ամեն օր սրտնեղութիւն, ամեն օր հայհոյանք, նախատինք: Իմ ուղածը չեմ կարողանալու անել. նրանց ծափովը պիտի պար զամ, իսկ դա իմ սիրտը նեղ է պահելու և խիղճս անհանգիստ: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ համար...

Ճիշտ է, յաճախ առանց ուշադրութիւն դարձնելու և յուսահատուելու Վառվառը զործում էր այն, ինչ որ նրան թելադրում էր իր մաքուր սիրտն ու խիղճը, բայց և այնպէս, սկստապիտակ և ամուսնու բռնակալական լուծը ճնշում, թուլացնում էր այդ սիրալիր և բարեխիղճ կնոջ:

Մեռաւ Սինոզը, բայց մնաց նրա բռնակալական հողին. հօր դերը իւր վրա առաւ մեծ որդին՝ Վառվառի սև ու սպիտակ ամուսինը: Երիտասարդ կնոջ դառնութիւնները աւելի ևս կրկնապատկուեցին շնորհիւ անկուշտ ու վատահոգի ամուսնու: Վերջին տարւայ ընթացքում կրած հարւածները այնքան յաճախակի էին, որ տըխրութեան կնիքը ընդմիշտ դրոշմեց Վառվառի ճակատին: Եւ յանկարծ այդ բոլորից յետոյ անգութ մահը խլեց նրանից իւր զաւակներին և խոր խոցեց թշուառ կնոջ քնքոյշ սիրտը:

— Լաւ չէր լինիլ, որ ես մեռնէի, մրմնջում էր Վառվառը. տխր, բայց էն ժամանակ զաւակներս ինչ կ'անէին առանց մօր... Զէ, լաւ կը լինէր, որ ես էլ նրանց հետ գերեզման մտնէի... Ախ, ինչ կը լինէր, որ ես կամ ծնւած չլինէի, կամ մարդու չգնայի: Մանր էր Վառվառի դրութիւնը: Նա այնքան դիւրագգաց էր դարձել, սիրտը այնքան բարակել էր, որ խօսցնելիս արտասուքն իսկոյն ծլլում էր: Տնից ալ ևս դուրս չէր գալիս. ամբողջովին սև հագած, նա նստում էր տանը և մի օր և է զործով դբաղւում: Գործի ընթացքում նրա միտքը շարունակ իր զաւակների հետն էր և հէնց այդ էր պատճառը, որ նա յաճախ մեղմիկ բույսթի երգելով, արտասւում, հեկեկում էր: Ամեն մի կիրակնամօռ երեկոյ, նա գնում էր գերեզմանատուն, որդոց դամբարանների վրայ խունկ ծխում, յորդառատ արցունք թափում թարմ շիրիմների վրայ ու վերադառնում տուն: Դրանում էր նա դտնում իւր միթարութիւնը, դրանով էր նա իւր խոցողաւծ, կսկծացող սրտին հոփութիւն տալիս: Զկար մէկը որ նրան միթթարէր. նոյզառն էր,



այդ յիմար աղջիկը, որը իւր գոյութեամբ կրկնակի ցաւ էր պատճառում նրան և Գալուստը, որի դէմքը շարունակ մթնած էր և բերանից մի խօսք չէիր լսիլ. տուն կը գար Գալուստը և ամբողջ երեկոն լուռ ու մունջ կը նստէր: Սկզբներում էլի հէնց մէկ-մէկ զրոյցներ կ'անէր, բայց այժմ, Նոյզաուին տանելու սխալը հասկանալուց և զոքանչի հետ պատահած դէպքից յետոյ, նա բոլորովին լուռ ու մտածկոտ էր դարձել: Վառվառը հասկանում էր, թէ ինչ միտք է այդ երիտասարդին տանջում, և ցաւակցում էր նրան ներքուստ:

Մի անգամ Գալուստը անսպասելի կերպով խօսք բաց արաւ Վառվառի մօտ իւր գրութեան մասին, երևի խորհրդակցելու ցանկութիւնից դրդւած:

—Հարս, ասաց նա. պա էս բան էր, որ մենք արինք. ինքս իմ ձեռքով ինձ կրակի մէջ դցեցի: Պա խեղքս ճրտեղ էր էն ժամանակ...

Խօսքը Նոյզաուի մասին էր:

—Անխ, Գալուստ եղբայր, պատասխանեց Վառվառը վշտով եղանակով. էլ մի' ասիր. սխալւեցինք, ինչպէս սխալւեցինք: Արդու պինդ կանգնէիր, հիմա Սաթենիկը էս տան համար մի զարդ կը լինէր և ինձ էլ մխիթարող: Երկուսից էլ զուրկ ենք մնացել:

Վառվառն աչտակ աբաւսեց, նրա ձայնը խեղդեց կոկորդում: Քիչ յետոյ նա հանգստացաւ և նորից ոյժ առնելով, սկսեց իր կողմից յոյս տալ Գալուստին: Ինքը իւր ամբողջ կեանքում շարունակ տանջանքների և անողորմ հարւածներ կրած լինելով, ընդունակ էր հասկանալ տաղրի ցաւերը և նւիրել նոցա բուժելուն:

—Վնաս չունի, ասաց Վառվառը խրախուսանքով. էլ ամեն ինչ անցել դնացել է. ախտաւով բան չի ընկնիլ ձեռքներս. մի տարի էլ համբերենք. զուցէ Նոյզաուը մեծանայ և մեզ համար ուրախութիւն լինի:

—Ախ, հարս, համբերելը կը համբերենք, բայց տեսնե՞ք ախր դա հարսի, կնկաց շնորք է ունենալու: Էս միտքը ինձ համար ցաւ ու կրակ է դարձել: Նրա յիմար-յիմար զործերը տեսնում եմ և վախենում. վախենում եմ հարս, որ զլիներիս մի փորձանք գայ:

—Մի վախենալ, Աստուած ողորմած է: Ինչ որ հարկաւոր է,

ես կը սովորեցնեմ, միշտ կը հետեւեմ: Հալա երեխայ է Նոյզաուր.  
կը մեծանայ՝ կը բացուի:

— Իսկ որ հէնց էսպէս էլ մնայ... Էն անպիտան Մովսէսը միշտ  
իմ սիրտը սարսափ է գցում, քանի որ դրա մասին խօսում ենք,  
ասում է. շատ, շատ, հօր նման մի յիմար կենդանի դուրս գայ էլի:

— Ասուած ոչ անի, եղբայր, Ասուած ոչ անի. խեղճ չէնք:  
Մեր միակ յոյսը Նոյզաուն է. կը պահենք, կը մեծացնենք, կարգ ու  
կանոնի կը սովորեցնենք. հարս կը դառնայ, կը սկսի տունը կառա-  
վարել, մենք էլ վրան կը նայենք և կ'ուրախանանք: Էն ժամանակ  
քո ունեքերն էլ կը բարձրանան, երեսդ կը պարզուի, սիրտդ կը բացուի,  
ես էլ կը նայեմ երկուսիդ վրայ, կ'ուրախանամ և ձեր քախտաւո-  
րութեամբ կը մխիթարեմ:

— Ասուած քո սրտովն անի, հարս, ասաց Պալուստը խոր հա-  
ռաչելով:

Այնուհետեւ Վառվառը ամբողջապէս նւիրած էր Նոյզաուին:  
Նա մի առանձին խնամքով, հոգատարութեամբ և աշխոյժով էր  
վարում Նոյզաուի կրթութեան գործը: Իսկ փոքրիկ հարսը շատ թե-  
րութիւններ ունէր: Տասը տարեկան աղջիկ էր թէև, բայց դեռ  
չգիտէր շորեր հանելու և հագնելու ձևը: Ամեն անգամ Վառվառը  
նրան ցոյց էր տալիս այդ, բայց բութ աղջկայ գլխում ոչինչ չէր  
մնում: Նոյզաուը շատ կեղտոտ էր պահում իրան. նրա ձեռքերն ու  
շորերը միշտ փոշոտ, մրոտ կամ աղբոտ էին լինում: Այդ բոլորի  
հետ միասին, ընդունակութիւնների կատարեալ բթութիւնը Նոյզա-  
ուի մէջ օր օրի վրայ աչքի էր ընկնում. Վառվառը չկարողացաւ  
նրան սովորեցնել հասարակ կար անելը և զուլպայ գործելը: Սա-  
կայն քանի-քանի փոքրիկ աղջկերք եօթութ տարեկան հասակում  
վարժ ու արագ գործում էին տեսակ-տեսակ դուլպաններ: Նոյզաուի  
մէջ բան սովորելու անընդունակութեան հետ միացած էր և յիշո-  
ղութեան բթութիւնը, որ նոյնպէս մի խոչնդոտ էր նրա կրթութեան  
գործում: Ոչ մի բացատրութիւն, ոչ մի պատէր նրա ականջում  
չէր մնում:

Վառվառը նրա գլխին մի մուրճ էր դարձել. նա շարունակ  
ուշադրութիւն էր դարձնում փոքրիկ հարսի վրայ, խօսցնում, զա-  
նազան խրատներ էր տալիս նրան՝ թէ ինչպէս նա առաւօտեան

վերկենալուն պէս իսկոյն լացւի, մազերը սանրի, յետոյ գնաց կառու-  
րըն ու բակը սրբի, գուլպան վերցնի ձեռքը, կէսօրին ու երեկոյեան  
մի-մի կուլա ջուր բերի աղբիւրից. երբ հիւրեր են գալիս տուն՝  
նրանց քոշերը դռան առաջ կարգով շարի, մաքրութիւն սիրի և  
այլն: Այսպիսի խրատներ էր տալիս Վառվառը փոքրիկ հարսին,  
պատմութիւններ էր անում նրա համար, աշխատելով նրան մի գոր-  
ծի սովորեցնել, ապագայ տանտիկին պատրաստել: Շատ էր չար-  
չարում Վառվառը, բայց նրա աշխատանքը ապարդիւն էր. յիմար  
Ծատիի յիմար աղջիկը անուղղելի էր: Ձնայած դրան, Վառվառը  
այնուամենայնիւ տանում էր յանձն առած նեղութիւնը, յուսալով,  
որ Նոյզառը կ'ուղղւի և կը բախտաւորացնի Գալուստին:

Իսկ Գալուստը սպասում և համբերում էր:

(Շարունակելի)



## ԿԷՍ ԳԻՇԵՐԻՆ

ԱՐՇԱԿ ԱԹԱՅԵԱՆԻ

Քնած է մռայլը կէսգիշերային,  
Քամին անուշ-մեղմիկ օրօրում է նրան,  
Քնած է երկինքը լուսթեամբ խորին —  
Քուն չէ դալիս միայն աչքերիս վերան:

Քնած է բոլորը խուլ հեռաստանում,  
Թափանցիկ շղարշով իրան ծածկել է,  
Լուռ հեծող անտառը խոր նինջ է քաշում —  
Միայն ես քուն չունիմ, նա ինձ թողել է:

Նիրհում է մշուշը կաթնային ցուքով  
Ժայռ-հսկայի կրճքին հիւանդ մանկան պէս,  
Լռած է հովիտը լցւած բուրմունքով —  
Ա՛խ, ինչո՞ւ միայն ես քուն չունիմ այսպէս!...

1896 թ. օգոստ. 7-ն Թաղլար:

## Ա Ն Յ Ե Ա Լ Ը

ԳԻ ԴԸ ՄՈՊԱՍՍԱՆԻ.—Թարգ. Տ. Հեղինէ Շահագիզի

—Ձեր քնելու ժամանակն է, սիրելիներս—ասաց կոմսուհին:

Այս խօսքերի վրայ, երեք երեխաներ՝ մանչ և երկու աղջիկ, վերկացան սեղանի առաջից և մօտեցան տատին համբուրելու:

Յետոյ նոքա մօտեցան մնաս բարև ասելու պարոն կիւրէին<sup>1)</sup>, որ նոյնպէս նստած էր այդտեղ, որովհետև ամեն հինգշաբթի օր ամրոցում ճաշելու սովորութիւն ունէր:

Մողիւշի աբբան երկու երեխաներին զգուշութեամբ բռնելով, նստացրեց իւր ծնկների վրայ, սեղմեց նոցա իւր կրծքին և կարծես հայրական համբոյրով, երկար ու քնքոյշ ձևով համբուրեց ճակատները. յետոյ նա վայր դրեց նոցա. երեխաները դուրս եկան, առաջ մանչը, նորա յետևից աղջիկները:

—Նուք երեխաներ սիրում էք, պարոն կիւրէ, հարցրեց կոմսուհին:

—Շատ եմ սիրում, տիրուհի:

Տարիքաւոր կոմսուհին բարութեամբ լի աչքերը բարձրացրեց. քահանայի վրայ:

—Իսկ... ձեր մենակութիւնը ձեզ երբեմն չի՞ ձանձրացնում:

—Այո, երբեմն ձանձրացնում է:

Նա լռեց և կարծես, մի տեսակ շփոթւելով, շարունակեց.

—Բայց չէ՞ որ ես բոլորովին անպէտք կը լինէի հասարակ կեանքի համար:

<sup>1)</sup> Քահանայ:

—Դուք այդ ձրտեղից գիտէք:

Օ՛, ես այդ շատ լաւ գիտեմ: Ես ծնւած եմ քահանայ լինելու համար և, քահանայ դառնալով, միայնքիմ կոչմանն եմ հետևել: Կոմսուհին շարունակում էր նայել նորա վրայ:

—Լսեցէք, պարոն կիւրէ. խնդրեմ ասէք ինձ, ինչպէս դուք վճռեցիք հրաժարւել այն ամենից, ինչ որ ստիպում է մեզ, հասարակ մահկանացուներիս, սիրել կեանքը—այն ամենից, ինչ որ մեզ մխիթարում և պահպանում է կեանքի մէջ: Ո՛վ ծագեցրեց ձեր գլխում սովորական կեանքի ճանապարհից շեղւելու միտքը՝ հրաժարւել ամուսնանալուց <sup>1)</sup>, ընտանիքից: Դուք ոգևորւող և մոլեռանդ մարդ չէք: Ձեր բնաւորութեան մէջ մռայլ և տխուր բան չկայ: Արդեօք որ և է առանձին դէպք պատահած չէ, չէ պատահել որ և է անբաղդութիւն, որ ստիպել է ձեզ այդ յաւիտենական ուխտն անել:

Աբբան սեղանի մօտից բարձրացաւ, նստեց հնոցի մօտ և դիւղական քահանայի կոշտ մոլեռանդներ հագած ոտները երկարացրեց դէպի կրակը: Նա դեռ տատանւում էր՝ պատասխանի, թէ ոչ:

Դա մի բարձրահասակ ալեգարդ ծերունի էր, որ քսան տարի շարունակ Սուրբ Անտօնիոսի ծովսի քահանայի պաշտօնն էր վարում: Գիւղացիները նորա համար ասում էին. «լաւ մարդ է մեր կիւրէն»:

Եւ իսկպէս դա մի լաւ մարդ էր, շատ բարեսիրտ, բարեհամբույր և արտաքոյ կարգի առատաձեռն: Սուրբ Մարտիրոսի նման նա պատրաստ էր կէս անել իւր լողիկը, եթէ այդ հարկաւոր լինէր: Նա հեշտութեամբ ծիծաղում էր, բայց հեշտութեամբ էլ լալիս էր, յաճախ չնչին բանի համար, ինչպէս մի կին. նորա այդ յատկութիւնը մի փոքր ստորացնում էր նորան իւր ծխականների աչքին:

Պառաւ կոմսուհի Սովիլը, որ դեռ նոր էր տեղափոխւել հայրենի ամրոցը, իւր որդու և հարսի մահից յետոյ որք մնացած թողնելին զաստիարակելու համար, շատ էր սիրում իւր ծխական քահանային. նա նորա մասին ասում էր՝ թէ «ոսկի սիրտ ունի»:

Ամեն հինգշաբթի կիւրէն զալիս էր ամրոց և նորա ու կոմ.

<sup>1)</sup> Կաթոլիկ քահանաները չեն ամուսնանում:



սուհու մէջ սկսեւ էր մի մտերմական բարեկամութիւն, որ յատուկ է միայն ծերերին: Նոքա խօսքի կէսից հասկանում էին միմեանց. նոքա երկուսն էլ օժտուած էին պարզ և փափուկ բնաւորութեան տէր մարդկանց յատուկ բարութեամբ: Կոմսուհին շարունակում էր պնդել. «Է՛հ պարոն կիւրէ, այժմ ձեր խոստովանելու հերթն է»:

Քահանան կրկնեց. «ես ծնւած չեմ այնպիսի կեանքի համար, որ վարում են ամենքը: Բարեբաղդաբար ես այդ իւր ժամանակին նկատեցի և այն օրից շատ անգամ միջոց ունեցալ համոզելու, որ ես չեմ սխալել: Իմ ծնողներս, մանր, բայց բաւականին ունեւոր առևտրական էին. նոքա շատ փառասէր էին ամեն բանում, ինչ որ միայն ինձ էր վերաբերում: Ինձ շատ վաղ դպրոց տւին: Զէ՛ որ մարդիկ սովորաբար չեն հասկանում, թէ ինչպէս երեխան կարող է մաշել դպրոցում՝ միմիայն այն պատճառով, որ նորան հեռացրել են ընտանիքից, թողել են մենակ: Այդ միակերպ կեանքը, այդ կեանքը առանց գզւանքի լաւ է մի քանի երեխաների համար, բայց բոլորովին անտանելի է միւսների համար: Փոքրիկների սիրտը չաճախ աւելի զգայուն է լինում, քան կարծում են. և ահա, երբ այդպիսի մի զգայուն երեխայի շատ վաղ փակում են դպրոցում, հեռացնելով նոցանից, ում նա սիրում է, այդ զգայնութիւնը զարգանում է ի վնաս միւսների, և նա դառնում է հիւանդոտ և փտանդաւոր մի էակ: Ուսումնարանում ես ամենեւին չէի խաղում, ես ընկեր չունէի. ցերեկը ես ժամանակս անց էի կացնում յիշելով մեր տունը. գիշերը լաց էի լինում անկողնիս մէջ. ես գլուխս ջարդում էի, որպէս զի յիշողութեանս մէջ իմ տնային կեանքից մի որ և է չընչին բան, որ և է աննշան անցք մտաբերեմ: Ես շատ ջշտյին էի դարձել, ամենաաննշան անշաջողութիւններն անգամ ինձ համար մի մեծ անբաղդութիւն էին: Ես ապրում էի անխօս, փակւած. ոչ ոքի հետ սրտաբաց չէի: Երեխաների նետրդերը շատ զգայուն են, հարկաւոր է նոցա թողնել բոլորովին հանգիստ, մինչև որ նոքա կառարեւապէս զարգանան: Բայց ո՞վ պէտք է մտածէ այն բանի վրայ, որ մի անարդար կերպով դրած թւանշան կարող է աշակերտին նոյնպիսի ծանր վիշտ պատճառել, որպիսին յետոյ պատճառում է նորան բարեկամի մահը: Ո՞վ է մտածում այն բանի վրայ, որ մի քանի մատող սրտեր սաստիկ բորբոքում են մի ընչին

բանից և կարճ ժամանակից՝ դառնում են անբուժելի հիւանդ։

«Այդպէս պատահեց և ինձ հետ։ Այդ զգայնութիւնը, դժբաղ-  
դաբար, զարգացաւ իմ մէջ այն աստիճան, որ իմ գոյութիւնը  
փորձանք դարձաւ ինձ համար։ Ես այդ բանի մասին չէի խօսում,  
ոչ ոքի մի բան չէի խոստովանում, սակայն ես սակաւ առ սակաւ  
դարձայ այն աստիճան զգայուն, որ իմ սիրտը նմանում էր մի  
բացւած վերքի։ Ամեն բան, ինչ որ շոշափում էր նրան, անտա-  
նելի ցնցումն էր պատճառում, երբեմն բոլորովին ուժասուլաւ էր  
անում ինձ։ Բազմաթիւ են այն մարդիկ, որոնք անտարբեր են  
դէպի ամեն բան և զինւած են ստոխկականութեամբ։

«Ես ոտս դնում էի տասնութեցերորդ տարիս։ Իմ չափազանց  
երկշուտութիւնը այդպէս մշտապէս տանջւելու յատկութիւն ունե-  
նալուս հետեւանքն էր։ Ամեն մի պատահարի, բազմի փոփոխման  
դէմ դնելու ոյժ չզգալով մէջս, ես վախկնում էի մարդկանց հետ  
յարաբերութիւն ունենալ, մօտենալ մէկին։ Ես, կարծես, միշտ  
ապրում էի մի անյայտ բանի, սպառնալիքի ազդեցութեան ներքոյ,  
միշտ, կարծես, մի անբաղդութեան էի սպասում։ Ես չէի համար-  
ձակում ոչ խօսել, ոչ էլ մի բան անել մարդկանց առաջ։ Ես հաս-  
տատ համոզւած էի, որ կեանքը մի այնպիսի պատերազմ է, մի  
այնպիսի սարսափելի մաքառումն, որի ժամանակ մարդու վրայ ան-  
վերջ կերպով թափում են անխիղճ հարւածներ, մահացու վերքեր։  
Փոխանակ ուրիշ մարդկանց նման յոյս ունենալու երջանիկ ապա-  
գայի—եւ զգում էի մի խուլ երկիւղ, իմ մէջ ապրում էր մի ջերմ  
ցանկութիւն՝ ծածկւել բոլորից, փախչել այն մրցումից, որի մէջ  
եւ անպայման յաղթւած և սպանւած պէտք է լինէի։

«Իմ ուսումը վերջացել էր։ Այն տարի ինձ թողին առանց  
պարապմունքի, որպէս զի ես կարողանամ մտածել իմ ապագայ  
կարիերի մասին։ Մի շտա հասարակ դէպք ստիպեց ինձ խորասուզ-  
ւել իմ մէջ, ցոյց տւեց իմ հոգու հիւանդութիւնը, օդնեց ինձ  
հասկանալ վտանգը և հեռանալ նորանից։

«Փոքրիկ Վերդիէ քաղաքը շրջապատւած է դաշտերով և ան-  
տառներով։ Նորա գլխաւոր փողոցի վրայ դնւում էր իմ ծնողները



տունը: Ուսումնարանից տուն վերադառնալուց յետոյ, ես իմ բոլոր ազատ ժամերս անց էի կացնում հեռու այն տանից, որտեղ լինել ես առաջ այնպէս ջերմ կերպով ձգտում էի: Զանազան ցնորքներ զարթնեցին իմ մէջ, և ես մէն-մենակ զրօնում էի դաշտերում, աշխատելով ազատել նոցանից:

Եւ իմ հաջրն ու մայրը, զբաղւած լինելով միայն առեւտրակա- նութեամբ, մտածելով իմ ապագայ վիճակիս վերայ, խօսում էին ինձ հետ առեւտուրի և իմ ապագայ դրութեանս մասին: Նոքա ինձ սի- րում էին դրական մարդկանց յատուկ զործնական սիրով, աւելի գլխով, քան թէ սրտով: Ես բոլորովին միայն էի իմ մտածմունքներով և մշտական անհանգստութիւնից զոգում էի:

Մի երեկոյ, երբ ես վերադառնում էի իմ սովորական, հեռա- լոր գբօսանքից և շատ էի շտապում, յանկարծ ես նկատեցի, որ իմ ետեւից վազում է մի շատ վատոյժ, երկար, կախ ընկած ականջ- ներով շուն: Երբ շունը ինձնից տասը քայլ հեռու էր, կանգ առաւ: Ես նոյնպէս կանգ առայ: Շունը պոչը խաղացրեց և փոքրիկ քայ- լերով սկսեց մօտենալ ինձ. նա այն ժամանակ տարօրինակ կերպով ընկնում էր թաթիկների վրայ և կախ էր ձգում գլուխը, կարծես, ինձնից խնդրում էր պաշտպանութիւն. ես կանչեցի նորան. մօտե- ցաւ ինձ մի այնպիսի հեզ, տխուր և անմեղ կերպով, որ իմ աչ- քերս արտասուքով լցւեցին: Երբ ես կռացայ դէպի նա, նա սկըգ- բում հետացաւ ինձնից, բայց յետոյ նորից մօտեցաւ: Ես կանգնեցի մէկ ծունկիս վրայ և աշխատում էի փաղաքշական խօսքեր ասելով դրաւել նորան դէպի ինձ: Վերջապէս նա այնպէս մօտեցաւ ինձ, որ ես կարողացայ կաշիւ նորան ձեռքով: Ես զգուշութեամբ սկսեցի փաղաքշել նորան: Նա համարձակութիւն ստացաւ և, մի քիչ բարձ- րանալով, դրեց թաթիկները իմ ուսերի վրայ ու սկսեց լիզել իմ երեսը: Երբ գնացի տուն, նա չեա չմնաց ինձնից:

Այդ առաջին արարածն էր, որին ես սաստիկ սիրեցի, որով- հետեւ նա պատասխանում էր իմ փաղաքշանքներին: Իմ զգացմունքը դէպի այդ անասունը անբնական էր և ծիծաղելի: Ես ազօտ կեր- պով երեւակայում էի, որ մենք նորա հետ երկու, ամենից թողնւած, մոռացւած և մի տեսակ անպաշտպան եղբայրներ ենք: Այդ օրից շունը չբաժանւեց ինձնից. նա քնում էր իմ մահճի վրայ ոտերիս



տակ. նա սեղանի առաջ, չնայելով ծնողներին անբաւականութեան, նստում էր ինձ մօտ և միշտ ուղեկցում էր ինձ, իմ միայնակ զբօսանքներին: Յաճախ ես կանգ էի առնում և նստում ճանապարհի մօտ արօտի վրայ: Շունը խփոյն և եթ վազում էր դէպի ինձ, պառկում մօտս, կամ ծնկներին վրայ և, դունչը քսելով իմ ձեռքերին, ինձից փաղաքշանք էր խնդրում:

«Մի անգամ, շունիսի վերջերին էր այդ, երբ մենք այդպէս նստած էինք ճանապարհի մօտ, տեսա՛յ անցնում է մի ճեպակաւ ք: Քառալուծ կառքը արագընթաց առաջ էր սլանում: Կառապանը խաղացնում էր մորակը: Մանր կառքը յետեից դէպի երկինք փոշի էր բարձրացնում և տարածում օդի մէջ: Յանկարծ, երբ կառքը մօտեցաւ ինձ, իմ շունը, որ այդ ժամանակ ճանապարհի միւս կողմն էր, երևի վախենալով աղմուկից, վազեց դէպի ինձ, անցնելով ճանապարհը: Զիերից մէկը ոտով կպաւ նորան. շունը ընկաւ, պտուեց, ուզում էր բարձրանալ, յետոյ նորից ընկաւ: Կառքը երկու անգամ վեր-վեր թռաւ, յետոյ անցաւ գնաց: Ժանապարհի վրայ, այն փոշու մէջ, որ բարձրացրել էր կառքը, մի բան ընկած հողիւ շարժւում էր: Ես մօտ վազեցի: Շունը պառկած էր համարեա միջից կէս եղած. նորա բոլոր փրփուրքը դուրս էր թափւել: Նա փորձեց բարձրանալ, զնալ, բայց նորա առաջին լծաթերը թոյլ կերպով շարժւում էին և ճանկում դետինը, իսկ յետեւիններն արդէն անշարժ էին: Նա խեղճուկ կերպով կաղկանձեց ցաւից:

«Մի քանի րոպէից՝ նա սատկեց: Ձեմ կարող բացատրել, թէ ինչ էի ես զգում, ինչպէս էի ես տանջւում: Մի ամբողջ ամիս ես սենեակից դուրս չեկայ:

«Մի երեկոյ, հայրս, որ սաստիկ զզւել էր տեսնել ինձ այդ դրութեան մէջ, որ, նորա հասկացողութեամբ, առաջ էր եկել մի այդպիսի չնչին բանից, ասաց ինձ—«Ի՛նչ, կը լինի քո վիճակը, երբ քեզ պատահի մի իսկական անբաղդութիւն, երբ դու կորցնես կնոջդ կամ երեխաներիդ:—Զի կարելի այդպէս անմիտ լինելու: Այդ խօսքերը այնպէս ապշեցրին ինձ, որ ես չկարողացայ մոռանալ: «Ի՛նչ, կը լինի քո վիճակը, երբ քեզ պատահի մի իսկական անբաղդութիւն, երբ դու կորցնես կնոջդ կամ երեխաներիդ:

«Այդ օրից, ես ինձ լաւ հասկացայ: Ես հասկացայ՝

ինչու մանր, ամենօրեայ անյաջողութիւնները իմ աչքին ահռելի կերպարանք էին ստանում: Ես տեսայ, որ, իմ անձական կազմածքիս նայելով, ամեն մի բանից պէտք է տանջւեմ, որ ամեն տեսակ ծանր տալանորութիւններ իմ աչքումս այդպիսի կերպարանք են ընդունում շնորհիւ իմ հիւանդոտ զգայնութեան: Ինձ պաշարեց կեանքի սարսափը: Ես հակումն չունէի ոչ մի բանի, ես փառասէր չէի: Վճռեցի զոհել այն ուրախութիւնը, որ կարող էի ունենալ, որպէս զի փախչեմ ինձ պատահելիք այդ թշառութիւններից: Վեանքը կարճ է, ես կ'անցկացնեմ նորան, ծառայելով ուրիշներին, օգնելով նոցա դիմանալ տանջանքի, ուրախանալով նոցա բազդաւորութիւնների վրայ, ասում էի ինքս ինձ: Որովհետեւ ոչ այդ և ոչ այն չպէտք է ուղղակի ինձ վերաբերեն, ուրեմն իմ պարտաւորութիւններն ևս վտանգաւոր չեն լինիլ:

ԱՅլ սակայն եթէ դուք իմանայիք, ինչպէս տանջում են ինձ, ինչպէս մաշում են ինձ մարդկանց անբաղդութիւնները: Բայց այն, ինչ որ ինձ համար կարող էր լինել անտանելի տանջանք, դուրս է կորցում ինձնից այժմ միայն կարեկցութիւն և գութ:

Այն վիշտը, որի հետ ես ամեն օր շփուում եմ, ես չէի կարող տանել, եթէ նա լինէր իմ անձնականը: Ես չէի կարող տեսնել իմ երեսնաներիս մէկի մահը—ես ինքս էլ կը մեռնէի: Եւ սակայն, չնայելով որ ես այդպէս մեռակ եմ, այնուամենայիւ ես, թէեւ աղօտ կերպով, բայց և այնպէս դեռ սլանալանել եմ իմ անբաղդութիւններից սաստիկ վախենալու յատկութիւնը, այնպէս որ նամակաբերին տեսնելիս՝ սկսում եմ զողալ. իսկապէս ես այժմ բոլորովին պատճառ չունիմ երկչոտ լինելու:

Մոգիւլին աբբան լռեց: Նա նայում էր հնոցում վառւող կրակի վրայ և, կարծես, այնտեղ տեսնում էր խորհրդաւոր ուրւականներ, կեանքի ամեն զաղտնիքը, որից նա կարող էր օգտուել, եթէ միայն տանջանքի դիմանալու այնքան քաջութիւն ունենար: Յետոյ նա կամացուկ ասաց—

«—Ես բոլորովին իրաւացի եմ: Ես ստեղծւած չեմ այս աշխարհի համար»:

Նոքա երկար ժամանակ լուռ էին: Վերջապէս կոմսուհին ասաց. «Իսկ ինձ թւում է, որ եթէ ես թողնեմ չունենայի, այնքան զօրութիւն չէի ունենալ ապրելու»:

Քահանան այլ ևս ոչ մի խօսք չարտասանեց և վերկացաւ: Եւ, որովհետեւ ծառաները արդէն քնած էին, կոմսուհին ինքը ճանապարհ ձգեց նորան մինչև դուռը, որ բացուում էր դէպի պարտեզը, և երկար նայում էր, թէ ինչպէս լապտերի լուսով լուսաւորւած նորա բարձր հասակը սակաւ առ սակաւ խորասուզւում էր գիշերւայ մթութեան մէջ: Յետոյ նա վերադարձաւ տուն, նստեց հնոցի առաջ և սկսեց մտածել այնպիսի բաների վրայ, որոնց մասին չի մտածում երիտասարդութիւնը:



## ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Ա Պ Ր Օ՛ի

189... Նոյեմբ. 5, Կասպից ծովի վրայ.

Բարեկամ,

Տարիներ առաջ գրում էի քեզ մի երկրից, ուր սոսկումներ միայն տեսաչ և ուրտեղից գրած նամակներս թշառութիւն ու վիշտ միայն պատմեցին <sup>1)</sup>։ Կարծում ես որ այժմ մտնում եմ մի երկիր որտեղից գրելու եմ աւելի մխիթարիչ, ուրախալի բաներ։

Ինձ վիճակած է միշտ թշառութիւններ տեսնել, վշտեր նկարագրել և ահա այժմ էլ գրում եմ քեզ մանմեղական մի ալլ աշխարհից, ուր մեր հղբալները թէև համեմատաբար չատ աւելի հանգիստ են, չատ աւելի ազատ, քան աչն երկրում, որտեղից գրում էի քեզ տարիներ առաջ. ուր թէև առերեսութ աղատութիւնը ամեն օտարականի աչք է չլացնում, սակայն միջնադարեան մի խաւար, խաւարից բղխող ալլ հանգամանքները, ծաւրահեղութեան հասած քրահաճոյքն ու աշառութիւնը՝ երկիրը դարձրել են մուրացկանների աշխարհ. ուր ժողովրդի իննը տասներորդ մասը թշառ է, աղքատ, մի տասներորդը կերակրում է միւսների քըրտինքով, և երկրի ամեն ուղղութեամբ վիտտում են անպատմելի թշառութեան մէջ տառապող միլիօնաւոր ողորմելիներ...

Նւ կեղտ, կեղտ... չես կարող չափը, խորութիւնն ու տարածութիւնը երեակացել։ Նրբ նկարագրեմ, պիտի դատես։ Մտնում եմ ահա ալլ երկրի մէջ. երկար կը մնամ—ծրագիրս ալլ է. կը ղիմանամ, որքան ոյժ ունիմ։

Բայց ամենից առաջ հարկ է քեզ ասել, որ եթէ չլիզողութիւններս ուչ, ետ ու առաջ ստանաւ—մեղքն իմը չի լինիլ։ Շատ են դովում ալլ

<sup>1)</sup> Տես «Նամակներ Թիւրքաց-Հայաստանից» Ապրո'ի, «Մշակ» լրագրում, 1890—91 թթ., 22 նամակներ։

երկրի փոստային կարգ ու կանոնը: Նախնական, ձեռք չտած ճանապարհներով անցնող փոստը, որ սարսում է ձիերի վրա, լաճախ ստիպւած է անկամուրջ դետերի վարարման զոհ դնալ: Զուրը քշում է փոստային պարկերն էլ, ձիերն էլ: սկսում են որսալ և մի քանի օր չետոյ քողաք են հասցնում խմոր դարձած լրագիրներ, անքնթեռնելի նամակներ... Յաճախ էլ, փոստային ծառայողների փութաջանութեան շնորհիւ, նամակս կարող է փոշու շերտերի տակ քնել մի որջի աճկիւնում և ամիսներից չետոյ միայն քեզ հասնել: Հաշտիր ալո պալմանների հետ, մի ալնպիսի երկիր եմ մտնում, որտեղից կամ պիտի խոհեմ ետ փախչել և կամ թէ հէնց առաջին քաղցից՝ սովորել դիմանալ, հաշտել պալմանների հետ...

...Եւ ահա ծովի վրալ եմ: Գիշեր է, մի գեղեցիկ գիշեր: Դուրս եմ եկել չոգենաւի բարձր պատշգամի վրալ և դիտում եմ:

Երկնքի կապարագոյն տարածութեան վրալ ահա փալում, պսպղում են խումբ առ խումբ և հաս-հատ աստղեր: Ծիրն-կաթին մի արծաթազօծ անորոշ ուղի է գծել անհունութեան մէջ և սպիտակափառ ամպերը շոգու պէս ցանաւ են երկնքի երեսն ի վեր:

Յածում ծովի թունդ կանաչագոյն ջուրը ծփում է վէտ-վէտ և, մի կիսախաւար տարածութիւնից չետոյ, պարսկական տխուր ցամաքը կիսակլոր հաստ գծի պէս տարածում է հորիզոնի վրալ: Տեղ-տեղ, նրա մթութեան խորքերը բժաւորւած են եփուն կրակի կալծերով, իսկ արեւազոյն փարոսը շարժում է անդադար... Հեռուն, խիստ հեռուն, մշուշոտ լուսի մէջ երևում են լեռների աղօտ ստւերագծեր...

Ալիից բաժանւած 5—6 խղճալի նաւակներ, ալո միջոցին չոգենաւի կազմած ալիքներից ուժգնապէս օրօրւելով, մատնում են մեզ: Նրանց միջից ախանջիւս են հասնում քարտիկ նաւաստիների զանազան ել և էջներով կոչերը:

—Ալլահ, Մուհամմէդ... եւ Ամանլի...

Եւ չոգենաւը կանգնել է. անիւների հանած շառաչիւնը դադարել ու մենք մեր կրծքովը դէպի Աստարա ենք դարձել, պարսկական երկրի առաջին նաւահանգիստը: Կասպից ծովի վրալ, Բաքուից ղեալիս:

Տախտակամածի վրալ, ոչխարների պէս միմեանց կողքի լցւած պարսիկ ուղևորները հաւաքւում են: Ատրպատականցի թուրքեր են, որոնք ափն են իջնելու: Ոմն իր շորերն է կապում, ուրիշը՝ կապոցը քարշ տալիս նաւի եզերքը, երրորդը՝ ջրամանն է փնտռում—ալո անբաժանելի ջրամանը... Իսկ գիշերալ սառը քամու տակ, իրենց միակ կապոյտ սաւանի մէջ փաթաթւած թշուառ թուրք կանաւք, երեսները միշտ թանձր քօղով պատած՝ աշխատում են ալնպէս հաւաքւել, որ դէմքերը չերեւոյ:



Նրբէք չէ կարելի երեակալել աւելի աղքատ՝ քան խեղճ պարսիկը։ Ամերիկայի մէջ գործող Վիսցի գործաւորը իր սակաւապետութեամբ շատ աւելի հարուստ է քան իր երկրի մէջ աչաքան անգլթութեամբ հարստահարած պարսիկ չառը։ Ընդդէմ Վաշինգտոնի Ուալթ—Չափըլում ապրող ժողովուրդը աչաքան տգէտ, աչաքան ողորմելի և հետեապէս անմաքուր ու անօգնական չէ, որքան որ է պարսիկը իր երկրի մէջ։

Նրա ցորենագոյն աղտոտ դէմքը, արիւնոտ կասկածալից աչքերը, նրա սաստիկ իւղոտած ու կեղտի տառթ կապած կարկտանաւոր հագուստը—ամառ ձմեռ միեւնոյնը—նրան տալիս են մի անտանելի կերպարանք... 'Իրա վրա՝ աւելացրէք Ֆէտիշականութեան հասցրած, կրօնամոլութեան արդիւնք՝ վզին ու թնեքին կապած ամուլէտները, մօրօքի և ձեռքի, բոբիկ ռաների ճինա դրած մասերը...

Այդ ամբողջ բազմութեան մէջ տեսնել մի համակրելի կամ մաքուր դէմք—անհնար էր, մի գեղեցիկ դէմք—սնկարելի։ Հնամաշ, կնճռոտ, թորչումած են ինչպէս հագուստ, աչնպէս և մարմին, աչքեր, արտապաշտութիւններ...

'Իւրի գագաթը մէջտեղից գերծած և երկու քունքի վրայ ցած են թողած ճինալով գունաւորած մազերը։ և նոյն մեթոտով գոյն աւած մօրուքը ծածկում է խիստ զարգացած ծնօտը։ Հակառակ ցցւած, բալց ետ փախչող, աչքերը արիւնոտ և վալերնի։ Կասկածոտ կերպով նայում է ամեն բանի, ամեն մարդու, կարծես միշտ վտանդի, միշտ փորձանքի է սպասում...

Հաղիւ թէ եկող նաւակները մօտենում են, որ սկսում է խառնիճադանճ, ականջ իւլացնող աղմուկ, որ նաւակի հետ, ջրից մղւած, բարձրանում համում է ականջին ու նրա հետ իջնում—խորասուզում։

Նաւատիները մրցանքի մէջ են անցորդների համար։ Գոռում են, սչխատում են իրենց նաւը առաջ մղել, քաշում են դէպի իրենց պարսիկ անցորդների։ Իսկ վերից—չոգենաւի տախտակամածի վրայից—անկողիններ ու սնդուկներ է, որ շարտւում է նաւակների մէջ։

Շոգենաւը դէպի նաւակներն է իջեցնում իր կախաղանաւոր սանդուխը։ Նաւակներն սկսում են կառչել նրան իրենց շաններով և ջրի հետ ուժգնութեամբ ծփալ։ Վերից անցորդները իջնում, ուղղակի գլորւում են նաւակների մէջ։ Գոռում-գոչիւնը անընդհատ է և մինչև իսկ ածեցուն։ Ձալները խոզորտում են, մարդիկ նեղարտում։ Մի անցորդ, նեղարտութիւնից, իւրում է մանուկի ձեռքից հողէ ջրամանը, և խփելով չոգենաւի կողքին՝ փչրում։ Մի ուրիշը ցած է հրում վախը խելով իջնող կնոջը և գոռում։

—Շան աղջիկ, բնչ ևս կանգնել, իջիր է։

Խեղճ կինը, կծկւած, երեսը փակ, սկսում է մի գունդ կապոյտ կա-



պոցի նման՝ սահել ցած։ Նրան ոչ ոք օգնել չէր կարող՝ ձեռքից կամ թևից բռնելով։ Ամուսինը ետևիցն էր գալիս, իսկ բացի ամուսնից, ո՞վ կը համարձակէր ձեռք տալ նրան...

Եւ ճրանք իջնում են լպրծուն սանդուխտներից—ընկնում են միմեանց ետևից նաւակի թաց խորքում։ Չեն ճշում իսկ, թէն ցաւացնում են ոտ կամ ուս... Միթէ կարելի է որ տղամարդիկ նրանց ձայնը լսէին։ Իսկ աղմուկը շարունակւում է։

—Պարսկական ափը գնացող... ձայնում է մի նաւաստի։

—Եւ նաւակ է, եկէք, կանչում է երկրորդը։

Վերջապէս բոլորն էլ իջնում են։ Կանաչք նաւակի թաց չտակի վրայ պոզում—կուչ գալիս տղամարդկանց չըջանի մէջ տեղում, որպէս անում են ոչխարները՝ չնեռով չըջապատւած։

Նաւակները շարժւում են։

—Եւ իմամ Րիզա... գոռում է մէկը և ձեռքի տանձաձև գլխով թիակը ջուրը մղում։

Նաւաստիները տեղաւորւում են, նաւակը շուտ է տալիս քիթը և մտնում մթութեան մէջ։

—Ալլահ, Մուհամմէդ... կանչում է ղեկավարը։

—Եւ Անալի... ձայնում են նաւաստիները միահամուռ։

Եւ անցորդները ձայնակցում են նրանց։ Հեռանում են. ձայները սկսում է հանդարտել։ Լսում են թիակների վերջին ձայները և երբեմն միաջն մթութեան խորքերից ականջիս է հասնում—

—Ալլահ, Մուհամմէդ։

—Եւ Անալի...

Գիշերը ցուրտ է. ծովը լիովին խաղաղ։ Շոգեմաւր, որովհետև խաբրիտի չէ բաց թողել, մեղմութեամբ օրօրւում է։

Նոյեմբ. 8 Ռաշտ.

Ոչ մի բոլոր կանոն չառնելով, միայն Ռաշտումն է որ կարողանում եմ նստել գրելու։

Այն գիշեր, երբ տեսաւ թէ ինչպէս շոգեմաւրից նաւակների մէջ էին ղրորում մարդկանց և երբ պարսկական ափի նշմարները երեացին... շատ անհանգիստ անցկացրի։ Երկար քնել չկարողացաւ։ Մի տեսակ դառնութիւնով լցել է ի, ինչո՞ւ գնալ մտնել այդ վաւրենի երկիրը, որ մարդիկ այնքան ոտրկանողի և այնքան խղճալի են, որ երբ մի ուղիղ ողնասիւն են տեսնում, կարծում են թէ դա անորմալ զրութիւն է, որ մարդկային վիզը միշտ պիտի ծռու լինի, զրուխը խոնարհած իրենից զօրեղի առաջ, ոտքը դրած իրենից թուլի գլխին և անկեղծութիւնն ու արդարութիւնը պիտի նկատուի որպէս անմտութիւն և ցիմարութիւն։

ձնշման և կամայականութեան արդիւնքը ոչ մի երկրում աջնքան չեշտած չէ, որքան այս երկրում:

Այս երկիրը իր բնակիչներէ համար դժոխք, օտարազգիներէ համար լըլորադօ է: Վերջիններս ազատ գործելու, պաշտպանելու, միշտ աւելի իրաւունք ունենալու համար իրենց դեսպաններն ունին, իսկ ընթիւ... որ ենթարկւած է պարբերական, մշտական հարստահարութեան ամեն մի հասունող պաշտօնեայի կողմից...

Բացի, զեռ խորերը գնամ, ինձ ասում են որ աշնտեղ—խորքերում, վերքը աւելի խոր է, աւելի սոսկալի:

Երբ մեր շոգենաւը լնդէլիի տփն էր հասել, մենք իջանք շոգենաւակի վրայ, եղբրքն ելնելու համար: Ափից մի քանի հալեր էին եկել շոգենաւ և աչժմ վերադառնում էին մեզ հետ. մի քահանայ էլ կար:

Երբ շոգենաւակը ճանապարհ ընկաւ, քահանան առանց ալ և ալլութեան մօտեցաւ մեզ:

—Եթէ չեմ սխալւում, ասաց նա—դուք Թէհրան էք գնում:

Երկու էինք, ես և Ներսիսեան դպրոցն աւարտած մի ուրիշ երիտասարդ, որ ուսուցիչ էր գնում Թէհրանի դպրոցի համար:

Ռաշտի քահանան էր, գուցէ ամբողջ պարսկահալերի մէջ միակ քահանան որ ու է տեղ ուսել էր: Ներսիսեան դպրոցը աւարտածներից էր: Նա մեզ սկսեց խօսել երկրի մասին: Ուշք չէի դարձնում, որովհետեւ շոգենաւակը շատ էր չարժուում, և ես սաստիկ չոգնած էի:

—Յոգնած եմ, տէր հալը, ասացի—սիրտ չկալ խօսելու. Ռաշտ չէք գնում:

—Այո, միասին կ'երթանք:

Եւ միասին էինք: Լնդէլիից մի մոկուկ նստեցինք Մորդաբ լիճը անցնելու համար: Նաւակի նաւաստիները զիւանցի պարսիկներ էին և խօսում էին մի աղաւաղած պարսկերէնով: Որչափ գունաթափ էին: Առհասարակ Գիւանում ամեն ոք գունաթափ է: Երկիրը անտառոտ է և ճախնուտ, մանաւանդ որ տեղացիք միայն բրինձ են ուտում. հացի փոխարէն էլ բրինձ: Խաշում են ջրի մէջ—հարուստները կաթով խառնում—գունատ չինում և սառեցնելով՝ ուտում: Գա է նրանց հացը: Պատում են թէ քսան տարի առաջ հաց—ցորենի հաց—ուտելը չգիտէին այս կողմերում և կալին: Երբ մեռնում էին դրանից, անշուշտ ստամոքսալին անսովորութիւնից: Ոչինչ ալանդակ բան չկար աղտեղ. չէ որ Աւստրալիացում ժողովուրդ կալ որ մի տեսակ հողով է կերակրւում: Եթէ նրանց հաց տան ուտելու, անշուշտ նրանք ստամոքսալին խանգարում կը ստանան. ցորենի հացը նրանց օրդանիզմի վրայ թուլի ազդեցութիւն կը թողնի:

Նաւակի մէջ կալին լիլ մի հալ և մի հատ էլ չոլն: Յոլնի շատ կան Ռաշտում, չերամապահական գործը կամաց-կամաց նրանց ձեռքն է անցնում:



Խօսակցութիւն սկսեց թանգութեան մասին: Ասում են որ, համեմատելով ալթման գները մի քանի տարբէ առաջագ գների հետ՝ կրկնապատկել են: Հալը դտնում է որ դրա պատճառը հողագործութեան պակասելն է, որ գլխաւոր թողնում են հողերն ու քաղաք լեցւում:

Արդիւնքը՝ պատճառի տեղ էր ընդունում:

—Բալց Բնչու են լեցւում քաղաք և հողերը թողնում, հարցրի ես:

—Որովհետեւ տուրքերը շատացրել են, սարսափելի շատացրել:

—Ահա ալք է պատճառը և ոչ առաջինը:

Քահանան սկսեց նկարագրել թանգութիւնը. առաջ հաւը 10 շահի (15 կոպ.) է եղել, ալթմ 30 է, և ալն և ալն:

Մի քանի ժամից վտու մտանք գետակի նման մի պարսնոցում: Զրերը խաղաղ են և գրէթէ անշարժ: Առագաստ ալ ևս անհնար էր բռնեցնել, իսկ թիավարելը լողնեցուցիչ. հոսանքն ի վեր պէտք էր դնալ Նաւակը մօտ գնաց ափին ու դուրս հանեց վեց նաւաստիներ, վտու կալմի ծակից կապած մի չւանը ափ նետեց: Պարսիկները լծեցին չւանով և սկսեցին նաւակը քաշել: Խրենք քալում էին ափին ի վեր, անտառի եզերքով անցնող մի բաւղի միջից:

Նրկու կողմ խիտ անտառ, որ դեռ ցնցում էր իր վրայից քիչ առաջ եկած անձրևի կաթիլները: Նրբեմն մեր կողքով անցնում էին ցած իջնող մակուկներ, որոնք ճանապարհորդներ էին տանում դէպի շոգենաւ:

Տխուր եղանակ էր. սկսել էր մի մանր, մաղող անձրև, որ տեսում է մինչև ալթմ էլ. միապաղաղ մոխրագոյն ամպով ծածկւած է երկինքը և երբ Փիրաբաղար ելանք ձի նստելու, ստիպւած էինք մինչև ծնկներ՝ քաշել ցեխի մէջ:

Ձի նստանք. կէս ժամ էր հարկաւոր Ռաշտ հասնելու. գետինը ցեխով լիքն էր, ճանապարհը անպիտան. ձին բռնակիր էր և ինչքան ծածում էի, երբէք փոխթը չէր. քալում էր ալպէս՝ ինչպէս ինքն էր բարեհաճում:

Տխուր լուծիւն էր տիրում անտառի մէջ. խրճիթների մօտ հաղիւ բերեմն լուում էին աքաղաղների կանչեր, երբեմն էլ շների հաջոց:

Նւ երբ քաղաք մտանք, նոցն էր. մի չնչին կենդանութիւն էր երևում միայն նեղ ու ցեխոտ բաղարի մէջ: Ամենքը մեզ էին նայում, մա՛նաւանդ երբ մօտեցանք անդլիական բանկի մօտ դտնող քարաւանսարային, և անցնում էինք խանութերի մօտով:

Ինչպէս էլ իսկոյն խմացել էին:

—Թէհրան են գնում, մէկը նրանց նոր ուսուցիչն է, ասում էին ամեն կողմից:

—Սա այս ինչն է, նա այն ինչն է... ձայնում էր մի ուրիշը:

Մեզնից քիչ առաջ Ռաշտ հասնող էր եղել և կարողացել էր նոր լուրը իսկույն տարածել:



— Հը՛մ, ասում էր մէկը մեր հտեից, երբ անցանք—էն մէկը չառ  
թիծու դէմք ունի:

— Էն մէկն էլ կարծես քնած լինի:

Կոմպլիմենտներ էին:

Իջանք մի վաճառականի մօտ. մեզ ճաշի հրաւիրեց. և ահա նրա  
գրասեղանի վրայ է որ գրում եմ: Ասում են ճանապարհները վատ ու  
չուրտ է. վրատ ժամանակ ենք ճանապարհորդում: Մեզ խորհուրդ տւին  
ոտքերն լաւ փաթաթել, որ ձիու վրայ չմըսի, և ալլն և ալլն, «Չափառ»  
ով ենք գնալու. ալսինքն սոսկալի ձիերի վրայ, ալն էլ 5—6 անդամ  
փոփոխուող անպիտան ձիերի: Պիտի անդադար քչելով անցնէինք ամենա-  
խաչտառակ, երբէք բահի երես չտեսած, ցիխոտ, լպրծուն, դոխալին ճա-  
նապարհներով:

Ասում են սր երկիւղալից չեն. ծրծաղեցին. իսկ երբ ես հարց տւի  
5—6 ջորի բարձած, սնդուկներով լիքը անգլիական բանկի ոսկի և ար-  
ծաթ փողերն են անցնում ալդ ամալի լեռներից, դաշտերից, միայն 3—4  
ջորեպանների հսկողութեամբ և ոչինչ չէ լինում:

Նւ ալդ կատարեալ ապահովութիւնը ղարմանալի կերպով կոնտրաստ  
է կազմում տեղական կարգ ու կանոնի, պաշտօնեաների կաշառակերու-  
թեան հետ: Ալդ ապահովութիւնը վերագրում են նրան, որ երբ մի դէպք  
է պատահում, կառավարութիւնը ամենախիստ կերպով զինւորական դա-  
տաստանի է ենթարկում և պատժում անցք պատահած տեղի բնակիչներ  
ընդ... ալլ և նրա, որ Գիլանցիք և Մազանդարանցիք թուլամորթ են,  
վախկոտ, ստրկահոգի... Ապրպատականում չաճախ են աւազակութիւններ:  
Անտառալին խոնաւութիւնն, ամառաւ տրոպիկական խոնաւ ջրմու-  
թիւնը սպանում է ամեն մի աշխուժ գիլանցիների մէջ...

Նոյեմբերի 8.

Փողոց դուրս գնացինք: Կանաչք մեծ մասամբ դէմքերը բաց ունին:  
Շատ գեղեցիկ, խորթիւնի են մանաւանդ: Տժգոյն ալտեր, սիրուն, մեծ,  
կլոր, մեղմադձոտ և զիւթիչ աչքեր, մի տեսակ խոնաւ դժգոյնութիւն:  
Տղամարդիկ իսկ գեղեցիկ են, զոնէ համակրելի. աչքան զգւելի և բար-  
բարոս դիմագծեր չունին, որպէս Ատրպատականի թիւրքերը: Իսկոյն երե-  
ւում է արիական ցեղի ազնիւ դիմագծեր են:

Բաց որքան խեղճ են, որքան թշուառ: Կանաչք գործում են, ծան-  
րութիւններ տանում, պտուղներ բերում բազար ծախելու:

Մեծ մասամբ բոբիկ են, թէ կանաչք, թէ տղամարդիկ. Ռաշաի փո-  
ղոցների, անտառալին մշտաւ ցեխն ու անձրեւը կօշիկ չէ վերցնիլ: Մին-  
չն ծնկները մերկ՝ քալում են նրանք ջրերի, ցեխի միջով:

Մտանք բազար, չեսուղ դուրս գնացինք մի փոքրիկ հրապարակ

Անձրերը դեռ մաղում է։ Հրապարակի վրա՝ վրա՝ մի ցանցառ ալգի կա՛ց ասում են զբօսատեղի է։ Ամեն կողմ նարնջի և լիմոնի ծառեր։

Մտանք փոստն էլ։ Փարսանաւարալի մէջ երկու կեղտոտ ու մութ խանութներ են։ Փոստի կառավարիչը մի հաստափոր։

Դետնի վրա՝ ածել էին նամակներ, լրագիրներ և կառավարիչը առանց ալ և ալլութեան բաց էր անում լրագիրներ, կարդում, քրքրում։

Յետո՛ւ աւցանք հալերի խանութների առջևից։ Որպէսի խոնարհ, ողորմելի ղէմքեր են երևում։ Կարծես գերիներ լինին. ապշութեամբ են զիտում մեզ, խանութների ղռների առաջ գալով զիտում։ Նրեում են ուռուկան ղլխարկներ. ուռուստանցի հալեր են. կարծես զիտամբ ընտրել, զգելի ղէմքերով մօրդկանց Վովկասից ալստեղ են ուղարկել. ահա մի հաստափոր ծերունի, մի ուրիշ էլ. միասին նստել են և մեզ նայում։ Ասում են որ քաղաքի երկու երեսներն են։ Ն'նչ երեկելիներ։

Նոյեմբերի 9, ճանապարհին.

Մեկնում ենք. ձիեր էին բերել. մէկի վրա՝ մեր պալուսակները կապել, խոկ միւսները թամբած են։ Մեզ հետ է զալիս մի ձիապան, որ նստում է բեռնաւորած ձիու վրա։

Անձրերը դեռ մաղում է. ամեն ինչ բորբոսնէլ կանաչել է. Զգելի է։

Մեզ ալցելութեան, բարերիթ մաղթելու համար եկել էին 3—4 երիտասարդներ. երկուսը զրեթէ պատանիներ էին. խօսեցի հետները. համետ, եռանդոտ, տպաւորող և ցանկացող երիտասարդներ էին. պակասում էր մէկը որ նրանց ցոյց տար թէ ինչ պիտի անել։

Ուսուցիչը երէկ տեսաւ. մի ալլանդակ բան էր, և տգէտ։ Զեռքերը դնում էր բաճկոնի կողքին, զլուխը ցցում, կարեսր կերպարանք զգնում, խորին չեշտ վերցնում և... տխմարութիւններ ասում։

Անձրեի տակ ձի նստեցինք և սկսեցինք քշել։ Փալում էինք ցեխի, ջրալի ցեխի մէջ և ցեխոտում մեզ։ Ա՛հ, որպիսի ցեխի անձրե էր որ ձին չսլորտում էր ղէպի ընկերս և կամ նրա ձին ղէպի ինձ. երես, գլխարկ, մազեր, բոլորը ցեխոտուել էին, բծաւորուել։

Մութն էր երբ քաղաքից ելանք և ընկանք մեծ ճանապարհի վրա։ Դեռ վատ չէ ուղին. անտառի մէջ երկու շարք խրճիթների միջով է անցնում։ Թեթեւ-փալտեալ, եղեղով ծածկւած չէնքեր են, որոնք խանութների տեղ են ծառայում։ Մեծ մասամբ թէ՛ են պատրաստում նրանց տակը։ Պարսիկը ամենից աւելի թէ՛ է սիրում և օրական եթէ 10—15 գաւաթ խմի, դեռ բաւ չէ իրեն և ալգ է պատճառ, որ ամեն խանութի մէջ թէ՛լամանը կրակի վրա էր զտնում, կամ սամաւարը հոսլիս լցնում են փոքրիկ գաւաթը շատ գոհաւոր, զրեթէ եռացրած թէլով, կէսից աւելի շաքար խառնում և 3 կոպէկով տալիս։ Մի գաւաթը մի կումով



կարելի էր խմել թէ՛ն էլ անհամ, անախորժ: Բալց որքան խմողներ կան պաղած թաց գետնի վրա, թէ՛ն գաւաթը ձեռքերին, վառւող փոքրիկ խաւովի շուրջը:

— Խաբար դար... ազադակում էր մեր առջևից գնացող ձիապանը (չափառ չազիրդ), ուղղելով իր սղաղակը՝ գիմացից եկող կարաւաններին: Որքան էլ գալիս էին: Զորիներ, ձիեր, էջեր, բեռնած ապրանքներով, սնդուկներով, ճանապարհորդներով:

— Է՛հ, ջրովդար (ջորեպան), խաբար դար...

Նւ արագութեամբ անցնում էինք ալդ բոլորի կողքով, ցեխի ջրվժների նետելով դէպի նրանց: Անձրեւ մաղում էր, անդադարձ մաղում:

Վկրում թէ ճանապարհը և թէ մեր ունեցած էնէրգիան չէր թողնում որ նկատէինք թէ ինչպէս ջարդում էին մեզ մեր անպիտան ձիերը րենց քալածքով:

Արագ չէին գնում, ալլ ցնցում էին ամենաչն անխղճութեամբ կառքի ձիերի պէս արշաւում ոտնեկով: Նստովոր էի. իսկ ընկերս, ու առաջին անգամն էր ճանապարհորդում ձիով և աչն էլ ալդպէս քշելով՝ փորձեց մի քիչ գիմանալ, լետով թամբի կոշտութիւնից գանգատեց, ապա գոռաց.

— Բալց աղիքներս կտրատում է աչս գրաստը... էլ՛չեմ կարող, կանգ առնենք քիչ:

Կանգ առինք. իմ ոտներն էլ չփուելով թամբի կողերին՝ սկսել էր սատիկ ցաւել: Զգուշութիւն արել էինք, փորներս ամուր կապել շտով և գոտիով. բալց ինչ օգուտ. ձին իր քալածքով աչնքան տանջեց՝ մեզ, որ գրեթէ ջարդած ընկել ենք աչս առաջին կաւաւանում, ուր և եի գրում եմ:

Մերժեցի ալլ ևս գիշերով գնալ. գիշերս կը քնենք աչստեղ. մեզ համար թէ՛ ևս պատրաստում. ընկերս ինձ մեղադրում է որ ալդպէս արագ փոտով (չափառով) ենք գնում և ոչ կարաւանի հետ:

— Բալց, բարեկամ, ասացի—աչն ժամանակ 7—8 օր էր հարկաւոր մինչև թէհրան հասնելը, մինչ ալթմ 2 օրւալ մէջ կը հասնենք:

Պարսկաստանում՝ ամենաարագ ճանապարհորդութիւնն է ալդ, որ աչնքան տանջում է. սակաչն աւելի լաւ է ալդպէս տանջւելով արագ ընթանալ, քան ենթարկւել դանդաղկոտութեան, որ, ժամանակի ու պանու մովը, սպանում է նաև մարդու մէջ ամեն աշխուժ:

Որ գիտեմա թէ ինչպէս դանդաղ է աչստեղ ամեն բան քալում, բարեկամ, որքան ստակալի համբերող, ստրկապէս համբերող ժողովուրդ է բնակւում աչս հրաշալի երկրում...



Նոյեմբերի 10, ճանապարհին.

Առաւօտ է. անձրեւը դադարել է. բաց լուսամուտից ցուրտ է փչում. անտառը թաց է և թրջւած ամեն կողմ. իսկ ցեխը սոսկալի է. Մեզ թէ՛ հն տւել, որից լետոյ ճանապարհ ենք ընկնելու:

Երէկ Կրեկոյ մի խրճիթի մօտից մեզ էր ընկերացել թէհրանցի մի խան, որ չատկապէս թէհրանից ուղարկւած էր, ճանապարհի կաշարանները մաքրելու համար, որովհետեւ անգլիական նոր դեսպանն էր անցնելու ալդ կողմերից:

Փոստը, ճանապարհները և կաշարանները Պարսկաստանում, ինչպէս ամեն բան, կապալով է չառնւած մի միջնորդի:

Խանը անցնելիս, գործաւորներ էր դրել կաշարաններում, որ աչքի ընկնելիք քանդուած տեղերը չինէին մեծ հիւրի համար: Ալժմ նա վերադառնում էր տեսնելու համար թէ կատարւել են իր հրամանները:

Նա մեզ կարծեց դեսպանի թիկնապահներին, Թողինք որ ալդպէս համարէր: Հիւանդ էր, ջերմ ունէր: Ընկերացաւ մեզ հետ և իջաւ առաջին կաշարանը:

Երբ կաշարան հասանք, նա էր որ հրամայեց տանել մեզ դեսպանի սենեակում գիշերելու: Ծիծաղելի էր ալդ սենեակը: Կարմիր կտաւ էին գամել պատերի վրայ, որպէս պաստառներ: Երբ չալտենցի ծիծաղելի լինելը, խանը ասաց.

— Դա էլ շատ է. կարծում էք կը մնայ. դեսպանը անցնելուց մի քանի շաբաթ լետոյ կ'անհետանայ. կը գողանան ու կը տանեն:

Մի փալտէ սեղան կար և մէկ էլ մահճակալ, կոշտ ու կոպիտ շինած:

Այս առաւօտ խանը որ մեզ հետ միենոյն սենակում գիշերեց և ալժմ թէ՛ է խմում, չանկարծ տեսաւ այն գործաւորին, որին ուղարկել էր—3 թուման էլ փող տւել— որ զնաչ չետագալ Ռուստամաբադ կաշարանը նորոգէ: Որմնադիրը քաղաքից եկել էր աչտեղ, մի քանի չիլ էլ օղի բերել, ընկերների հետ կոնծել, քէֆ արել ու գիշերն էլ մնացել:

— Հը՞, տեսա՞ք, դարձաւ ինձ խանը—ալժմ ես ինչ անեմ որանց: Երէկ երեկոյ հարցնում էիք թէ ինչ պիտի անել որ ձիերը առաջ դնան. ես ասում էի որ Պարսկաստանում ձիերը փալտով առաջ չեն դնալ, մտրակ է պէտք:

— Եւ իրաւունք ունէիք, ասաց ընկերս որ նոր էր զարթնում—հէնց որ մտրակը ձիուս էր դպչում, վազում էր, բայց փալտով ինչքան ձեծում էի—ոչինչ:

— Ալդ ալդպէս է, գոչեց Ալի խանը—ձիերին մտրակ է պէտք, իսկ մարդկանց՝ փալտ: Ի՞նչ արած. այս երկրում գործերը հասցրել են ալդ հանգամանքի. որ փալտն ու մտրակը չլինի, ոչ պարսիկը առաջ կերթայ և ոչ էլ նրա ձին:

Ու կամենում էր ծնծել տալ գործաւորին: Աղաչանք, պաղատանք, վերջ ի վերջոյ ես մէջ ընկալ եւ չաջողեցի գործաւորին փախոյց ազատել: Կէս ժամից չարունակելու ենք ճանապարհը, բաց ընկերս շատ է գանգատում ոտներից:

—Ոչինչ, ասաց խանը—էլ արագ չենք կարող գնալ, սաստիկ ցելս է:

Նոյեմբերի 10, Ռուստամարդ:

(փոստային կայարան)

Հասանք վերջապէս. երկրորդ կայարանն է, անտառի վերջում: Բաց ինչ նեղութիւններով հասանք, ճանապարհը դժոխք էր, ուղղակի դժոխք. ամբողջ 35 վերստ ճանապարհը 12 ժամաւ մէջ ենք եկել:

Ճանապարհին, անտառի խորքերում ցեխը ձիու մինչև ծնկներն էր հասնում. որոշ ոտնի տեղեր կալին անցնելու. երբեմն ձին աչնքան խըր-ւում էր, որ էլ չէր կարողանում իսկոյն դուրս գալ: Մտրակիւր որ կը մը-րակեաւ Յաճախ դիմացից եկող կարաւանների համար ստիպւած էինք լաջն տեղերում կանգ առնել, որպէս զի նեղ ու քարոտ, լպրծուն տեղե-րում իրարու չդպչէինք: Անտառի մէջ իսկ կալին տեղեր, որոնք միայն 2 արշին լաջնութիւն ունէին. մի կողմը խոր անտառապատ անդունդ, միւս կողմը անտառապատ լեռ. եթէ գլորէինք, դէպի գետն էինք գնա-լու, խփելով վիշերի եւ ծառերի:

Մի քանի անգամ աչնպէս չանկարծակի եկանք որ կողքովս անցնող անդուկաբարձ ջորին քիչ մնաց ինձ գլորէր դէպի անդունդը:

Մի տեղ էլ անհնար էր ձիու վրայ մնալ. ցած իջանք եւ ոտքով պնացինք. ձիւրը առջևից էին քալում անտանելի ցեխերի եւ փտերի մի-ջից անցնելով: Նս ու ընկերս ստիպւած էինք մացառների եւ ծառերի կառ-նել՝ կարողանալ դուրս գալու ցեխերից:

Աջտեղ էր որ իմ ձին սալթաքեց եւ քիչ բարձրութիւնից գնաց գլորելու դէպի գետափը: Բարեբաղտաբար կակուղ էր զառիվալը, կա-տարեալ ցելս, իսկ ընկած տեղը աւազոտ: Իջանք ցած, վեր հանեցինք. վսկ ձիապանը հաշտում էր, անէծքներ թափում թագաւորի, ճանապարհ-ներին հսկողների վրայ...

—Անիծեալ ճանապարհներ, գոռում էր նա—ձեզ վրայ ճանապար-հորդելուց լետոյ էլ դժոխքը ինչ կ'անեմ:

Մի քանի կտոր քարել էին, ամենալուսաւ գաւոր տեղերն էին. սա-կացն աչնքան թուլ էին քարել եւ վառ, որ հեղեղը կործանել՝ աւերակներ էր շինել նրանց:

—Բուերը զիչերները բուում են աչտեղ, ծաղրեց ձիապանը:

Նւ երբ աչ սոսկալի ճանապարհներից չաջողում էինք առանց վրդ-



ներս ջարդելու բարձրանալ ղէպի մի ծածկւած կարճ անցք, որի տակից էինք անցնելու, ջորեպանը գոչեց.

—Աչն ղժոխքի և աւերակների համար է, որ պիտի փող վճարիւն ալստեղ:

Ջաստաւ էր (застава). մի երկար ձողով փակած էր ճանապարհը՝ փոստալին սուրհանդակով գնացողների ձիերից ոչինչ չէին առնում. քաշեց ձողը և մենք անցանք:

Ջխպանը լետու պատմեց մեզ թէ ինչպէս ամեն ջորեպանից փող են առնում և տարեկան աւելի քան 2000 թուման եկամուտ կա՝ ալդտեղից և որ ալդ փողերը մտնում են զանազան պաշտօնեաների գրպանը:

Անցանք. լոգնած էինք. կանգ առանք մի խրճիթի մօտ և ցած իջանք թէլ խմելու և մի քանի ձու ուտելու:

Ներս մտանք խանութի մէջ. մեզ համար մի ծածկոց փռեցին բարձր չինած պատուանդանի վրայ. թէլի և օպիումի գործիքներ միայն կալին ալտեղ. աւելի շատ՝ օպիումի «բաֆուր» կոչւող ծխելիքներ. պարսիկները սկսել են սաստիկ ծխել:

Խանութում մարդիկ կալին, բոլորն էլ ոչ անհամակրելի ղէմքերով. զիւրանցիներ էին. կալին նաև թէհրանցիներ երկար աճաղին զլխարկներով. ևս հարցրի թէ ինչու էր որ ալդպէս երկար զլխարկներ ունէին:

Մի պարսիկ որ մի անկիւնում կծկւել էր, ասաց փիլիսոփայօրէն՝—

—Որովհետև մարդիկ փոքրացել են, կարճացել...

Երբ վերջացրել էին, հարցրի թէ ինչ պէտք էր տալ:

—Ինչ որ կ'ուզէք: տէք:

Ալդ ձեր շատ վարպետութեամբ էր ի գործ դրում: Տեղին էր ղժաւար դրութեան մէջ դնում: Ի՞նչ տալ որ ղժգոհ չլինի: Մարդ ստիպւած է միշտ շատ տալ, վախենալով ղժղահութիւնից: Ես շատ անգամ փորձել եմ քիչ տալ. արհամարհութեամբ ետ են տալիս և ասում.

—Թող ալդ էլ ձեզ մնալ, շնորհակալ եմ:

Երբեմն աջիքան զալրացրել է ինձ ալդ ձեռ, որ չեմ տւել բոլորովին:

Անգլիացիներն են փչացրել դրանց. անցնելիս փող են ցանել ամեն տեղ:

Ալդ ղեռ ոչինչ. երբ ձի նստեցինք, պիտի տեսնէիք զգուկի տեսարանը. ամեն հասնող ձեռք էր պարզում, «բախչիչ» (անամ) ուղղում. մէկը ասում էր որ հիւանդ է, միւսը որ ձիուս սանձն է բռնել, երրորդը՝ որ ծածկոցն է փռել և ալլն, ալլն:

Մէկին տւիր՝ իսկույն միտն է մէջտեղ գալիս:

Եւ ալս «անամ» ուղեւր ինձ սպանում էր. ամբողջ Պարսկաստանում կալ ալդ սովորութիւնը. երբ Ռաշա էինք, և թէ տալի բոլոր ուղղներին, հարկատու էր ունեցածս թողնել ալտեղ:



—Սահանք <sup>1)</sup>, անամա տուր:

—Սահանք, ես ձեզ էի բռնել:

—Սահանք, բայց թի՛նձ, որ ջուր տւի ձեզ...

Եւ բոլորը, բոլորը ուզում են. մինչև իսկ կապարանի պահողը (ստարոստա) իր «անամն» էր ուզում, որ մեզ համար «աւելի լաւ ձիեր» էր տւել: Այս անգամաւ ձիերը, ընդհակառակն, աւելի վատ էին, աւելի տանջող:

Ինչ որ է. ասում են որ ամենամեղիտան ճանապարհը անցել ենք՝ Այլ ևս անտառ չկայ, սկսելու ենք Խարզանի լեռները բարձրանալ: Պատրաստութիւն ենք տեսնում. ցուրտ է:

Կասպից ծովի աջն հարաւային անտառոտ, խոնաւ ու ճախնուտ ափերի մասին: Որոնց վրայով նոր անցաւ—կը գրեմ քեզ Ղաղւին քաղաքից: Անտեղից նույնպէս կը գրեմ Գիւլանի և Մաղանդարանի հացերի վերաբերմամբ, եթէ միայն չաջողեց ինձ ողջամբ, առանց վիզս կոտորելու սոսկալի ճանապարհների վրայ և առանց քաղաքաւարութեամբ կողոպտելու փոստային կապարաննորում, տեղ հասնել:

(Շարունակելի)

<sup>1)</sup> «Տէր». աղպէս են կոչում բոլոր եւրոպական գլխարկ կրողներին:

## ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԲԺ. ԹԱԴԷՈՍ ԶԱԲԱՐԵԱՆՅԻ

(Շարունակութիւն <sup>1</sup>)

Դ.

Ահագին նշանակութիւն ունի թէ ամուսինների և թէ մանու-  
ւանդ սերնդի առողջութեան համար արիւնակցութեան կամ մեր-  
ճատոր ազգակցութեան խնդիրը: Գիտութիւնը, հիմնելով բազմա-  
թիւ փաստերի վրայ, որոնց մասին կը խօսենք փոքր ինչ ներքե-  
ւում, ապացուցանում է, որ արիւնակցական ամուսնութիւնը վնա-  
սակար ազդեցութիւն ունի նախ ամուսինների և մանստանդ կնոջ  
վրայ, որը շատ անգամ, այդ հանգամանքի շնորհիւ, կորցնում է որ-  
դիճնութեան ընդունակութիւնը կամ նորա կազմաճքը ենթարկ-  
ւում է ալիսի խանգարմունքների, որ յղութիւնը չէ կարողա-  
նում հասնել իւր որոշեալ սահմանին և ընդհատուած է զաւակաւի-  
ժութեամբ: Բացի սրանից այդ տեսակ ամուսնութիւնը մեծ մա-  
սամբ կամ մնում է բոլորովին անզաւակ կամ առաջացնում է  
ալիսի թոյլ և ախտաւոր սերունդ, որն անկարող լինելով սոս-  
կանել ցեղի շարունակութիւնը, նպաստում է ընտանիքի սպաւմանե-  
ւում: Ամուսնութիւնը մերձաւոր ազգակցութեան աստիճանում նւա-  
զեցնում է որդեճնութեան ընդունակութիւնը և նպաստում է սե-  
րլնդի թուլանալունս — ասում հռչակաւոր Գարլինը:

<sup>1</sup>) Տես «Մուրճ» 1896 թ. № 12:

Այդ երևոյթը բացատրւում է հետեւեալ կերպով:

Յայտնի է, որ աշխարհի երեսին չկայ ոչ մի մարդ, որը թէ Ֆիզիկապէս և թէ հոգեպէս կաղմակերպւած լինէր իղէալական կատարելագործութեամբ: Ամեն մարդ ունի որ և իցէ պակասութիւն, կամ ինչպէս սովորաբար ասում են, ամեն մարդ ունի իւր թոյլ կողմը. և եթէ այդ պակասութիւնը աչքի չէ ընկնում, սորա ստուծառն այն է, որ նա զուրս չէ դալիս մի որոշ սահմանից: Միևնոյն ընտանիքի անդամները սովորաբար ենթակայ են լինում միևնոյն տեսակի պակասութեան, որ նրանք ժառանգաբար փոխանցում են նաև իրենց զաւակներին: Յայտնի է նմանապէս, որ ծնողների ամեն մի չատկութիւնը փոխանցւելով սերնդին, այդ չատկութիւնը սերնդի մէջ աւելի ևս զարգանում, աւելի արմատանում և աւելի ուժեղանում է: Ժառանգական այդ մեծ օրէնքի վրայ է հիմնւած Դարւինի նշանաւոր թէորիան — էոլոյցիայի թէորիան — որ բացատրում է թէ ինչպէս նախնական թոյլ և պարզ կենդանական տեսակներից, շորհիւ ժառանգական չատկութիւնների աստիճանաբար զարգանալուն, առաջ են եկել ժամանակակից բարդ և կատարելագործւած կենդանական տեսակները:

Այժմ, եթէ ննթադրենք, որ միևնոյն ընտանիքի անդամները, հետեւաբար միևնոյն պակասութիւնը ունեցող անձնաւորութիւնները, ամուսնանում են իրար հետ, կը նշանակի նրանք այդ պակասութիւնը փոխանցում են իրենց զաւակներին կրկնակի չափով՝ թէ հօր և թէ մօր կողմից: Այդ չափը աւելի ևս սաստկանում է, եթէ ազգակցական ամուսնութիւնը կրկնւում է շարունակաբար մի քանի սերունդ: Այդ դէպքում այն ընտանեկան չատկութիւնը, որ առաջ համարւում էր միայն մի աննկատելի պակասութիւն, այժմ արդէն դառնում է խոշոր պակասութիւն, դառնում է ախտ: Իսկ ախտաւոր սերունդն անընդունակ է պահպանել ընտանիքի անընդհատ գոյութիւնը:

Ընդհակառակն, երբ ամուսնութիւնը տեղի է ունենում զանազան ընտանիքների անդամների մէջ, այն ժամանակ աւելի հաւանական է, որ մէկի պակասութիւնը ծածկւում է միւսի ազատելութեամբ. հետեւաբար նրանցից ծնւած զաւակները լինում են աւելի հաւասարակշռւած, աւելի կատարելագործւած:



Մեր միտքը աւելի պարզելու համար առաջ բերենք մի աւելի պարզ օրինակ:

Ենթադրենք, որ մի ընտանիքի մէջ կարծատեսութիւնը տիրապետող յատկութիւն է, իսկ լսողութիւնը զարգացած է կատարեալ կերպով: Մի ուրիշ ընտանիքում ընդհակառակն լաւ զարգացած է տեսողութիւնը, իսկ լսողութեան ընդունակութիւնը նազ է: Փորձը ցոյց է տալիս, որ եթէ առաջին ընտանիքի անդամները ամուսնանան, եւ իրար հետ՝ նրանցից ծնւած զաւակները լինում են չափազանց կարծատես, համարեաւ կոչը: Երկրորդ ընտանիքի ազգակցական ամուսնութիւնից առաջանում են շատ ծանր լսողութիւն ունեցող, համարեաւ խուլ զաւակներ: Բայց եթէ ամուսնութիւնը տեղի է ունենում առաջին և երկրորդ ընտանիքների անդամների մէջ, այն ժամանակ զաւակների թէ տեսողութիւնը և թէ լսողութիւնը լինում է բոլորովին կանոնաւոր: Այդ նշանակում է, որ զանազան ընտանիքների զանազան պակասութիւնները ծածկւում են մէկմէկու փոխադարձ առաւելութիւններով:

Մենք կամաւ փոքր ինչ աւելի ենք կանգ առնում այդ խնդրի վրայ, որովհետեւ, մեր կարծիքով, նրա վրայ պէտք է հիմնւած լինի հասի և չհասի հարցը, որ, ինչպէս յայտնի է, վաղուց արդէն գայթակղութեան քար է դարձել մեր եկեղեցու սպասաւորների համար: Եկեղեցական օրէնսդրութեան հիմնադիրները, ղեկավարելով դարաւոր փորձերի վրայ հիմնած բնազդումով, հարկաւոր են համարել սահմանափակել ամուսնութիւնը ազգակցական որոշ աստիճաններում: Բայց որովհետեւ թէ այդ օրէնսդիրները և թէ մանաւանդ նրանց յաջորդները անտեղեակ են եղել սահմանած օրէնքի բանական հիմունքներին, այդ պատճառով էլ օրէնքը դարձել է անձնական հասկացողութեան և կամայականութեան տաւրիայ: Մեր մէջ, ինչպէս այդ երևում է դեր. Սրիստակէս սրբազանի «Ամուսնական խընդիրներ» վերնագրով յայտնի հեռագոտութիւնից, ամուսնական արիւնակցութեան աստիճանը համարեաւ այնքան անգամ ենթարկւել է փոփոխութեան, որքան եկեղեցական ժողովներ են տեղի ունեցել: Եւ չնայելով սրան, մինչև այսօր էլ այդ խնդիրը մնում է քառասական խառնաշփոթութեան մէջ. այն՝ ինչ որ հաս է մէկի համար չհաս է միւսի համար. այն՝ ինչ որ հաս է մի կաթուղիկոսի օրով,

չհաս է միևսի օրով: Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ այդ խնդիրը լուծելու համար շատ անգամ առաջնորդւում էին այնպիսի միամիտ պատճառաբանութիւններով, որպիսին գտնուում ենք Գրիգոր Տաթևացու «Հարցմանց» գրքի մէջ: Մեր եկեղեցու այդ քաջ և համակրելի ախոյեանը, այն հարցին, թէ «վասն էր ի հին օրէնս եղաւ յիւր ազգէն առնուլ հորսն, և ի նորս՝ յօտար ազգէն», հետեւեալ միամիտ պատասխանն է տալիս—«... ի նորս՝ յօտար ազգս առնել խնամութիւն, զի սէրն սփռեսցի և տարածեսցի ի բազում ազգս»: Միևնոյն բացատրութիւնն է տալիս Գրիգոր Տաթևացուց շատ առաջ ընդհանուր քրիստոնէական եկեղեցու նշանաւոր հայրերից ս. Սոգոստինոսն, ասելով, որ «առ պնդագոյնս յօդակապելոյ զընկերական կեանս՝ բազում ընտանութիւնք ի բազում մարդիկ տեղի ունիցին»: Պարզ է, որ այդ տեսակ հիմունքների վրայ հաստատւած օրէնքը չէ կարող խախտուալ չլինել:

Կառնանք այժմ Փակտերին. տեսնենք ի՞նչ են ասում Փակտերը արիւնակցական ամուսնութիւնների մասին: Արիւնախառնութեան վնասակար ազդեցութիւնն աւելի պարզ կերպով նկատելի է կենդանիների և բոյսերի մէջ: Կենդանաբանների և բուսաբանների բազմաթիւ հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ արիւնակից կենդանիների յաճախակի խառնուրդը վերջանում է այդ խառնուրդից առաջացած սերնդի ընդհանուր թուլութեամբ և սերճատութեամբ: Այդպէս, օրինակ, յայտնի է, որ մետաքսի որդը երկրորդ սերունդում արդէն այնքան թուլանում է, որ հազիւ կարողանում է կոկոն պատրաստել, իսկ երրորդ սերնդում անշնորհապէս է դառնում նոր սերունդ առաջացնելու. բայց եթէ երկրորդ սերնդի համար բերում են ուրիշ տեղից նոր սերմեր, այն ժամանակ այդ սերունդը նոր սերմերից կարողանում է առաջացնել բոլորովին առողջ և զօրաւոր որդեր: Զինորաներին յայտնի է, որ եթէ ձուկը երկար ժամանակ ապրում և բազմանում է միևնոյն աւազանում, նորա սերունդը սկսում է կամաց-կամաց նւազել և ոչնչանալ: Բայց երբ մի ուրիշ աւազանից բերում են նոր ձկներ և խառնում են առաջաց աւազանի ձկների հետ, այդ խառնուրդից ստացւում է արդէն խոշոր և բազմաթիւ սերունդ: Անասնաբաններին և ձիաբոյժներին վաղուց արդէն շատ լաւ յայտնի է, որ անասունների և ձիերի ազ-



նիւ տեսակները թուլանում և փլանում են, եթէ երկար ժամանակ մնում են առանց խառնուրդի օտար նախիրի կամ օտար երամակի որձերի հետ: Դարւինը յիշում է անգլիական նշանաւոր ձիաբոյժների մասին, որոնք չափազանց բարձր գնահատելով իրենց ձիերի ազնիւ արիւնը, հրաժարւում էին օտար երամակի արիւն խառնել իրենց երամակներին: Բայց վերջ ի վերջոյ նրանք ստիպւած էին փոխել իրենց սիստեմը, որովհետեւ մի քանի սերնդից յետոյ նրանց ազնիւ ձիերը այն աստիճանի փչացան և քչացան, որ սպառնում էին սնանկացնել իրենց տէրերին: Միտէր Բէտսի երամակը համարւում էր աշխարհի ամենալաւ երամակը: Տասն և երեք տարի շարունակ նա բաղմացնում էր այդ երամակը ամենամերձաւոր արիւնակիցների խառնուրդով. այդ սիստեմի հետեանքն այն եղաւ, որ քիչ էր մնում երամակը բոլորովին ոչնչանայ: Այդ պատճառով, հետեւեալ տասնեւեօթ տարւայ ընթացքում, նա սկսեց թարմացնել իւր երամակը օտար նժոյգների խառնուրդով, և այդպիսով միայն ազատեց իւր ֆիրմայի հուշակը: Նկատւած է, որ երբ կենդանիների մէջ խառնուրդը կատարւում է հօր և աղջկայ, մօր և որդու, եղբայրների և քոյրերի մէջ և մանաւանդ երբ այդ խառնուրդը կոչացւում է մի քանի սերնդի ընթացքում, այդ տեսակ խառնուրդից կամ ոչինչ չէ առաջանում, կամ առաջանում են թոյլ և մանր ձագեր, որոնք շատ անգամ ունենում են հրէշաւոր կազմաճք: Յայտնի անասնապահ Ուրաչտը փորձի համար խառնեց որձ խոզը իւր յետագայ սերունդների հետ մինչև եօթերորդ սերունդը. հետեանքը ցոյց տւեց, որ այդ խառնուրդը կամ մնում էր առանց բեղմնաւորութեան, կամ առաջացնում էր չափազանց թոյլ ձագեր, որոնք երկար չէին կարողանում ապրել կամ տաջանում էին այն աստիճանի թոյլ և ապուշ ձագեր, որոնք անընդունակ էին լինում մինչև անգամ կաթ ծծելու և ոտերի վրայ կանգնելու:

Բոյսերի վերաբերութեամբ Դարւինի, Հիլդէնբրանդտի, Ղեկպիւնի, Աքսէլի, Կրամէրի և ուրիշ յայտնի բուսաբանների հետազոտութիւնները ապացուցանում են, որ թէև բոյսերից շատեւր կարող են իրենք իրենց բեղմնաւորել, (որովհետեւ նրանց ամեն մի ծաղիկը կրում է իւր վրայ թէ արական և թէ իգական գործարան-



ներ), բայց միմիայն այն ժամանակ է ստացում առաա և խոշոր սերմեր, երբ մի ծաղիկ բեղմնաւորւում է ուրիշ ծաղիկի, կամ մանաւանդ, երբ մի թփի ծաղիկները բեղմնաւորւում են մի ուրիշ թփի ծաղիկներով:—Այդ տեսակ բեղմնաւորութիւնը կոչւում է փոխադարձ բեղմնաւորութիւն և կատարւում է մեզաների, բղձների և ուրիշ միջատների կամ քանձ հոսանքի միջոցով:—Միջատները, թռչելով մէկ ծաղիկից միւսի վրայ, մէկի բեղմնաւորող փոշին տեղափոխում են միւսի վրայ: Այդպիսով թէ կենդանական և թէ բուսական թաղաւորութեան մէջ փոխադարձ բեղմնաւորութիւնից առաջանում են աւելի խոշոր, աւելի ուժեղ և աւելի զարգացած անհատներ: Եւ ընդհակառակն, ազգակցական բեղմնաւորութիւնը կամ մնում է բոլորովին ամուլ, կամ առաջացնում է մանր, թոյլ և ախտաւոր սերունդ:

Ե.

Նոյն երևոյթը նկատւում է նաև մարդկային ցեղի վերաբերութեամբ: Բժիշկ Ֆրէնսիս Դէլին, որ բաղմաթիւ հետազոտութիւններ ունի արիւնակցական ամուսնութեան հարցի մասին, պնդում է, որ այդ տեսակ ամուսնութիւնները կամ բոլորովին անընդունակ են լինում որդեծնութեան կամ ծննդաբերում են հիււանդոտ և ախտաւոր սերունդ: Նորս ասելով, արիւնակից ամուսինների զաւակները աչքի են ընկնում ջղաջին ցտաւարութեամբ, ապշութեամբ, համբութեամբ և խլութեամբ: Բնաւորութեամբ նրանք լինում են թոյլ, անտարբեր, զուրկ հաստատ կամքից և անընդունակ որևիցէ նախաձեռնութեան: Բժիշկ Բէմիսի հետազոտութիւնից, որ կատարւած է Միացեալ Նահանգներում, երևում է, որ այդ երկրի հիւանդանոցներում դառնաձ խուլ և համբերի 10 տոկոսը, իժնէ կոչրերի 50/0-ը, և ապուշների 150/0-ը կազմում են արիւնակից ամուսինների զաւակները: Բերգմանը Վերմանիայում նկատել է, որ խուլ և համբերի ամենամեծ տոկոսը առաջանում է ազգակից ամուսնութիւններից: Բուդէնի հետազոտութիւններից երևում է որ մինչդեռ արիւնակից ամուսնութիւնները Ֆրանսիայում կազմում են 1000-ին միայն 2 տոկոս, այդ ամուսնութիւններից առաջացած խուլ և համբերի թիւը, ընդհակառակն, 15—20

անդամ աւելի է, քան թէ միւս ամուսնութիւններից ծնւածները: Յայտնի գիտնական Լիբրէյսը իճէէ կուրութիւնը ամբողջապէս վերադրում է արիւնակցութեան ազդեցութեան և սրանով է բացատրում այն հանգամանքը, որ բողոքական Պրուսիայում, որտեղ ամուսնութիւնը թոյլատրւում է մերձաւոր ազգականների մէջ, իճէէ կոյրերի թիւը անհամեմատ բարձր է, քան կաթոլիկ Աւստրիայում: Հրէաների մէջ ամուսնութիւնը թոյլատրւում է արիւնակցութեան աւելի ևս մերձաւոր աստիճաններում. այդ պատճառով էլ, դոքտոր Ելիօտի վկայութեամբ, ու մի ազգի մէջ այնքան կոյրեր, կակազներ, ջղալին ցաւադարներ, ապուշներ և ուրիշ ախտաւորներ չեն գտնւում, որչափ հրէաների մէջ: Լիբրէյսի հաշուով, մինչդեռ քրիստոնեաների մէջ 1477 հոգուն ընկնում է միայն մի հատ խուլ և համր, հրէաների մէջ մէկ խուլ և համրը ընկնում է 368 հոգու: Այն ժողովուրդները, որոնք քաղաքական և աշխարհադրական պայմանների շնորհիւ կարւած են օտար հասարակութիւնից և ստիպւած են ամուսնական ընտրութիւնը կատարել միմիայն իրենց երկրի նեղ սահմանում, կատարելապէս զոհ են դառնում արիւնակցութեան փնտսակար հետեանքներին: Այդ երկուցիւր շատ լաւ ուսումնասիրւած է անգլիական լեռնական նահանգներում, որոնց բնակիչները շնորհիւ անդադար կրկնող արիւնակցական կապերի հետզհետէ դարձել են կատարեալ ապուշներ (ИЮТЪ) և թուլամիտներ (кретинъ): Այդ միեւնոյն ազդեցութեան շնորհիւ, Ամերիկացի ստորուշ նեգրների մէջ մի ժամանակ խուլ և համրերի թիւը հասել էր անսովոր քանակութեան: Վերին Սաւոյայում, որտեղ ազգակցական ամուսնութիւնները սովորական են, իբրեւ հետեանք այդ փնտսակար սովորութեան, սատիկ տարածւած են ջղալին տարօրինակ հիւանդութիւններ՝ դիւահարութիւն, լուսնոտութիւն, ընկնաւորութիւն և այլն և այլն: Առհասարակ բոլոր այն դէպքերում, երբ մարդիկ այս կամ այն պատճառով առանձնանում են մէկ-մէկուց և ամուսնանում են մի քանի ընտանիքների նեղ շրջանում, այդ տեսակ ամուսնութիւնից առաջանում են թոյլ, հիւանդոտ և ախտաւոր զաւակներ, որոնք վերջիվերջոյ՝ սպառւում են ընտանիքի գոյութիւնը, կամ, ինչպէս ասում են, սերհատուում են (вырождаются):

Այդ բանի ամենալաւ ապացոյցը մեր տեսնում ենք հասարա-



կութեան բարձր դասակարգի, այլպէս կոչւած ազնական դասակարգի մէջ: Այդ դասակարգը, իւր արիւնի կարծեցեալ ազնուութիւնը պահպանելու համար, վաղուց արդէն սովորութիւն է դարձրել ամուսնական ընտրութիւնը կատարել ընտանիքների շատ սահմանափակ շրջանում: Այդ պատճառով արիւնակցական ամուսնութիւնները ոչ մի դասակարգի մէջ այնպէս յաճախ չեն կրկնուում ինչպէս ազնական դասակարգի մէջ և հէնց այդ պատճառով էլ ժողովրդի ոչ մի դասակարգը չէ արտադրում այնքան ապուշներ, ինչացնորներ, խեղանդամներ և Ֆիզիկապէս ու բարոյապէս արատաւորած անդամներ, որչափ արիւնի ազնութեամբ պարծեցող այդ դասակարգը: Գիտութեան տեսակէտից այն արիւնը միայն կարող է ազնիւ համարուել, որ ընդունակ է առողջ, թարմ, բարոյապէս և Ֆիզիկապէս հաւասարակշուած սերունդ արտադրելու: Գոկտոր Նակոբեիի ասելով, «վերին աստիճանի ծիծաղելի են այն մարդիկ, որոնք պարծենում են ընտանեկան արիւնի հնութեամբ»: Արիւնի հնութիւնը հեռու լինելով որեւիցէ արժանաւորութիւն ունենալուց, միւսնոյն ժամանակ մի կատարեալ Ֆիզիոլոգիական արատ է: Այս է պատճառը, որ ազնական դասակարգը ամեն ժամանակ և ամեն երկրում ենթակա է եղել սաստիկ սերհատութեան: Հռոմէացիների մէջ արխատիրատները այնպէս տրագ սերհատում էին որ այդ դասակարգը պահպանելու համար կայսրները ստիպւած էին, միշտ նորանոր ազնականութիւն ստեղծել: Ֆրանսիացում, Գերմանիացում, Աւստրիացում և Սպանիացում, միջնադարեան ասպետների այդ հայրենիքներում, ազնականների թիւը այժմ մոտով կարելի է համարել: Անգլիական ազնականութիւնը, որ մօտ էր սպառուելու, այն ժամանակ միայն սկսեց կենդանանալ և ուժեղանալ, երբ Անգլիայի արխատիրատները, հրաժարելով արիւնակից ամուսնութեան սովորութիւնից, սովորութիւն դարձրին ամուսնական ընտրութիւնը կատարել օտար ազգերի մէջ: Շնորհիւ այդ հանգամանքի, անգլիական արխատիրատիան այսօր ամենից բարձր տեղն է բռնում բոլոր միւս աշխարհների ազնականութեան շարքում: Սիամոնդ-դը-Սիամոնդին, խօսելով ազնական դասակարգերի սերհատութեան մասին, ասում է, որ «եթէ այդ դասակարգի գոյութիւնը երբեմն աւելի երկար է տևում քան թէ կարելի էր սպասել, սորա



պատճառն այն է, որ կողմնակի զաւակները մեծ քանակութեամբ թարմ արիւն են ներմուծում ազնականների հնացած արեան մէջ:

Այսպէս ուրեմն, Ֆակտերը ցոյց են տալիս, որ արիւնակցական ամուսնութիւնը վնասակար կերպով է ներգործում սերնդի պահպանութեան վրայ. նախ այն պատճառով, որ նազեցնում է որդե-  
ծնութեան ընդունակութիւնը, և երկրորդ՝ նպաստելով սերնդի թու-  
լութեան, ակտուորութեան և սերնատելուն: Այդ վնասակարու-  
թիւնն աւելի ևս խստանում է, երբ արիւնակցական կապերը տեղի են ունենում միեւնոյն ընտանիքի մի քանի սերունդների մէջ յա-  
ջորդաբար: Բացի սորանից, ինչքան աւելի մօտ է արիւնակցութեան աստիճանը, այնքան աւելի մեծ է և նորանից առաջացած վտանգը: Բուդէնի, Պիրուի, Բրոշարի և ուրիշ զիւնականների հաւաքած տե-  
ղեկութիւններից երևում է, որ արիւնակցութեան չորրորդ աստի-  
ճանում՝ արատաւոր զաւակների թիւը կազմում է 67 տոկոս, եր-  
րորդ աստիճանում՝ 81 տոկոս. իսկ աւելի ևս մօտիկ աստիճանում՝  
91 տոկոս: Մորէլի, Դարւինի և ուրիշների կարծիքով, արիւնակցու-  
թեան վնասակար ազդեցութիւնը չքանում է միայն չորրորդ սերն-  
դից յետոյ, այսինքն արիւնակցութեան ութերորդ աստիճանում: Այդ  
պատճառով այդ աստիճանը առողջապահութեան տեսակէտից պէտք  
է ընդունել իբրեւ ատորին սահման:

Քրիստոնէական եկեղեցիներից հոռմէական եկեղեցին թոյլա-  
տրում է ամուսնութիւնը արիւնակցութեան վեցերորդ աստիճա-  
նում, յունականը՝ հինգերորդ աստիճանում, բողոքական եկեղեցին՝  
չորրորդ և մինչև անգամ երրորդ աստիճաններում: Մեր մէջ, ինչ-  
պէս վերը նկատեցինք, արիւնակցութեան աստիճանը թէպէտ վերջ-  
նականապէս հաստատուած չէ, բայց յամենայն դէպս չէ թոյլատը-  
ւում հինգերորդ աստիճանից առաջ: Մխիթար Գօշը, հիմնւելով  
Դւինի և Պարտաւի ժողովների որոշումների վրայ, հնարաւոր է հա-  
մարում ամուսնութիւնը հինգերորդ աստիճանում. իսկ Սսի երկրորդ  
ժողովը (1243 թ-ին), որի որոշումը մեր ժողովական որոշումներից  
ամենավերջինն է, պահանջում է, որ ամուսնացողները վեց ծննդով  
բաժանւած լինեն իրարուց. զգալան ընտրութեամբ արացին,  
վեց ծննդովք բաժանեալ յազգակցութիւնէ արեան: Ներսէս Շնոր-  
հալին, քահանաներին ուղղած ընդհանրական թղթի մէջ, պատուի-

բում է թոյլատրել ամուսնութիւնը միայն այն դէպքում, երբ ամուսնացողները բաժանուած են չորս սերնդով (կամ որ նոյն է ութ աստիճանով): Վի ոք ի համազգեաց, ասում է նա, որոց արեան մերձաւորութիւն իցէ, պսակ օրհնութեան զիցէ, այլ մինչև ի յերկուց կողմանցն զչորրորդ ազգին գլխաւորութիւնն կատարեալ ունիցին: Եւ որ զարմանալի է, Շնորհալի հայրապետն իւր այդ պատուէրը հիմնում է բնագիտական սկզբունքների վրայ: Վրանգի բնութիւն մարմնոյ ի չորից տարերաց գոյով—ասում է նա—յիրաւի և մարմնական ազգակցութիւնն մինչև ի չորրորդ թիւն ժամանէ, որ է այսպէս. ի միոյ հօրէ երկուց եղբարց բաժանեալ՝ հաւասար ունին յինքեանս զհօրն գոյացութիւն. իսկ առ ի նոցանէ ծնունդքն զկէս արեան եղբայրութեանն. և երրորդ ծնունդքն՝ որ եղբարցն որչուց, զկէսոյն կէս արեանն միայն, իսկ չորրորդ ծնունդն՝ որ ի սոցանէ—զչորեակ մասն արեանն մնացելոյ: Եւ այս է սահման և կէտ արեան մերձաւորութեան: Շնորհալու որոշած ազգակցական աստիճանը, չնայելով իւր խստութեան, ամենից աւելի է համապատասխանում առողջապահութեան պահանջներին և այն պայմաններին, որ սահմանում են հեղինակաւոր գիտնականները—Մորէլը, Դարւինը և ուրիշները:

Մնում է մեզ մի երկու խօսք ևս ասել այն չհասութիւնների մասին, որոնք հիմնում են խնամէութեան և հոգեւոր ազգակցութեան հասկացողութիւնների վրայ: Մեր եկեղեցական օրէնքներով այդ կարգի ազգակցութիւնները համարեա նոյն չափ խիստ են պահպանուում, որչափ և արիւնակցական ազգակցութեան աստիճանները: Սակայն գիտութեան տեսակէտից, այդ տեսակ ազգակցութիւնները ոչ մի հիմք չունեն արգելք հանդիսանալու ամուսնական կապերին: Այդ պատճառով, խնամէութեան և հոգեւոր ազգակցութեան (սանահայրութիւն, հոգեհայրութիւն և այլն) բոլոր աստիճաններում կատարեալ ամուսնութիւնները ոչ միայն օրինաւոր, այլ երբեմն, մինչև անգամ, զերապասելի են: Այդպէս օրինակ, այրի մարդու համար աւելի զերապասելի է պսակել իւր քենու հետ, որ անշուշտ աւելի գութ և խնամք կարող է ունենալ իւր քրոջ որբերի վրայ, քան թէ օտար կինը: Առողջապահութեան տեսակէտից նոյնպէս ոչ մի արգելք չէ կարող լինել, երբ երկու եղբայրներ պսակում են



երկու քոյրերի վրայ, կամ երբ մէկը ամուսնանում է իւր խորթ մօր նախկին ամուսնուց ծնած աղջկայ վրայ, և այլն, և այլն: Մի խօսքով, այն բոլոր դէպքերում, երբ ամուսնացողների մէջ չկայ անմիջական արիւնակցութիւն, ամուսնութիւնը միանգամայն օրինաւոր է, եթէ միայն ամուսնացողների հասակը և առողջութիւնը համապատասխանում են առողջապահութեան պահանջներին:

Մենք կրկնում ենք. բնութեան առաջ օրինաւոր են միայն այն ամուսնութիւնները, որոնք ընդունակ են ծննդաբերելու և առողջ ու զօրաւոր սերունդ առաջացնելու: Ամեն մի պայման, որ չէ հակասում այդ նպատակին, օրինաւոր է և չէ կարող արգելք համարել ամուսնութեան: Ընդհակառակն, ամեն մի ամուսնութիւն, որ անընդունակ է որդեծնութեան, կամ որ կարող է առաջացնել միայն թոյլ և ախտաւոր սերունդ, ապօրինի է բնութեան համար, թէկուզ այդ ամուսնութիւնը կատարւած լինի եկեղեցու և պետական օրէնսդրութեան սահմանած բոլոր կանոնների համաձայն:

(Շարունակելի)



## ԱՐԴԻԻՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՌԱԶԴԻՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴՐԱՄԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ

Գ Ր Ի Գ Ո Ր Վ Ա Ր Դ Ա Ն Ե Ա Ն Ի

Ռուս-թրքական պատերազմը 1877--78 թ. մեծամեծ վնասներ հասցրեց ռուս արդիւնաբերութեան, որը սկսել էր թէ Ղրիմի սոսկայի պատերազմից յետոյ և թէ նամանականդ 1861 թ. ազատարար օրէնսդրութիւնից յետոյ, մի փոքր զարգանալ: Սակայն 1861-ից մինչև 1877 թ., 16 տարւոյ խաղաղ ժամանակը քիչ էր, որպէս զի ժողովրդի տնտեսական գործունէութիւնը շօշափելի արդիւնքներ տար ու կարողանար 1877-ի պատերազմից ծաղած վատթար հետևանքների առաջն առնել: Ռուս գիւղացին պէտք է իր հողերը առտիճանաբար յետ գնէր և ըստ 1861-ի օրէնսդրութեանը՝ ազատ տնտեսական գոծոն դառնար: Գիւղացին այնքան պիտի բարւոքէր իր դրութիւնը, որ նա նշանաւոր սպառող երևար ժողովրդական արդիւնքների և դրանով զարկ տար արդիւնաբերութեան յառաջդիմութեանը: Այս յոյսը մեծ մասամբ չարդարացաւ, շնորհիւ այն բանի, որ գիւղացին պէտք է յետ գնէր իր հողաբաժինները և շնորհիւ այլ պարտքերի, որոնք նորա ուժերից վեր էին և խանգարում էին կանոնաւոր և խելացի տնտեսութեան: Գուցէ, եթէ խաղաղ ժամանակը աւելի երկարատև լինէր, գիւղացիական պարտքերը այնքան չկուտակէին, որովհետև օրէնսդրութիւնը կը կարողանար զբաղւել գիւղացիների պարտքերի խնդրով: Ի հարկէ, գիւղացու անբաւարար դրութիւնը ուղղակի և անպաշտան չէ ծագում արտաքոյ կարգի պատճառներից, ինչպէս պատերազմ

և այլն, այլ գլխավորապէս այն պայմանների կազմակերպութիւնից, որ երևան եկաւ 1861-ի օրէնսդրութեան զօրութեամբ: Պատերազմի տնտեսական հետեւանքները արտայայտւեցին բոլոր դասակարգերի վրայ: 1877—78-ի պատերազմից ծագող երևոյթներին ամենաշոշափելին այն էր, որ ժողովրդական արդիւնքները թանկացան: Եւ որովհետեւ գիւղացիները ազգաբնակչութեան իսկապէս ամենաուժեղ սպառող մասն են կազմում, հետեւաբար և արդիւնքների թանկութիւնը զգալի կերպով պիտի ազդէր նոցա ծախսերի վրայ, նոցա բիւջէի վրայ: Իսկ խանգարւած գիւղացիական բիւջէն չէր կարող ամեն տեսակ ծանր պարտաւորութիւնների բաւարարութիւն տալ, նամանաւանդ՝ արդիւնաբերութեան նպատողի դեր կատարել:

Ժողովրդական արդիւնքների թանկանալուց ընկել էր ուրեմն սուսաց զրամի գինը: Սորա արժողութիւնն ընկել էր ամենից շատ եւրոպական շուկաներում, ուր Ռուսիա ներմուծելիք արդիւնքները բարձր գնով պիտի գնէին: Շատաքանակ թղթադրամով Ռուսիան պէտք է ոսկէդրամ առնէր արտասահմանի արդիւնքները գնելու համար: Արիմի պատերազմի վերջից մինչև վերջին ռուս-թուրքական պատերազմը (1855—1877) ռուսաց թղթադրամի թէև գինը շատ չբարձրացաւ ոսկէդրամին հաւասարելու համար, բայց կարողացաւ հաստատ կէտի վրայ մնալ, այսինքն էլ չէր երերում, զգալի կերպով բարձրանալով և ընկնելով, այնպէս որ Ռուսիայի դրսի և ներսի առևտուրը ենթակայ չէր շփոթող և փնտնեւոր տուող պայմանների: Իրերի այս դրութեան մէջ, յանկարծ, յայտնուում է 1877 թ. արևելեան պատերազմը: Յայտնի բան է՝ զրամի պէսքը պատերազմական ծախսերի համար չափազանց զգալի էր: Ռուսաց պետութիւնը ստիպւած եղաւ մեծ քանակութեամբ թղթ-թաղթամ գուրս հանել: Սա մի միջոց էր, որ արդարեւ տագնապալից օրերին մեծ-օգնութիւն հասցրաւ, բայց իր հետեւանքներով տնտեսական գործերի մէջ ոչ-ցանկալի փոփոխութիւն մտցրաւ: Նոյն այդ միջոցի փնտսակար հետեւանքները դեռևս մինչև այսօր տեսում են և շատ դժւար է թուում չոցա խափանելը: Եւ այդ է գլխավոր պատճառը, որ այսօր խնդիր է յարուցւած ռուսաց զրամի արժէքը վերանորոգել, այսինքն նրան այնպիսի հաստատուն հիմքի վրայ դնել, որ ժողովրդական տնտեսութիւնը ենթակայ չլինի զրամի



արժէքի յաճախ երերուն և փնասող փոփոխութեան: Ռուսաց մէկ ռուբլի թղթադրամի գինը, որի անւանական արժէքը 4 Ֆրանկ ոսկու է հաւասար, վերջին պատերազմից յետոյ ընկաւ մինչև 2 Ֆրանկ: Այսօր 1 ռուբլի թղթադրամը հազիւ հասել է 2 Ֆրանկ 70) սանտիմի՝ ոսկով: Ուրեմն 20 տարւոյ ժամանակամիջոցում, մէկ ռուբլի թղթադրամը բարձրացել է միայն այդ աստիճան, մինչդեռ նա կը կարողանար իր անւանական-օրինական ոսկեգնին մօտենալ, եթէ ռուս ժողովրդական տնտեսութիւնը ապաստին համեմատ յառաջադէմ քայլեր արած լինէր:

Արդ, ինչո՞ւն է կայանում այն մեծ փնասը, որ յառաջանում է դրամական արժէքի ընկնելուց: Եւրոպական շուկաներում արդիւնքները փոխանակում են ոսկեդրամով: Այն երկիրը, որ առևտրական կապեր ունի եւրոպական շուկաների հետ, նա պիտի առևտրական դործերը հաւասարակշռի ոսկով: Ռուսիան այն երկիրներիցն է, որ եւրոպական արդիւնքների պէտք ունի: Եւրոպայում արդիւնքներ գնելիս, Ռուսիան վճարում է ոսկով. բայց որովհետեւ թղթադրամի գինը ընկած է, Ռուսիան հարկադրած է աւելի թղթադրամ տալ ոսկեդրամի փոխարէն, որով արդիւնքները գնահատուած են, կամ, որ միևնույն է, նա պէտք է իր աժան թղթադրամով թանկ ոսկեդրամ առնի, որ իր վճարումները կատարի: Իսկ թղթադրամի գնի անկումը նրանից է ծագում, որ պետութիւնը իր պէտքերի համար աւելի թղթադրամ է դուրս հանել, քան ժողովրդական տնտեսութիւնը պահանջում է: Վահանջից աւելի թղթադրամը նոյնն է, թէ մի փոխառութիւն, որ պիտի հանգցնելի, ծածկելի, ապա թէ ո՞չ դրամի անւանական արժէքը ընկած կը մնայ, ինչպէս որ այսօր է, և այն էլ՝ վաղուց: Ռուսիան չի կարող բոլորովին հրաժարել արտասահմանեան արդիւնքներից, որոնցից մեծ մասը ինքը չէ արդիւնաբերում կամ քիչ է արդիւնաբերում՝ յաջող պահանքների բացակայութեան պատճառով: Թանկ ոսկեդրամով գնած արդիւնքները, ի հարկէ, թանկ են վաճառւում ռուսաց շուկաներում: Ռուս ազգաբնակչութիւնը, որ սպառում է այդ արդիւնքները, տալիս է նոյա համար իր եկամտի շօշափելի մասը և այնուհետեւ, քանի որ նորա ապրուստը մասամբ թանկանում է, նա այլևս չէ կարողանում իր հարկային պարտաւորութիւնները բաւարար չափով կատարել: Այն փնասը,



որ ժողովուրդն է կրում ընկած դրամի արժէքից, հասնում է նաև պետութեան: Ինչպէս յայտնի է, պետութիւնները մեծամեծ արտաքին փոխառութիւններ են անում, որոնք ոսկով պիտի վճարւին: Բայց թղթադրամ ունեցող պետութիւնները, նրանց ընկած արժէքի շնորհիւ, պարտքերը յետ վճարելիս, մեծամեծ ծախսերի մէջ են ընկնում, ծախսեր, որոնց ծածկելու համար պետական բիջէն պիտի հոգայ. բիջէն էլ, հարկաւ, կազմւում է մուտքերից, որոնց մէջ հարկերը և մաքսերը խոշոր տեղ են բռնում, անշուշտ ծանրանալով դարձեալ սպառող ժողովրդի վրայ: Իրերի այսպիսի դրութիւնից ծագող հետեանքների մասին գործնական տնտեսագիտութիւնը բազմիցս աղաղակել է և նոցա առաջն առնելու համար մասամբ գործնական միջոցներ մշակել և առաջարկել:

Ո՞րն է այն գլխաւոր գործնական միջոցը, որ կոչւած է համարւում բուժել թղթադրամ ունեցող երկիրները նկարագրած տնտեսական փոստերից: Մեր կապիտալիստական դարում սովորական է պահանջել, որ ժողովրդական հարստութիւնը աւելանայ, ճոխանայ: Թղթադրամ ունեցող երկիրներն ևս յենւում են գլխաւորապէս այդ պահանջի վրայ, ցանկանալով ազատել թղթադրամից: Բայց ժողովրդական հարստութիւնը աւելացնելու համար, մի երկիր անհրաժեշտօրէն պէտք էւնի եղածից աւելի տնտեսական նպատակ որ պայմանների, որոնք կ'ընդարձակէին նորա արդիւնաբերութիւնը: Կապիտալիստական տնտեսութեան պահանջած այդ պայմանները նոքա են, որոնք արտաշնչուում են թէ նրանով, որ կապիտալները բազմանում են և ապա ստանում շահաւէտ գործադրութիւն, և թէ նրանով, որ աշխատանքի արդիւնաւէտութիւնը աւելանում է: Պարզ է, որ այս պայմանների հետ միշտ կապւած է լինում երկրի առևտուրը շատ օգտաւէտ դարձնելու մեծ ցանկութիւնը: Արդհետև խօսքս Ռուսիային է վերաբերում, հետաքրքիր է իմանալ՝ թէ ո՞ր աստիճան մի կողմից կապիտալիզմի այդ պահանջները բաւարարութիւն են ստացել, և թէ, միւս կողմից, ի՞նչ օգուտներ են ստացւել ժողովրդական շահերի տեսակէտից չիշած սկզբունքների գործադրութիւնից: Մեծ մասամբ իրողւած այդ սկզբունքներից, Ռուսիան 1878 թ.-ին սկսեց սահմանել հովանաւորող մաքսեր ներմուծող ապրանքների համար: Նոքա, որոնք արտասահմանից արդիւնք՝

ներ են ներմուծում, վճարում են մաքս ոսկով, որի գինը [թղթա-  
դրամից շատ բարձր է: Այնպէս որ, ռուսաց շուկաներում արտա-  
սահմանեան արդիւնքները, չնայած իրանց անվիճելի գերազանց  
յատկութեան, չէին կարողանում մրցել, որովհետեւ [թանկութեան  
պատճառով չէին գտնում սպառող ժողովրդական խաւեր:

Նստանանք մի քանի պերճախօս օրինակներով: 1881—84 [թ.  
[թէ] ներմուծւած էր 51.7 միլլիոն ռուբլու, որ աւել էր պիտու-  
թեան 14.9 միլլիոն ռ. մուտք՝ ոսկով վճարւած մաքսից: 1890—  
94 [թ-ին] ներմուծւել էր [թէ] 1).8 միլ. ռուբլու, որից մաքս էր  
ստացւած ոսկով 17 միլ. ռուբլի: Մի պուզ [թէ]ից 1876 [թ-ին]  
վերցնում էին [թղթադրամով 15 ռուբլի 40 կոպէկ, իսկ 1885 [թ.  
արդէն 21 ռուբ. ոսկով մաքս էր դրւած մի պուզ [թէ]ի վրայ <sup>1)</sup>):  
Թէլ մի ժողովրդական պիտոյք է, որ Ռուսիան չէ արտադրում: Այս  
արդիւնքի սպառման քանակութիւնը Ռուսիայում կիսով չափ պա-  
կասել է, որովհետեւ նորա գինը բարձրացել է. մինչդեռ պետական  
գանձարանի համար նա դարձել է մուտքի նշանաւոր աղբիւր: Քիչ է  
սպառւում Ռուսիան նոյնպէս շաքար, որ ինքն է արդիւնաբերում:  
Նաքարի արդիւնաբերութիւնը Ռուսիայում արաոնեալ դրութեան  
մէջ է գտնուում: Ներկայումս մի պուզ շաքարի վրայ մաքս է դրւած  
4 ռ. ոսկով, իսկ մի պուզ շաքարաւազի վրայ՝ 3 ռ. ոսկով:  
Նաքարի արդիւնաբերութեան այսօրինակ հովանաւորութիւնը ար-  
դելում է արտասահմանեան շաքարի ներմուծումը և բոլորովին ապա-  
հովում արդիւնքը արտաքին մրցումից: Յայտնի է, որ մի պուզ  
շաքարի վրայ այժմս 1 ռ. 75 կ. հարկ է դրւած (աքցիզ): Նրբ  
ռուս արդիւնաբերողները շաքար են արտահանում, նոքա այդ  
տուրքը չեն վճարում, մինչդեռ ռուս սպառողը այդ տուրքը տա-  
լով, աւելի [թանկ է տանում իր երկրի շաքարը, քան ռուս շա-  
քարի արտասահմանեան սպառողը: Ն[թ]է նոյն իսկ միայն ռուսների  
արդիւնաբերած բոլոր շաքարը երկրի շուկաներում կուտակւէր,  
դուցէ արդիւնքի գինը պակասէր յօգուտ ռուս սպառողների: Բայց  
բանը նրանումն է, որ օրէնքով շաքարի քանակութիւնը ներքին գոր-

<sup>1)</sup> Вѣстникъ Финансовъ и промышленности. Апрель 1893 г. стр.  
201—202.



Ծածութեան համար որոշուած է 25 միլ. պուլ: Իսկ մնացորդ արդիւնաբերւածի մէկ մասը արտահանուում է, միւս մասն էլ պահուում է իբրեւ անձեռնմխելի պաշար, օրէնքի նոր կարգադրութեան սպասելով, որ կ'արտօնի դարձեալ ներքին գործածութեան համար շուկայ դուրս բերել, եթէ շաքարի սակաւութիւն է զգացուում և գները այդ պատճառով բարձրացել են, կամ արտահանել (օրինակ Պարսկաստան), եթէ արտաքին շուկաները այդ կը պահանջեն: 1881 թ. մի պուլ արտադրած շաքարի վրայ 81 կոպէկ աքցիզ էր դրւած, որ աւել էր պետութեան 14.8 միլ. ռուբլի մուտք. 1895-ին աքցիզը մի պուլ շաքարի վրայ լինելով 1 ռ. 75 կոպ., աւել էր մուտք 44 միլ. ռուբլի: Անկասկած, 1884-ից մինչ 1895 թ. շաքարի արդիւնաբերութիւնը տեխնիկայէս կատարելագործուել է: Այս իրողութեան շնորհիւ, շաքարի արդիւնաբերութեան ծախսերը պակասում են և սպառող ժողովուրդը ըստ երևոյթին պէտք է օգուէր գորանից: Այսպէս 1884—86 թ. մի պուլ շաքարը նստում էր ռուս գործարանատիրոջ մինչև 3 ռ. 60 կոպ. (առանց աքցիզի), իսկ 1890-ական թւերին մի պուլ շաքար արդիւնաբերելու ծախսը հասնում է մինչև մօտ 2 ռ. 22 կոպ.: Սպառող ժողովուրդը սակայն տեխնիկական կատարելագործութեան այդ հետեանքից չկարողացաւ օգուել, որովհետեւ բարձրացող աքցիզը բարձր էր պահում շաքարի գինը: Այսօր Ռուսիայում մի հոգի դործ է ածում տարեկան միջին թւով  $3\frac{2}{3}$  ֆունտ շաքար, մինչդեռ Եւրոպայում ամեն մի բնակչի վրայ ընկնում է տարեկան միջին թւով 28-ից մինչ 81 ֆունտ շաքար: 1886-ից մինչ 1895 թ. շաքարի ներքին գործածութիւնը Ռուսիայում աւելացել էր  $\frac{1}{14}$  տոկոսով, նոյն ժամանակամիջոցում շաքարի գործածութիւնը աւելացել էր Եւրոպայում  $115\frac{0}{10}$  և  $255\frac{0}{10}$ : Մի գեսետին ճակնդեղի (որից շաքարի քաղցր հիւթն են ստանում) տնկարանը աւելացրել էր իր արդիւնքը Ռուսիայում 81 պուլից 1882 թ. մինչև 122 պուլ 1894 թ., իսկ այդ 12 տարւոյ ընթացքում Ֆրանսիայում և Գերմանիայում ճակնդեղի արդիւնաբերութիւնը բարձրացել էր մի գեսետինի վրայ 130-պուլից մինչև 276 պուլ <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Русское богатство, декабрь 1895 г.



Շաքարի արդիւնաբերութեան նկատմամբ բոլոր չիշած թւերը մեզ ցոյց են տալիս, որ թէև շաքարի արդիւնաբերութեան և սորա ժողովրդական գործածութեան աճումը համեմատաբար ուրիշ երկիրների հետ շատ քիչ է, յամենայն դէպս նա հովանաւորւած կապիտալիզմին է տւել մեծամեծ օգուտներ, չինացելով ժողովրդական բիւջէն, և խոշոր մուտք բացել պետական գանձարանի համար:

Ժողովրդական արդիւնքների շարքում, որոնք մեծ մուտք են տալիս պետութեան, համարում է, ի միջից այլոց, սպիրտը: 1871—1876 թ. միջին թուով արդիւնաբերւած էր անջրախառն սպիրտ 31.294.000 միլ. վեդրո, 1886—1881 թ. այդ միջին թիւը հասել էր 32.155.000 միլ. վեդրոյի: Առաջին վեց տարում արտահանւել էր 670.000 վեդրո, իսկ մնացել էր ներքին գործածութեան համար 30.<sup>8</sup> միլ. վեդրո, որից մարդագլուխ ընկնում էր 0.<sup>35</sup> վեդրո: Յաջորդ վեց տարւոյ մէջ (1886—1891 թ.) արտահանւել էր 5.237.000 միլ. վեդրո և մնացել էր երկրի համար 26.<sup>9</sup> միլ., որից մարդագլուխ ընկնում էր 0.<sup>24</sup> վեդրո <sup>1)</sup>: 60-ական թւերին մի վեդրո անջրախառն սպիրտ նստում էր գործարանին 2 ռուբլի 60 կոպ : 1891 թ. նպաստաւոր արդիւնաբերութեան պայմանները իջեցրին մի վեդրոի արժէքը մինչ 1 ռ. 50 կոպէկի <sup>2)</sup>: Սպիրտի այս արժանութիւնը պէտք է իսկապէս հասնէր սպառողի օգտին, բայց անջուր սպիրտի նորագոյն հարկը սահմանափակեց սպառողի օգուտը: 1871—76 թ. անջուր սպիրտի մի աստիճանը (գրադուս) 6 կոպէկ հարկ էր տալիս. 1887—1891 թ. այդ հարկը բարձրացաւ մինչև 9<sup>1</sup>/<sub>4</sub> կ: Վեց կոպէկանոց հարկով պետութիւնը ստացել էր 164 միլլ. ռուբ., 9<sup>1</sup>/<sub>4</sub> կոպէկանոց հարկաւորութեամբ մուտքը եղել էր 230 միլլ. ռ. <sup>3)</sup>: Այս թւերը քննելիս՝ ստացւում է այն եզրակացութիւնը, որ սպիրտի արդիւնաբերութիւնը քանակով ընդարձակւել է: Նա էժանացել է աշխատանքի արդիւնաւէտութեան պատճառով, որի ապացոյցն է 1886—91 թ. մեծաքանակ արտահանումն, երբ ռուսաց սպիրտը

<sup>1)</sup> Фабрично-заводская промышленность въ Россіи, С. П. Б. 1893 г. Издание министерства финансовъ для выставки Чикаго.

<sup>2)</sup> „Новое слово“, февраль 1896 г.

<sup>3)</sup> „Фабрично-заводская промышленность“ գրքի Винокурение Իօլ-ւածը:

արտասահմանում իր էթանութեան պատճառով էլ չէր հանդիպում մրցման ծանր պայմաններին: Եւ այդ մեծ արդիւնաբերութիւնը ստացւեց զեռ. աւելի փոքր թւով սպիրտի գործարաններից, քանի որ դոցա թիւը 1871—76 թ. եղել է 3.460, իսկ 1886-ից մինչև 1891 թ. իջաւ 2.107-ի, այսինքն 39 տոկոսով պակասել էր սպիրտի գործարանների թիւը: Լոկ պետական տնտեսական տեսակէտից արդիւնաբերութեան այսպիսի ընթացքը կարող է բաւարար համարուել, բայց ժողովրդական-հասարակական տեսակէտից այդ երևոյթը վճռողական նշան չէ երկրի հարստութեան. քանի որ փաժամանակ սպիրտի գործածութիւնը իրա երկրի մէջ, որպէս և շատ ուրիշ արդիւնքների (օրինակ շաքարի, թէյի, որպէս վերը տեսանք) գործածութիւնը պակասել էր: Եւ ինչու? Այն պարզ պատճառով որ ժողովուրդը աղքատացել էր և կամ, խօսելով տնտեսադիտական լեզուով՝ նա կորցրել էր վճարելու ընդունակութիւնը:

Ռուսիան, իբրեւ գլխաւորապէս հում նիւթեր արտադրող երկիր, պէտք ունի իր հողագործութեան համար կատարելագործւած մեքենաների: Այս կարիքը լրացւում էր մեծ քանակութեամբ արտասահմանեան մեքենաներով: Մինչև 1885 թ. մաքս չկար դրւած հողագործական մեքենաների վրայ: Այսու տմենայնիւ մեքենաների պահանջը այնքան մեծ էր, որ չնայած սոցա խոշոր ներմուծմանը, Ռուսիայում\* սկսեցին հիմնել հողագործական մեքենաներ պատրաստող գործարաններ: 50-ական թւականներին կային 3—4 գործարան: 1862 թ. նոցա թիւը բարձրացաւ 64, իսկ 1885 թ. հաշւում էին այդպիսի գործարաններ մինչև 435: Միաժամանակ 1869-ից մինչ 1884 թ. հողագործական մեքենաների ներմուծումը շատ էր աւելացել: Այսպէս 1869—79 թ-ին տարեկան ներմուծումը եղել էր միջին թւով 259.000 պուդ, իսկ 1884 թ. միայն մի տարում մեքենաների ներմուծումը հասել էր մօտ 1.026.800 պուդի: Ինչպէս երևում է, մաքսի բացակայութիւնը մինչև 1885 թ. բնաւ չէ խանգարել ազգային զիւղատնտեսական մեքենագործութեանը, որ առանց արհեստական պաշտպանութեան ինքնաբերաբար զարգանալիս է եղիլ: Բայց և այնպէս հովանաւորող սիստեմի տիրապետութեան ներքոյ, որ իր օրոշեալ շահերն ունէր աչքի առաջ, մաքս դրւեց 1885 թ. ներմուծող մեքենաների ամեն մի պուդի վրայ



50 կոպէկ ոսկով: Մինչև 1894 թ. այս մաքսը անընդհատ բարձրանում է և հասնում 85 կոպէկի ոսկով մի պուզի համար: Մաքս մտցնելուց յետոյ՝ մեքենաների տարեկան ներմուծումը արտասահմանից ընկնում է մինչև 259.120 պուզի: Ինչո՞ւ արտաշայտեց հովանաւորող մաքսի հետեանքը: Յօդու առևտական մեքենագործութեան՝ արտասահմանեան մրցումը նւաղեց: Ռուսական մեքենաների զները հետեաբար բարձր էին մնում, և երկրագործները նոցա թանկ գներով առնելով՝ անկարող էին իրանց արդիւնաբերութեան ծախսերը պակսեցնել, այնպէս որ աւելացած ծախսերով ստացած երկրագործական արդիւնքը գնալով գէպի արտասահմանեան շուկաներ՝ չէր դիմանում սովորական և հնդկական աժան արդիւնքների մրցումին, և գները շատ ընկնում էին և ի հարկէ նւաղեցնում երկրագործների սպասելիք մուտքը: Մենք չենք պնդում, որ թանկ մեքենաները արդիւնքների թանկութեանը նպաստող միակ պատճառն են. բաց նոքա բռնում են նշանաւոր տեղ գիւղացու ծախսերի մէջ և նսեմացնում առև երկրագործական արդիւնքների մրցման ոյժը: Այս զէպքում առև կապիտալիստ գործարանատէրը շահւում է, իսկ երկրագործ գիւղացին կորցնում է: Սա ենթադրութիւն է, այլ մի անդրդելի ֆակտ է, որը գիւղացիական խնդրին սուր կերպարանք էր տալիս:

Խնդրի այս ծանրակշիռ. ազդեցութեան տակ՝ Ռուսիան 1894 թ. Կերմանիայի և Ֆրանսիայի հետ առևտրական դաշինքներ կապեց: Սոցա հիման վրայ Ռուսիան, ի միջի այլոց և երկրագործական մեքենաների համար, մաքսը պակսեցրեց 85 կոպէկից մինչև նախկին 50 կոպէկը ոսկով մի պուզի վրայ: Մաքսը պակսեցնելու օգուտը շատ շուտով էր երկրագործութեան համար, որ արդէն 1894 թ. սկսեց ստանալ արտասահմանից մէկ միլլիօն պուզից աւելի մեքենաներ:

Կապիտալիստական ձևի հովանաւորութիւնը վայելում են շատ տարիշ առև արդիւնքներ. մենք աւելորդ ենք համարում մի առ մի յիշել շուքենալով ընթերցողին յոգնեցնել թւերով: Մեր առաջադրած նպատակի համար յիշածները արդէն բաւական են ցոյց տալու համար թէ ինչ ուղղութեամբ հովանաւորութիւնը նպաստել է արդիւնաբերութեան զարգացմանը: Այդ է կարող ուրանալ, որ 25 տարեայ ժամանակամիջոցում Ռուսիայի արդիւնաբե-



րութիւնը զարգացել է. բայց Ռուսիայի արդիւնաբերական յառաջ-  
դիմութիւնը յամենայն դէպս եղել է աննշան, համեմատելով Արե-  
ւելեան Եւրոպայի հետ: Եւրոպան էլ նոյն 25 տարւայ ընթացքում  
չափազանց յառաջդիմել և կատարելագործւել է: Չէ որ չնայած  
հովանաւորող և արգելող մաքսերին՝ Ռուսիան զարձեւալ խոշոր քա-  
նակութեամբ եւրոպական արդիւնքներով է իւր պաշարը լրացնում:  
Ներմուծումն կազմում էր 1886 թ. մինչև 1892 թ. 80 միլ. ռուբլի  
տարեկան, բայց արդէն 1894 թ. ներմուծումն հասել էր 137 միլիոն  
ռուբլու տարեկան:

(Վերջը չաջորդ անգամ)

## Գ Ր Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

ՊԹՇԵԱՆՅ, Պերճ.—Նա (պատկեր). 1896 թ. Թիֆլիս. 44 էջ.  
գինն է 20 կոպ.

Սա մի գաղթական առճկահալի պատմութիւն է, երբեմն չափոնի և հարուստ մի մարդու, որ ծանր ու դաժան հանգամանքներից ստիպւած փախչում է մեր կողմերը և, սովոր չլինելով ձեռք մեկնելու, մի քանի օր քաղցած է մնում իր թռուս հետ, որ կազմում է ծերունի գաղթականի ամբողջ մխիթարութիւնն ու չուսերի առարկան։ Ծերունին թռուսը գտնում է իր խրճիթում քաղցից մեռած ալն ժամանակ, երբ երկու սրտացաւ ուսուցիչների տւած փողով հաց է ստնում և չտապով տանում է տուն, իր թռուսը սովամահ լինելուց ազատելու համար։ Թռուս մահից փոսդ նա ցնորում է և ըստ երեւոյթին գետն ընկնում՝ խեղդում։ Այս է պատկերի բովանդակութիւնը։

Պռօջեանին քիչ է չաջողւել կենդանի և ամբողջական իրական բնաւորութիւններ ստեղծել։ չի չաջողւել նրան և իր գրական ամբողջ գործունէութեան ընթացքում մի կատարելապէս գեղարւեստական վէպ

կամ վէպիկ ստեղծել։ ալդ երեւոյթն իր պատճառներն ունի, որոնց մասին մենք այստեղ չենք խօսի։ Նրա գրածներում չատ են պատահում բոլորովին աւելորդ կտորներ և երկարաբանութիւններ, երկարաբանութիւնը Պռօջեանի գրական բնաւորութեան խոշոր չափութիւններից մէկն է և չատ է փնասել նրա գրւածքների նոյն խի գրական արժանիքներին։ Այս նոր «Նա» պատկերումն ևս նրա զուրս բերած անձնաւորութիւնները բաւականաչափ պարզ ու որոշ չեն։ մանաւանդ երկու ուսուցիչները, որոնք մեղ վրայ կենդանի մարդկանց ստեղծների տը պաւորութիւն անգամ չարին։ Այս պատկերն ևս լի է երկարաբանութեամբ և գրւած է մի տարօրինակ լեզուով։

Սենք կ'ուզէինք ընթերցողի ուշադրութիւնը դարձնել հետեւալի վրայ։ հեղինակը ճկարագրելով թէ ինչ դասի մարդիկ և սրտեղ էին կանգնած ջրօրհնաց օրը վանքի



մայր Լիեդեցում և նրա գաւթում, շարունակում է. «Իսկ հետումը՝ ծառուկներին մէջ շրջողները՝ իրանց գլուխն ինտել(ի)դենտ համարող «ղազափարական» երիտասարդութիւնն է՝ իրանց ասելով՝ աւուր պատշաճի հրատուպ մտքերի փոխանակութեամբ համակւած»<sup>1)</sup>։ Այս ծաղրական տողերը, ուղղած աչժմ գործնական կեանքում գտնւող երիտասարդութեան, շատ էլ լաւ լուսով չեն լուստւում մեր պատկառելի գրական գործչին։ Աւժմեան երիտասարդութիւնը աչն սերունդի թոռն է, որին պատկանում է ինքը Պռօչեանը և աղպիսի անխոր վերաբերմունք դէպի աչն երիտասարդութիւնը, որ շարունակում է հին սերունդի սկսած գործը, թէև դնում է ալ շաւղով և ուրիշ, աւելի լաչն նպատակների ձգտելով, մենք չէինք կարող սպասել մեր լարգելի հեղինակից։ Ճիշտ է, աղ երիտասարդութիւնը շատ անմխիթար կողմեր ունի, բայց նա աչսպէս թէ աչնպէս դեր է խաղում ընդհանուրի լառաջդիմութեան գործում և աղպիսի վերաբերմունք դէպի նա անտեղի է և մեծ չափով անարդար. մանաւանդ որ պարզ կերպով չի ասւած թէ ուր է ուղղւած սլաքը, և մենք աղ իրաւունք ունենք վերադրելու աչժմ գործնական կեանքում դեր խաղացող, թէկուզ հէնց Թիֆլիսի երիտասարդութեան ընդհանրապէս։

Մի էջ առաջ կարդում ենք աչսպիսի տողեր. «Մի օր կար, որ հաչքը խտոնեալ չէր համարւում նա,

ով որ Զատիկ և Ծննդեան ճրագալոցին չճաշակէր։ Մաքուր հաչութեան մէջ ալօթ ևս նուրն է»<sup>2)</sup>։ Շատ պարզ է ուրեմն, որ ուլ Զատիկն և Ծննդեան ճրագալոցին չի ճաշակւում, նա մաքուր հաչ չէ։ Թողէք, ի սէր Աստուծոյ, ձեր մաքուր և անմաքուր հաչութիւնը, մարդկանց աղպէս չեն դնահատում, աղպէս հօ մաքուր հաչ դուրս կը գալ «ճաշակող» վաչխառուն և անմաքուր հաչ թէկուզ, օրինակ, նոյն ինքը Պռօչեանը, եթէ նա չհաղորդէ իր ժամանակին... Եւ վերջապէս ինչ նշանակութիւն ունի մաքուր կամ անմաքուր հաչ լինելը, երբ մարդ ինքը, ենթադրենք, փչացած է և կեղտոտ...։

Երբ ոտտիկանը բռնում է փախչող դաղթականին, որ վազելով շտապում էր հաց հասցնել իր թոռան և որին, աղ վազելու համար, գողի տեղ էին դրել, Պօղոսն ու Պետրոսը (աչսինքն մեր վերն ալեւարկած անտալոր ուտուցիչները) դիմում են իրանց ծանօթ մի ոտտիկանական պաշտօնեալի, իրանց հօրաշխաւորութեան տակ են առնում դաղթականին և աղատում փորձանքից։ Աչս դէպքի առթիւ հեղինակն աչսպիսի հարց է դնում. «Չգիտեմ, արդեօք, լաւ արին Պետրոսն ու Պօղոսը...»։ Աչս հարցը մեղ շատ տարօրինակ է թւում Պռօչեանի բերանում։ Ի՞նչպէս թէ, չգիտեմ լաւ արին, թէ վատ։ Եթէ աղ հարցը տար որեւէ դեռ ևս չկազմակերպւած բնաւորութիւն, դեռ աչն ժամանակ էլ բաւականին զարմանալի կը լինէր. իսկ երկար տա-

<sup>1)</sup> էջ. 6. <sup>2)</sup> էջ. 5.



րիններ կհանքում ապրած և ծերութեանը մօտեցող մարդուց աղպրիսի բաներ լսել... Բնչ կ'ուղէք ասէք, բայց տարօրինակ է:

«Կույր ու կռնատ աշուղներն անգամ... իրանց չունգունների չարերը թրթռացնելով՝ երգում են...»<sup>1)</sup> Կույր աշուղներ կան. բայց կռնատ՝ մենք չենք տեսել, ոչ ոք էլ չի լինի տեսած. նույն իսկ ինքը՝ Պաօշեանը:

«Թիֆլիսի աշքերը սովոր են տեսնել տիեզերքի չորս կողմերից եկած ալցելուներ...»<sup>2)</sup> Աղպրիսի ալցելուներ էլ մենք չենք տեսել և ոչ ոք էլ չի լինի տեսած. աղպրիսի ալցելուներ չկան:

<sup>1)</sup> Էջ. 7.

<sup>2)</sup> Էջ. 8.

Գրքուկի գինը շատ թանկ է (44 փոքրիկ երես—20 կոպէկ!)<sup>3)</sup>:

Ն. Աղբալեան:

<sup>3)</sup> ...որ նշանակում է «շատ է-  
թան է» Թիֆլիսի Կենտրոնական  
գրադաճառանոցի համար, որի մօտ  
բացառապէս ծախում է գրքուկը.  
ալց գրադաճառանոցը, որ ներկա-  
չումն ամենալաւտին է Կովկասում,  
ունի գրքերի վաճառման նկատմամբ  
«տեսակէտներ», որոնք ոչ մի կերպ  
չեն կարող հաշուել ոչ գրքերի տա-  
րածման և ոչ հեղինակների ու գիրք  
առնել ցանկացողների օրինաւոր  
պահանջների հետ: Տես մեր առա-  
ջարկութիւնը գրադաճառութեան  
մասին Մուրճ 1896 թ. № 12 էջ  
1644.

Ծան. Խմբ.

ԳԱՐՇԻՆ, Վ.—Գոռող արմաւենի, թարգմ. Հ. Ա. 1895 թ.

Թիֆլիս, 20 էջ, գինը 5 կոպէկ:

«Ճանապարհորդ գորա», թարգմ. Հ. Ա. 1895 թ.,  
Թիֆլիս 12 էջ, գինը 3 կոպէկ:

Ռուս լաւագոյն գրողներից Գարշինի գրածներն են, որոնք հալերէն ամենից շատ են թարգմանւած. մենք ունենք նրա «Արջերը», «Չորս օրը», «Ազգանշանը», «Նկարիչները» (Մուրճում), «Գոռող Ազգէնը», «Ճանապարհորդ գորա» և «Գոռող արմաւենին» (ալս վերջինը երեք անգամ է թարգմանւած. Աղբալեանի, Մուրճում և, ալժմ Հ. Ա.-ի թարգմանութ., առանձին գրքուկով): Ալց երևութի

պատճառը զլխաւորապէս այն է, որ Գարշինի գրածները ծաւալով մանր բաներ են. իսկ մեզ մօտ մանր գրքուկները հնչաութեամբ են թարգմանւում և տպագրելու գէպքում՝ տարածւում: Միւս պատճառն էլ անշուշտ նրանց ներքին արժանիքն է:

Գարշինը ռուս գրականութեան մեջ պատուաւոր տեղ է լուծում, թէև նա թւով շատ քիչ բան արտադրեց՝ ընդամենը երկու փոքր հատոր (17

կտոր բան) և չատ քիչ ապրեց՝ 33 տարի: Վլխատուն աչն է, որ նա համարում է 70-ական թվականների լաւագոյն երիտասարդութեան ներկայացուցիչ: Ժամանակի գրական զօրավարները՝ Տոլստոյն ու Տուրգենեւը նրա վրայ չուրեք էին դնում: Տուրգենեւը, որ նոր գրողներից ոչ ոքի համարեա չէր հաւանում, միայն Վարչինի համար աւաց. «Այ՛, Վարչինն ուրիշ բան է, գուցէ նա մի բան գառնաց»: Նրա առաջին գրածքը՝ «Չորս օր պատերազմի զաշտում» ահադին ազմուկ հանեց և մեծ չաջողութիւն ունեցաւ: Այդ չաջողութիւնը երկու պատճառ ունէր. նախ՝ որ լոյս տեսաւ ռուս-առնկական պատերազմների ամենաթոշուգ ժամանակ և սառը ջուր մազեց ընթերցող հասարակութեան գլխին, և երկրորդ՝ որ գրածքը անվիճելի գրական արժանիքներ ունէր <sup>1)</sup>: Նրա ամենալաւ գրածքն է «Изъ воспоминаний рядового Иванова», որի թարգմանութիւնը ցանկալի կը լինէր ունեւալ: Վարչինը հիւանդ էր. նա բնածին մեղանքովիս ունէր, որ արդեւք էր լինում նրան բեղմնաւոր գրող գառնալ. ալդ չատկութիւնն իսկոյն աչքի է ընկնում, երբ կարդում էք նրա գրածները: Ալդ գրածներում աչնպիսի նուրբ վրձինով գծած հիւանդաբանական տեսարաններ կան, որ շատերը իրաւացի կերպով սպասում էին, թէ Վարչինը կարող է ապագայում իր ալդ շնորհքով երկրորդ

Գոստոնսկիդ գառնալ <sup>2)</sup>: Իհարկ է, ոչ ուղղութեամբ, քանի որ աչն մարդասիրական գաղափարները, որոնց նա ծառայում էր, նրա գրածներին տալիս են չառաջադիմական ուղղութեան տէր գրողի դոյն: Վարչինի գրածների մի մասը խրատական բովանդակութիւն ունի: Ալդ տեսակներիցն են և մեր գրախօսելիք երկու գրքովները. նրանք ալեգորիաներ ալլաբանութիւններ են:

«Գոռոգ արմաւենին» մի հիանալի ալլաբանութիւնէ, որ ցոյց է տալիս թէ ինչ վիճակի է ենթարկւում իդէալիստը, ինչպէս է նա հիասթափուում գործնական, իրական կեանքին երես առ երես հանդիպելիս և թէ ինչպէս են վառւում ընդունւած, հաստատւած և սրբագործւած կարգերը ամեն մի «երկաթի ձու ածող նոր հաւի» հետ, որ համարձակւում է ձեռք բարձրացնել նրանց վրայ, ձգտում է դուրս գալ նրանց ճնշմա՝ տակից, կուլ մղել նրանց դէմ: 60-ական թվականները ստեղծեցին մի շարք գաղափարով ոգեւորւած մարդիկ, որոնք բուռն հոսանքով և երևան եկան և սկսեցին ձգտել խորտակւած հին կարգերի աւերակների վրայ շինել նոր կեանքի շէմքը: Վրանց դուրս էր կոչել «ճարտական շղթաների» խորտակումը, որ, Նեկրասովի գեղեցիկ արտադրութեամբ, «մի ծալրով խիել էր մոժիկին, մի ծալրով տիրոջ» (Беринъ): Ալդ հոսանքը սկսեց տարածւել դէպի գաւառները և մտաւ գիւղերը: Ալդ ժամանակ ահա սկսեցին

<sup>1)</sup> С. Андреевскій. Вспоминанія рядового Иванова. В. Гаршинъ. Русск. мысль 1889 г. Июнь.

<sup>2)</sup> Նոյն տեղը:



մի շարք ծանր դրամաներ, ոգևորւած մարդիկ չկարողացան գործ ունենալ կեանքի հետ. երեակապածն աչն չէր ինչ տեսան. շատերը չուսախար եղան, շատերը հիասթափւեցին, շատերը փշրեցին, շատերը կորան... Հիասթափութիւնը 70-ական թւականների ուսումնարանները մէջ տիրապետող հոգեկան դրութիւնն էր: Անտարբեր չէր կարող մնալ դէպի ալդ խոշոր ու փոքր փառք ալդ սերունդի ամենազգալուն մարդկանցից մէկը՝ Գարշինը: Եւ ահա, «Գոռող արմաւենին» ալդ հոգեկան դրութեան արդիւնք պիտի համարել: Մենք ալդ ալլաբանութիւնը դնում ենք երկար ժամանակ ապրող դժբախտների շարքում. նրա թեման լաւիտեանական է. քանի կալ աշխարհը՝ կը լինեն և՛ հիասթափող իդէալիստներ, քանի կան «երկաթի ձու ածող նոր հաւեր», նրանց դէմ միշտ կանգնած կը լինեն հաստատւած և սրբագործւած հին կարգերը, և ինչպէս շատ առակներ չեն մեռնում երկար ժամանակ, աչնպէս էլ ալդ գրածքը՝ որ նոյնպէս առակի ձև ունի: Ալդ առակում գործող բոլոր առարկաները իրանց նշանակութիւնն ունին. ջերմանոցից սկսած մինչև «Գոռող արմաւենու» բնով փաթաթւող փոքրիկ խոտը <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Նկատենք, որ բոսանիկական ալդու բացատրութիւնը դրած էլ 3. սխալ է. «մշակել» խօսքն աչնտեղ անպարմար է, աւելի հարկաւոր է՝ ինամել: Յետո՛ւ «ծաղկանոց» չի կարելի գործ ածել ալդ գրքովում. ծաղկանոցում արմաւենիներ չեն պահուում:

«Ճանապարհորդ գորտը» նոյնպէս մի ալլաբանութիւն է, որ գորտի անձնաւորութեան մէջ ձեր առաջն է դնում մի մարդ, որը չը կարողանալով դիմանալ նոր մտքերի և գաղափարների հոսանքին, կրաւորապէս համակուում է նրանցով, աչնքն՝ միւս ու արին չի դարձնում իր ստացածները, ալ կալում նրանց, որովհետեւ...  
Съ либеральнаго направления больше барышъ

Чѣмъ съ мѣста квартальнаго... <sup>2)</sup> և հէնց որ անցնում է լալանի ժամանակամիջոց, իսկոյն նա վալը է ընկնում բարձրութիւնից նոյն «ցեխոտ ճահճը» որտեղից դուրս էր եկել: Ալդ տեսակ բնաւորութիւնների խոշոր և էական գծերը շատ սիրուն գուրս ևն հանւած: Երբ բազմաբնութիւն ևն հարաւը, գորտը հարցնում է «զգուշութիւնը ձեռքից բաց չը թողնելով».— Իսկ մոծակ և մեղաներ շատ կան աչնուղ, և դրական պատասխան ստանալով, մտածում է նրանց հետ թռչել դէպի հարաւ: Եւ ինչու չը թռչել, քանի որ համ դէպի հարաւ թռչող կը համարուես, համ էլ «մոծակներ ու մեղաներ» անպակաս և առատութեամբ կ'ունենաս... Մեր տեսակէտն աչքի առաջ ունենալով, ընթերցողն ինքը կարող է նկատել գորտի բնաւորութեան միւս գծերն ևս. մի քանի անորոշութիւններ թող չը շփոթեցնեն նրան. ալդ հէքեաթը, և թէ չենք սխալում, Գարշինի վերջին գործն է և մի քիչ լաւ չի մշա-

<sup>2)</sup> Աւելի շատ օգուտ կալ ալլաբանութիւն ուղղութիւնից, քան թաղապետի պաշտօնից:



կած: Մենք խորհուրդ ենք տալիս ձեռք բերել երկու գրքովն էլ: Թէն Նրանք չեն արտալատում Վարչինի գրածքների ոգին, բայց այս դէպքում, չեղածից եղածը լաւ է:

Երկու գրքովի թարգմանութիւնն էլ անբաւարար է: Ամեն թարգմանութեան արժանիքը ճշտութիւնն է, «եթէ թարգմանելիք գիրքը բանաստեղծութիւն չէ. ճշտութեան հետ ոգին» պահպանելը՝ եթէ թարգմանելիք գիրքը բանաստեղծութիւն է, (ընդարձակ մտքով առած՝ վէպ, դրամա, ողբերգութիւն և այլն): Ոգին պահպանել, նշանակում է աչնպէս թարգմանել, որ կարողալիս մարդ կարծի թէ քնադիրն է կարդում. էլ չենք ասում՝ որ լեզուն պիտի կատարեալ հալերէն լինի, եթէ մեր լեզուով է թարգմանում: Գծրախտաբար, մեր թարգմանիչներն ամենամեծ մասի հետ, ալը երկու գրքովիների թարգմանիչն էլ (Հ. Ա.) ոչ առաջինին արժանիքն ունի, ոչ երկրորդը: Մեր թարգմանիչներին մինք խորհուրդ կը տալինք միշտ չիչել ժողովուրդ աչ խօսքերը. «Արձակի (проза) թարգմանիչը ստուկ է, իսկ բանաստեղծութեան չ՝ մրցակից»:

Երկու գրքովին էլ հրատարակել է Թ. Հ. Հրատ. Ընկերութիւնը:  
Ն. Աղբալեանց:

P. S. Մի նկատողութիւն Հրատարակչ. Ընկ. «Ճանապարհորդ գործի» էջ 14. կարգում ենք. «1895 թ. ընթացքում լուս են տեսել հետեւալ աշխատութիւնները»՝ անմիջապէս աչ տողերի տակ՝ «ընկերութեան հրատարակութիւնները վաճառում են...» և ալն: Աւր են սակալն գըրքերի անունները... Նոյն գըրքովի էջ 15. տպած է երկու պալման՝ ընկերութեան ինքնուրոյն և թարգմանական աշխատութիւններ առաջարկողների համար, և անմիջապէս գրանց տակ՝ «ընկերութեան գրասենեակում վաճառում են հետեւալ նւիրած գրքերը՝ նոյն պալմաններով». ապա՝ գրքերի անուններ: Ալդ ինչ «նոյն պալմաններ» են, չէք կարող իմանալ: Յայտարարութեան ալդ մասը խմբագրական մասնաժողովի կողմից է, և աչնտեղ ոչ մի պալման չը կալ գրքեր առնելու համար: Ալդպիսի անհոգութիւն մի ընկերութեան կողմից աններելի է:

Ն. Ա.

ԴԻԿԿԵՆՍ, Զ.—«Վերադարձած յանցաւորը». պատմւածք. 1896 թ. Թիֆլիս. 24-էջ. գինը 8 կոպ.

Զ. Գիկկենսը անդլիական շատ չալանի և շատ սիւլւած հեղինակներից մէկն է. նա ոչ միաչն չալանի է Անգլիալում, ալ և ամբողջ աշխարհում, Լեդ.

Բելլամին իր «Հարիւր տարի ցտոց» սոցիալական վէպում, երեւալութեամբ տակդեղով և նկարագրելով մի դար չես ոչ գալիք հասարակական

կազմակերպութիւնը և մարդկանց, ենթադրում է, որ աչն ժամանակ էլ Դիկկինսը սիրած հեղինակներից մէկն է լինելու: Այս ցույց է Քալիսթէն Դրաւի հոգեւորականները, որ նրանց համար մարգարէանում են, թէ հարիւր տարի չետոյ էլ նրանք պիտի ընթերցանութեան սիրելի նիւթ լինեն՝ ինչպէս Շէքսպիրի դրամները: Մենք նրա մասին գեւառութիւններ անենք աւելի երկար խօսելու, երբ լոյս կը տեսնի նրա «Կալիսթ Կոպերնիկը» նշանաւոր վէպի թարգմանութիւնը, որ հրատարակելու է Թիֆլիս, Հայ, Հրատ. ընկերութիւնը: Մասնաւորինք մեր խօսքը մեր առաջ դրած փոքրիկ պատմածքի մասին:

Ահա նրա կարճ բովանդակութիւնը: Քահանան պատմում է հեղինակին մի ընտանիքի մասին, որ քաղկայած է երեք հոգուց. հայր, մայր և տղայ որդի՝ Էդմոնդսը: Ընտանիքի մայրը հեղ, համբերատար, բարի, ջնասերանդ և իր որդուն անսահման սիրով կին է. իսկ հայրը կոպիտ, արեւոյդ, վաղրինի, ծուլ և անպիտան մարդ է, որ ապրում է իր կնոջ աշխատանքով: Ամուսինը լաճախ ծանր կերպով դանահարում է իր կնոջ, բայց նա համբերում և տանում է ամեն մի նեղութիւն իր որդու և երբեմն սիրած ամուսնու համար: Մի ընտանիք, ուր խանգարւած է նորամալ կեանքը, երեսպալի սկզբնական տարիների դաստիարակութեան համար լաւ միջավայր չէ. աղապիսի ընտանիքներից չեն կարողանում դուրս գալ կարգին մարդիկ: Եթէ նա, ամուսնանդ, աղքատ

է, նիւթական նեղ կացութեան մ'ջ է: Քահանայի պատմած ընտանիքը աղքատներից է: Էդմոնդսը ստիպւած լինելով համարեա միշտ հօր ձեռքը չնկնելու համար հարկանների տանը թաղնել և ոչինչ ուրախուիլի բան չգտնելով տանը, դուրս է գալիս փողոց ու սկսում փողոցի կեանքով ապրել, որը, վերջ ի վերջոյ, նրան հասցնում է բանտի և տառնուշորսամեալ աքսորի: Մայրը իր որդուն չի թողնում նախ իսկ աչն ժամանակ, երբ բոլորը նրանից, որպէս լանցաւորից և սրիկալից, երես են դարձնում: Նա շարունակ ալցելում է որդուն: Բայց վերջինս փչացած շրջանում ապրելուց աչն աստիճան կոչուայել է, որ նոյն իսկ մի քաղցր, մտերմական խօսք չի ստում մօրը և ոչ մի մօտ շարաքերութիւն չի զգում դէպի նա: Երբ մօտեցնում են աքսոր դնալու օրերը, մայրը հիւանդանում է և ալլես անկարող է լինում ալցելել իր որդուն, թէն փորձում է: Այդ ժամանակ մի աչն լանցաւոր որդին զգում է, որ իր միակ մտերիմը և ցաւակիցը մայրն է: Նա աքսոր է գնում առանց իր մօրը վերջին անգամ տեսնելու, վճռելով սակաչն, որ վերադարձին կ'աշխատի հատուցանել մօրը հասցրած բոլոր նեղութիւնների փոխարէնը: Նրա դնալուց չետոյ թըշառ մայրը մեռնում է, և ահա, երբ նա վերադառնում է իր հայրենի գիւղը, պատահում է միայն անծանօթ դէմքերի, որոնց թուում և իր ծերացած հօրը, որ հանդիպում է իր որդուն փալսի հարաւածով: Յանցաւորն սկզբում գտնում է, որ անծա-



նօթն իր հօր նման է. բայց հարւածից ցետու, մի բոպէ իրան սխալած համարելով, բռնում է ծերունու կողորդից և աջնպէս սխմում, որ ծերունու երակը կտրւում է. երբ նա համոզւում է, թէ իր ենթադրութիւնը ճիշտ է՝ անծանօթ ծերունին իր հաչն է, արդէն ուշ է լինում: Ծերունին մեռնում է, իսկ Եղմոնգսը հաւատարմութեամբ մինչև իր շուտափութ մահը ծառայում է քահանային, որպէս գիւղացիների համար մի անչալտ անձնաւորութիւն, և ջերմ կերպով զղջում իր ցանցանքները:

Դիկկենսի աչս փոքրիկ պատմւածքը լաւ պատկերացնում է թէ ինչ միասակար և կորստաբեր ազգեցու-

թիւն ունի ծով, չաշխատող, արեցող, ուրեմն և, փչացած և անպիտան բնաւորութեան տէր մարդը մի ընտանիքի կեանքի և երեխաների վրայ: Յանցաւորի մէջ մնացած մարդկալին բնաւորութեան լաւ կողմերի սաղմերը, որոնք օգնում են նրան վերափոխւել, արդիւնք են հեղ, սիրող և համբերատար մօր բարերար ազդեցութեան. իսկ նրա խորտակւած կեանքը՝ փչացած միջավայրի և անպիտան հօր ազդեցութեան: Արժէ որ աչդ փոքրիկ պատմւածքը տարածւի: Թարգմանութեան լեզուն տանելի է:

Ն. Աղրալեան:



## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԹՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ:

Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնները կատարւելու են առաջիկայ մայիս ամսին, երբ ներկայ քաղաքային խորհրդարանը կը վերջացնի իւր քառամեայ լիազօրութիւնները: Մուրճի հին ընթերցողները չիշում կի լինեն թէ ինչ ուշադրութեամբ մենք հետեցինք չորս տարի առաջ կատարած ընտրութիւններին, և զա առաջին անգամն էր, որ մի հայոց թերթ հրաւեր և յորդոր էր կարգում մեր երիտասարդ կուսակցութեանը՝ քաղաքային ընտրութիւններում ներգործական դեր կատարել: Դա բոլորովին անկարեւոր հանգամանք է, որ քաղաքային ընտրութիւնները մինչև 1893 թւականը միմիայն քաղաքային հին գործիչների գործ էր համարւում, և այն նորագոյն սերունդը, որ մի ամբողջութիւն է կազմում միմիայն շնորհիւ նորա կապակցութեանը հայ մամուլի և գրականութեան ու հաստատութիւնների հետ, այդ սերունդը երբէք հետաքրքրութիւն չէր գտնում նոյն իսկ Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնների մէջ: Եւ հայկական մամուլը կամ կիսատ-պռատ արձանագրող էր լինում կատարած ընտրութիւնների, և կամ, շատ-շատ, նկատողութիւններ էր նւիրում քաղաքագլխի պաշտօնի համար առաջադրած թեկնածու անձերին, այն էլ որպէս հեռաւոր մարդու և իբր թէ «հայկական» կեանքին չվերաբերող երևոյթի: Եւ սակայն, քաղաքային ընտրութիւնները ամենակարեւոր ընտրութիւններն են, որ կատարւում են որ և է հաստատութեան համար մեզանում. և այս երկրում, ուր հայերը ոչ միայն երեք ամենամեծ ազգութիւններից միւնն են, այլ և մասնաւորապէս երկրիս քաղաքներից շատ շատերի ամենակենսական ոյժն են կազմում թէ բնակիչների շատութիւնով,

Թէ արհեստներով, Թէ առևտուրով, Թէ իբր տնտեսներ և Թէ համեմատապէս լուսաւորւած դասակարգով, հայերը, քաղաքների ընդհանուր առմամբ, անկասկած ըստ ամենայնի աւելի զերազանց ոյժն են կազմում, և քաղաքային ընտրութիւնները երբէք չպէտք է խորթ լինէին հայկական մամուլին:

Այդ աւանդութեան հետ է որ մենք կորեցինք մեր կապը չորս տարի առաջ. մենք դորանով ջանձնարարում էինք մեր նորակազմ ինտելիգենցիային նաև միւս քաղաքներում անտարբեր չմնալ դէպի այդ կարգի գործերը:

1893-ին հայկական երիտասարդ կուսակցութիւնը արդարև առաջին անգամ մասնակցեց այդ ընտրութիւններին, ծառայեցնելով գործի համար այն ժողովը, որի կազմակերպութեան հիմքը դրեց նոյն Թւականի սկզբներին: Երիտասարդ կուսակցութեան այդ ժողովը իւր մէջ էր հաշուում Թիֆլիսում ներկայ եղած բոլոր շատ Թէ քիչ գործող հայ երիտասարդներին. և այսպիսով՝ «Դուրցովը» կոչւած կուսակցութիւնից դուրս, որի ժողովներին մասնակցում էր Մատինեանի և Իզմայլեանցի ղեկավարութեամբ Թիֆլիսի դրամատէր դասակարգը, գործում էր հայ երիտասարդ կուսակցութիւնը, որը ունէր իւր յատուկ ընտրողական ժողովները:

Այդ երկու կուսակցութիւնները հայկական էին, չնայած որ Դուրցովը կոչւած կուսակցութեան ժողովներում կային նաև ոմանք ոչ-հայերից: Բայց երկուսն էլ հայկական լինելով՝ նոքա իրարից տարբերում էին իրենց ծրագիրներով: Առաջինում՝ Դուրցովը նոմերների ժողովներում, խնդիրը այն էր՝ ջարդել նախկին խորհրդարանում գոյութիւն ունեցած ընդդիմադրական կուսակցութիւնը (օպոզիցիա): Հանգամանքների<sup>տ</sup> բերմունքով՝ նախկին խորհրդարանի (դումա) օպոզիցիան կազմում էին վրացիք, որոնց մէջ էին վրացոց ականաւոր գործիչներ՝ Նիկոլաձէ, Զուբալով, Զելոյան, Ի. Մաչաբելի և այլք: Եւ ահա Մատինեան-Իզմայլեան արշաւանքի զոհերը, որ պէտք է լինէին ընդդիմադրականները առհասարակ, այդ անգամ վրացիք էին լինելու, որովհետև նոքա էին կազմում ընդդիմադիր կուսակցութիւնը նախկին խորհրդարանում: Ենտրելու այդ հանգամանքի՝ կռիւը ընտրութիւնների ժամանակ ստացել էր կերպարանք հայերի կռիւ ընդդէմ վրացոց: Բայց լա՛ միայն թւում



էր: Մատինեան-Իզմայլեան և ընկ. կազմել էին ընտրողական մի ցուցակ աջն անձերից, որոնց ահագին մեծամասնութեան վրայ նոքա վստահ էին. և նոքա հետևող մեծամասնութիւնը հաջոց դրամատէր կամ տնտէր շրջանն էր, որին և, 1892-ի քաղաքային նոր կանոնադրութեամբ, վճռողական ձայն է տրւած քաղաքային ընտրութիւնների համար:

Դրամական մարդիկ, այս պէտք է լաւ նկատել, չափազանց կապւած են իրար հետ իրենց շահերով. խոշոր դրամատէրերը, որոնք մեծ ձայն ունին վարկային հաստատութիւններում, իրենց հետ կապած են պահում աւելի մանրերին, որոնք ամեն րոպէ գործ ունին նոյն աջն վարկային հաստատութիւններում: Այ Մատինեան, ոչ Իզմայլեան դրամատէրեր չէին, բայց նոքա հարուստների շրջանում մեծ դիրք ունեցողներ էին: Նոքա իրենց քաղաքային և մասնաւոր կարիքերով կապւած են դրամատիրական շրջանի հետ՝ որի վրայ նոքա, հարկաւ իրենց անձնական շնորհներով, որոշ գերազանցութիւն ունէին:

Այդ զուտ դրամատիրական ոյժի դէմ կոչւած էր գործելու հաջոց երիտասարդ կուսակցութիւնը: Ասել թէ միանգամայն որոշ ծրագիր ունէր նա քաղաքային գործերի համար—դա չափազանցութիւն կը լինէր: Քաղաքային գործերը այդ կուսակցութեան համար անյայտ էին. որոշ ծրագիր անյայտ գործերի մասին անկարելի էր պահանջել. բայց երիտասարդութիւնը մի նոր ու կենդանաւոր հոսանք կը մտցնէր խորհրդարանի մէջ, եթէ նա բաւականին թւով ներս մտնէր. ահա այդ է որ անկասկած է: Անկասկած է նաև աջն, որ նոր երիտասարդութեան ողին, որը աւելի է սնուցւած հայկական յառաջագէմ մամուլի ու գրականութեան արդարամիտ գաղափարներով, ամեն գործի քննութեան մէջ կը մտցնէր զատողութեան մի այլ եղանակ, որին անսովոր է փոքրաթիւութիւնը ու դրամի ձայնից ուրիշ ձայն լսելու անընդունակ դատակարգը: Հայ երիտասարդ կուսակցութիւնը բնաւ յաւակնութիւն չէր կարող ունենալ՝ բոլոր հին գործիչներին դատաւիտել և գործերը միանգամից իւր ձեռքը զցել. ընդհակառակը, նա ընդունում էր հներից շատերի մէջ լաւ գործիչների շատ յարգելի յատկութիւններ, և յատկապէս Իզմայլեանցի մէջ ընդունում էր բարձր արժանաւորու-



թիւններ. և նա նոյն իսկ թոյլ յոյսեր ունէր, թէ հոգով զեմնկրատ Իզմայէանը, աւելի մօտ շփելով նորակազմ երիտասարդութեան ներկայացուցիչների հետ՝ պիտի վերջը բարեկամանար նորա հետ:

Ինչպէս տարբեր էր այդ երկու կուսակցութիւնների ծագումը և ձգտումը, նոյնքան ևս տարբեր էին նոցա կազմած ընտրողական ցուցակները: Դուրսովը կուսակցութեան ցուցակը արդէն որոշուած էր այն նպատակով, որին նա ձգտում էր, և որ մենք վերը տեսանք: Երիտասարդ կուսակցութիւնը տարբեր ցուցակ էր պատրաստել: Այդ ժամանակն է, որ մենք նոյն այս էջերում (տես Մուրճ 1893 թ. ապրիլ, № 4 արծարծեցինք այս միտքը, թէ ընտրողական ցուցակ կազմելիս՝ պիտի ինկատ ունենալ նաև Թիֆլիսի ազգաբնակչութիւնը կազմող տարբեր ազգութիւնները: Մեն ազգութիւններից, մեր առաջարկածով, երիտասարդ կուսակցութիւնը պիտի ընտրէր նոցա, որոնք իրեն աւելի համակրելի են. ազգութիւններին չէր զոհուում ոչ մի առաջնակարգ տնտեսական քաղաքացին չա՛հ, այն պարզ պատճառով, որ քաղաքացին գործերի համար հայ երիտասարդութեանը ղեկավարող մութի և զգացումների տէր մարդիկ կարելի էր գտնել թէ հայերի, թէ վրացիների, թէ ռուսների և թէ այլ ազգերի մէջ, գէթ որոշ չափով: Եւ որպէս զի իսպառ վերացած լինին ազգայնական վէճերը, մենք առաջարկութիւն արինք ձայնաւորներ ընտրել ամեն ազգութիւնից՝ մօտաւորապէս նոցա բնակիչների պրոցէնտական քանակութեամբ: Մաթեմատիկապէս ճիշդ պրոպորցիայի մասին իհարկէ չէր մեր խօսքը: Մենք խոստովանում ենք, որ ճիշտ պրոպորցիայից դուրս այն ազգութիւնից պէտք էր աւելի ձայնաւորներ ընտրել, որը քաղաքիս մէջ ամենից շատ գործեր է կատարում և ամենից շատ ձայներ ունի, և կամ որի մէջ ամենից շատ ինտելիգէնտ հասարակութիւն կայ քաղաքացին գործերով զբաղված: Բայց դորանով շատ չպիտի վնասէր մեր առաջարկը՝ մօտաւորական պրոպորցիա պահպանելու մասին: Մուրճում յայտնած մեր առաջարկը Փորձալ կերպով չընդունեց երիտասարդ կուսակցութեան մէջ, բայց կարող ենք հաստատ ասել, որ նորա կազմած ցուցակը միանգամայն համապատասխանում էր մեր առաջարկին: Նորա ցուցակում մտնում էին հայեր:

վրացիք, ռուսներ և այլ ազգութիւններից մօտաւորապէս այն պրօպորցիայով, ինչպէս բնակիչներն են Թիֆլիսում:

Մեր առաջարկը քննեց նաև տեղական մամուլի մէջ. նորանով զբաղեց «Նովոե Աբազրենիե» (Новое абазрѣнiе) պատուական թերթը, որը իւր առաջնորդողում հակառակեց մեզ ամենաորոշ կերպով: Ամեն անգամ երբ մեր գրչի տակ է մտնում այդ թերթի անունը, մանաւանդ երբ համերաշխ չենք լինում որ և է կէտի մասին, մենք անընդիմադրելի կարիք ենք զգում նախօրէն յայտնել այն բարձր չարգանքը, որ մենք տածում ենք դէպի այն ազնիւ միտումները, որով տողորւած է թւում մեզ նորա ներկայ խմբագրութիւնը և դէպի այն լայն քաղաքացիական զգացմունքը, որով ներշնչւած են նորա հիմնական յօդւածները: Նովոե Աբազրենիե ուրեմն հակառակեց մեզ, միանգամայն իրաւացի կերպով քարոզելով, որ պէտք է ընտրել ձայնաւորներ քաղաքի շահերի համար պէտքական մարդկանց, առանց նայելու թէ ինչ ազգութեան են նոքա պատկանում: Այո, կ'ասենք մենք ևս. պէտք է ընտրել պիտանի մարդկանց, առանց նայելու ազգութեան. բայց ինչպէս պէտք է վարել, երբ ապիտանի մարդիկ գտնում ենք բոլոր ազգութիւնների մէջ. քաղաքին հարկաւոր են 72 ձայնաւոր, իսկ նոյն այդ քաղաքում կը գտնւին 172 հոգի, բոլոր ազգութիւններից, որոնք հաւասարապէս ընդունակ են օգտակար ձայնաւորներ լինելու և կամ որոնց արժանաւորութիւնների մասին ոչ ոք չի կարող տարբեր բալլեր դնել, որովհետև նոքա դեռ փորձւած չեն քաղաքացին գործերում: Ինչպէս վարել այդ դէպքում, ահա խնդիրը Թիֆլիսի համար: Մենք հաւատում ենք, որ միմիայն հայերը կարող են 72 պիտանի ձայնաւորներ տալ. հետևում է զորանից արդեօք, թէ հայերը պէտք է հէնց միայն հայերին ընտրեն: Նովոե Աբազրենիե, որ բնաւ չէր ընդունում ազգութիւնների պրօպորցիական ներկայացուցչութիւնը, այժմ ևս չընդունելով այդ միտքը, ստիպւած եղաւ, սակայն, դաւաճանել իրեն. թերթի 28-ն յունւարի համարում նա 1893 թ-ի ընտրութիւնները յայտարարում է որպէս „дѣйствительно неудачные въ смыслѣ національнаго безпристрастія“, (իրօք անաշող ազգայնական անաչառութեան նկատմամբ): Ինչո՞ւ. անկասկած, որովհետև խորհրդարանում չկան բաւականին թւով վրացիք



և ռուսներ. և անկասկած մեծ բան չէր փոխել, եթէ դումայում լինէին միայն 5 վրացի: Եւ ինչո՞ւ. որովհետեւ կ'առարկէին թէ մինչ 30.000 վրացի ազգաբնակութեան համար 5-ը քիչ է, և թէ հայերը անարդար են եղել զէպի վրացիք. ճիշդ նոյնը, ինչ այժմ է ասուում: Ուրեմն բաւականապէս և ոչ բաւականապէս գտնուում է, երբ ներկայացուցիչների թիւը համեմատուում է մի ինտելիգէնտ ազգայնութեան խոշորութեանը նոյն քաղաքում: Եւ ահա ստացուում է այն, ինչ որ չորս տարի առաջ մենք առաջարկում էինք նոյն այս էջերում: Եւ ինչի զէմ էիք կուում? —

Դւորցովլը նոմերների կուսակցութիւնը 93-ի ընտրութիւններին տարաւ ամենակատարեալ յաղթութիւն. օպպոզիցիան ջախջախւած էր. այդ օպպոզիցիան ցրեց ու փախաւ՝ իւր վրէժը Բաթումիում առնելու համար: «Ոչ մի հայ» ասացին նորա. և Բաթումի պէս քաղաքում, ուր վրացի ընտրողները մեծամասնութիւն են կազմում, չընտրեց ոչ մի հայ: Իսկ հայ երիտասարդ կուսակցութիւնը ապացուցեց միայն, որ նա որ և է բան արժէ. նա իւր ցուցակով վաստակեց 300—450 ձայն, ընդդէմ 600—800 ձայնի, որ ունէր Դւորցովլը կուսակցութիւնը:

Ընտրած նոր խորհրդարանը չափած ու ձեւած էր Իզմայլեանի քաղաքապետութեան համար: Մենք բնաւ չենք կասկածում, որ եթէ Իզմայլեան չլախճանէր՝ ներկայ խորհրդարանը այժմ որ և է պատուով դուրս եկած կը լինէր: Բայց Իզմայլեանի վախճանումով՝ նորա կազմած խորհրդարանը կորցրաւ իւր նշանակութիւնը ամբողջապէս. եթէ չլինէր օրէնքի որոշ պահանջը՝ այդ խորհրդարանը պէտք է Իզմայլեանցի մահից յետոյ լուծէր և պիտի նոր ընտրութիւններ կատարւէին:

Այս տեսութիւնը մենք արինք նպատակով: Այժմ, երբ քաղաքային ընտրութիւններ պիտի կատարւեն, նորից խնդիրներ են յարուցւում խմբերի, ուղղութիւնների և մանաւանդ ազգութիւնների մասին: Պաշտօնական Կաւկազ (Кавказ) լրագիրը, հարկաւ



իւր ոչ-պաշտօնական բաժնուձ, առանձին եռանդով սկսեց զբաղել այդ խնդրով, որոշ կէտերի վրայ այնպիսի շեշտեր դնելով, որոնց նկատմամբ տեղական մամուլը չէր կարող կատարեալ անտարբերութիւն պահպանել: Տեղական մամուլ ասելով, խնդրում ենք ընթերցողներին յիշարժել անպատճառ նաև հայոց մամուլը, հայ օրաթերթեր, որովհետև քանի որ տէրտէրի և ժամկոչի խնդիր չկայ—յուզւելու: առիթ չեն գտնիլ նոքա: Առաջժամ ուրեմն պոլեմիկան սահմանափակեց Կալկազ և Նովոն Արազըննիս լրագիրներով:

Կալկազ լրագրի նոր խմբագրութեան բոլոր մտածմունքները, ըստ երևութիւն, պտտում են ազգայնութեան խնդրի շուրջը. «Քաղաքի շահեր» խօսքը թերթի խմբագիր պ. Վելիչկովի բերանում այլ իմաստ չունի: Ահա նորա յօդածներից. հատ-հատ քաղածքներ, որոնք կապւած են մի թելով:

«Ներկա խորհրդարանը (դումա) և վարչութիւնը (ուպրաւա) բոլորովին չարդարացրին նոցա վրայ դրած լուսերը... Նւ քաղաքը աւելի ու աւելի ընդունում է անկուտուրական, ասիական կերպարանք... Համակրել զորան չի կարելի... Պէտք է դուրս գէ՛մ բողոքել... Ներկա խորհրդարանը հետեանք է քառասկան ընտրութիւնների... Առաջին պալմանը խելացի ընտրութիւնների աչն է, որ մի ժողովի մէջ չընտրեն իրաւասունները, ալ ընտրողները բաժանեն խմբերի, բաժանելով քաղաքը մի քանի ընտրողական վիճակներին»:

Այց Կալկազի այդ առաջին առաջնորդդին, այսինքն թերթի միւլենոյն համարում (№ 12) տպւած է «Մեր ինքնավարութիւնը» խորագրով բանասիրականը, ուր յօդածագիրը, պախարակելով ներկայ խորհրդարանի գործունէութիւնը, ընթերցողների աչքի առաջն է դնում հետեւեալ վիճակագրական հաշիւը. քաղաքումս 146.000 բնակիչներից միայն 55 հազարն են հայ, մինչդեռ խորհրդարանում 80 ձայնաւորներից միայն 1-ն է վրացի, 13-ը ռուս և 3 գերմանացի. մնացած 63-ը հայեր են, ուր ընտրողների մեծամասնութիւնը (հայերը) խելով են աւելի փոքրամասն ազգութիւնների (վրացիների, ռուսների և այլն) ձայները: Որպէս զի այդ չլինի, պէտք է ընտրութիւնները կատարել ոչ թէ մի ընտրողական ժողովում, այլ քաղաքի ամեն մի մասում առանձին, ուր աւելի հնարաւորութիւն կայ միւս ազգութիւնների ներկայացուցչութիւնը ապահովել:

Շարունակելով իւր մտքերի թելը, «Կաւկազը» № 21-ում աւելի ևս պարզում է իւր իսկական միտքը.

«Պարզախօս մարդիկ մեզ կարող կը լինէին ասել, որ ներկայումս քաղաքային գործերի վարումը կենտրոնացած է հալ դրամատիրութեան և (հալ) ինտելիգենցիայի ձեռքերում, և որ ալ ազգութիւնների ներկայացուցիչներէց միայն նոքա են խորհրդարանում, որոնք ըստ ամենայնի համարաշխ են (հայերի) ալդ գերակշռութեան հետ. կ'ասէին, որ վիճակային ընտրութիւնները... հակառակ են ալդ գերակշռութեան և աւելի սուր կը դարձնեն առանց այն էլ դեռ չհարթած ազգայնական չարաքերութիւնները... Տէրը փրկէ մեզ... անարգանք ցուց տալ մի ազգութեան (հալ), որի կուտուրական արժանաւորութիւնները անկասկած են—և խնայող, և ծանրաբարոյ և հակած դէպի կրթութիւն—ալդ ամենը դրական գծեր են, որոնք օգտակար են երկրի տնտեսական կեանքի համար և որոնք սկզբունքով արժանի են ամեն համակրանքի և իրաւունքներ են տալիս ազգեցութիւն ունենալ հասարակական անցքերի ընթացքի վրայ, հասարակութեան միւս մասին չմիաստղ սահմաններում: Բայց ինչու, ուրեմն, ալդ անկասկած արժանիքները չարտացոլացին քաղաքային ինքնավարութեան վրայ, որը տխուր կարիկատուրա է միայն ներկայացնում... Ամենից առաջ նրանով պիտի բացատրել, որ չնորհիւ ազգեցիկ դրամատիրութեան և ըտրողական կարգին, տեղծել է արեւտական գերակշռութիւն (հայերի) ի միաս միւս հասարակական (ուղում է ասել՝ միւս ազգութիւնների), և ոչ պարզ, կանոնաւոր և լիովին արդար ազգեցութիւն... Հէնց դորանումն է կալանում, գլխաւորապէս, միջազգային երկպառակութիւնը Թիֆլիսի բնակիչների մէջ... Չպէտք է մոռանալ, իրօք, որ քաղաքը (Թիֆլիս) դարերով մալրաքաղաք է եղած վրաց թաղաւորութեան (ստորագծումը մերն է), և նորա հողի ամեն մի կանգունը ալդ ազգութեան հերոսական արիւնդն է եղել ներկած, որի նիւթական թուլացումը չպիտի առիթ ծառայի, որ նա սիստեմաբար դուրս վռնուի ընդհանուր գործից և նորա անցեալը մոռացուի: Ռուս տարրի (դարձեալ ստորագծումը մերն է) քիչ մասնակցութեան մասին ալդ գործում խօս ասելն աւելորդ է. դա ուղղակի հրէշաւոր երևոյթ է ինքն ըստ ինքեան... բոլորը, ինչ աչտանդ քաղաքակրթութեան դրոշմ է կրում, ստեղծւած է ռուսաց փողերով, նախաձեռնութեամբ, կամ հովանաւորութեամբ ռուսաց կառավարութեան, ռուսաց ուլինի պաշտպանութեան ներքոյ, և չանկարծ, շատ տարիներ ընթացքում, Թիֆլիսի ինքնավարութեան մէջ ռուսաց տարրը կազմում է աչնքան տարօրինակ, աչնքան անբացատրելի փոքրամասնութիւն: Դա ծաղր է...»:

Այսպէս են Կաւկազի նոր խմբագիր պ. Վելիչկօ'ի գլխաւորութիւնները, որոնց հետ կից դրւած են «քաղաքի շահերի» մասին



հոգածութեան արտայայտութիւններ: Բայց այն քաղաճներից, որ մենք առաջ բերինք, արեղակի պէս պարզ է, որ, ըստ Կաւկազի, քաղաքային շահերը այստեղ ուրիշ բան չեն նշանակում, բայց եթէ այլ և այլ ազգերի ներկայացուցչութիւն:

Պր. Վելիչկո՛ւն, սակայն, Պետերբուրգից Թիֆլիս գալով, բնաւ չպիտի կարծի թէ նոր կուլտուրական «խաբարներ» է բերում այնտեղից, եթէ նորա բարձրացրած աղմուկը միայն այդ է: Ներկայ խորհրդարանում վրացիների գրեթէ կատարեալ բացակայութիւնը հեռւանք է ոչ այնքան ազգութիւնների կուլի, որքան նախկին խորհրդարանի վարդ մեծամասնութեան և ընդգիմադիր կուսակցութեան կուլի. անցեալ ընտրութիւններին խնդիրը այն չէր, թէ ովքեր պիտի յաղթեն՝ հայեր թէ վրացիք, այլ այն, թէ հին ուսուրաւային կուսակցութիւնը (Եզմայլեան-Մատինեան) պիտի իշխէ թէ՛ նորան ամեն քայլափոխում հալածող և իբր թէ խանգարող բայց և զօրեղ ու ազդեցիկ ընդգիմադիր կուսակցութիւնը, որը եթէ երէկ գլխաւորապէս վրացիներից էր բաղկացած, վաղը կարող է գլխաւորապէս հայերից բաղկացած լինել: Այդ արդէն երևաց վերևի բացատրութիւններից: Եւ յետոյ, այն միտքը, թէ քաղաքային խորհրդարանի անդամներ պիտի լինեն բոլոր ազգութիւններից, այդ, ինչպէս տեսանք, մտիւ էր հաջ երիտասարդ կուսակցութեան ծրագրի մէջ, որի ցուցակը կազմւած էր <sup>1880</sup> բոլոր ազգերի ներկայացուցիչներից, շատ թէ քիչ համապատասխան ամեն մի ազգութեան խոշորութեանը քաղաքիս մէջ:

Բայց եթէ կայ նոր բան Կաւկազի խօսքերում, այդ այն է, թէ ինչ պատճառներով պէտք է հայերին, վրացիներին և ուսաներին ընտրել, և թէ ո՛րչափ նոքա պէտք է ընտրեն: Վերը առաջ բերած քաղաճներից երևաց, որ վրացիներին պէտք է ընտրել, գիտէք արդէն ինչու, ի հարկէ ըստ Կաւկազի. հայերը, ասում է նա, չպէտք է մոռանան որ Թիֆլիսը նախկին վրաց թագաւորութեան մայրաքաղաքն էր... ուսաներին պէտք է ընտրել, որովհետեւ Ռուսիայի հովանաւորութեամբ է մեր երկրում լուսաւորութիւն մտել... և հայերին ևս պէտք է իհարկէ ընտրել, որովհետեւ խնացող, ծանրաբարոյ և ուսումնասէն ժողովուրդ են...:

Այդ էլ, իհարկէ, տեսակէտ է. բայց դորա յղանակու և պաշտ-



պանելու պատիւը ոչ ոք նախանձով չի կարող խլել Կաւկազի նոր  
խմբագրութիւնից...

Հարկաւ, մենք առիթ կ'ունենանք խնդրին վերադառնալու.  
այժմ մեր խօսքը կարող ենք ուղղել միայն ընտրողների աչն շրջա-  
նին, որից միայն կարելի է սպասել Թիֆլիսի խորհրդարանի վերա-  
կենդանութիւնը. դա է երիտասարդ կուսակցութիւնը, որը չորս  
տարի առաջ արհամարեց, բայց որը պէտք է արիութեամբ գործի  
մէջ նորից խառնւի: Արդարամտութեամբ ցուցակ կազմելով ազգու-  
թիւնների նկատմամբ՝ նրան զբաղեցնողը պիտի լինի Թարմ հո-  
սանք մտցնել խորհրդարանի մէջ և թող չտալ որ այժմեան ան-  
կենդան խորհրդարանի անունով գան ու վարկազուրկ անեն հայ ին-  
տելիգենցիայի անունը!

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

## ԲԺՇԿԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

ԲԺ. ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

Շիճարութով թիւն. — Ժանտախտ. — Թորախտ-ըսրակացաւ, հոգե-  
րութով թիւն:

«Մուրճ»-ի 1895 թ.ի № 12, խօսելով «Շիճարութով թիւն» մասին, մենք վերջացրինք մեր լոգւածը հետեւեալ խօսքերով. «Շիճարութով թիւնը մեծ ապագայ է խոստանում. նա տալիս է բժիշկների ձեռքը մի զօրեղ միջոց կուեւրու աչն հիւանդութիւնների հետ, որոնց դէմ նրանք մինչև հի-  
մա անզօր էին մաքաւելու»:

Այժմ մենք ուրախութեամբ կարող ենք վկայել, որ շիճարութով թիւնը զարմանալի քաջեր է անում դէպի առաջ. այդ մեթոդով այժմ բժշկոււմ են աչնայտի ցաւեր, որոնք դեռ երեկ համարոււմ էին անբուժելի. այդ սկզբունքով այժմ հրաշքներ են դարձում: Ահա ձեզ օրինակ:

Ժանտախտը, ինչպէս լատինի է, ամենատարածուիկի հիւանդութիւններից մէկն է: Նրա իսկական հալընդիքը շնդկատանն է, և նա ժա-  
մանակ առ ժամանակ տարածոււմ է աչնտեղից համաճարակով ամբողջ Ներո-  
պոլում և ոչնչացնում է բնակութեան երբեմն քառորդ մասը: Յաճախ այդ հիւանդութիւնը պատահում էր Ներոպոլում միջին դարերում: Ներոպոլան համաճարակներից նա մանուսնդ հռչակւած է 14 դարինը, երբ ժան-  
տախտը ամեն տեղ ահ ու սարսափ տարածելով Ան մահի անուն էր կրում: Սակաչն դարուս կէտից սկսած, Ներոպոլան ազատ է մնացել այդ ցա-  
ւից: Եւ այժմ, տեսէք, որ այդ վայրերի կենդանին, շիճարութով թիւն չնորհիւ, զաւել է բնտանի: Նրա կապը հիմա գտնոււմ է մեր ձեռքում: Մարդս կարող է նորանից հիմա աչնքան էլ չվախենալ:

Բժիշկ Վերսեն (Versene), նախապէս փորձեր անելով կենդանիների վրա, համոզուեց, որ նրանք շատ բաւարար են և ալժմ մեծ չափով թիւնը Զինատանում նա պատաստով բժշկում է ժանտախտով հիւանդներին: Նրա բժշկած 26 հոգուց մեռել են միայն 3-ը, ուրեմն միայն 12<sup>0</sup>/8: Ամոչ



(Amoy) քաղաքի բնակիչները, որտեղ նա անում էր իւր բժշկական նփոք-  
 ձերը, ճանապարհ են գցել Վերսէյնին մեծ շուքով, համեմատելով նորան  
 Զինատանի առասպելական բժիշկ Հոտ-տ'օ-ի (Hoa-t'o) ի հետ, որ ապ-  
 րում է եղել 2000 տարի սրանից առաջ և համարում է սուրբ: Զինական  
 մի լրագիր («Հու-Պաօ») մի լողած նւիրելով Վերսէյնին՝ բացականչում է.  
 «Ո՞վ կը համարձակի ասել, թէ այդ Հօտ-տ'օն չէ, որ անձամբ վերադարձել  
 է աշխարհ»:

ժանտախտի շիճուկի պատրաստելու ձևը նույնն է, ինչ որ դիֆ-  
 տերիտինը. աչսինքն, ժանտախտի մեկրոբներին սրկում են ձիու կաշւի տակ՝  
 սկզբում փոքր քանակութեամբ, հետզհետէ աստիճանաբար քանակութիւնը  
 աւելացնելով, մինչև ցանկալի աստիճանը: Զին սրկելուց չետոյ սկսում  
 է տաքացնել և լղարել. միննուն ժամանակ նորա լճարմնի մէջ պատրաստ-  
 ւում է դեղը: Մի քանի ամսից չետոյ, արդէն կարելի է լինում նրա արիւ-  
 նից ստանալ մեր պահանջած ճարը:

„He сули мнѣ журавля въ небѣ, дай синицу въ руку“, կ'ասէ  
 զրական ընթերցողը, կարդալով զովասանքները ժանտախտի բժշկութեան  
 մասին. «Բնչ օդուտ մեզ, որ հեռու Զինատանում բժշկում են ժանտախտը,  
 որ հարկւր տարին մի անգամ է պատահում Կերպալում, իսկ ամենա-  
 տարածւած ախտը՝ թոքախտ-բարակացաւը, որ կազմում է ամբողջ մա-  
 հացութեան  $\frac{1}{11}$  մասը, իսկ քրոնիքական հիւանդութիւններից մեռած-  
 ների մէջ  $\frac{2}{3}$  մասը, դեռ մինչև հիմա էլ մեծ զոհեր է տանում»: Այդպիսի  
 հոռետես ընթերցողին կարող եմ ուրախացնել, հաղորդելով, որ հեռու չէ  
 ազն ժամանակը, երբ թոքախտ-բարակացաւով հիւանդներն էլ կը բժշկեն  
 շիճարութեամբ:

Հոչակաւոր պրոֆ. Վոխի անաջող փորձերից չվհատեցան զիտ-  
 նականները. փորձեր այդ ուղղութեամբ շարունակւում են և այժմ  
 արդէն ստացել են շատ խրախուսիչ հեռանքներ. Գենուացի պրոֆէսոր  
 Մարալլիանօ (Maragliano) արդէն բժշկում է թոքախտով հիւանդներին  
 շիճուկով և բաւարար չաջողութեամբ: Մի ֆրանսիացի բժիշկ՝ Շաւանիս  
 (Chavanis), որ անձամբ ալցել է պրոֆ. Մարալլիանօ'ի կլինիկըն,  
 մեծ համակրութեամբ է խօսում չարդելի դիտնականի մասին, Նրա ասե-  
 լով թոքախտ-բարակացաւի բժշկութիւնը Մարալլիանօ'ի շիճուկով արժա-  
 նի է լիակատար ուշադրութեան. վաճառականական միտումներ նրա ձգտում-  
 ների մէջ չկան: Անձամբ տեսնելով գործը, ասում է իւր լողածի մէջ  
 բժ. Շաւանին («La Loire médicale» 15 դեկտ.) եւ կարող եմ ասել, որ  
 բոլոր փորձերը կատարւում են գիտական մեծ շիտակութեամբ (une grande  
 honnêteté scientifique), և ես անձամբ համոզւած եմ, որ, գործադրելով  
 Գենուացի պրոֆէսորի միջոցը, կարելի է հիւանդներին մեծ ծառայութիւն  
 մատուցանել:

Սորա հետ միասին չենք կարող չլիշատակել և մի ոռոս բժիշկ Ա. Մակսուտովի (Максютовъ) փորձերի մասին: Յարգելի բժիշկը ծովափին խոզուկներին վարակելով գնդկախտալին թուլնով (бугорчатка, туберкулезъ), չետոջ նրանց վնասում գործարաններից ստացել է մի նիւթ, որով կարելի է անխոցելիութիւն (невосприимчивость, иммунитетъ) առաջ բերել առողջ խոզուկների մարմնի մէջ: Անխոցելիութիւնը զարգացնելով խոզուկների մարմնի մէջ, ասում է բժիշկը, ես կարողացաւ ստանալ հետեւեալը. անխոցելի դարձրած խոզուկները առանց հետեւանքի դիմանում էին նրանց կաշւի տակը և ընդերպատի (бронхи) մէջ սրկած թուճալից գնդկախտալին միկրոբներին, մինչդեռ միւս փորձնական խոզուկները սատկում էին մինչև անգամ միևնույն թուլնի՝ կաշւի տակը սրսկելուց: Ընթերցողին անհրաժեշտ է գիտենալ, որ թոքախտ-բարակացաւ և գնդկախտը համանիշ գաղափարներ են, աչն տարբերութեամբ միայն, որ գնդկախտը հիւանդութեան ընդհանուր հասկացողութիւնն է, իսկ թոքախտը՝ մասնաւոր. թոքախտ-բարակացաւ տեղ, կարելի է գործ ածել և թոքերի գրնդկախտ անուճը: Հարկաւոր է ընթերցողին գիտենալ և աչն, որ ընդերպատի մէջ սրկած թուլնը աւելի ազդեցիկ է լինում օրգանիզմի համար, քան թէ կաշւի տակ սրկածը:

Մօտիկ ապագայում չարգելի բժիշկը մտադիր է փորձեր անել խոչոր անասունների վրա: Այդպիսով նրան կը չաջողի իմանալ թէ որպիսի բժշկական զօրութիւն ունի նրա մեթոդով անխոցելի դարձրած անասունների շիճուկը—գնդկախտի վերաբերեալ («Врачъ» 19 դեկտ.). Յանկանում ենք կատարեալ չաջողութիւն նրա փորձերին:

Տեսնում էք ընթերցող, որ շիճաբուժութիւնը դեռ ևս, ալսպէս ասած, խանձարուրի մէջ Հերբուլէսի քաջագործութիւններ է անում.—է՛հ կը լինի նա, երբ կը մեծանալ... Մենք էլ կ'ապրենք՝ կը տեսնենք:

Շիճաբուժութիւնից չետ չէ մնում հոգեբուժութիւնը (պսիխոթերապիա). ալսպէս է կոչւում բժշկութիւնը՝ հիպնոտիզմով: Նախ և առաջ բերենք մի քանի վիճակագրական թւանշաններ: Ամստերդամի հոգեբուժական Պոլիկլինիկայում 1887 թւի մալիսից մինչև 1893 թւի չունիս ամիսը հիպնոտիզմով բժշկել են 1089 հիւանդ: Այդ թւից կատարեալ առողջութիւն եղել է 28,12<sup>0</sup>/<sub>0</sub>, նշանաւոր և երկարատեւ լաւութիւն—23,69<sup>0</sup>/<sub>0</sub>, զգալի թեթևութիւն—21,02<sup>0</sup>/<sub>0</sub>, առանց չաջողութեան—17,18<sup>0</sup>/<sub>0</sub>, հետեւանքը անչալտ է—9,18<sup>0</sup>/<sub>0</sub>:

Այդ հաշւից երևում է, որ հիպնոտիզմի ազդեցութիւնը դրական և նպաստաւոր է եղել 52<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ, եթէ հաշւենք և հիւանդութեան թեթևանալը, կը ստանանք ամբողջ թւի 73<sup>0</sup>/<sub>0</sub>-ը, որ չատ պատկառելի տոկոս է:



Նոպատաւոր հետեանքների ալղալիսի մեծ տոկոս ստացել է և բժիշկ Վետտերտարանդի մօտ (Ստոքհոլմ), որի ձեռքով անցել են մօտ 7000 հիւանդ-ինչպէս՝ լաւանի՝ է, հիպնոտիզմը, իբրեւ բժշկութեան մեթոդ, թուլատրւած է և Ռուսաստանում հիւանդանոցների մէջ, նոպալէս և մասնաւոր բժիշկների գործունէութեան մէջ, միայն վերջիններիս մօտ մի քանի սահմանափակումներով:

Բերելով մի քանի ընդհանուր թւեր հոգեբուժութեան մասին, աւելորդ չէր լինի աւելացնել՝ թէ մասնաւորապէս ինչ հիւանդութիւններ չաջողութեամբ բժշկուած են ալղ մեթոդով: Յիշեալ մեթոդով բժշկող հիւանդութիւնների մէջ առաջին տեղը բռնում են ընդհանրապէս հոգեկան և ջղալին հիւանդութիւնները, մասնաւորապէս գլխիւնութիւնը (АЛКОГОЛИЗМЪ), մօրֆիտամուլութիւնը (МОРФИНИЗМЪ), ծխախոտամուլութիւնը (НИКОТИНИЗМЪ) և ուրիշ համանման մոլութիւններ: Հիպնոտիզմով բժշկողները լաւանալուց լետոլ սկսում են առել աչն, ինչ որ առաջ հօգով և մարմնի սիրում էին:

Անշուշտ ընթերցողը, եթէ ծխող է, կ'ապշի իրան հոգեկան հիւանդների չարքում տեսնելով. բայց թող չդարմանալ. ամեն ծխող ծխախոտամուլ չի լինի. ինչպէս և ամեն գինի խմող գինեմուլ, տարբերութիւնը չափին ստորութեան ուժի մէջն է:

Սխալ կը լինէր կարծել, որ միայն հոգեկան-ջղալին հիւանդութիւններն են բժշկուած հիպնոտիզմով: Մի քանի օրինակներ բաւական կը լինին ներքեւու ալղ կարծիքը:

Բոստոնում, ամերիկացի բժիշկ Հաւիլտօն Օսգուդի մօտ բերում են մի 11 տարեկան տղայ, որ 1½ տարեկանից սկսած հիւանդ է եղել կաշւի ջրջրուկ (Eczema, Мокнувший лишай) հիւանդութեամբ: Նրկիսալի փորը, ոտները և ձեռները ծածկւած էին անթիւ վէրքերով: Չեռների մասները աչնպէս ճաքճքատել, ուռել և ցաւում էին, որ խեղճը չէր կարողանում չարժել մասնները: Քորը չէր թողնում քնել: Հիւանդի տանջանքները թեթեւացնելու համար մալըրը գիշերները մի քանի անգամ վեր էր կենում և լաւում վէրքերը դանազան դեղերով: Նրկար ժամանակ և մեծ քանակութեամբ դեղեր էր գործ ածել խեղճը. բազմաթիւ բժիշկների գործադրել էին հիւանդի վրա իրանց հնարապաշտութիւնները:—Ոչինչ չէր օգնել: Նրկիսան քանի գնում նրկարում էր, անքնութիւնից, տանջանքներից, Վերջապէս լուսահատւած մալըրը բերում է երկխալին բժ. Օսկուդի մօտ, որ նա հիպնոտիզմով ոչնչացնի գոնէ քորը, իսկ հիւանդութիւնը բժշկելու մասին մալըրը ալկես չէր մտածում. ալղ անկարելի էր համարում նա: Հէնց առաջին սկանսին չիշեալ հոգեբուժի մօտ, երկսան ընկղմուց թեթեւ քնի մէջ: Բժիշկը նրան ներշնչեց հետեւալը. «քո կաշին ալկես գրգիւ չի զգալ, քորը բոլորովին կ'անհետանալ, գիշերները հանդիսա կը քնես և ոչ մի



անդամ չես արթնանալ և չես անհանգստացնիլ մօրդ. կամաց-կամաց հիւանդութիւնդ կ'անցնի, կաշին ամբողջ մարմնիդ վրա կը մաքուրի վերքերից և, վերջ ի վերջոյ, բոլորովին կ'առողջանալ: Հէնց առաջին ներշնչման հետեանքը եղաւ աչն, որ երեխան,—առաջին անգամը հիւանդութեան օրից—քնեց հանգիստ և խորը քնով ամբողջ գիշերը և բոլորովին չէր քրտում կաշին: Ակողբում ներշնչումները կատարւում էին ամեն օր, չետոյ չաբթական 3 անգամ, չետոյ չաբթական մի անգամ: Այսպէս շարունակեց երեք ամիս և հիւանդը կամաց-կամաց կատարելապէս առողջացաւ և սկսեց չաճախել ուսումնարան, որ վաղուց թողել էր հիւանդութեան պատճառով: Հարկաւոր է աւելացնել, որ բացի հիւանդութեան պատճառով միջոց ալ ժամանակ չէր գործադրւում հիւանդին առողջացնելու համար:

Մի ուրիշ օրինակ:

Բժիշկ Ժիբեր'ի հիւանդանոցը (Հաւր քաղաքում, Պրանսիա) բերում են մի 13 տարեկան տղա, որի ձեռները ծածկւած էին բազմաթիւ կոծիծներով (бородавки): Վերջինները աչնքան շատ էին մատների վրա, որ երեխան ոչ միայն գրել, ալ և իւր ձեռքերով հաց ուտել չէր կարողանում: Ժիբերը զիմեց ներշնչման, բայց առանց հիպնոզի, ալ արթուն դրութեան մէջ: Նրեխին բժիշկը տարաւ իւր կարիները, ուր հրաւիրեց նաև միւս բժիշկներին, տեսարանը երեխի համար աւելի աղղեցիկ դարձնելու դիտաւորութեամբ: Աչն ժամանակ Ժիբերը մօտեցաւ երեխային, վերցրեց նրա թաթիկները իւր ձեռքերի մէջ և լուրջ ու խրոխտ ձայնով հարցրեց նորան. «Դու ուզում ես բժշկուի: Մի քիչ տատանւելուց չետոյ, երբ բժիշկը նորից կրկնեց իւր հարցը, աչս անգամ աւելի խիստ եղանակով, երեխան վճռողաբար պատասխանեց. «աչո, պարոն, ես ուզում եմ, որ ինձ բժշկէք»... «Դէ. տես հն, —սպառնական կերպով ասաց բժիշկը,—քո կոծիծներդ անհետացնելու համար, ես հիմա կը լւանամ ձեռներդ կապոյտ ջրով. բայց,—լաւ լսիր.—եթէ դու մի չաբաթից չետոյ վերստին չբժշկուես, եթէ ալ ժամանակամիջոցում քո կոծիծներդ չանցնեն, աչն ժամանակ,—ալդպէս էլ դու իմացիր,—աչն ժամանակ ես կը լւանամ ձեռներդ ոչ թէ կապուտ, ալ դեղին ջրով: Բերին հասարակ ջուր, հասարակ լեղակով ներկած, երեխի ձեռները լացին նորա մէջ, լաւ սրբեցին և հիւանդին ճանապարհ գցեցին տուն... Մի չաբաթից չետոյ համարեաւ բոլոր կոծիծները անհետացել էին, մնացել էր մի քանի հատ: Որովհետև երեխան «չլսեց» բժշկին (բոլոր կոծիծները չէին անհետացել), վերջինս կատարեց իւր սպառնալիքը և միևնոյն հանդիսականների մօտ նրա ձեռները լաց «դեղին ջրով» (աչսինքն դեղին գոշնով ներկած): Նրեխան, իբր սպասում էր, թէ աչք «դեղին ջրից» նրան վատ պիտի լինի, սկսեց սարսափելի ցաւ զգալ: Մի քանի օրից չետոյ, երկու ձեռքերի վրա էլ ոչ մի կոծիծ չէր կարելի գտնել: Աչս ֆակտը, որ մի հաստատ և անժխտելի իրողու-

թիւն է, պարզ ցոյց է տալիս, թէ ինչ մեծ զօրութիւն ունի ներշնչումը՝ նոյն իսկ արթուն ժամանակ: Այս ղէպքում ազդում էր, ի հարկէ, երեխայի խորին համոզմունքը և հաւատը, որ բժիշկի հրամանով կոծիծենքը անպատճառ պիտի անցնեն.— ուրիշ կերպ չի կարող լինել:

Սորանով կարելի է բացատրել, իմիջի աչլոց, աչն անթիւ հրաշքները, որոնք ահագին նիւթքն տեւ էմիլ Զուպին նորա «Լուրդ» ռոմանի համար:

Հին, սկզբնական մարդիկ (ինչպէս և ժամանակակից վարենիները), որոնց համար անհասկանալի և անբացատրելի էին հիւանդութիւնների պատճառները, նրանց վերագրում էին գերբնական ոգիներին և հաւատացած էին, որ բժիշկները հաղորդակցութիւն ունին աչ ոգիների հետ...

Սակայն ինչու հեռուն գնալ, քանի որ մեր ժամանակակից հասարակութեան մէջ էլ գտնւում են համալսարանական վարդապետներ, որոնք եկեղեցու բեմից քարոզում են ժողովրդին՝ թէ խոլերան Աստածային քարկութիւնից է առաջանում...

1897 թ. 12 չունւարի



## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒԻՆՐ

ՄՈՒՐՃԻ ԲԱԺԱՆՈՐԻԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1897 Թ. ՀԱՄԱՐ շարունակում է: Բաժանորդները կարող են դիմել նաև յայտարարած գործակալներին (տես ամսագրի ծածկը): Յուսով ենք, որ 1896 թ. բաժանորդները կը շտապեն վերանորոգել իրենց բաժանորդագրութիւնը 1897 թ. համար: Յոյս ունինք նաև, որ Մուրճի բաժանորդ չեղած ընթերցողները կը մասնակցեն բաժանորդագրութեան, թէ բարոյական պարտք կոտարելու և թէ ամսագրի նիւթականը զօրեղացնելու համար: Մեր դիմումը վերաբերում է մանաւանդ այն ընթերցողներին, որոնք համապրում են Մուրճին և որոնք զիտեն գնահատել խմբագրութեան ջանքերը և նորա մարտնչումը ամեն տեսակ զժառուութիւնների դէմ:

Մեր մասնաւոր հոգսը ներկայ տարւայ համար պիտի լինի համարները ճիշտ իրենց ամիսներում հրատարակել, աշխատելով նոցա լոյս տեսնելու սովորական ժամանակը զցել ամեն ամսւայ սկիզբը կամ, ամենաուշը, ամեն ամսւայ միջերբը: Այդ կարգը կ'սկսւի ապրիլի համարից:

Շուր վէպերից առաջժմ կարող ենք յիշատակել պ. Հետն Մանուէլեանցի ռոմանակած կեանք մեծ վէպը, որ սկսում է Մուրճում այս յունար ամսից, պ. Շանթի մի նոր գործը, որպէս նաև պ. Վ. Փափագեանի մի շարք պատմածքներն ու վէպիկները: Պպ. Բաքկենցի ու Աղէլեանի այժմ տպւող վէպերը կ'աւարտեն տարւայ սկզբի ամիսներում:

Մուրճի աշխատակցական խումբը, որ կազմում են Ա. Արասխանեանց, Լ. Մանուէլեանց, Գր. Վարդանեան, Ալ. Մատուրեան, Յովհ. Տէր-Միրաքեան, Գ. Մնացականեանց, Վ. Փափա-

զեան, Գր. Վանցեան, Ա. Աղէլեան, Շանթ, բժ. Վ. Արծրունի բժ. Զաքարեան, բժ. Գարեգին Սարգսեանց, Խաչ-Պապեան, Գ. Բաշինջաղեան, Սեհան, Նշ. Աթանասեան, Գ. Ղարաջեան, Յակ. Մուրատեան և ուրիշներ, — մնում է նոյնը, ուժեղացրած. նոր ոյժերով:

ՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ է լալանում է խմբագրութիւնս ալն ամենքին, որոնք անձամբ, նամակներով, տոմսերով կամ հեռագրով, անհատապէս կամ, խմբով չնորհաւորեցին մեզ Մուրճի լինելուրդ տալիս չլինելու մասին լու աւելթով:

ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐԻՆ, համաձայն մեր խոստման, ուղարկւում է «Ամուսնական առողջապահութիւն» լոյսածի սկիզբը, որ տպւել էր անցեալ տարւոյ № 12-ում:

ՇԽՈՐՏԱԿԻՒԹ ԿՆԱՆՔ» վէպը պ. Լեոն Մանուկեանցի, որ սկսւում է ներկայ համարից, ունենալու է երեք մաս:

ԱՇՐՈՒՆԱԿԻՈՂ ՎԷՊՆԵՐԸ, «Նորեկ» և «Տգիտութեան զոհեր» հաւանորէն վերջանալու են տպագրութեամբ երկու կամ երեք համարներում:

ՀԻՆ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐԸ հրաւիրւում են որ շտապէն բաժանորդութիւնը վերանորոգել, ամսագիրը շուտով ուղարկելու գործը թեթեւեղ է համար. ներկայ համարը ուղարկւում է հներից միմիայն բաժանորդութիւնը վերանորոգածներին:

ԼԵԶԻԱԿԱՆ ԶՐՈՅՅՆԵՐ խորագրով գալ անգամից պիտի սկսի Մուրճում լոյսածնների մի շարք՝ ներած մեր արդի գրական լեզու խնդիրների ուսումնասիրութեանը. Գա պէտք է փորձ լինի մեր գրական լեզուի ձեւերը ուսումնասիրելով լեզուն անհարազատութիւններից մաքրելու:

ՄՈՒՐՃ ՆԻՒՐՈՂՆԵՐ (Սկիզբը տես 1896. № 12): Պ. Մնացական Խուսուից՝ Հալ. Բարեգ. Բնկ. Շուշալ ճիւղի գրադարան-ընթերցարանին. պ. Կոնստ. Հեծուբեան՝ Հոռոմ գիւղին (Ալէքսանդրապոլի գաւառ, Արապիոն քչւ. Ղարա-Ղաղարեանի հասցէով, խմբ. Ընտրութեամբ): Բժ. Գարեգին Սարգսեանց՝ վերին Ագուլիսի հալ արհեստաւորներին (պ. Բաղդասար Թումանցի հասցէով. խմբագրի Ընտրութեամբ). պ. Ալէքսանդր Մելիք-Աղարեանց՝ Ռաշտի հալոց զբոսայիտ. տիկին Գալ. Աթաբեգեան՝ Կոնստապատ գիւղի (Ջեանշիրի գաւառ.) հալոց զբոսայիտ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ: Միակ կարևոր նոր լուրը, որ ունի նշանակութիւն հալկական խնդրի համար, Polit Corresp. Վիեննայի թերթի հաղորդածն է 21 լուսարի (հին տոմար), թէ գիտականների մշակած ծրագիրը պիտի ուղարկուի կառավարութիւնների հալեցողութեանը և եր-



կու կամ երեք չարաթից չետոյ պիտի ռեֆորմներ ծրագրեր ներկայացնի Բ. Դրան: Խնդիրը բարդուում է Կրեմլից եկած լուրերով, որ ահա.

**ԿՐԵՏԷ.** Ռեֆորմների դէմ թիւրք ազդարնակութիւնը սկսեց ընդդիմանալ. շարժում սկսեց Կանդիալից (Կրեմլէում). քրիստոնեաները, ըստ չունարի 21-ից հեռագրի, սկսան պաշարել թիւրք գիւղերը, թիւրքերը—քրիստոնեաների: Թիւրքերը մեծ խմբերով գիւղերից սկսան լեցնել քաղաքները: Կանէա քաղաքի մօտ եղաւ կռիւ, ուր սպանւեցին մինչև 20 զինուոր: Հրդեհներ երևացին գիւղերում: Անգլիական, ֆրանսիական և իտալական նաւերից զօրքեր իջան ափը, հրդեհներ զէմն առնելու և փախչողներին ընդդիմանալու համար: Քրիստոնեաները մեծ խմբերով ապաստանուում էին նաւերի վրայ: Հալեպպօի մօտ 700 զինուած քրիստոնեաներ 24 չունւ. պատրաստուում էին կռիւ մտնել: Կանէալու միտն 28-ին չունւ. հրդեհները դադարեցին. 200 տուն և չունաց առաջնորդարանը այրեցին: Մահմեդականները չարձակեցին զինանոցի վրայ և վերջին 2.000 հրացան մարտին: 28-ին իտալական նաւերը մօտեցան Կանդիալին: Կանէան, 26-ին չունարի հեռագրի համաձայն, ամրոցըսպէս մահմեդականների և թիւրք զինւորների ձեռքումն էր:

Այս հանգամանքների մէջ էր, որ չունաց կառավարութիւնը խառնեց գործի մէջ, ուղարկելով Կրեմլէ նաւալին էսկադր, որը սկսեց թշնամական գործողութիւններ թիւրքական նաւերի դէմ: Ներկայ բոլշու (5 վիտր.) եւրոպական մեծ պետութիւնները Կրեմլէում զօրք են իջեցրած միասին գործելու և թույլ չտալու համար որ Յունաստանը զօրքեր անցկացնի Կրեմլէ:

**ԿՈՄՍ ՄՈՒՐԱԿԵՈՎ.—ԱՐՏԱՔ. ԳՈՐԾ. ՄԻՆԻՍՏՐ.** Ռուսաց ղեկաւոր Դանիալի արքունիքում կոմս Միխայիլ Նիկոլաեւիչ Մուրաւեով, Բարձրագոյն հրամանով 1-ից չունարի, նշանակւած է ռուսաց արտաքին գործերի կառավարիչ: Կոմս Մուրաւեով աղղ նշանակումից չետոյ ուղեւորեց Պարիզ չունարի 16 ին, ուր ֆրանսիական կառավարութիւնը նորան ընդունեց արտակարգ պատիւներով, ինչպիսին բաժին չէր ընկել մինչ այժմ ոչ մի մինիստրի:

**ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐԶԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ,** 'ի տեղի կոմս Տատիչչեի, նշանակւած է գեներալ լէյտենանտ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Ֆրեզէ, ըստ հեռագրի 5-ից վերաբարի: Ֆրեզէն Պետերբուրգում ժանդարմների գլխաւորի օգնականն էր, իսկ առաջ նահանգապետ էր Վիլնօւում, աւելի առաջ՝ Երևանում:

**ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՆՈՅԱ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԳԱԽԱՌՆԵՐՈՒՄ:**

Առաջիկա մի կողմ թողնելով Թիֆլիսում եղած զաղթականներին

և նոցա օգտին կատարածները, ստորև կ'աշխատենք ի մի ամփոփել գաւառներից ստացած տեղեկութիւնները խնդրի մասին: Նոյն ձևով մենք գալ անգամները ևս պիտի տեղեկութիւնները ամփոփենք:

Աստրախանում, առաջնորդ Արիստակէս արքեպ. Մեդրակեան, հաճոյանակել է դեկտեմբեր ամսի ընթացքում 5.700 ռուբլի և ուղարկել Թիֆլիսի Հալոց Բարեգործ. ընկերութեան կենտրոնը: Արիստակէս սրբազանը հանգանակութեան նպատակով երեք անգամ քարոզ է խօսել և ամեն երկու շաբաթը մէկ հաշիւ տուել ստացած գումարների մասին:

Միւս կողմից գործեցին քաղաքի տիկիները, որոնցից տ. տ. Ֆարրիկանտեանի, Թելեթեանի և Սուրաբէգեանի մօտ նոր և բանեցրած հանդերձեղէններ հաւաքեցին՝ վերնազգեստներ, մուշտակներ, ներքնազգեստներ, տաք կօշիկներ և ալէն, կանանց և տղամարդկանց համար:

Նոր կտորները՝ սպիտակեղէն և ալէն, կարեցին կանաչք և օրինորդներ, թէ տներում և թէ ուսումնարանի գահլիճում խմբելով: Զգեստներից դեկտեմբերին ուղարկեցին 6 մեծ արկղներ 30 պուդ ծանրութեամբ: Երևան, Կարս, Ալէքսանդրապոլ. նոր տարու օրը դարձեալ 1 մեծ արկղ 14 պուդ ծանրութեամբ՝ Երևան: Օգնութիւնը աւելի մեծ կը լինէր եթէ սառուցների պատճառով նաւագաղար չլինէր, որի պատճառով ապրանքատար ընկերութիւնները ոչ և թանկ են տեղ հասցնում:

Նաև տիկիներ Ա. Սուրաբէգեան և Ա. Թելեթեան 300 ռուբլով մի ուսերէն ներկայացում գնեցին, թուղտութեամբ ներքին գործերի մինիստրի՝ Բարձրագոյն հրամանից առաջ դադթականների մօտին. զուտ արկիւնք եղաւ 400 ռ., որից 200 ռ. ուղարկեց Հին-Նախիջևան, 200-ը՝ Երևան, գաղթականների մէջ բաժանելու համար:

Շուշում գաղթականների թիւը հասնում էր 25-ի (տեղեկութիւն 5-ին լուսն.):

Թեմական՝ դպրանոցի տեսուչ Մեսրոպ վարդ. Մելիք-Փարսադանեան լուսն. 5 ին, ուսուցչական խմբի հետ «աւետիս» մանդալով, ժողովեց մօտ 1000 ռուբլի:

Բարեգ. Ընկ. տեղական ճիւղը լուսնարի սկզբում, գաւառապետից թուղտութիւն ստանալով, փախտականների համար ձրի ճաշարան բացաւ Ս. Յովհաննէս եկեղեցու տան մէջ:

Հաւաքեցին շորեր, որոնց բաշխումը լանձնեց տեղական առաջնորդարանին:

Աղնախում «աւետիս» մանդալով ժողովել է լոգուտ գաղթականների 92 ո. 35 կոպէկ, որ լանձնեց գաւառապետին:



Սարիզամիշում մի խումբ երիտասարդներ «աւետիս» մանգալով ժողովեցին 100 ու չօգուտ գաղթականների:

Սկստերինոդարում Բաղրատ արեղալ Վարդազարեանց, նականոց ատամանից թուլտութիւն ստանալով, ժողովարարութիւն արաւ չունւարի 8-ին պոյ. Սարգիս Խարազիւեանի, Գաբրիէլ Թորոսեանի և Լ. Միշէլեանի հետ, խանութներում իսկ տիկիները Խարազիւ-լեան, Թորոսեան, Լուսիկեան, Բաշմակեան, Փերումեան, Խաբադ-բալեան և օրիորդներ Գրիգորեան, Թոխեան, Սերմաքիշեան և Օք-րովերցիւեան չըջեցին տները: Նրկու օրում հաւաքեց 3,450 ուրբ. փող և 600 ուրբու պատրաստի չորեր և կտորներ:

Պետիգորսկում հալ հասարակութիւնը հաւաքեց 5 հակ և մի կապոց չորեր (ընդամենը 729 կտոր չոր) և ուղարկեց Հալոց Բար. ընկերութեան կենտրոնին (Թիֆլ.):

Արմաւիրում Բաղրատ արեղալ Վարդազարեանց, Սկստերինոդա-րից գալով, որպէս գրում է մեզ մեր թղթակիցը 22 ին չունւարի, ժողով գումարեց և հաւաքեց 5000 ուրբլի. կանանցից բաղկացած մի խումբ էլ չուտով սկսելու էր նոր ժողովարարութիւն անել, վիշալ գումարը մինչև 10,000 ու. հասցնելու համար:

Նրեւանում փախտականների թիւն էր քաղաքում 600 հոգի, գիւ-ղերում ցրած մինչ 1000 հ.: Թւել մի առ մի ժողովրդի կողմից փախտա-կաններին ուղղակի տւած օգնութիւնները առ ալժմ անհնարին է: Բալց Բարեգ. ընկ. տեղական ճիւղը ալն գլխաւոր մարմինն է, որը խնամք-ներ է տարել, օգնութիւն ստանալով կենտրոնից (Թիֆլիսում) և ալ տեղերից: Նրեանից ալդ առթիւ մեզ գրում են. «Գաղթականների բաղմաթիւ խնդիրներին դէթ մասամբ բաւարարութիւն տալը ալն նպատակն էր, որին ամեն կերպ ջանք գործ դրաւ ծառայել Բարեգ. ընկերութեան տեղոյս ճիւղի վարչութիւնը: Սկզբից մինչև ալժմ վարչութիւնն ամեն օր կերակրում է 100—150 հոգի. հագուստ, ան-կողիներ, նպաստներ է տալիս հարիւրաւորներին: Նրեանում փախտ-ականների թիւը հասել է մինչև 600-ի. ներկալ բոպէում (15 չուն-ւար) կարելի է հաշւել 400: Նրեանի գաւառում տեղաւորած են մինչև 1,000 հոգի. և դոքա գիւղերից շարունակ գիւմում են Նրեան քաղաքը օգնութիւն հալցելով: Գոցա տանջանքները աննկարագրելի են: Վարչութեան նախադահ պ. Գէորդ Վարաջեան չոգնած ալս վերջին չորս ամիսներում կրած նեղութիւններից գաղթականների համար իւր հրաժարականը տւեց»:

Գաղթականներին օգնելու համար ղեկտ. 31-ին պարահանդէս սարքւեց, որի արդիւնքը 1,615 ուրբլի նահանգապետի կապմած չանձնածողովին չանձնւեց:

Բարեգ. ընկերութեան տեղական ճիւղը մինչև չունարի կէսը տեւէ է փախստականներին 10.000-ից աւելի բաժին կերակուր, մօտ 3.000 կտոր հագուստեղէն՝ 200 ընտանիքի կամ 800 հոգու:

Ընկերութեան տեղական ճիւղը, բացի այդ ամենից, չունարի 1-ից հրաւիրեց բժիշկ ուսանող Հայրապետեանցին գաղթականներին դարմանելու համար, դնելով նորա տրամադրութեան տակ մի համաստ գումար գեղերի և այլ ծախսերի համար: Հիւանդների թիւը կէս ամսում հասաւ 33-ի:

Վերին Ազուխում, ուր գաղթականներ չկան, սոցա օգնելու համար դեկտեմբերի վերջերքը, համաձայն մեր թղթակից՝ պ. Ա. Կաւթեանի նամակին, 21 չունւ. սքթ. Գարեգին Սարգսեանի նախաձեռնութեամբ ժողովեց 257 ուրբի, որ և ուղարկեց Հայոց Բարեգ. ընկ. կենտրոնը (Թիֆլիս): Բացի այդ, տեղի հասարակութիւնից տիկիները Աննաման Արասխանեանց, Մանուշակ Յակոբեանց և Հեղինէ Գէորգեանց տնէտուն և խանութէ խանութ ման եկան. բացառութեամբ մի քանի անհատների, վաւալ տիկիների գործը սիրալիր ընդունելութիւն գտաւ: Ներկայ գործում մասնակցում են աջալիսի ընտանիքներ, որոնք գուցէ առաջին անգամ են ոգորմութեան դուռը բացանում թշուառների համար: Հաւաքեցին թէ դրամական նւէրներ, որոնցով շորեր կարեցին, և թէ հին շորեր: Նոր կարած շորեր գուցաւ 243 կտոր, հին շորեր 248 կտոր, ընդամէնը 451 կտոր լցերիաներ, բլուզներ, շապկներ, բրիւկներ, սանտաֆներ, վերմակներ, գոշակներ, բարձեր և այլն): Բացի այդ, դնեց 100 արշին բամազ և կտաւ: Այդ ամենը ուղարկեց Երևան, Հ. Բարեգ. ընկերութեան տեղական ճիւղին:

Աւերսանդրապոլում ապատուանւած են 25 ընտանիք (150 հոգի) Տեղական հասարակութիւնը (և նորա հետ Բարեգ. ընկ. տեղական ճիւղը, որ միջոցներ չունի) մինչև չունարի սկզբները ոչինչ չարաւ նոցա համար, և օգնութիւն սպասւում էր Բարեգ. ընկ. կենտրոնից (տեղեկութիւն չունարի 3-ից): Յետոյ տեղական կլուրը որոշեց չունւ. 11-ին մի երեկոյթ սարքել, որի համար տիկիներից կաղմւած մի չանձնաժողով տներում հանգանակեց 1000 ու, որ մտադիր է հասցնել 2000 իւր Գումալը չանձնւում է զաւառապետին: Իսկ երեկոյթը տւաւ 2003 ուրբի (կրեք քիտկներին սպասաւորում էին ուսու և հաջ օրիորդներ):

Այդ արդիւնքից փախստականները, սակայն, գոնէ այս չունարին ոչ մի օգնութիւն չտաացան, որովհետեւ չանձնւած լինելով վարչական իշխանութեան, դեռ պէտք է սպասել երկրիս կառավարչապետի կարգադրութեան: Իսկ ալիքսանդրապոլցիք, իրենց պարտքը գորանով կատարած համարելով, օգնութիւն չեն հասցնում:



Բաքուում աղքատանոցի սեղանատանը թաթախման երեկոն (5 լունւ.) ընթրիք էր պատրաստւած գաղթականների և աղքատների համար, տիկիճների և օրիորդների սպասաւորութեամբ: Բաղմութիւնը բաղկացած էր աւելի քան 100 հոգուց:

Կարսի վիճակում ապաստան գտած հալ գաղթականների թիւը 20.000 ից աւելի են հաշուում: Այդ հաշուում ճաճկաստանի տահմանին կից Բասենի 10 հալաքնակ գիւղերում պատսպարւած են 320 փախըստական ընտանիք, բաղկացած 2560 հոգուց: Այդ գիւղերն են՝ Սթահան (ուր կան 35 տուն փախստական), Բաշգիւղ 55 տ. փախըստական, Արմուտլի 42 տ. փախստական, Չուաղլի 24 տ., Չիւրիւկ 21 տ., Ղարազունդար 22 տ., Դիւլանթափ 29 տուն փախստական:

Բարեգ. ընկ. Կարսի ճիւղը, գաղթականներին խնամելու համար, սկսած հոկտեմբերից 1896 մինչև 18 լունւար, ստացել էր ալ և ալ տեղերից 4.555 ռ. (որից 1.500 ռ. ընկերութեան Կենտրոնից, 1.250 ռ. պ. Համբ. Մելիքեանից Բաքու, 800 ռ. Խորէն եպ. Ստեփանէից, որ նւիրել են Բաքուում սրբազանին ալցելողները. 500 ռ. պ. Բաղդասարեանից, Մոսկւա. 300 ռ. Շուշուց, Մետրոպ վարդապետից, ալն արդիւնքից, որ գուցեւ է թեմ. դպրանոցի ուսուցչական խմբի տ. Ծալիթա Գաւթեանի ու օր. Վարսենիկ Զաքարեանի հետ արած հանգանակութիւնից. 5 ռ. Մուրճի խմբագրութիւնից, պ. Գէորգ Աստածատուրեանի նւիրած:

Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը, որ աջնքան շատ գործ ունի գաղթականների հետ, իւր կազմած պարերեկութիւց, թաղրոնական բաժանմունքով (մասնակցութեամբ զերստանուճի օր. Մարի-Հրանուշ Ֆելիկեանի) ստացաւ 500 ռ. 38 կ. զուտ արդիւնք:

Սուրմալուի վիճակում Վեհ. Կաթողիկոսի հրամանով իգգիր աւանում խնամաւորութիւն հաստատուեց Սուրմալուի վիճակի գործակալ Հմայեակ վարդապետ Արշալունու նախագահութեամբ, գաղթականներին խնամելու համար: Խնամակալութիւնը մեծ եռանդով էր գործում. նորա միջոցով էին բաժանուում նպատուները: Հմայեակ վարդապետի տեղ, սակալն, գործակալ և խնամակալ նշանակեց Հախւերիս գիւղի ծխատէր անդրազէտ քահանան. ժողովուրդը զիմեւ էր Կաթողիկոսին խնդրելով, որ վերադարձնի Հմայեակ վարդապետին և կամ մի ալ արժանաւորի նշանակի: Վեհափառը Հմայեակ վարդապետին թողաւ խնամակալի պաշտօնում, գործակալութիւնը չաճճեւելով չիշեալ քահանային: Խնամակալութիւնը կարողանում է շաբաթը երկու անգամ կիրակի և հինգշաբթի օրերը միս բաժանել:

Սոսկայու, լունւար 5 ին, մի քանի ուսանողներ եկեղեցում

«դամբարանափալ» և ապա նոյն և լաջորդ օրերը աւետիս մանգալով հաւաքեցին մօտ 450 ռուբլի չօղուտ գաղթականներին:

Էջմիածնի գաւառում գաղթականների թիւը, որ առաջ 600 էր, անցեալ տարւաւ վերջին ամիսներում 1250-ից անցաւ, Լիզիրից եկածներով, Հալոց Բարեգ. ընկ. Վաղարշապատի վարչութեան անդամները շրջել են գիւղերը և գտել Վաղարշապատում և 30 գիւղերում 209 տուն 1002 հոգի փախստականներով, գաւառապետի տեղեկութիւններով թալինում և շրջակայ գիւղերում 200 հոգի, (Ամենից շատ՝ Վաղարշապատում—66 տուն կամ 279 հոգի փախստական, Գեղու գիւղ՝ 90 տուն կամ 214 հոգի փախստ., Սամաղար գիւղ՝ 10 տ. կամ 46 հոգի, Աշտարակ գիւղ՝ 9 տ. կամ 35 հոգի, Զէլա՝ 7 տուն 30 հոգի), Վեհ. Վաթողիկոսի կարգադրութեամբ գիւղերը նոր ուղարկած 50 հոգի եւ, ընդամէնը 1252 հոգի Վարիժներին օգնելու համար Բարեգ. ընկ. տեղական վարչութիւնը ստանում է օգնութիւն Թիֆլիսի կենտրոնից փող և շորեր ու կոտորներ. ստացել է նաև Սուրբիաս արքեպ. միջոցով հալթալից մի արկղ պատրաստի շորեր: Էջմիածնի վանքը, կերակրում և հագցնում է միայն 5—6 տուն գաղթականներին:

Գեղուղում ապաստանած փախստականներին օգնելու համար լուսնարի 3-ին գիւղ եկան Վաղարշապատի ճիւղի անդամներ Պետր. Սուքիասեան և Յովհ. Մուշեղեան, բերելով իրենց հետ Թիֆլիզցի բժ. Գէորգ Թամամչեանի նւիրած շորեղէնները: Բաշխումը տեղի ունեցաւ գիւղի աւագ քն. Թադէոս Մելիք-Վաղարեանցի տանը. 42 երեխաների, 5—12 տարեկան, տւին ամեն մէկին 4 արշին բոմազէա և միրգ, նաև 3 ընտանիքի ամեն մէկին 20 արշին բոմազէա, միրգ, թէյ, շաքար, լուբիա, շիրքախտ: Թադէոս քահանան միշտ օգնում է, ժողովրդից հաւաքելով ուտելիք. բնակարանները ձրի են տրւում:

Նոր-Նախընտնում: Նակաղնու տառամանի թուղտուլթեամբ լուսնարի 28-ին տեղի լաջորդ Մխիթար վարդապետ Տէր-Մկրտչեան և Միքայէլ Մահտիսեան տնէտուն շրջելով հաւաքեցին ունեւորներին շրջանում (22 հոգուց) 2.735 ռուբլի:

**ՆՊԱՍՏՆԵՐ ՇԻՇԻԻԱՅԻՑ:** Դեղիալում հալկական գործերի համար հետաքրքրութիւն դարձեցնելու համար, Ստոքհոլմի թերթերում մի քանի չօղածներ գրեց 1894 և 1895 թ. աչնտեղ բնակութիւն հաստատած Նորայր Բիւզանդացին, որը երկու անգամ եւ բանախօսել է: Մինչև անցեալ տարւալ դեկտեմբերի վերջը Դեղիալում, ինչպէս ինքն է տեղեկացնում «Արձագանք» լրագրում, հաւաքել է Հալկրի համար 5,000 ֆրանկից աւելի:

**ԺԱՆՏԱԽՏԸ:** Ժանտախտը (չումա) Հնդկաստանի Բոմբէյ քաղաքում չնւա-



զեց, այլ սաստկացաւ: Բոմբէյից շատոյ ժանտախտ երեաց կարաչի, Պոննի, Սուրաթ, Բարոդի, Ահմադաբադ, Քաթիաւեր, Կուչի քաղաքներում: մինչև լուսնարի կէսը շուրջ 5000 մարդ էր մեռած. նոր տոմարով փետրարի 1-ին Բոմբէյում մեռաւ 245 հոգի: Աւստրալի նախաձեռնութեամբ եւրոպական պետութիւնները (նոցա մէջ և Թիւրքիան) կաշանալու էր Վենետիկում միջազգային կոնֆերենցիա որ և բացւեց փետր. 4 (16)-ին, ժողովարարի դէմ ընդհանուր միջոցներ ձեռնարկելու համար: Ֆրանսիան, Ռուսիան արգելել են իրենց մահմեդական հպատակներին աչս տարի Մեքքա ուխտ գնալ: Նախազգուշական միջոցներ ձեռնարկեց Թիւրքիան: Բելուջիստանի մի նաւահանգիստում, որպէս հեռագրեց, մէկը, մեռաւ ժանտախտից: Թիւրքիայի Բասրա քաղաքում մեռաւ մի հնդիկուհի, որ Հնդկաստանի կարաչի քաղաքից էր եկած: Յունւարի 29-ին Պետերբուրգում կազմած հակաժանտախտային կոմիտեան վճռեց մասնապետներ ուղարկել Հնդկաստան, արգելել Մեքքա ուխտ գնալը, այլ նաև արգելել ուխտաւորներին քրիստոնէական սուրբ տեղեր ուխտ գնալ, ձեռք բերել Երուսէմի հակաժանտախտային շիճուկը և այլն:

Փետրարի 1-ին Թիֆլիսում կալացաւ բժիշկներից, քաղաքի և ոստիկանութեան ներկայացուցիչներից բաղկացած (մինչ 100 հոգի) ժողովը ժանտախտի առիթով:

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱԳԻՍԻ ՓՈՍԱՆՈՐԴ ԸՆՏՐԵՑ ԼԱԿՈՂՆ ԱՓԱՆԱՍԻՀ ԻՆՏԵՆՍԻՅՈՒ, 30 ձաւնով ընդդէմ 18-ի: Վւէարկուող միաշն նա էր: Իւանենկոն քաղաքային վարչութեան անդամ է և մինչ ալժմ իրապէս կատարում էր քաղաքագլխի պաշտօնակատարութիւնը, առանց ընտրւած լինելու և ստանում էր համապատասխան ուժիկը: Քաղաքագլխի պաշտօնը, իշխ. Նիկ. Արդուլթեանի հրաժարելուց լիտուց, պարապ էր և կը մնալ պարապ մինչև նոր քաղաքային ընտրութիւնները:

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ կաշանալու են առաջիկայ մալիս ամսին, ներկայիս խորհրդարանի (դումա) 4-ամեայ շրջանը լրացած լինելով:

ՇԱՄԱԽԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ, Շամախում քաղաքային կրճատ ինքնավարութիւնը սկսել է գործել անցեալ 1896-ի դեկտեմբերի 28-ից: Ընտրւած են 12 լիազօրներ. քաղաքային աւադ ընտրւած է պ. Լալաբեան, նորան օգնական՝ վաճառական Անտօնեան:

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵԻԱՆԻ ԱԻԱԳ ԸՆՏՐԵԱԾ Է Ջաֆար-Կուլի խան, տարեկան 700 ռ. ուճիկով. նորա օգնական՝ Էլիբաղա Կենգերլինսկի (որ առաջ հաշտարար միջնորդի թարգման էր եղած և ապա հրաժարեցրած այլ:

պաշտօնից) 500 ռ. ռոճիկով. քաղաքային վարչութեան քարտուղար ընտրւած է Ալակպէր աղա Ալահերդով (որ բանտարկութիւնից նոր ազատւած ոմն է). գրագիր նշանակւած է Նաջապ-բէգ Փարզալի-րէզով (որ բանտի տեսուչ էր եղած և հրաժարեցրած ալդ պաշտօնից). քարտուղարի և գրագրի համար նշանակւած է տարեկան 600 ռուբլի. Քաղաքային խորհրդարանի առաջին նիստը եղաւ յունւարի 15-ին հանգուցեալ Աման-խանի չինութեան մէջ, որ վարձւած է տարեկան 350 ռուբլիով:

ՕՐԳՈՒԲԱԹԻ ՔԱՂԱՔ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, որ առաջին անգամ եղան, կատարեցին ներկայ յունւարին: Ընտրեցին 12 իրաւասու, որոնցից 10 թուրք, 2 հայ և 3 անձնափոխանորդ (2 թուրք, 1 հայ). (Քաղաքի բնակիչների թիւը 1885 թւականին 4199 հոգի, որից 3.787 թուրք, 411 հայ, 1 ռուս). Հաւերից ընտրեցին մետաքսի թելի մանարանների տէր մահտեսի Ար. Բաբաջանց և Արապետ Արիգորեանց, որ հաշտարար դատարարի քարտուղար է. անձնափոխաւորդներից Միրզաջան Տէր-Գրիգորեանց:

Աւագ առանց գաղտնի քւարկութեան միաձայն ընտրեց իրաւասունների միջից Մանուր-Աղա Քեանգարլինսկի (թուրք), որը քաղաքի ամենահարուստ անձն է: Նա լանձն առաւ ծառայել առանց ռոճիկի: Ոգնական ընտրեց զարձեալ միաձայն, առանց գաղտնի քւարկութեան, հարուստ թուրք իրզա-Ղուլի իրզաեւ: Հասարակական պաշտօններ չեն վարել մինչ ալժմ ոչ մէկը և ոչ միւսը:

ԹԵԼԱԿԻ ԱԿԱԿ ընտրւած է Միլսակ Թաթոսեան: Խորհրդարանը (առաջինը Թեյաւում) բաղեց զեկտ. 1-ին: Գաւառապետը լանձնից քաղաք. աւագին 6000 ռ., չալտնելով, որ ինքը, գաւառապետը իւր նախորդից տոացել էր միայն 4 ռ. 75 կոպէկ:

ՄՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ քաղաքներում: Քաղաքային կանոնադրութեան չօդած 138 պարտաւորեցնում է քաղաքներին ոտտիկանութեան պահպանելու նկատմամբ միայն ալսքան՝ օրէնքով սահմանւած մասնակցութիւն ոտտիկանական պաշտօնեաների ռոճիկների համար, մատակարարումը նոցա մթերքներով, ամուլիցիայով, զինատրուով և ընտանեաներով և նոցա դարմանումը հիւանդանոցներում: Ալսպիսով ոտտիկանութեան պահպանութեան ամբողջ ծախքը քաղաքների վրայ չի ընկնում. ալսպիս, օրինակ, կովկասեան քաղաքներից Թիֆլիսի ոտտիկանութեան համար որոշւած է 179.900 ռ., որից քաղաքը տալիս է միայն 79.900 ռ., մնացած 100 հազարը տալիս է պետական գանձարանը. Քուիսպիս քաղաքը ալդ գործի համար որոշւած 13.465 ռուբլուց տալիս է միայն 4.465 ռ. իսկ 9 հազարը վճարում է գանձարանը. Բաթումի ոտտիկանութեան համար



որոշւած է 27.590 ու., որից 8.845 ու. գանձարանն է ստալիս: Միայն Բաքու և Փոթի քաղաքներն են, որ ոստիկանութեան ծախքերը ամբողջապէս իրենք են կրում:

Ներկայումս Պետական Խորհրդում պիտի վճուի ոստիկանութեան ծախքերին մասնակցելու խնդիրը հետեւեալ քաղաքների համար. Սդնախ, Թելաւ, Ախալքալաք, Գորի, Ախալցխա, Գուշէթ — Թիֆլիսի նահանգում. Գուրա, Շամախի, Լենքորան և Սալեան աւանը — Բաքւայ նահանգում. Նուխի և Շուշի — Գանձակի նահանգում, և Սրգսւ-բաթ — Երևանեան նահանգում: Այդ խնդիրը լանձնւած էր վճուելու ներքին գործերի մինիստրին, միասին ֆինանսական մինիստրի հետ — Պետական Խորհրդի 1892-ի և 1893-ի Բարձրագոյն հաստատւած որոշումների համաձայն:

**ԳՊՐՈՑՆԵՐ.** Վերին-Աղլանում (Վազախի գաւառ) բացւած է հալոց դպրոց, նախաձեռնութեամբ պ. Սամսոն Յարութլեանցի:

Նոր-Բալաղէզում լանդն Ս. Կարապետ եկեղեցու բացւելու է հալոց միդասեան դպրոց, վ.հ. Կաթողիկոսի 1896 թ. դեկտ. 31-ին տւած կոնդակի համաձայն, չնորհիւ Սիօն վարդապետի և հոգաբար-ձութեան ջանքերի:

**ՄԱՍՆԱՒՈՐ ԳՊՐՈՑՆԵՐ.** Ագուլիսում բացւած է մի մասնաւոր դպրոց պ. Յովհ. Մելիք-Աղամեանցի ձեռքով:

Նուխում նոր բացւած մասնաւոր դպրոցը պ. Միրաքեանի առաջիմ փակւած է նոյն քաղաքում հալոց ծխական-եկեղեցական դպրոցի վերստին բացւելովը, ուր սկսեցին լաճախել մասնաւոր գըղ-րոցի աշակերտները:

**ՆԻԷՐՆԵՐ.** Գրիգոր Այվաղեան (Բաքւայ փոխադարձ վարկի ընկերութեան կառաւարիչ) ներկայանալով Ս. Էջմիածնում վեհափառ կաթողիկոսին ի վիշատակ իւր հանգուցեալ մօր ներկայացրեց վեհափառի տրա-մադրութեանը 1.000 ուրբլի:

Պարսկահպատակ Հասրաթեան եղբայրները (Ախալքալաքում), իրենց վախճանւած մօր լիշատակին նւիրեցին 115 ու., որից 40 ուրբ. Բարեգ. ընկ. տեղական ճիւղին, 30 ու. եկեղեցուն, 30 ու. աղքատ-ներին, 15 ու. Ս. Մեսրոպեան ընթերցարանին:

Առաքել Ծառուրեան, Բաքւի լալտնի նաւթագործատէր, որ ժամանակաւորապէս Պետերբուրգ է, ուղարկել է Հալոց Բարեգործ. Ընկերութեան կենտրոնին (Թիֆլիս) 10.000 ուրբլի:

Թիֆլիսի Առետրական քանկը, իւր քսանհինգամեայ գոյութեան առթիւ, նորա Խորհրդի որոշումով, բացի իւր ծառայողների գան-ձարանին 4000 ուրբլի չատկացնելուց, 12.000 ուրբլի չատկացրել է հետեւեալ բարեգործական նպատակների. 1) Յօգուտ հալ գաղթական-

Ների 5.000 ու. 2) Հայոց Բարեգործական ընկերութեան Կովկասում 2.000 ու. 3) Նասլի (Մսուր) ընկերութեան 1.000 ու. 4) Կուրերի հողաբարձութեան 1.000 ու. 5) Դիշերալին ապաստարանին 500 ու. 6) Ալէքսանդրեան մանկական ապաստարանին 500 ու. 7) Թիֆլիսի քաղաքալին դպրանոցների ոժանդակիչ ընկերութեան 500 ու. 8) Զրհնդձներին աղատելու ընկերութեան Թիֆլիզի ճիւղին 500 ու. 9) Սուրբակի ձրի ճաշարանին 500 ու. 10) Նաղեժղինոկի ապաստարանին 500 ու. 11) Փոքրահոտակ չանցաւորներին ուղղելու ընկերութեան 500 ու.:

Մշակուրդ Ղորղանեան (Թիֆլիսի երկրորդ կարգի վաճառական) գնել է Սղեախ քաղաքի հայոց գերեզմանատան կից մի հողաբաժին 600 քառ. սաժէն տարածութեամբ և նւիրել նոյն գերեզմանատան վարչութեանը, պալմանով, որ ալի հողարածին վրայ ննջեցեալները թաղեն անվարձ:

Նոյն պ. Ղորղանեան, 1896 ի լունւարից չանձն է առել Թիֆլիսում վախճանող անտիրական ննջեցեալների թաղման ծախքը, որոշելով իւրաքանչիւր զեպքի համար 25-ական ուրբլի քընթացս 1896 թ.-ի նա ալի գործի համար ծախսել է 600 ուրբլի:

**ԽՈՐԷՆ ԵՊ. ՍՏԵՓԱՆԷ,** որ ինչպէս լատնի է, Բաքուի թեմական դպրանոց բանալու համար Վեհափառ. Կաթողիկոսից Բաքու էր ուղարկւած, սկսեց իւր գործը ստորադրութիւն հաւաքելով ապագայ դպրանոցի համար. լատնել էինք որ ալ և ալ անձեր ստորագրեցին 275.000 ուրբլի: Գումարները չեն հաւաքւած, որովհետեւ, ինչպէս երևում է, գործը առկախ է մնացել, մեղ անդադր պատճառներով: Խորէն սրբազանը մեծապէս գնահատեց Բաքուի Յունւարի սկզբներին ծխականների ժողովում երեցիօխ պ. Համբ. Մելիքեան առաջարկեց սրբազանին ամսական ուճիկ նշանակել. ժողովը ընդունեց առաջարկը և ահագին մեծամասնութեամբ որոշեց ուճիկը 250 ուրբլի ամսական (ընդդէմ 200 ու. տալու առաջարկի): Սրբազանը, որը նաև եկեղեցիների քարոզիչ էր նշանակւած, բոլորովին անսպասելի կերպով հրաման ստացաւ. էջմիածնից թողնել Բաքուն և Ղրիմի Ս. Խաչ վանքը գնալ, որի վանահայրն է նա չառ տարիներից ի վեր: Խորէն սրբազանը տաւ հրաժեշտի պատարագ, որին ներկայ էր մեծ բազմութիւն: Սրբազանը քարոզ խօսեց. շատերը լացին. ժողովուրդը մեծ բազմութեամբ ճանապարհ գցեց սրբազանին երկաթուղու կապարանում, լունւարի 19-ին: Խորէն եպ. ուղևորեց էջմիածին:

**ՆՈՐ ՎԱՐԴԱՊԱՊԵՏՆԵՐ.** Վարդապետութեան աստիճան ստացան դեկտ. վերջերը, վեհափառի կոնդակադիր Կորիւն արեղան և ձեմարանի ուսուցիչ և անտես Մամբէ արեղան:



**ԱՐԱՐԱՏ:** Էջմիածնի Արարատ ամսագիրը լուծարից լանձնել է նոր խմբագրութեան, կազմած Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանից, իբրև նախագահ և կաթողիկոսի ղեւանի, մատենադարանի, ճեմարանի, սինոդի, ուսումնական մասնաժողովի ու տպագրական վարչութեան ներկայացուցիչներից: Վերջին երկու տարիներս Արարատը խմբագրում է եղել Ն. Քարամեանի և Կարապետ վարդապետ Տէր-Մկրտչեանի ձեռքով, վերջինս իբրև պատասխանատու կրօնական բաժնի:

**ԱՂԲԻԻՐ-ՏԱՐԱԶԻ ՊՐԵՄԻԱՆԵՐԸ:** Աղբիւր-Տարազի խմբագրութիւնից ստացանք աչս տարւալ բաժանորդներին ուղարկելիք պրեմիաներից երեքը, որոնցից իւր վրալ առանձին ուշադրութիւն է դարձնում Միքայէլ Նալբանդեանցի մեծագիր պատկերը, հասկնաւ 60-ական թւականների ալդ աչքի ընկնող հրապարակախօսի և հասարակական գործիչի վերջին լուսանկարի: Պատկերը, կարող ենք համարձակ ասել, ոչ միայն լուսագոյնն է Աղբիւր-Տարազի կողմից մինչև այժմ լուսահանած մեծագիր պատկերներից, այլ և դրականապէս գեղեցիկ գործ է և համարձակ կարող է տեղ բռնել ամեն մի կարինէտում և դահլիճում:—Մի ալ նկար ներկայացնում է շքեղ մահճակալի վրալ հաւաքւած մի խումբ երեխաներ, որոնք զարճանում են կողովի մէջ դրած կատուկներով. նկարը գունաւոր է և արժէք ունի նրանով, որ դուրս են բերւած մահճակալի, տեղաշորերի, չորերի, կենդանիների և կողովի զանազան գոյները մեծ նրբութեամբ: Նա կարող է տեղ բռնել ամեն մանկանոցում:

- **ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎՆԱՆԻ ԵՐԿԵՐԸ,** հրատարակութեամբ Խահակ Ժամհարեանցի մեր ընթերցողները կը գանեն ներքև չիշատակւած նոր գրքերի ցուցակում: Դիրքը զարգարւած է Արովեանի պատկերով և Քառաքեռի նորա ապրած տան նկարով: Դրքի սկզբում, բացի հրատարակչի կարճ լառաջաբանից, դրւած է ժողովածուն խմբագրող Ստեփ. Տէր-Սարգսեանցի մի ծանուցումը և նորա կազմած Արովեանի կենսագրութիւնը, ընդամենը 40 երես: Ամբողջ գիրքը բաղկացած է 537 երեսից և պարունակում է «Վէրք Հալատանի», «Ովսանայ» վէպերը, «Պարապ վախտի խաղալիք» վերնագրով առակները, «Յէտգորա կամ որդիական սէրը», «Մտածմունք ի տեսիլ հայրենեաց», «Նախաշաւիղ» վերնագրով առակներ, «Ճանապարհորդութիւն պրոֆ. Պարրոտի և խաչատուր գպրի Արովեանց», վերջում դրւած են «Քառաքեռի բառառից քանի մի գիտելիքներ» և «Բառգիրք»: Գրքի գինը նշանակւած է 1 ուրբլի (երես ալդ է նշանակւում «մի արծաթ») մեղնում անսոթը (սօսքը) և վաճառւում է Արովեանի որբացած թուների օգտին:

Ցանկալի է որ տպագրած գրքի բոլոր օրինակները չուսով

վաճառւեն. մեր տեղեկութեան համաձայն գլխաւոր տպւած է 3,600 օրինակ:

**ԿԱՐՄԻՔՆԵՐ ՄՈՒՐՃԻ ՄԱՍԻՆ.** Revue des revues հանրածանօթ ֆրանսիական կիսամսեայ ամսագրի արեւելեան բաժնի խմբագիր «Աշոտ երկաթ» դիմել է մեզ Պարիզից մի ֆրանսերէն նամակով 26 լուռ. (նոր տոմ.) 1897, առաջարկելով հրատարակութիւնները վերանայնա- կութիւն: Նամակից քաղում ենք.

«Կ. Պարիզի ուր ես գտնուում էի վերջին ժամանակները, մի քանի անգամ աւելի եմ ունեցած ձեր գլխաւոր լօղաճների անա- լիզը ողորկել Revues des Revues-ին որը նոցա շատ գնահատել է: Revue des Revues առաջինն է եղել ֆրանսիայում որ ծանօթացրել է հաշիական կոտորածները, Ձէլթունի կոլւնների հետ, մեր (հաշ- կական) ժամանակակից գրականութեան և մասնաւորապէս Գա- մառ-Փաթիլայի և Բաֆֆիի գործունէութեան հետ: Նա աշուհեաւ կամենում է իւր ընթերցողներին կանոնաւորապէս լրթացիկս պահել հաշիի մտաւոր շարժման հետ, և քաղաւոր կը լինի որ կարողանալ աչդ նպատակով քաղածներ և ամփոփումներ առաջ Մուրճից, որը նշանաւոր դեր է ետարեւ և շարունակում է կատարել հաշ աղղի կրթութեան գործում (qui a joué et joue un rôle considerable dans l'education du peuple arménien):

**ԲԱԶՄԱԻԷՊ** ամսագրի (վէնետիկ) ներկայ տարւոյ առաջին համարում մի օգտակար նորամուծութիւն ենք տեսնում: Ամսագրի վերջին երեսը նւիրւած է կիսամսեայ, ամսեայ և վեցամսեայ թերթերի լօղաճների պարզ լիշատակութեանը «պարունտիկութիւն ազգային լարերական թերթից» վերնագրի տակ: Պակասում են սակայն, լօղաճագիր հե- ղինականների անունները: Հետաքրքրութեան մի մասը կորչում է, երբ տպւում է լօղաճի (պարզ լօղաճի, վէպի, բանաստեղծութեան) խո- րագիրը՝ առանց հեղինակի անուն:

**ԵՐԿՐԱՇԱՐԺ, ՇԱՄԱԽՈՒՄ.** Յունւարի 24-ին և 25-ին նամակում երկրա- շարժի զօրեղ յնցումներ եղան. շատ տների սլատերը քանդակցին կամ հեղքեր եղան: Պաշտօնական աստեաններում պարապմունքները ընդհատուցին: Մարդկանց միտք չեղաւ:

**ԱՍԽԱԲԱԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՅԻՆ.** Ասիաբաղի հալոց կիտաւեր, խարխուղ եկեղեցու անշարժեան պատճառով, տեղական հաշ զաղութի ձեռ- նարկիւ էր նորա վերաշինութեան, չինելով նաեւ զանգակատուն, վե- րահսկողութեամբ երկաւ. ճարտարապետ Յ. Մուխամբեանի, Գոր- ծը վերջացաւ լուռւարի 14-ին, երբ սկսեց նաեւ ժամերգութիւնը: Վերանորոգութեան և զանգակատան համար ծախուեց 3,600 ռուբ., որից 1,000 ռ. եկեղեցու գումարներէց, 2,400-ը ժողովրդից: Եղե- ղեցու օրհնութեան հանդէսը կատարուեց լուռւարի 15-ին որի



միջոցին կատարւեց նաև Կալսերտական մաղթանք. ներկայ եղան երկրի կառավարիչը իւր պաշտօնեաներով և մի քանի գեներալներ նույնպէս Ղզըլ Արևադի քահանան, Հանդէսից լետոյ նախկին դպրոցական շինութեան մէջ նախաճաշ տուեց, Երկրի կառավարիչը, գոյ մնալով նորակառուց եկեղեցու շինութիւնից, կրկին եկեղեցուն վերադարձրաւ և նւիրեց ահն գետինն ու շինութիւնը, որ մի քանի տարի առաջ վերցւած էր Նրանից:—Ապա կատարւեց ս. պատարագի խորհուրդը. պատարագիչ ուէր—Նմաւոն Աղբալեան քարոզ խօսեց միաբանութիւն չորդորելով: Պատարագից լետոյ կատարւեց հաշրապետական մաղթանք: Դպրոցի շինութեան մէջ ժողովրդական ճաշկերութեղաւ, զինուորական երաժշտութեամբ և մատաղ բաժանեց:

**ԱՇԽԱՏԱՆՈՅ ԵՐԵՒԱՆՈՒՄ.** Բարեգ. ընկ. Երեանի ձիւղը մշակել է 16 խոլ. ւածից բաղկացած մի կանոնադրութիւն «աշխատանքի տուն» կոչւած հիմնարկութեան, որի համար լուծ. 12 ի ընդհանուր ժողովում վճռւեց ներկայացնել կառավարութեան, թույլտուութիւն ստանալու համար:

**ՅՐՏԵՐԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ.** Այս լուծարին խորը ձիւն է եկել և մեծ ցրտեր են անում: Վաղարշապատում լուծարի սկզբներին Ռէօմլուրի Ջերմաչօրը ցոյց էր տալիս 22 աստիճան գերօդից վար:

**ՄԻՕՐԵԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ,** առաջին անգամ ամբողջ Ռուսիայում, կատարւեց ներկայ լուծար ամսի 28-ին: Ժողովրդագրութեան ընդհանուր հետեանքները լաւտնի կը լինեն մինչև մի տարի: Իսկ մանրամասնութիւնները մի քանի տարիներից լետոյ: Միօրեայ ժողովըրդագրութիւնը արեմտեան Եւրոպայում սովորական է վաղուց ի վեր, ուր նա կատարւում է սովորաբար ամեն հինգ տարին—մէկ:

**ՊՈՒՇԿԻՆԻ ՄԱՀԻԱՆ 60-ԱՄԵԱԿԸ** լրացաւ լուծարի 29-ին: Թիֆլիսում, Նիկոլաեւսկի զինուորական եկեղեցում հոգեհանգիստ կատարւեց, երեկոյեան թատրոնում օպերային ներկայացում տեղի ունեցաւ, բաղկացած Պուշկինի սիւֆէտների վրա՝ գրած օպերային կտորներից:

**ԱՐՕՐԻ ՕՐԱՑՈՅՑԸ,** որպէս անցեալում, նաև այս անգամ մի շքեղ հրատարակութիւն է: Բացի օրացույցից, որի սկզբում դրւած է Մատթէոս արքեպ. Խմբիլեանի պատկերը, նա ունի հետեեալ լաւեւածները՝ 1) Հալերի դրութիւնը Պարսկաստանում (օգուած). 2) Պուլտեմիեի ծագումը և սինոդի բացումը 1836-37 թ. (քաղածք Ալ. Երիցեանի «Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի հալք» աշխատութիւնից). 3) Նոցին կալս. մեծութեանց թագադրութիւնը մալխի 14-ին 1896 թ. (պատկերներով) 4) Ռաֆայէլ (պատկերով. կենսագրութիւն). 5) Գլադստոն (պատկերով. կենսագրութիւն) 6) Միքայէլ Նալբանդեան (պատկերով. համառօտ կենսագրութիւն. 1830-1855). 7) Յատարարութիւններ:

Գրքի մէջ զետեղւած պատկերները շատ նուրբ են և գեղեցիկ. ամբողջ գիրքը մի մաքուր հատոր է թէ արպի և թէ թղթի կողմից: Յօդածներից ամենաինքնուրույնը Պարսկահայերի մասին գրածն է: Գա մի թռուցիկ ակնարկ է պարսկահայերի մտաւոր և կրթական գործերի վրայ, գրւած շատ աշխուժ լեզուով: Յօդւածը կազմելու աղբիւր ծառայել են գլխաւորապէս ալն թղթակցութիւններն ու տեղեկութիւնները, որ տպւած են Շաւիղ լրագրում 1895 թ.: Յօդւածագիրը շատ համոզեցուցիչ լեզուով նկարագրում է Պարսկահայերի կրթական գործի զանդաղութիւնը, Պարսկահայերի մտաւոր ու բարոյական անշարժութիւնը, մանաւանդ խապահանի հայերին, որոնց նա խիստ լեզուով դատաւիտում է. ցոյց է տալիս թէ ինչ լաւ դեր կարող են կատարել Ատրպատականի և խապահանի հայ առաջնորդները, բայց Ս. Էջմիածինը ինչ անաջող ընտրութիւն է անում ալի պաշտօնների համար: Յօդւածը կարդացւում է հետաքրքրութեամբ, թէ և դանկալի էր մի աղապիսի յօդւածի համար աւելի բազմակողմանի տեղեկութիւններ:

Մի ալ յօդւած, որ իւր վրայ ուշք է դարձնում՝ Նալբանդեանի համառօտ կենսագրութիւնն է: Յօդւածագիրը իւր տեղեկութիւններով գլխաւորապէս լինում է պ. Նրւանդ Շահգիլի ընդարձակ գրւածքի վրայ (տպւ. Բարխուդարեանի Հանդէս Պատ. և գրակ. 1896): Արօրի ալի յօդւածը (20 էրես) իւր վրայ ուշք է դարձնում գլխաւորապէս իւր լաւաջաւանով, ուր անստորագիր յօդւածագիրը «խրատւնք» է համարում Նալբանդեանցին ամբողջ զխով բարձր համարել «մինչև ալժմ ուսահայերի մէջ երեան եկած բոլոր հրապարակախօսներից և ժուրնալիստներից»: Եթէ չենք սխալւում, առաջին անգամն է որ աղապիսի խօսք տպւում մեր մէջ: Մենք հետաքրքրութեամբ կարդացինք յօդւածը, որ ապացուցներ գտնենք, նմանաւանդ որ պ. Շահգիլի ընդարձակ աշխատութիւնը դեռ ևս դէպք չենք ունեցած կարդալու: Բայց Արօրի յօդւածում մենք չգտանք համոզեցուցիչ փաստեր աղապիսի նզրակացութեան գալու համար: Եւ հէնց ալ պատճառով է որ շատ անտեղի ենք գտնում անստորագիր յօդւածներ տպելը, ուր չգիտես թէ ով է վերցնում իւր վրայ ալ ու ալն մտքի պատասխանատւութիւնը:

ՀԱՅ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՍՈՒՄ: Պատասխանելով «Մոսկովսկիյա վեդոմոստի» լրագրին, որը աւազակութեան զօրեղանալը Կովկասում վերագրում էր նրան, որ վարչական պաշտօնները իբր թէ գլխաւորապէս հայերի ձեռքումն են, «Ռուսսկիյա վեդոմոստի» Մոսկուայի լաւաջգիրական թերթում նորա գլխաւոր աշխատակիցներից Գր. Ջանչեան պատասխանեց մի տեղեկագրով, քաղած պաշտօնական «Կովկասեան Օրացույց»-ից 1896 թ.: Համաձայն դորան՝



1. Թիֆլիսի նահանգում նահանգապետը վրացի է, փոխ-նահանգապետը ռուս. գաւառապետներից 5 վրացի, 3 ռուս, 1 հայ. օգնականներից 4 հայ, 2 ռուս, 2 վրացի, 2 գերմանացի, 1 լեհ: Պրիստաւներից 18 վրացի, 5 ռուս, 3 հայ: Ուրեմն 55 անձներից ռուս 11, վրացի 33, հայեր 8. հայերը կազմում են  $14\%$ :

2. Բուխարի նահանգում նահանգապ. ռուս, փոխ-նահանգապ. գերմանացի, չրջանապետներից և գաւառապետներից 8 վրացի, 5 ռուս, 1 հայ. օգնականներից 6 վրացի, 1 ռուս: Պրիստաւներից 30 վրացի, 4 ռուս, 2 հայ, 1 թուրք. միլիցիայի զինաւորներից 3 վրացի, 1 հայ:

Ընդամենը 64 անձ, որոնցից 11 ռուս, 47 վր. 4 հայ, 1 թուրք. հայերը՝  $6\%$ ,  $25\%$ :

3. Բալախի նահանգում նահանգապ. գերմանացի, փոխ-նահանգապ. ռուս. գաւառապետներից 5 ռուս, 1 վրացի. պրիստաւներից 10 ռ., 3 վր., 4 թուրք, 1 հայ. զեմստաւին պահակի զինաւորներից 6 թուրք, 1 ռուս:

Ընդամենը 38 անձ, որոնցից 22 ռ., 10 թուրք, 4 վրացի, 1 հայ. ( $2\%$ ):

4. Գանձակի (նիխաւետոպոլի) նահանգում նահանգապ. վրացի, փոխ նահանգապետը ռուս. գաւառապետներից 4 վր., 2 ռուս, 2 թուրք. օգնականներից 2 ռուս, 2 վրացի, 2 թուրք, 1 հայ. պրիստաւներից 14 թուրք, 7 ռուս, 4 հայ. զեմստաւին (գաւառապետ) պահակի զինաւորներից 6 թուրք, 4 վրացի:

Ընդամենը 52 անձ, որոնցից 24 թուրք, 12 ռուս, 11 վրացի, 5 հայ, ուրեմն  $10\%$ -ից պակաս:

5. Նրեանի նահանգում (ուր ազգաբանակութեան մեծամասնութիւնը հայեր են) նահանգապետը ռուս է (ալժմ գերմանացի), փոխ նահանգապ. վրացի. գաւառապետներից 6 ռուս, 1 վրացի. օգնականներից 4 ռուս, 1 վրացի, 2 հայ. պրիստաւներից 10 ռուս, 8 հայ, 3 թուրք, 1 վրացի, 1 գերմանացի:

Ընդամենը 39 անձ, որոնցից 21 ռուս, 3 վրացի, 10 հայ, ուրեմն  $23\%$ :

6. Դաղստանի չրջանում հրամանատարը ռուս է. օգնականներ 1 ռուս 1 հայ. չրջանի զինաւորներից 4 ռուս, 3 վրացի, 1 հայ. օգնականներից 8 ռուս, 1 վրացի:

Ընդամենը 20 անձ, որոնցից 14 ռուս, 4 վրացի, 2 հայ ( $10\%$ ):

Ամբողջ Անդրկովկասում 289 վարչական անձներից հայերը 31 հոգի են, ուրեմն  $10.7\%$ , և նոքա մեծ մասամբ երկրորդական և երրորդական պաշտօններ են վարում:

Դատաստանական վարչութեան մէջ հաշիւը աւելի ևս փոքր տուիտ են կազմում: Դատաստանական պալատում ոչ մի հաշիւ անդամ: 5 հաշանդական դատարաններում 3 հաշիւ անդամներ կան, որ կանի 3<sup>0</sup>/<sub>0</sub>: ԲԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆ: 21-ն լուսն. (հին տոմ.) Անգլիայի և Վենետիկի միջև (Նոցա Ներկայացուցիչների ձեռքով Վաշինգտոնում) կապակց դաշինք միջնորդ դատարանի մասին, որով ազգերկու պետութիւնների միջև ծագած քաղաքական տարաձայնութիւնները պիտի վճռի միջնորդ դատարանը: Նշանաւոր դէպք է աչա: ԹՈՒՆԱՅ ՊԱՏՐԻԱՐԲ. ԿՐԻՉԻՍ. Յունաց պատրիարքի հակահռոնական գործողութիւնների առիթով՝ Նորա և լուսնաց Սինոդի (Պոլսում) միջև ծագած վէճը վերջացաւ առաջիմ պատրիարքի հրաժարականով, լուսնարի վերջերքը:

ԵԱՊՈՆԻԱՅԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ. 1895 թ. դեկտեմբերի 31-ին կատարած միօրեայ ժողովրդահամարի արդիւնքները ալիք հրատարակւած են: Բնակիչների թիւը Եպպոնիայում ալիք օրը էր 43.270.620, որոնցից 21.345.750 հոգի արական:

† ԲԵՍՏՈՒԾԻՆԻ-ՐԻԻՄԻՆ (Կ. Ն.) վախճանեց լուսնարի սկզբին. մէկն էր աչքի ընկնող ուսու գիտնականներից և հասարակական գործիչներից. ծնւած էր 1829-ին. դրեց «Ռուսաց պատմութիւն», «Կենսագրութիւններ և բնորոշումներ» և ալլն, խարգմանեց Բոկլի «Յաղաքակրթութեան պատմութիւնը Անգլիայում». չալտնի է նաև իւր դրւածքով սլաւոնափիլիների մասին. ինքը պատկանում էր սլաւոնափիլիների նոր սերնդին:

Հանգուցեալը չալտնի է իբրև հիմնող 1878-ին Պետերբուրգում կանանց կուրսերի, որոնք չալտնի են «Բեստուժեւսկի» անունով:

† ԹԱՄԱՄՇԵԱՆ, Լիդիա Պետրովնա (ծնեալ իշխ. Բհհրութեան) երկարատև ծանր հիւանդութիւնից վախճանեց լուսնարի 29-ին մօտ 40 տարեկան հասակում. նա մէկն էր Թիֆլիսի հաշ հասարակութեան ամենաաչքի ընկնող կանանցից, մանաւանդ չալտնի որպէս ջատագով աղջիկների արհեստագիտական կրթութեան, որպէս միջոցի կնոջ աշխատանքի ընդունակութիւնները զարգացնելու և ընտանիքը ապահովելու Ալի մտքով նա, աւելի քան տասնեակ տարի առաջ ուրիշների հետ միասին աշխատում էր Թիֆլիսի Հալուհեաց բարեգործական ընկերութեան մէջ, որի ամենաեռանդուն անդամներից: մէկը մնաց մինչև վերջը, կառավարող մեծամասնութեան դէմ. իսկ միաժամանակ նա առաջարկեց իւր ձրի ծառայութիւնը քաղաքի հիմնած իգական արհեստագիտական դպրոցի վերատեսչութեան պաշտօնի համար, որ և վարեց տասնեակ տարի մինչև իւր մահը ամենաչն եռանդով, աշխատելով իրագործել իւր հաշեացքները, մտցնել բա-



բնորոգումներ համաձայն իւր տեսածների արտասահմանում: Հայոց ծխական իգական դպրոցների համար նա հաշ մամուլի մէջ տարիներ առաջ առաջարկում էր և պաշտպանում արհեստագիտական բաժանմունք բացանելու միտքը:

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԲԵՐ

- 1) ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ ԹԻՓԼ. Հրատ. Ընկ. Անվախ դերձակ հեք-  
եաթ., 1896.
  - 2) " " " " " Մոխրատիարիկ. 1897.
  - 3) " " " " " Քնած գեղեցկուհի. 1897.
  - 4) " " " " " Կարմիր-Գդակ. 1897.
  - 5) " " " " " Գուլիւէրը թղուկների  
աշխարհում. 1897.
- Այդ գրքերը լույս են տեսել Թիֆլ., տպ. Ռոտինեանցի, և ամեն  
մէկի գինն է 40 կոպ.
- 6) ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ. Աննենակալա, Ա. Ն.—Գոհարիկն ու Աստ-  
ղիկը. Թարգմ. ռուսերէնից. Թիֆլ. տպ. Մարտիր. 1897 գինն է 10 կ.
  - 7) ԿԱՐԻԷՐ.—Արգարու զրոյցը Մովսէս Խորենացու պատմութեան մէջ,  
քննադատական ուսումնասիրութիւնք. Թարգմ. Հ. Գաբր. Վ. Մէ-  
նէվիչեան, Մխիթ. ռւխտէ. (Ազգային դրագարան, հատ. ԻԲ.) Վլի-  
ենեա, 1897 Մխիթար. տպ., գինն է 1 ֆր. 50 սանտիմ:
  - 8) ՏԻՒՐԵԱՆ, Կ.—Կաւկասեան լեռանց մէջ. ուղեգրական և ազգագրա-  
կան ակնարկներ. Վլենեա, Մխիթ. տպ., 1896. գինն է 1 ֆր.  
կամ 35 կոպ.
  - 9) ՏԵՐ-ՄԿՐՏՁԵԱՆ, Գալուտո (Միաբան).—Ազաթանգեղոսի աղբիւրնե-  
րից Յիշատակ Գատակնքաց Գորիա և Շմոնի վկայից որ վկայեցին  
Վուհա. 1896. Վաղարշապատ, տպ. Մալր Աթ. Էջմիածնի, գինն է  
50 կոպ.
  - 10) ԱՐՕՐԻ ՕՐԱՅՈՅՑ 1897 թ. Զորորդ տարի. Բաքու, տպ. Արցրի 1896-  
գինն է 1 ռուբլի:
  - 11) ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆԻ ԵՐԿԵՐԸ, հրատարակեց Խաչակ ժամհարեանց:  
1897. Մոսկա, տպ. Բարխուդարեանց, գինն է 1 ռուբլի:
  - 12) ԼՈՒՄԱՅ. գրական հանդէս, 2-րդ տարի, գիրք Ա., 1897. Թիֆլ.,  
տպ. Շարաձէ. գինն է 2 ռուբլի:
  - 13) ՕՐԺԵՇԿՈ, Լիլիա.—Կախարդը. Թարգմ. ռուսերէնից Յովհ. Մեղնիկ-  
եան. Հրատ. 5-րդ Պետերբուրգի հաշ ուսանողների. 1895. Պետեր-  
բուրգ, տպ. Լիբերմանի գինն է 15 կոպ.:
  - 14) ՀԱՏԻԱԾԱԿԱՆ ՕՐԱՅՈՅՑ 1897 թ. Գիւտ քան. Աղանեանցի:
  - 15) ՏՈՄԱՇԷԿ, Վ.—Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները. պատմակ.

և տեղագր. հեաազօտութիւն: Մասն առաջին. Պատմական տեղեկութիւնք Սասնայ վրայ, թարգմ. Հ. Բառնարաս վ. Պէլեջիկեան, Մխիթ. ուստէ: (Ազգային մատենադարան, իԱ.): 1896. տպ. Մխիթ. գինն է 1 ֆր.

#### ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿՎ.

Կարս. Հայոց Բարեգ. ընկեր. ճիւղին: Ձեզ հասցնելու համար ստացել ենք՝ պ. Յակոբ Յակոբեանից 2 ռուբլի. Կարապետեան-Բերե. ժանեան երկաթի գործարանի (Թիֆլիս) ծառաւորներից 2 ռ., Նոյն գործարանի ծառաւոր արհեստաւոր Ասուածատուր Մկրտչեանից 2 ռ.:

\*\*\* Պր. Խաչ-Պապեան: Ձեր նամակը ստացանք: Թղթակցութեանը կը սպասենք:

\*\*\* Պր. Հ. Սևեան: Ձեր «Թատրոնի շուրջը», ժամանակի ուշ լինելուն համար չկարողացանք այս համարում գետեղել:

Յիւրիս. Պր. Միք. Յովհաննիսեան: «Էտլիւցիա» լօղւածի չարու-նակութիւնը ստացանք: Դորանից առաջ Ձեզ նամակ էինք գրած:

Թեհրան: Հայկազեան գրադարանին: Ձեր հինգ ռուբլին մենք չկարողացանք ստանալ տեղիս «Էկնդրոնական» կոչւած գրաւաճառանոցից, թէև նա չափոնեց որ ստացել է ալդ փողը: Յայտնում ենք Ձեզ, որ մենք հրաժարւում ենք այսուհետև բաժանորդութիւն ընդունել փշեալ գրաւաճառանոցի միջոցով: Կ'ուղարկենք ձեզ Մուրճ-ը հաշւելով ձեզ վրայ ապառիկ 10 ռուբլի:

Վ. Ազուլիս. Բժ. Դ. Սարգսեանցին: Ձեր ուղարկած 6 ռուբլին չանձնեցինք Հ. Հրատ. ընկերութեան:

Թիֆլիս. Պ. Կար. Խօջամիրեանցին: Ձեր 6 ռուբլին չանձնեցինք Հ. Հրատ. ընկերութեան:

#### ՎՐԻՊԱԿՆՆՐ

«Մուրճ» 1896 № 12, «Նորեկ» վէպում էջ 1542, տող 11 ներքևից տպւած է՝ գգրար (գգիր) էր. ուղիղն է՝ գգրար էր (Գգրար նշանակում է ոչ թէ գգիր, ինչպէս սխալմամբ տպւած էր, այլ գգող, գիզ անող, քօրինակ բամբակ, բուրդ և ալլն գիզ անող):



# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

## I

### Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

Թիֆլիսից-Բաքու. ա) ելք—1 ժ. 10 ր. օրւայ, հասնում է Բաքու—7 ժ. 30 ր. առաւ. բ) ելք—10 ժ. 50 ր. երեկ. հասնում է Բաքու—4 ժ. 49 ր. օրւայ:

Բաքուից-Թիֆլիս. ա) ելք—2 ժ. 30 ր. օրւայ, հասնում է Թիֆլիս—8 ժ. 21 ր. առաւօտ. բ) ելք—11 ժ. 5 ր. զիշերւայ հասնում է Թիֆլիս—5 ժ. 50 ր. զիշերւայ:

Թիֆլիսից-Բաթում. ա) ելք—9 ժ. 10 ր. առաւ., հասնում է Բաթում—9 ժ. 45 ր. զիշերւայ. բ) ելք—6 ժ. 50 ր. երեկոյեան, հասնում է Բաթում—8 ժ. 15 ր. առաւօտեան:

Բաթումից-Թիֆլիս. ա) ելք—9 ժ. 40 ր. առաւ., հասնում է Թիֆլիս—9 ժ. 55 ր. երեկոյեան, բ) ելք—11 ժ. 20 ր. զիշերւայ, հասնում է Թիֆլիս—12 ժ. 25 ր. ցերեկւայ:

## II

ՈւՁՄՆՎԻՐԱԿԱՆ ԽՃՈՒՂՈՎ, ԹԻՖԼԻՍԻՅ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՅ  
ԳՆԱՅՈՂ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից—Հինգ տեղով կառքեր. ա) Դուրս է գալիս առ. ժամը 7-ին, զիշերում է Մէթում և միւս օրը երեկոյեան ժամը 6-ին հասնում է Վլադիկավկազ: բ) Դուրս է գնում առաւ. ժամը 9-ին, զիշերում Պասանաուրում և միւս օրը զիշերւայ ժամը 8-ին հասնում է տեղ:

Վեցտեղով հանրակառքեր (օմնիբուս) գնում են երկու անգամ, առանց զիշերելու, ա) 9 ժ. 30 ր. առաւօտ և բ) 7 ժ. երեկոյեան: Հասնում են Վլադիկավկազ, առաջինը՝ միւս օր 12 ժ. օրւայ և երկրորդը՝ 8 ժ. 50 ր. երեկոյեան:

ՎԼԱԴԻԿԱՆԿԱԶԻՑ—Հինգ տեղով կառք. ա) Գուրս է զալիս առաւ. 7 ժ., զիշերում է Մէթ, հասնում է Թիֆլիզ միւս օրը երեկոյեան 6-ին. բ) Գուրս է զալիս ժամը 9-ի ն, զիշերում է Գուրաուր, հասնում է Թիֆլիզ միւս օր ժամը 7-ին երեկոյեան:

Վեցտեղով հանրակառք. երկու անգամ, առանց զիշերելու, ա) առ. ժ. 10-ին և բ) երեկ. ժ. 7-ին. հասնում են Թիֆլիզ. առաջինը՝ միւս օրւայ ժամ 11-ին առ., երկրորդը՝ ժամը 8-ին երեկոյեան:

Գնեքն են: Կառքի ներսում իւրաքանչիւր անձի համար 19 ռ. 60 կոպէկ: Կառքի կից կաբրիօլեռում՝ 13 ռ. 20 կ. կառուպանի մօտ՝ 5 ռ. 40 կոպէկ:

Մէթի կաշարանում գտնւում են ամեն կառքի համար մանուկներ և կանանց համար առանձին համարներ զիշերելու՝ առանց վարձի, իսկ տղամարդիկ կարող են զիշերել ընդհանուր սենեկում կամ վճարելով՝ մասնաւոր համարներում:

## „Ա Ր Յ Ր Ի“

Պատկերազարդ սեղանի օրացոյց 1897 թ.

Դեկտեմբերի սկզբներու / Արօր տպարանի հրատարակութեամբ լոյս կը տեսնի սեղանի պատկերազարդ օրացոյց, 1897 թ.: Բացի օրացոյցի մասից և պանդան վիճակադրական տեղեկութիւններից, օրացոյցը ունի և հարուստ յաւելած:

Գինը ծանալարհաժախքով 1 ռուբլի:

Իմեջ՝ Բագու, տպարան «Արօր»:



Միամսեայ պատկերազարդ հանդէս  
մանուկներէ, ծնողներէ և զատա-  
րակներէ համար:

Պատկերազարդ շաբաթաթերթ  
ընտանեկան ընթերցանութեան հա-  
մար:

## Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՂԲԻՒՐԸ լոյս է տեսնում իւրա-  
քանչիւր ամիս 2—3 թ., տարեկան  
12 №№:

ՏԱՐԱԶԸ լոյս է տեսնում ամէն կի-  
րակի, իւրաքանչիւր № 1—2 թերթ.  
տարեկան 48—50 №№:

Ա. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՅԻՆ. Մա-  
րտիկ, Զրոյց, Հէքիւթ, Հանապարհոր-  
դութիւն, Կենսագրութիւն, Բանաստեղ-  
ծութիւն: Գիտութիւն և արեստ: Նոր  
լուրեր: Այլ եւ այլք: Զարմալիք: Ման-  
կական, Ֆրեօքլեան, շախմատի եւ այլ  
խաղեր: Ռեքուսներ, Քաղաքական խն-  
դիրներ, Անեկդոտ, Հանելուկ, Երգեր նո-  
տաներով:

Բ. ԲԱՃԻՆ. Կրթութեան եւ դաս-  
տիարակութեան վերաբերեալ յօդածներ  
եւ անդեկութիւններ: Առաջարկութիւններ:  
Խորհուրդներ: Մատենախօսութիւն և նոր  
գրքեր: Խառն լուրեր: Պատասխաններ:  
Հայտարարութիւններ:

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ խմբագրութիւնը անմիջական և սերտ շարաբերու-  
թիւն ունենալով Եւրոպայում կիշէ պատրաստող նշանաւոր գործարան-  
ների հետ, արդէն կարելի է դարձել բաւական արագութեամբ տպագրել  
օրաւ հարցերի, դէպքերի. հետ համարեա զուգընթաց և նրանց վերաբե-  
րեալ նկարներ, տեսարաններ, պատկերներ: Բացի այն՝ որ ՏԱՐԱԶԸ ըն-  
թերցանութեան շատ նիւթ է տալիս բնկարիստիկայից, պահաւ էջեր  
չեն զարդարում և կրիտիկական չօդածներով:

ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ միեւնոյն հասցեով 1897 թ. ստորագրողը իրաւունք  
ունի 1 ռ. ուղարկելով Ճանապարհածախս՝ ստանալ Տարազի № 1-ի հետ. 1) Մի-  
քալէլ Նալբանդեանի (խակական եւ վերջին ֆոտոգրաֆիայից) մեծադիր դրաւիւր,  
2) Մայրիկի ննջարանում, շքեղ խրոմօ, 3) Հարեմի աղջիկ, շէօգրաֆիական  
պատկերները:

Բացի այդ իւրաքանչիւր ամիս եւ Պարիզի մոդաներ:

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ռ. (արտասահման 4 ռ. կամ 12 ֆր.)  
ՏԱՐԱԶԸ 6 ռ. (արտասահման 10 ռ. կամ 30 ֆր.):

Հասցէն՝ Редакция „Агбуръ“ կամ „Таразъ“ Типограф. Редакция  
des journaux „Agbur“ et „Taraz“ Tiflis (Caucase).

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

# ОТКРЫТА ПОДПИСКА НА „НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

НА 1-97 ГОДЪ.

(четырнадцатый годъ изданія).

## У С Л О В І Я П О Д П И С К И

съ доставкой и пересылкой:

|                                 |                                |
|---------------------------------|--------------------------------|
| На 12 мѣсяцевъ . . . 10 р. — к. | На 2 мѣсяца . . . . 2 р. 75 к. |
| „ 6 „ . . . 6 „ — „             | „ 1 „ . . . . 1 „ 50 „         |
| „ 3 „ . . . 3 „ 50 „            |                                |

Заграницу на годъ 17 р., на полгода 9 р., на три мѣсяца 5 р.

Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа лютого мѣсяца.

Для годовыхъ подписчиковъ какъ городскихъ, такъ и пногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, **ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА** на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится — 3 р., въ 1-му марта — 2 р., въ 1-му мая — 3 р. и въ 1-му сентября 2 р.

Лица, подписавшіяся теперь на будущій годъ, получаютъ газету бесплатно въ текущемъ году съ дня подписки.

Подписка принимается: въ Тифлисъ — въ редакціи „Нов. Обозр.“, Бяратинская ул., № 8; въ Бану въ типографіи „Ароръ“; въ Батумъ — въ книжномъ агентствѣ М. И. Николадзе; въ Куаисъ — въ книжныхъ магазинахъ Чиладзе и Бежанейшвили.

## ОТЪ РЕДАКЦІИ.

Отрывая подписку на будущій годъ, редакція „Нов. Об.“ считаетъ нелишнимъ заявить, что всѣ сотрудники (за немногими исключ.), которые принимали участіе въ нашей газетѣ до сихъ поръ, примутъ участіе въ ней и въ будущемъ году. Кроме того, намъ обѣщали сотрудничать нѣкоторые петербургскіе литераторы: Д. Н. Маминъ, М. А. Протопоповъ (критикъ), В. Вересаевъ (сотрудникъ „Русскаго Богатства“) и др. Нашъ лондонскій корреспондентъ Я. — вичъ, временно прекратившій участіе въ „Нов. Обозр.“, въ скоромъ времени возобновитъ печатаніе у насъ своихъ политическихъ писемъ. Печатаніе специальныхъ телеграммъ изъ Петербурга и отчасти изъ главнѣйшихъ центровъ Закавказья будетъ продолжаться круглый годъ.

Но улучшеніе литературнаго и политическаго отдѣловъ нашей газеты не отвѣчаетъ намъ отъ главнѣйшей нашей задачи — отъ обсужденія мѣстныхъ, кавказскихъ вопросовъ, стоящихъ на очереди, и отъ сообщенія возможно полныхъ свѣдѣній о событіяхъ мѣстной жизни. Мы заручились постоянными корреспондентами не только въ главныхъ городахъ Кавказскаго края, но и въ нѣкоторыхъ второстепенныхъ его пунктахъ. Многое зависитъ въ данномъ случаѣ, конечно, отъ содѣйствія мѣстныхъ дѣятелей, годось которыхъ мы будемъ продолжать высушивать съ особеннымъ вниманіемъ. Пользуясь ихъ сочувствіемъ, мы съ своей стороны ни минуты не будемъ забывать, что газета должна совершенствоваться съ каждымъ днемъ; мы будемъ стремиться къ тому, чтобы читающая публика получала возможно болѣе матеріала, обработаннаго и правильно освѣщеннаго, при чемъ никогда не перестанемъ руководствоваться той основной точкой зрѣнія, которая ясна для всякаго, кто внимательно слѣдитъ за нашей газетой.



## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՅ

Բ. Կ.

1. ՊՈՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ՅԵՅԵՐ» (վէպ). . . . . 1 —
2. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (Ղալարցի)՝ «Մանուկների մարտդուլթ. դործարանների հիւանդութիւնները» . . . — 05
3. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս. — «ԽԵԽ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկե-ների կեանքից . . . . . 1 —
4. ԼԷՕ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ). . . . . — 50
5. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ» (Կեանքից պատկեր). . . . . — 40
6. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԱՅՅ ԹԻՒՐԻՔԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» . . . — 60
7. ՊՈՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ԲՂԴԷ», վէպ . . . . . 1 20
8. ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ. — «ԽԱԹ-ՍԱՐԱ» (հայ բոշան. կեանքից — 15
9. ՄԱՐԻՍԵԱՆ, տիկին Մ. — «ՀԵՂԻՆԷ» (մեծ վէպ), ա. մասը — 50
10. , , , , բ. մասը — 75
11. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, Յ. — «ՍԵԽ-ԼԵՌՆՅԻՔ» (տոհմագ. պատկ.) — 15
12. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՀԱՐԵԻԱՆՆԵՐ» . . . . . 03
13. , , «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ» . . . . . — 03
14. , , «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ» . . . . . — 03
15. , , «ԾԱՆՐ ՔԱՐԸ» . . . . . — 03
16. , , «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ» . . . . . — 03
17. , , «ՄԵՐ ԻՆԶԸ ԿԸ ՊԱԿՍԻ» . . . . . — 03
18. ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ. — «ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ» . . . . . — 15
19. ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ. — «ՄԻԿՐՈՒՆԵՐԸ» . . . . . — 10
20. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԶԱՒԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ» . . . — 10
21. ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ. — «ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ» . . . . . — 15

22. ՎՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԿԱՄԵԱՆ» . . . . . — 20
23. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ.—«ՀԻՊԵՆՈՏԻՍՄ», Մասն ա. . . . . — 50
24. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ՏԻԳՐԱՆՈՒՀԻ» . . . . . — 50
25. ՇԻՐՎԱՆՁԱԴԷ.—«ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ» . . . . . 1 50
26. ՍԵՆԿԵԻԶ, ՀԵՆՐԻԿ.—«ԱՌԱՆՅ ԴԱՌԱՆԱՆՔԻ» . . . . .
27. ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՍ.—«ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՌ ԴԷՊՔԵՐԸ»
28. «ԱԿԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԱՆԴՐՈՒՆ», յառաջաբանով  
և ընտրութեամբ ՎՐՈՅՐԻ . . . . . — 20
29. ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԺ. Վ.—«ՀԻՊԵՆՈՏԻՍՄ», մասն բ. . . . . — 50
30. ՂԱՐԱԶԵԱՆ, ԳԵՈՐԳ.—«ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՅՈՒՄԸ  
Արևմտեան Եւրոպայում և Ռուսիայում» . . . . . — 50
31. ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԴ.—«ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿ. ԻՐԱՒ.  
ՀԻՆ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» . . . . . — 40
32. ՓԱՓԱԶԵԱՆ, Վ.—«ՏՈՒՐԻՍՏԻ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆԻՅ» (սլաւո-  
կերներ) . . . . . — 40
33. ՇԱՆԹ.—«ԴՈՒՐՍԵՅԻՆԵՐ», Վէպ. . . . . — 50
34. » «ԵՐԱԶ ՕՐԵՐ» . . . . . — 40
35. ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅ, Յ.—«ԺՈՂՈՎՐ. ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆԸ» — 25

## ՔՈՏՈԳՐԱՔԻԱ ՅՈՎ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ

Բացած է 5-ից մայիսի 1896 թ.

Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Զուբալովի, № 8

Աշխատակիցներ Ս. Պետերբուրգից: Ամենախառարկագործած անդ-  
պարատներ ԴԱԼՄԵՅԵՐԻ և ՐՈՍՍԱ:


## ФОТОГРАФИЯ И. БАШИНДЖАГІАНЪ

Открыта съ 5-го Мая 1896 г.

На Головинскимъ проспектъ, въ домъ Зубалова, № 8:

Сотрудники изъ С. Петербурга. Самые усовершенствованные аппараты ДАЛЬМЕЙЕРА и РОССА.







ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ,

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1897 ԹԻՍՎԱՆԻ ՀԱՍՏ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ տարեկան 10 ասուրի, կամ 30 շոանկ:  
ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Վիկտորիանյան փողոց, տուն № 8: Այլ քաղաքներ  
ից՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“.  
Արտատաճմանից՝ Tiflis. Rédaction de la Revue  
„MOURTCH“ և կամ հեռագրական ձևերին.

ԲԱՔՈՒ—պ.պ. Ֆրիդման Մարգարեան՝ Հ. Մելիքեանի զրասենեակ:  
ԲԱԼԱԽԱՆԻ.—պ. Միրտիչ Էհրամձեան:  
ԲԱԹՈՒՄ—պ. Սարգիս Մակարեան և պ. Ալեքս. Խոջամիրեան:  
ԵՐԵՒԱՆ —պ. Դեորդ Դարաջեանց:  
ԿԱՐՍ —պ. Աբէլ Ապրեսեան:  
ԱՍԼԱՔԱԼԱՔ.—պ. Զաւադ Տէր-Գրիգորեան:  
ՆՈՒԻԻ —պ. Աբրահամ Բունիաթեան:  
ՂԶԼԱՐ —պ. Ստեփ. Սողոմոնեան:  
ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ.—պ. Յովհ. Տէր-Միրաքեան:  
ՄՈՍԿՒԱ —պ. Ալեքսանդր Ծատուրեան:  
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ —պ. Քրիստ. Բաշինջաղեան:  
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—պ. Ալեքս. Յովսէփեան, Ռէշտ, անգլիական բանկում: